



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2590

243

N-26

1874

2010

110024

ՆԱՐ

ԱՂՋԹ ԱԳԻՐ Ք

43
16-26

ՆՈՐ

ԱՆՕԹԱԳԻՐՔ

Ի Հ. ԴԱՎԻԹՅԱՆ Վ. ՌԻԶՈՒՆԵՍՆ

Դ. ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ԱՆԴԵՆԱ

Ի ՎԵՆՍ ՊԱՇՏՈ. Ս. ԱՍՏՈՒԲԺԱԿՆ

1874.

48

12012

ԱԹ ԱՂՋԹԱՍԵՐԱ

41318 - mch.



24783-61

Ահա քեզի նոր ազօթագիրք, կամ
թէ ըսմէ՞ զործի աստուածային փա-
ռաբանութեան, որ աս երկրի վրայ
զԱստուած օրչնես ու զովես հրեշտա-
կաց պէս իր անշափ բարութեան հա-
մար: Ինչ մեծ շնորհք կը համարէիր
քեզի, եթէ անպնդ բարեկամ՝ մ'ու-
նենայիր, որ բեզո՞ծ ատենդ՝ զքեզ
թագաւորին առժեն հաներ ու անոր
հետ խօսակցել տար: Աս ազօթից
կիրքն ուլսա Քեզի ան հաւատարիմ՝ ու
սիրելի բարեկամը, որ զքեզ չէ թէ
երկրաւոր թագաւորի մը, այլ թագաւ-
որաց թագաւորին Խամարձակ միշտ կը
ներկայացրնէ, անոր՝ իբրեւ զթած հօր՝
սիրտգ բանալ կու տայ, եւ զանագան

շնորհներ կ'ընդունի քեզի համար։
Վառնու գքեզ սուրբ Աստուածածնի
կը տանի, որդիական ընտանութեամբ
իր հետը խօսել կու տայ, եւ գքեզ
անոր մայրական պաշտպանութեանը
կը յանձնէ, որ փորձանք մըն ալ
չհանդիպի քեզի։ Տես հիմա, որշափ
հարկաւորութիւն ունիս ասանկ բա-
րեկամի մը՝ որ է աղօթքը. ինչպէս
Քրիստոս ալ իր օրինական ու խօսքո-
վը գքեզ կը խրատէ. Յաղօթս կացէք։

Որպէս զի զիւրին ըլլայ քեզի
հասկընալը, եւ բոլոր ըրած աղօթք-
ներդ իմանաս ու անով աւելի ջերմե-
ուանդութեամբ ընես, աշխարհաբար
գրած կը գտնես աս նոր աղօթա-
գիրքը։ Աղօթք ըսելն ուրիշ բան չէ,
բայց եթէ Աստուծոյ հետ խօսիլ. թէ
որ ըսածդ դուն չես հասկընար եւ
ըրածդ չես զիտեր, ինչպէս աղօթք
ըրած կ'ըլլաս։ Ասոր համար շատ ան-
գամ սատանան աղօթքի ատեն ձան-

ձրութիւն կը բերէ վրադ, աղօթքդ
մէկդի ձգել կու տայ. ինչու որ ըսած-
ներդ չհասկընալուգ՝ միտքդ ուրիշ տեղ
կ'երթայ ու դուն ուրիշ տեղ կ'ըլլաս,
սրտիդ մէջ աղօթքի սէրը կը մարի,
եւ ինեղծ հոգիդ զուրկ կը մայ Աս-
տուծոյ պարզեներէն, որ պիտի ընդ-
ունէիր։

Աս ամէն չարեաց դէմ աս միայն
բաւական ըլլայ քեզի։ Յառաջ քան
աղօթքի սկսիլդ՝ խելքդ վրադ ժողվէ,
միտքդ բեր աստուածային ներկայու-
թիւնը, յիշէ որ Աստուծոյ առջեւը
կեցեր կը խօսիս, որն որ սրտիդ մէջ
եղածներն ալ կը տեսնէ ու կը քննէ։
Թէպէտ Աստուած ամէն տեղ միշտ
ներկայ է, բայց աղօթք ըրած ա-
տենդ՝ բոլորովին հոն է ու գքեզ մտիկ
կ'ընէ։ Աս գրքին մէջ գրուած աղօթք-
ները կարգացած ատենդ՝ գրավար-
ժութիւն ընելու պէս չկարդաս. այլ
հանդարտ ու մտադրութեամբ, եւ սըր-

տիգ մէջէն բղխն ազօթքները։ Եւ
պարգևատուն Աստուած, երբ որ ա-
սանկ ջերմեռանդ ազօթքդ կը տեսնէ,
ուղածէց աւելի խնդիրքդ կը կատարէ,
ինչպէս որ կ'ըսէ սուրբ Ներսէս Շնոր-
հալին։

Ան ատեն քու ազօթքներդ ալ
ճրեշտակ Ամենակալին սոկի խնկա-
նոցի մէջ իբրեւ անուշահոտ խունկ՝
Աստուծոյ առջեւը կը հանէ, որ միշտ
պատրաստ է մեր հեծութիւններն ու
աղաշանքները լսելու։ Յիշէ Յիսուսին
ըսածք. Արդեօք կը գտնոմի մէջերնիդ,
կ'ըսէ, հայր մը՝ որ իր տղան հաց
խնդրէ իրմէն, եւ ան ալ հացի տեղ
քար տայ, կամ ձուկ ուզէ, եւ օձ տայ։
Թէ որ երկրաւոր հայրերն իրենց գու-
ակները կը սիրեն ու անոնց ազէկ
պարզեւներ կու տան, որչափ աւելի
հայրն երկնաւոր իր սիրելի որդինե-
րուն մեծ մեծ բարիքներ կը պար-
զեւէ, երբ որ բոլոր սրտանց իր հայ-

րական պթութեանը կը դիմեն խո-
նարհաթեամբ։

Միայն ջանա որ ազօթքիդ միշտ
փոյթ ըլլաս, ըլլայ թէ կամաց կա-
մաց ձանձրանաս ու թուլանաս. այլ
յարատեւէ միշտ, յայսդ Աստուծմէ
մի կտրեր, ու գարձեալ աղօթքը ըրէ։
Թէ պէտ խնդիրքնիս շառնունք, կ'ըսէ
Ասկերերան հայրապետը, շարտնա-
կենք ազօթքնիս, որպէս զի առնունք.
ընդունելին վերջն ալ շարունակենք,
ինչու որ առինք։

Սուրբ Հայրերուն հասարակ խօսքն
է, թէ աւելի Աստուած կ'ուզէ մեզի
բարիք տայ, քան թէ մենք իրմէ կը¹
խնդրենք. անանկ է նէ երբ որ շնորհք
մը կ'ուզենք Աստուծմէ ու չենք ընդ-
ունիք, նշան է թէ ինչպէս որ պէտք
է չենք խնդրած։ Եւ թէ ինչ պիտի
խնդրենք Աստուծմէ, քրիստոս մեզի
կը սորվեցնէ. Նախ Աստուծոյ ար-
քայութիւնը խնդրեցէք, կ'ըսէ. ինչու

որ մարմեաւոր բաներն արգէն Աստուած կու տայ ձեզի:

Վերջապէս աս է իմ մի միայն փափսու ու աշխատութեանս վախճանը, որ աս զբքովս պատշաճօրէն աղօթք ընես եւ հոգւոյգ փրկութեան հարկաւոր եղած բարիքներն ստանաս: Ընդունէ որեմն նոյն սիրով, որով քեզի կ'ընծացուի:

Ա Պ Օ Թ Ք

ԱՌԵԽՈՏԵԱՆ

Անկողննէն երսծ առեն:

ԱՍՏՈՒԱԾ Աստուած իմ, ես առքեզ առաւօտ առնեմ: Ճարաւեցաւ առ քեզ հոգի իմ, քանիպատիկ եւս եւ մարմին իմ: Ահա ով Աստուած իմ, ասանկ կը կանչէ ծարուած հոգիս առ քեզ. աս առտուան ծագած լուսին հետ լուսաւորէ հոգւոյս խաւարը, մորիս ալ լոյս տուր՝ որ նաեւ հոգւոյս առաւօտ ըլլայ եւ անհամար բարիքներդ տեսնեմ: Ուր որ աչքս վերցընեմ նայիմ, ամէն արարածք ինծի յորդոր կ'ըլլան զքեզ օրհնելու եւ փառարանելու: Ահա կը տեսնեմ քու սքանչելի ձեռացդ գործած արեւն, որ միշտ ատենին իր պայծառ լոյսը

կը տարածէ. որպէս զի ես ալ տեսանելով ինձի համար ստեղծած բաներգ՝ յիշեմ բարերարութիւնդ, զարմանամ մարդասիրութեանդ վրայու բորբոքեալ սիրով բոլոր սրտանց քեզի շնորհակալութիւն մատուցանեմ: Կոյնպէս թռչուններն իրենց անցյալ երգովը զիս կը հրաւիրեն, որ ես ալ իրենց հետ ամենաբարի Արարիչդ փառաւորեմ: Ո՛վ Աստուած իմ, անանկ է նէ դուն շարժէ շըրթունքս ու բաց բերանս, որ իմ անարժան լեզուս ալ քեզի օրհնութիւն երգէ եւ սցդչափ բարերարութիւններուդ շնորհակալ ըլլայ. Զորոյան-Եկեղ. +, Տէր, յա-էկտեան օրհնեցից:

Լոյս ճշմարիտ Յիսուս Քրիստոս, որ աշխարհք գալովդ զմեզ լուսաւորեցիր եւ աստուածգիտութեան լոյսն ամէն տեղ տարածեցիր. լուսաւորէ հիմայ կուրութիւնս, որ

Ճանչնամ բարիիներդ ու քեզի ապերախտ չըլլամ: Դուն աստուածային բերնովդ ըսիր. Ով որ իմ ետեւէս կու գայ, ինաւարի մէջ չի պարտիր. Ով Փրկիչ իմ, ահա սրտանց կը բաղձամ աս օրս քու ետեւէդ երթալ ու քեզի հնազանդիլ: Ով չար ախտերուս խաւարին մէջ չմնամ: Ով գթած Յիսուս, բան մը միայն քեզմէ կը խնդրեմ այսօր, եւ գիտեմ որ պատրաստ ես տալու. մասնաւոր շնորհք մը տուր ինձի, որ աս օրս զքեզ չվշտացընեմ. ամենայալթզօրութեամբդ ամէն մեղաց առիթներէն զիս պահէ, եւ ամէն փորձանկներէն ազատէ. ինչու որ ես խիստ տկար եմ ու ողջոմութեանդ կարօտ: Ով Աստուած իմ, տկարութիւնս դուն զօրացուր, որ կարող ըլլամ աս օրս ինչպէս որ քու պատուիրաններդ կը հրամացեն՝ այնպէս անցընել. եւ քու շնորհօքդ աս բա-

րի առաջադրութեանս վրայ հաս-
տատ կենաց. ամէն:

Աղօթք շնորհակալութեան:

Եմենասուրբ Երրորդութիւն Հայր
եւ Որդի եւ սուրբ Հոգի, Խոնար-
հութեամբ աստուածութեանդ առ-
ջեւ Երկրպագութիւն կ'ընեմ եւ
սրտանց կը Խոսառվանիմ, որ գուն
մինակ ամէն պատույ ու ծառայու-
թեան արժանի ես: Քեզի փառք կու
տամ. քու անվախճան թագաւորու-
թեանդ ու Երանութեանդ Համար,
անթիւ բարիքներուդ Համար՝ որ ի
սկզբանէ աշխարհի հրեշտակներուն
ու մարդիկներուն վրայ ցուցուցիր
եւ մինչեւ Հիմայ ալ միշտ կը ցուցը-
նես, գոհութիւն ու փառարանու-
թիւն կը մատուցանեմ: Կը գոհա-
նամ աս Հաւատոյ լուսոյն Համար,
որ ինձի ալ՝ ստեղծուածներուդ մէջ
ամենէն ետքինիս՝ ծագեցիր: Շնոր-

շակալ կ'ըլլամ ու կը յարգեմ բռ-
լոր սրտանց քու գթութիւնդ, որ ին-
ձի այնչափ շնորհի տուիր ու բարի
աղդեցութիւններովդ միրտս քեզի
քաշեցիր. զքեզ սիրելու եւ սիրե-
լով յաւիտենական Երանութիւն
ստանալու արժանի ըրիր:

Աշաւասիկ Աստուած իմ՝ յսսս
ու իմ վերջին վախճանս, սրտանց
զքեզ կը սիրեմ քու անսահման
բարութեանդ ու Երանութեանդ
Համար: Երանի թէ ինձի ալ անանկ
բորբոքած սէր մը պարգեւէիր, որ
ես ալ զքեզ այնպէս սիրել կարող
ըլլայի, ինչպէս որ հրեշտակներն Եր-
կինքը կը սիրեն, եւ այնչափ սուր-
բեր ալ Երկրի վրայ սիրեցին ու
Հիմակ ալ ալբայութեան մէջ կը
սիրեն: Իմ ունեցած սէրս անոնց ու-
նեցածէն շատ վար է. անոր Համար
իմ անկատար ու տկար սիրոյս տեղը
կը նուիրեմ Յիսուսի սրտին ամենա-

կատար սէրը, եւ իր սուրբ վարուցը,
չարչարանացն ու մահուան անսահ-
ման արդիւնքը, որպէս զի այսօրուան
նուէրա քեզի հաճոյ եւ ընդունելի
ըլլայ: Եւ որպէս զի քու ամենա-
սուրբ տէրութեանդ առջեւ բողորո-
վին պարապ չերեւամ, աչա կամքս
իր ամէն ախորժակներովն ու բաղ-
ձանքներով քեզի կը նուիրեմ. եւ
հաստատ կ'առաջագրեմ որ ամէն
կարողութիւններս քու փառացդ
համար ծառայեցընեմ: Պատրաստ
եմ, Տէր իմ, ամէն ձախորդութիւն-
ները, նեղութիւններն՝ որ ինձի կը
խրկես՝ ընդունելու, եւ ամէն կերպ
խաչը սիրով քաշելու. ինչպէս որ
Փրկչիս օրինակն ինձի կը սորվեցընէ:

Գթած աչուըներովդ նայէ, Տէր,
խեղճ սրտիս բաղձանացը եւ օրհ-
նէ առաջադրութիւններս, որ շնոր-
հագդ կարող ըլլամ կատարել ու սի-
րել զ.քեզ յաւիտեանտ յաւիտենից:

Պաղմու:

Կանիսեցին աշք իմ առաւօտուց ի
խոսել ինձ զբանս քո:

Զարթո՞ զաշս իմ, եւ նայեցաց ի
սրաննելիս օրինաց քոց:

Ամստուխտ եմ ես յերկրի. մի թա-
գուցաներ յինէն զպատուիրանս քո:

Զնանապարհս մեղաց ի բաց արա յի-
նէն. եւ յօրէնս քո ողորմեա ինձ:

Սուաջնորդեա ինձ ի շատիդս պատուի-
րանաց քոց, զի ընդ նսա հաճեցայ:

Խսնարհեցո զսիրտ իմ ի վկայու-
թիւնս քո, եւ մի յագահութիւն:

Դարձո զաշս իմ, զի մի տեսից զնան-
րութիւն, ի ձնանապարհս քո կեցո զիս:

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. եւ
իրաւունք քո օգնեսցէն ինձ:

Օրտափամ:

Լոյս փառաց բանդ Աստուած, որ
ծագեցեր ի մեզ զլցոս գիտութեան,
կարդամք առ քեզ, Տէր, առաւօտու
աղօթք մեր հաճոյացին քեզ:

Հայր մեր որ յերկինս:
Ողջայն քեզ Մարիսամ:

Աղօթք:

Վկ Հայր բարեգութ, հազար
գոհութիւն կու ասամ քեզի անմիւ-
հանսկա գոհութուը
Տօս. Բիблиոթեկա

բարերարութեանդ համար, որ ան-
արժան ծառայիդ համարձակութիւն
տուիր, որ զքեզ՝ երկնի եւ երկրի
տէրդ՝ ինծի հայր կանչեմ։ Ահա
աչքս երկնք վերցընելու արժանի
չէի. հիմայ հրեշտակներուն կարգն
անցուցիր։ Մեղաւոր անձին առաւօ-
տեան աղաջանքն ամենասուրբ ական-
ջիդ անցյլ կու գայ. կուզես որ ես
ալ հրեշտակաց հետ զքեզ փառա-
բանեմ։

Արդ՝ Տէր իմ եւ արարիչ իմ, ես
որ հող ու մօխիր եմ, առտուանց
արթըննալուս պէս՝ քու աստուա-
ծութեանդ առջեւ կիյնամ ու կը
ինդրեմ, ինծի երկնային սիրով վա-
ռուած նոր սիրտ մը տուր, որ ինչ-
պէս պէտք է նէ զքեզ սիրեմ։ Ա-
նանկ մը տուրը կամացդ հետ սիրտս
կապուի, որ մինակ քու կամբդ կա-
տարելու բաղձայ ու անկէ ամենեւին
չքածնուի։ Աւելի կուզեմ բիւր ան-

գամ մեռնիլ, քան թէ տեսնել որ
սիրտս մեղքով քեզմէ հեռացեր եւ
արարածներու հետ զբաղեր է։

Անոր համար հիմակ ամէն բանէն
յառաջ խոնարհութեամբ կը խըն-
դրեմ, Տէր իմ, տուր ինծի ան աս-
տուածային բորբոքեալ սէրդ, որ կա-
րող ըլլամ բոլոր օրս ի փառս քո
անցընել։ Ան ինծի կը սորվեցընէ,
թէ ինչպէս իմ ընկերիս հետ պիտի
վարուիմ. ինչպէս իմ մարմինս պիտի
կառավարեմ։ Ան բերնիս պահապան
կը գնէ, որ անկարդ խօսքեր չխօ-
սիմ, հայհյութիւն կամ սուտ եր-
դում չընեմ։ Ան կը սորվեցընէ
պարկեշտ նայելուն կերպը, կը զգու-
շացընէ ականջն՝ որ բամբասանք,
զրպարտութիւն ու անմաքուր խօս-
քեր լսել չփրէ։ Անանկ է նէ շնոր-
չէ ինծի, Տէր իմ, աս մեծ պարգեւս,
որով արժանի ըլլամ քեզի ճշմա-
րիտ որդի ըլլալ, եւ զքեզ ալ ինծի

Հայր կոչել, ինչպէս որ դուն սորվեցուցիր:

Աղօթք առ սուրբ Աստուածածին:

Ո՛վ քաղցրագութ՝ մայր ողըրմութեան, ահա ամենասուրբ ոսքը ինկած ողըրմելի մեղաւոր մը, գիտաւով մայրական սերդ՝ բոլորովին քեզի ապաւիներ է, ով գթած տիրամայր, նայէ հոգւցի խեղճութեանն, ու գթութիւն ըսէ: Ամենուն բերնէն լսեցի, որ մեղաւորներու ապաստան, յուսահամերու յշս ու անօդնականներու օգնական կը կոչուիս. ու բեմն իմ ապաստանս, իմ յշսս ու օգնականս դուն ես: Ո՛վ սուրբ Աստուածածին, սիրելի Աստուածորդւցի հետ զիս հաշտեցուը եւ ջերմեռանդ ծառաներուդ համբանկին մեջ զիս ընդունէ: Մասնաւոր շնորհք մը տուր ինձի այսօր ու վառէ սիրտս ճշմարիտ ջերմեռանդութեան սի-

րովդ, որ բոլոր սրտանց զքեզը սիրեմ ու պատուեմ, եւ քեզի արժանի որդի ըլլամ:

Ո՛վ մայր Աստուծոյ, աս աղաւանկը՝ որ հիմայ կընեմ, չէ թէ մինակ աս օրուան համար է, հապա բոլոր կենացս համար: Մայր ողըրմութեան, գթած աչուրներովդ ինձի նայէ. ողըրմած ձեռքդ վրայէս մի վերցըներ. եւ հզօր բարեխօսութեամբդ ամեն չար փորձանկներէն զիս պահէ պահպանէ: Ո՛վ քաղցր Մարիամ, կաղաչեմ միշտ օգնական եղիր ինձի ու զիս թող մի տար, մանաւանդ մեռնելու ատենա. ինչու որ պաշտպանս, յշսս ու օգնականս դուն ես, ամէն:

Աղօթք առ պահապան հրեշտակն:

Ո՛վ փառաւորեալ պահապան հրեշտակ իմ երկնային, որ իմ ստեղծուած ատենէս Աստուծոյ բա-

բերաբութեամբը դուն հոգւսյս ու
մարմնյս պահապան ու պաշտպան
դրուեցար. կ'աղաքեմ՝ զքեղ, որ իմ
աղօմքներս ու բարի առաջադրու-
թիւններս դուն քու ձեռքովդ Աս-
տուծոյ ամոռին առջեւը տանիս, եւ
Աստուծմէ ինծի համար մասնաւոր
շնորհք ընդունիս, որ միշտ իր հայ-
րական սիրոյն մէջ մնամ: Դուն զիս
միշտ սատանային փորձութիւններէն
ազատէ. եւ ամէն բանիս գործքիս
մէջ միշտ ինծի օգնութիւն ըրէ, որ
ամէն գործքերս մինակ ի փառս Աս-
տուծոյ ըլլամ: Երբ որ միտքս խաւար
մտածմունքներ ունենայ, դուն լու-
սաւորէ. երբ որ տարակուսանքի մէջ
իյնամ, իմ հոգւսյս փրկութեան
օգտակար եղածն ինծի սորվեցուր.
խղճմանքս միշտ դրգէ, որ մեղքէն
ու մեղքի առիթներէն հեռու կե-
նամ ու բարի գործքերու հետ ըլ-
լամ: Ով հրեշտակդ Աստուծոյ,

կ'աղաքեմ զքեղ, մահուանս ատեն
զիս մի թողուր. չար սատանային
ձեռքէն զիս ազատէ. որպէս զի ար-
քայութեան մէջ քեղի հետ արժա-
նի ըլլամ ամենաբարի արարիչս օրհ-
նել ու փառարանել. ամէն:

Ա Պ Օ Թ Ք Ե Ր Ե Կ Ա Յ Ե Ա Ն

Ամենաբինամ Տէր իմ եւ Աս-
տուծ, ես քու ստեղծուածդ խո-
նարհութեամբ գետինն ինկած՝ քեղի
անլուելի գոհութիւն կը մատուցա-
նեմ, որ զիս ողջ առողջ մինչեւ աս
իրիկունս հասուցիր: Աւելի պարտա-
կան կը ճանշամ զիս զքեղ օրհնե-
լու՝ ինծի լցոս տալուդ համար, որ
մաքիս թանձրամած խաւարը փարա-
տեց եւ իմացուց թէ որ բանը քեղի
հաճելի է ու իմ հոգւսյս փրկու-
թեան օգտակար: Այսօր քու շնոր-
հօգդ ինչ բարի գործ որ ըրի, ամէնն

ալ քեզի կը ընծայեմ, ինչու որ ես
իդմէ աղէկ բան մը չունիմ. եւ ա-
ռանց քու օգնականութեանդ բան
մ'ալ չեմ կրնար գլուխ հանել. իսկ
ինչ պակսութիւն որ այսօր ըրի, ա-
մենէն կը գարշիմ. եւ կ'առաջա-
դրեմ որ ամէն ձեռքէս եկածն ընեմ
անոնցմէ զգուշանալու համար: Գու
Տէր իմ սրտագէտ, գիտես տկարու-
թիւնս, կը ճանչնաս զմեզ, որ պղտի-
կութենէ ի վեր միշտ մեր բաղձան-
քը գէպ ի չար կ'երթայ. գուն ան-
հուն ողորմութեամբդ իմ սիրտս
փոխէ, որ ճշմարիտ բարին սիրէ ու
ջանայ միշտ սուրբ պատուիրաններդ
պահել. ամէն :

Առ աղօթք :

Ո՛վ բարեգութ Տէր իմ եւ ա-
ռարիչ, քանի որ քաղցր յիշատակդ
ու բարերարութիւններդ միտքս կ'իյ-
նան, սիրտս անանկ մը սիրովդ կը

լցուի, մինչեւ կը բաղձամ զքեզ
երկնից սուրբերուն հետ գիշեր ցո-
րեկ փառաբանել: Անոր ներհակ
մարմինս տկար է ու չի կրնար ար-
թուն կենալ. անոր համար պէտք է
որ չափաւոր քնով հանդչի: Բայց
կը խնդրեմ քեզմէ, ով արարիչ
տուշնչեան եւ գիշերոյ, որ աս գի-
շերս սիրտս միշտ զքեզ սիրելու եւ
օրհնելու արթուն մնայ: Կարող չըլ-
լայ, Տէր իմ, սատանան զիս փորձել
իր չար հնաբքներովը. կարող չըլայ
մարմինս, որ միշտ հոգւոյս գէմ
գլուխ վերցնել կ'ուզէ, բան մը
մտածել, որ քու ամենաբարի կա-
մացդ գէմ ըլլայ: Երկինքին սուրբե-
րը, մանաւանդ պահապան ու պաշտ-
պան սուրբս զիս ամէն փորձանքնե-
րէն պահեն, որպէս զի առտուանց
առողջ մարմնով ու արթուն հոգւով
արթնցած ատենա, գարձեալ կարող
ըլլամ օրհնութեամբ բերանս բա-

նալ, եւ զքեզ հրեշտակներուն ու-
երկնից սուրբերուն հետ փառ արա-
նել, ամէն:

Սաղմոն:

Անձն իմ ի ձեռս քո է յամենայն
ժամ, եւ զօրէնս քո ես ոչ մոռացայ:

Ընկալ զծառայ քո ի բարի, զի մի
ամբարտաւանք զգուեցէն զիս:

Սպասեցին աչք իմ փրկութեան
քում, Տէր, եւ բանից արդարութեան քո:

Օգնութիւն ինձ ի տեանէ եկեցէ,
որ արար զերկինս եւ զերկիր:

Որպէս ոչ ննջէ եւ ոչ ի քուն եր-
թայ պահապանն խօրայէի:

Տէր պահէսցէ զքեզ, եւ Տէր ըն-
կացի աջոյ ձեռամբ իւրով:

Արեգակն ի տուէ քեզ մի մեղիցէ,
եւ մի լուսին ի գիշերի:

Տէր պահէսցէ զքեզ յամենայն չարէ,
պահէսցէ Տէր զանձն քո:

Խաղաղութեամբ յայս եւ ի սոյն
ննջեսցուք եւ զարթիցուք, զի զու Տէր,
մայն առանձին յուսով քո բնակեցու-
ցէր զմեզ:

Չարական:

Զերեկցի աղօթս մեր ընկալ,
Տէր, բարեխօսութեամբ ծնողի քո,

եւ առաքեա ի մեզ, Տէր, զօդնու-
թիւն ի լեռնէ սրբոյ քումմէ:

Աղօթք առ Յիոնս Փրկիչ:

Տէր իմ Յիոնս Քրիստոս, երբ
որ կը յիշեմ անցած կեանքս, կը
սարսիմ ու կը դողամ: Այնչափ
տարիններ աչք բանալու գոցելու մը
պէս անցան դացին. իսկ թէ որչափ
դեռ պիտի ապրիմ" ամեննեւին ան-
ստոյդ է: Աս միացն գիտեմ, թէ երբ
որ է՝ մահն իր յալթութեան նշանը
մեր վրայ օր մը պիտի տնկէ: Թէ որ
գործած մեղերս միտքս բերելու րւ-
լամ, բոլորովին յուսահատութեան
մէջ կիյնամ. իսկ չյիշելը՝ նոյն իսկ
գատապարտութիւն է: Տես, Տէր,
ու ողորմէ իմ խեղճութեանս. զուն
ես իմ արարիչս ու փրկիչս, ես քու
ստեղծուածդ եմ ու քու պատկե-
րիդ նմանութիւնը, մանաւանդ պա-
տուական արեանդ գինը: Զիս այն-

շափ սիրեցիր, մինչեւ ինծի համար
երկինքէն իջար, անարատ սուրբ
կուսէն մարմին առիր. անանկ սոս-
կալի չարչարանքներ քաշեցիր, եւ
խաչին վրայ բոլոր արիւնդ թափե-
լէն ետեւ՝ գլուխդ խոնարհեցուցիր
ու մեռար: Հիմակուընէ քանի որ
շունչ վրաս է, քանի որ լեզուս
կապած ու զգայութիւններս կոր-
սուած չեն, կ'աղաքեմ քեզի, բարի
Յիսուս, որ քու արեանդ գինը չգա-
տապարտես, քու պատկերդ չանար-
դես եւ ստեղծուածդ երեսէ չձգես:
Իրաւցընէ մեղաւոր եմ, զքեզ վշտա-
ցուցեր եմ, եւ շատ հեղ ահեղ
դատաստանդ ու զարհուրելի դժոխ-
քին տանջանքները բանի տեղ չեմ
դրած. անոր համար արժանի էի մե-
ծամեծ պատիժներ ընդունելու: Բայց
ես հիմայ՝ իրբեւ թէ կենացս վեր-
ջին բոպէն հասած ըլլալով, ամէն
մէկ մեղքերուս վրայ մեղայ գոչելով

սրտանց կը զղջամ. գուն ալ, Տէր
իմ, անոնք բաղրավին ջնջես ու թո-
ղութիւն շնորհես: Յօնէտ յէս հշտիառ,
և սուրբ Եղիշ. լուս, և ուն զիւն
սոյնոսէ Եղիշ: Գլմած Յիսուս, քեզի
կը յանձնեմ սիրտս, հոգիս ու մար-
մինս, որ դուն ստեղծեցիր եւ անգին
արեամբդ գնեցիր: Քու ամենայազմ
սուրբ խաչիդ զօրութեամբը զիս
զօրացուր ու միշտ պահպանէ. հո-
գւոյս աշուլներուն լցոս տուր, որ
մահացու մեղքերու մէջ չննջէ:
Դուս էս պաշտպան իմ, Տէր, և է յեւս
ու յանչն առնեմ շնորհի իմ. ամէն:

ԱՐԵԲԱՆԵ

ՎԻՄՆ ԵՐԵԽԸՑԵԳԻՑՈՒԹԵՐՆ

Հայր միր, որ յերկիխն ես:

Հայր բարեգութ, երբ որ մարդուս համար ըրած բարերարութիւններդ միտքս կը բերեմ, չեմ գիտեր թէ ինչպէս քեզի շնորհակալ ըլլամ եւ զքեզ օրհնեմ: Տէր, որ կողմն որ գառնամ, ինչ բանի վրայ որ նայիմ, քու անսահման բարութիւնդ կը տեսնեմ: Դուն ստեղծեցիր ինձի համար աշխարհքս իր բոլոր զարդերով: Դաշտերը խոտերով ու ծաղկեներով զարդարեցիր. լեռները ծառերով ու կենդանիներով բազմացուցիր. օդը զարդարելու համար գեղեցիկ թռչուններ ստեղծեցիր. նոյնպէս ծովին ալ զանազան ձկերով լեցուցիր. որպէս զի ասոմք վայելելով՝ քեզի անլոելի

գոհութիւն մատուցանեմ եւ զքեզ աւելի միրեմ: Ի՞նչպէս մեծ են քու գործքերդ, Տէր Աստուած, որ մարդուս ինելքը չիհամնիր: Եւ երբ որ ես մեղքերովս ալբայութեան ճամբէն հեռացայ, ողորմութեանդ գուռն ինձի դէմ գոցեցի ու վերջն երանութենէն զրկուեցայ. դու ով Հայր զթած, դարձեալ վրաս ի դութ շարժելով՝ Խրկեցիր քու Միածին Որդիդ, որպէս զի զիս անէծքէ աշատէ, մտքիս մմութիւնը հաւատոյ լուսով պայծառացընէ, տկարութիւնս զօրացընէ եւ ինձի երկնից ճամբան առաջնորդէ: Զքնչ ուսց որբուռ Տեառն ընդ ամեայնի, ըստ եռ ին: Հայր երկնաւոր, Հայր բարեգութ, այդչափ ըրած բարերարութեանցդ քեզի ինչ փոխարէն հատուցանեմ: Կորսուած էի, գտար. մեռած էի հոգւով, ողջ ընցուցիր. գժոխիր եւ անիծից որդի

էի, արքայութեան ու օրհնութեան
ժառանգ ըրիր. եւ ես զքեզ այս-
պէս շուտով կը մոռնամ: Որչափ
որ մեծ է քու երախտիքդ, այնչափ
ալ մեծ է իմ ապերախտութիւնս.
որ անբան անասնոյ մը պէս մէջ մը
միտք չեմ բերեր իմ Աստուածս,
իմ Արարիչս ու իմ Փրկիչս: Թէ որ
մէկ զգայարանքս միայն պակաս ըլ-
լար եւ զանիկայ մէկն ինծի պար-
գեւեր, մինչեւ որ մեռնէի՝ զիս անոր
պարտական կը ճանչնայի. իսկ դուն
ինծի ամբողջ կենդանութիւն տուիր,
ամէն զգայարանքներս կատարեալ
սաեղծեցիր: Անանկ է նէ որչափ
պարտականութիւն ունիմ զքեզ
օրհնելու եւ քեզի անդադար շնոր-
հակալ ըլլալու՝ այնչափ երախտեաց
համար, որ ինծի ամէն օր կընես:

Ահա քու ամենասուրբ ոտքդ ին-
կած կը ինդրեմ քեզմէ, Հայր Եր-
կնաւոր, որ մինչեւ հիմայ ըրած յան-

ցանացս թողութիւն տաս, եւ քեզի
գէմ ըրած ապերախտութիւններուս
ներես: Մասնաւոր շնորհք տուր ինծի,
Տէր իմ, որ զքեզ Աստուածդ ու Եր-
կնի եւ Երկրի արարիչդ արժանապէս
կարող ըլլամ ինծի հայր անուանել,
ինչպէս որ ինծի սորվեցուցիր. եւ ես
ալ արժանի ու հնազանդ որդի ըլլամ
քեզի գթած Հօրդ, որ յերկինս ես:

ԱՅԼ ԱՊՈԹՔ ՎԱՐՆ ԿԻՒՐԱԿԻ

Սուրբ Աղիցի տառնե քո:

ՈՎ Տէր իմ եւ արարիչ, դուն
Հրամայեցիր ինծի որ շաբթու մէջ
օր մը սուրբ պահեմ, դադրիմ աշ-
խարհական զբաղմունքներէս ու իմ
պարտքս աղէկ մտածեմ: Առւրբ Եղէք,
ըսիր, ինչպէս որ ես ալ սուրբ եմ:
Այնպիսի վարք պէտք է ունենալ,
որ տեսնելով անհաւատները զար-
մանան եւ զքեզ փառաւորեն, որ

մեզի այսպիսի շնորհքներ կը պարագեւես: Դարձեալ չար քրիստոնեաներն ալ ամէնալով զղջումի գան եւ իրենք զերենք առաքինութեան ճամբան դարձը բան ինձի, որ այսպիսի սուրբ օր մը վերջին վախճանս ճանչնամ, որուն համար զիս ստեղծեր ես, եւ բոլոր շաբաթն ան վախճանին համաձայն վարք ունենամ: Իմ վերջին վախճանս, Տէր իմ եւ արարիչ, դուն ես: Ոիրաս աղատ պիտի պահեմ ամէն ժամանակաւոր բաներէն, եւ ամէն արարած՝ որ իմ ծառայութեանս համար ստեղծեր ես, ինձի պիտի յորդոր ըլլանդքեղ սիրելու. որ այնպիսի բաներ ինձի պարգեւեցիր աս աշխարհքս վայելելու, եւ անդիի աշխարհքը պատրաստած ես բոլորովին դքեղ ինձի տալու արքայութեան մէջ: Դուն լուսաւորէ իմ միտքս ու շխտէ, որ միայն քեզի նայի. չըլլայ

թէ արարածական գեղեցկութիւնը զիս խարէ ու քեզմէ զիս հեռացընէ: Երկրորդ պարտքս է լուսաւոր վարք ունենալ անհաւատներուն ու չար քրիստոնեաներուն առջեւը. նոյնը գործքով ալ կատարելու համար ինձի շնորհք տուր. ինչու որ խիզն ներսէն կը վկայէ, որ շատ անգամ բարի օրինակ տալու տեղ, քու անունդ սուրբ ընելու տեղ, քրիստոնէի անունը նախատուեր է իմ չար վարուքս: Քրիստոնէին պարծանքն է եղայրսիրութիւնը, թշնամեաց բարիք ընելը, չհայհցելը, երդում չընելն ու պարկեցառութիւնը: Տուր ինձի աս առաքինութեանց շնորհքներն ու զիս զօրացներ. ես ալ կառաջադրեմ քու ողորմութեանդ գործակից ըլլալ. եղայրս ինձի պէս սիրել. զիս հալածողներուն բարիք ընել. ամենեւին չհայհցել. սուտ երդում չընել. վերջապէս ինչ որ դուն

սուրբ Աւետարանիդ մէջ հրամայեցիր. որպէս զի ինչպէս որ յառաջքու սուրբ անունդ իմ վրաս ու իմ գէշ վարուցս համար նախատուեցաւ, ասկէ ետքը տեսնելով իմ դարձս ու քրիստոնէի վայել վարքս՝ ամէնքը փառաւորեն ու սուրբ ընենքու փառաւորեալ անունդ։

ԵՐԿՈՒԾԱԲԹԻ

ՎԱՅՆ ԱՍՏՈՒԾԱՑԻՆ ԴԹՈՒԹԵԱՆ

Եկեսցէ արքայութիւն քո։

Սսոււած իմ, արարիչ երկնի եւ երկրի, թէ որ հազարաւոր տարիներ ապրելու ըլլայի, եւ ամենեւին ուրիշ բան չմտածէի բայց եթէ քու ստեղծած բարիեներդ, իրաւցընէ ամէն բոպէ նորնոր բաներ կը դտնէի զարմանալու քու իմաստութեանդ վրայ, եւ գոհանալու քու բարերարութեանդ համար։ Գուն ստեղծեցիր առաջին մարդը, ու փոքր պատուի-

րան մը տուիր՝ որ ծառի մը պտղէն միայն չուտէ. բայց անհնազանդ գրտնուելով պատուիրանիդ, դրախտէն դուրս վճնատուեցաւ, ամէն ունեցած շնորհքները կորսընցուց ու ողորմելութեան մէջ մնաց։ թէ որ գթալով չերկէիր Միածին Որդիդ, ով կրնար աբքայութիւն մտնել. վասն զի Ագամայ մեղքն աբքայութեան դուռն ամենուն ալ գոցած էր։ Ո՛վ Հայր գթութեան, այնչափ մեծ բան մտածեցիր զմեղ փրկելու, զմեղ արքայութիւն մտցընելու համար, որ իսելքէ մաքէ դուրս է։ Եւ ինչպէս կրնայի ես հաւտալ, թէ քու մէկհատիկ Որդիդ մարմին առնու, այնպէս խոնարհ կերպարանօք մարդոց հետ նստի ելլէ, մինչեւ կարծես թէ մոցած ըլլայ իր աստուածութիւնը, եւ ետքը չարագործի մը պէս նախատանօք ու չարչարանօք խաչուի, — թէ որ սուրբ եկեղեցին ինծի սորվեցուցած

ըբլար: Պէտք է զարմանալով գոչեմ.
Ուղէն չէ բաշտ-մ է սպրհու-նէւն + առ-
ցրու-նէւն + Տէր, զբ պահեցէր Երիւ-
ռծոց + ո՞յ: Զէր կրնար քու իմաս-
տութիւնդ ուրիշ ճամբայ մը գտնել՝
զմեղ արքայութեան ժառանդ ընե-
լու համար: Միայն Քրիստոսի արեան
մէկ կաթիլը, մէկ սրտանց աղաւանքը,
մէկ խոնարհութեան ներդործու-
թիւնը բաւական չէր զմեղ Աստու-
ծոյ հետ հաշտեցընելու: Բայց ներէ
համարձակութեանս, ով Տէր իմ.
ինչու որ ես հող ու մօխիր եմ.
ինչպէս կրնամ քու զատաստանիդ
խելք հասցընել: Աս միայն գիտեմ,
որ մեր վրայ ունեցած սէրդ ու
գթութիւնդ չափ չունի եղեր, որ
պյափիսի կերպ բանեցուցիր զմեղ
փրկելու համար: Ուղեցիր, որ քու
Որդիի երկայն ատեն մեղի հետ ըլ-
լայ, մեղի աս աշխարհքիս վրայ ար-
քայութեան ճամբուն առաջնորդ

ըլլայ: Աս ամէն երախտեաց համար
ինչ կրնամ ես մեղաւորս հատուցա-
նել. բայց եթէ գետին ինկած քեզի
շնորհակալ ըլլալ ու շնորհք խնդրել,
որ աս ամէն բարերարութիւններուդ
յիշատակը պահեմ ու ջանամ քու
Միածին Որդւցի օրինակներուն հե-
տեւելով երկնից արքայութեան ար-
ժանի ըլլալ, եւ սուրբ Երրորդու-
թիւնը միշտ փառաւորել:

Ե Ր Ե Փ Շ Ա Բ Թ Ւ

ՀԵՄԻՆԻՐՈՒԹԻՒՆ Ի ՎԻՃՏԾ

Եղիցին կամք քո որպէս յերկիճս են
յերկրի:

Տէր իմ ամենախնամ, մենք ո՞ր-
չափ կարձամիտ ենք ու անխելք, որ
երբ որ բան մը ուղածներնուս պէս
ըլլայ, կամ ձախորդութիւն մը
գլուխնիս գալու ըլլայ, քեզմէ կը
սկսինք տժդոհալ. իբրեւ թէ զմեղ
երեսէ ձգեր ես ու մեղի չես խըլ-

Ճար: Ա՛յս Աստուած իմ, որչափ կու-
րութեան մէջ մնացեր ենք, որ մեր
փրկութեան օգուտը չենք ճանչնար.
բարիքը չարիք կը կարծենք, եւ ո-
ղորմութիւնն անգթութիւն կը սե-
պենք: Զմեղ սիրելուդ համար նե-
ղութիւն կը խրկես մեր վռայ, որ
աշխարհքիս բաներուն հետ սրտեր-
նիս չկապենք, զքեղ չմոռնանք ու
առ աքինի ըլլանք. բայց մենք վարձք
մը չստանալէն ետեւ՝ մեղաց տէր
կըլլանք: Ի՞նչ բանով հաճոյ եղան
քեզի ան բիւրաւոր մարտիրոսները,
Խոստովանողներն ու այնչափ արդար
հօգիները. եւ ի՞նչպէս ան փառաւոր
ու հրաշալի պսակները կրցան առ-
նուլ արքայութեան մէջ, բայց եթէ
նեղութեամբ ու տառապանքով: Թէ
որ աս աշխարհքիս մէջ քու սիրոյդ
համար չարչարանքներուն ու նեղու-
թիւններուն համբերած չըլլանք,
ի՞նչպէս կրնային արքայութեան

փառքին արժանի ըլլալ: Անանկ է
նէ կ'աղաչեմ, ով Աստուած իմ,
փարատէ աս մթութիւնը վրայէս.
ու շնորհք տուր ինծի, որ ասկէ
ետեւ վիս բոլորովին քու սուրբ
կամացդ յանձնեմ, եւ ամէն ատեն՝
մանաւանդ նեղութեան ու փոր-
ձանաց մէջ եղած ժամանակու՝ աս
սուրբ աղօթքս բերնէս անպակաս
ընեմ, որն որ գու, Տէր իմ Յի-
սուս, սորվեցուցիր ինծի: Տէր, եթէ
կ'ուզես, որ նեղութիւններու եւ
վշտերու մէջ չարչարուիմ, եղիցին
կամք քո: Տէր, եթէ կ'ուզես, որ
միշտ աղքատութեան ու կարօտու-
թեան մէջ մնամ, եղիցին կամք քո:
Տէր, եթէ կ'ուզես, որ բանս գործքս
չյաջողի ու զանազան փորձանքներու
մէջ իշնամ, եղիցին կամք քո: Տէր,
եթէ կ'ուզես, որ երկար ատեն ցաւ-
ագարութիւնքաշեմ, հիւանդ մնամ,
եղիցին կամք քո: Օրհնեալ ըլլայ

քու սուրբ կամքդ, ինչպէս երկինքն
անանկ ալ երկրի վրայ: Միայն նե-
ղութեան հետ համբերութիւն ալ
տուր ինծի, որ կարող ըլլամ քու
սիրոյդ համար ան նեղութիւնները
քաշել ու զքեղ օրհնել՝ ըսելով.
Եւէցին իտո՞ւ ու որդէս յէրինս եւ յէրիրէ:

ԶՈՐԵՔԾԱԲԹԻ

ՎԱՅՆ ԵՊԵՒԻՆԵԼՈՅ ՅԱՍՏՈՒՅԾ

Զիաց մեր համապազորդ տուր մեզ
այսօր:

Ամենակարող բարեգութ Աստու-
ած, որչափ պարտական եմ ես քեզի
շնորհակալ ըլլալ քու անսահման
բարութեանդ համար, որ զիս ալ
մինչեւ աս օրս հայրաբար կը կե-
րակրես ու կը պահպանես, եւ կը
յուսամ որ ծերութեանս ատենն
ալ թող չես տար, որ մարմնաւոր
հացս պակսի, որուն աս աշխարհքիս

անապատին մէջ կարօս եմ: Գու
Փրկիչ իմ, անապատին մէջ ի գութ
շարժելով ժողովրդոց վրայ, միայն
հինգ հացով հազարաւոր մարդիկ
կերակրեցիր. սորվեցընելով ինծի որ
մարմնոյս շատ հոգ չտանիմ ու հե-
թանոսաց պէս գիշեր ցորեկ չմտա-
ծեմ թէ ինչ պիտի ուտեմ կամ
ինչ հագնիմ, ինչու որ իմ երկնաւոր
Հայրս արդէն իզմէ աւելի աղեկ
գիտէ թէ բոլոր այդ բաներն ինծի
հարկաւոր են: Աչ ամենեցուն է ուղ
յուսան, Տէ՛ր, Եւ դու դաս իերակուր
նոցս է ժամառ: Ահա ամէն օր այն-
շափ բիւրաւոր կենդանիներու կե-
րակուր կու տաս ու կը պահպա-
նես, զորոնք ինծի համար ստեղծե-
ցիր. որչափ աւելի իմ վրաս խնամ
կը տանիս, որ միայն քեզի համար
ստեղծեցիր: Ուրեմն բոլոր իմ յօսս
ու ակնկալութիւնս գուն ես. ինչ
բարիք որ ինծի կը Խրկես մարմնոյս

Համար, հաղար փառք տալով քու
ողը մած ձեռքէդ կընդունիմ ու քու
բարութեանդ շնորհակալ կըլլաս :

Բայց գիտես, Տէր իմ, ինչպէս որ
մարմինս հացի կարօտ է, ասանկ ալ
հոգիս հոգեւոր կերակուր կուզէ.
իսկ հոգւոյս կերակուրը քու սուրբ
մարմինդ ու արիւնդ է, որ բոլոր
աշխարհիս կեանք կը պարգեւէ:
Դուն խոստացար անսուր բերնովդ,
թէ ով որ քու ճշմարիս մարմինդ
կը ճաշակէ ու սուրբ արիւնդ
կը խմէ, յաւիտեանս ապրի: Ո՛վ
գթած Յիսուս, տուր ինծի աս եր-
կնային հացը, որ անով հոգիս կե-
րակրեմ ու զօրացընեմ, որ միշտ
քու շնորհացդ մէջ կենդանի ըլլայ.
տուր ինծի աս հրեշտակային հացը,
որ շատ անդամ քեզի հետ միանամ
ու քու սէրդ չմոռնամ: Կ'աղաւեմ,
Տէր իմ, տուր ինծի ան մէծ շնորհը.
այս ինքն՝ մեռնելու ատենս աս սուրբ

Ճաղորդութենէն զիս մի զըկեր. ա-
ռանց Սրբութիւն առնելու թող մի
տար՝ որ անմխիթար մեռնիմ: Անոր
համար կենդանութեանս ատեն իիստ
ջերմեռանդ կըլլամ Սրբութեան ու
շատ անդամ կ ուզեմ հաղորդուիլ.
որպէս զիս մահուանս ատեն արժանի
համարիս ինծի դալու, եւ պատուա-
կան մարմնովդ ու արեամբդ զիս զօ-
րացընելու սատանային փորձանկնե-
րուն գէմ:

Հ Ի ՞ Գ Շ Ա Բ Թ Ի

ՎԵՐՆ ՍՊԻՇԽԵՐՈՒԹԵԼՆԵ

ԵՒ Թող մեզ զպարտիս մեր:

Ո՛Վ բաղմագութ Արարիչ իմ,
ոյսօր յիշելով իմ խեղճութիւնս ու
աղքատութիւնս, քու առջեւդ կ'ել-
լեմ ողորմութիւնդ շարժելու հա-
մար: Թէ որ դուն զմեզ արդարու-
թեամբ դատելու ըլլաս, ով կընայ

ապրիլ: Կնչ է իմ բոլոր կեանքս,
բայց եթէ մեղք մեղքի վրայ դիմել,
ու սխալմունք սխալմանց վրայ աւել-
ցընել: Կնչակէս որ ջուրն ամէն ար-
գելք կը վանէ եւ անդադար դէպ
ի վար կը վազէ, ասանկ ալ իմ ան-
կարգ բաղձանքներս զիս իբրեւ թէ
գերի ըրած կը քաշկըստեն քու
պատուիրաններուդ դէմ գործելու:
Կը խոստովանիմ առջեւդ, որ անկարգ
բաղձանքներս վրաս աւելի կ'իշխնեն,
քան թէ քու սուրբ շնորհք: Թէ
որ երբեմն սիրտս զզջում ունենայ,
կամբարի առաջադրութիւն մը միտքս
դնեմ, այնչափ տկար եմ անկարգ
յօժարութիւններս զսպելու, մինչեւ
երբեմն յուսահատութեան խոր-
հուրդ միտքս կ'ինայ՝ որ ամեննեւին
անհոգ ըլլամ ինք զինքս շիտկելու:
Մէկ կողմանէ աշխարհք իր չար օրի-
նակաւը զիս մեղքի կը յորդորէ. մէ-
կալ կողմանէ մարմինս՝ իմ ընտանի

թշնամիս զիս կը դրդէ. եւ այնպէս
կը դրդէ, մինչեւ անկարելի է որ
մարդ իր ուժովը կարող ըլլայ յաղ-
թել: Ահա Տէր իմ, աս կերպարան-
քով կու գամ՝ քու առջեւդ, իմ
պակսութիւններս գլխէս վեր են. մի
միայն յսս ունիմ՝ որ գուն գիտնա-
լով մեր տկարութիւնը, արդարու-
թեամբ մեր պարտքը չես պահան-
ջեր. մանաւանդ թէ շատ անգամ
աչք կը գոցես, կը ներես ու կը
քաւես: Ես ասկէ ետքը կը ջա-
նամ, որ կամաւ չվշտացընեմ զքեղ
իմ Արարիչս. բաւական են անցած
ատենուան ըրածներս: Գիտեմ որ
պատրաստ ես ձեռք տալ ամենուն
ալ, որոնք այսպիսի մոլորութիւն-
ներու գերի են եղած ու ազատիլ
կուզեն, կը զզջան, ըրածներնուն
վրայ կը ցաւին ու կ'առաջադրեն
մէյ մ'ալ չընելու: Անանկ է նէ իրկէ
վրաս ան սուրբ շնորհքը՝ որ կընայ

միտքս ուղղել, որպէս զի աշխարհային
ունայնութեան չետեւիմ, եւ սիրտս
քու սիրովդ բորբոքեմ, որ քու պա-
տուիրաններդ պահեմ եւ մարմինս
հոգւցս իշխանութեան տակ ձգեմ:
Տուր ինծի ան շնորհքն որ առաքեալ-
ներն ունեցան. տուր ինծի ալ այն-
պիսի զղջում, որ Պետրոս առաքեալն
ունեցաւ, երբ Հաւուն խօսիլը լսեց:
Խոցէ իմ սիրտս ալ նոյն աստուա-
ծային սիրովդ, որ յիշելով անթիւ
մեղքերս անմիթմար լամ ողբամ, որ
քեզի Արարչիդ այնչափ ապերախտ
գտնուած եմ: Այնպէս մը բորբոքէ
սէրդ սրտիս մէջ՝ որ մէջ մ'ալ չմարի:

Ո Ւ Բ Բ Ա Թ

ՎԱԽՆ ՍԻՐԵԼՈՅ ԶԹՄՆԵՄԻՍ

Որպէս եւ մեր թողումք մերոց պար-
տապահաց:

Տէր իմ Յիսուս Քիատոս, որ աշ-
խարհք դալովդ ամէն առաքինու-

թեան ճամբաներն օրինակաւ ու խօս-
քով ինծի սորվեցուցիր: Դուն հրա-
մայեցիր ինծի, որ թշնամիներս սի-
րեմ ու զիս հալածողներուն բարիք
ընեմ. բայց կը խօստովանիմ, Տէր
իմ, որ ես շատ անգամ աս պատուի-
րանդ չպահեցի. թշնամիներս չփի-
րելէն զատ՝ ինծի բարիք ընողներուն
ալ ապերախտութիւն ըրի: Ես որ
հող ու մօխիր եմ, միշտ մեղանչե-
լով քեզի թշնամի եղած եմ. բայց
դուն ինծի կը ներես ու կ'ապըսա-
պրես՝ որ ես ալ իմ թշնամիներուս
ներեմ: Ո՛վ Աստուած իմ, չի գլու-
նուիր աշխարհքիս մէջ իմ ըրած
ապերախտութեանս նմանը, որ այն-
պէս մեծ ու սաստիկ ըլլայ, ինչպէս
որ ես ըրած եմ քեզի դէմ՝ քու
սուրբ պատուիրաններդ չպահելով:
Դուն տուիր ինծի կենդանութիւն,
խելք ու միտք եւ ամէն զդայարանկ-
ներս. որպէս զի անոնցմով՝ միայն

զքեղ օրհնեմ, սիրեմ, քեզի ծառայեմ ու քեզի մինակ հաճյ ըւլամ: Ամէն մէկ սրտիս շարժին ու շունչ առնելս դուն կը պահես. ի վերայ այսր ամենայնի ես կը համարձակիմ քու տուած ուժովդ քեզի դէմ ելել, այսչափ բարիքներուդ ապերախտ ըլլալ ու թշնամանալ:

Հիմայ կը ճանչնամ անօրէնութիւններս ու սրտանց կը զդամ ըրած ապերախտութիւններուս վրայ: Ա՛ն սիրելի Փրկիչ, աս ուրբաթ օրս զիս փրկելու համար խաչ ելար եւ արիւն թափեցիր անտանելի ցաւերով. զքեղ խաչ հանողներուն համար ալ երկնաւոր Հօրմէդ թողութիւն ինդրեցիր՝ ըսելով. Հայր, նոռ դոյշ, չէ ու հետեւ չէն հորձն: Ո՛վ գթած Յիսուս, իմ մեղքերուս ալ թողութիւն ինդրէ, որ շատ անդամ զքեղ խաչ հանեցի, եւ անոնցմէ աւելի ապերախտ գըտ-

նուեցայ: Գիտեմ, Տէր իմ, որ ներողամիտ ես ու գիւրաւ կը թողուս իմ պարտքերս. բայց կ'աղջաւմ, ինձի շնորհք տուր, որ ես ալ ինձի պարտական եղողներուն սիրով ներեմ ու թշնամիններս սրտանց սիրեմ: Թէ որ դուն իմ մեծամեծ ապերախտութիւններուս թողութիւն տալու պատրաստ ես, որչափ աւելի ինձի ալ կը վայլէ, որ իմ թշնամիններուս սիրով թողութիւն տամ ու ձեռքէս եկածին չափ բարիք ընեմ:

Անանկ է նէ կը խնդրեմ, Տէր իմ, զիս մի թողուր. քու օգնութիւնդ վրայէս պակաս մի ըներ. որպէս զինախատական խօսքերով ուրիշն սիրտը վիրաւորելէն զգուշանամ, եւ չըլլայ թէ իմ անհոգութեամբս ուրիշն վնաս մը հասցընեմ: Տուր ինձի խոնարհ վարմունք մը, որ ամենեւին մէկը կոպտութեամբ ինձի թշնամի ըընեմ: Զօրացուր զիս շնոր-
4*

Հօքդ ու վառէ բորբոքէ սիրտս եր-
կնային սիրովդ, որ սրտանց սիրեմ
թշնամիներս ու կարող ըլլամ քեզի
հետ ըսել. Հայր, Առաջ տաշտ, Նէ ու
գիտեն Նէն հորժեն: Կը ջանամ աս-
կէց եաքը քու սուրբ շնորհօքդ, որ
ամէն թշնամի եղողները մէկմէկու
հետ հաշտեցընեմ: Կը բաղձամ,
Տէր իմ, որ վերնար ամենեւին աշ-
խարհքէս թշնամութիւն, եւ ամէն
մարդ մէկզմէկ սիրէին եղբայրական
սիրով, ինչպէս որ դուն պատուիրե-
ցիր մեզի:

Չ Ա Բ Ա Թ

ՎԱՐՆ ՅԵՂԹԵԼՈՑ ՓՈՐՁՈՒԹԵԼՆՅ
Են մի տաճիր զմազ ի փորհութիւնն.
այլ փրկեա ի չարէ:

Հայր բարեգութ, որչափ անմիւ-
են երախտիքդ՝ որ անդադար քեզմէ
կընդունիմ: Ո՞ր մայր անանկ խստա-
սիրտ կրնայ ըլլալ, որ իր գրկի որ-

դեակն երեսէ ձգէ. բայց թէ որ
մարդկան մէջ գտնուելու ալ ըլլայ,
դուն զիս չես մոռնար. եւ այնպէս
զիս կը խնամես, իբրեւ թէ աս աշ-
խարհքիս մէջ մինակ ես ըլլայի: Ես
որ այսչափ բարերարութիւններ
քեզմէ կընդունիմ, որչափ սաստիկ
ապերախտ պէտք էի սեպուիլ, թէ
որ միտքէս միայն անցընէի, որ դուն
զիս փորձութեան մէջ կը ձգես ու
թող կու տաս որ ես յաւիտենական
կորստեան վտանգի մէջ իյնամ: Զէ,
Տէր իմ, չէ, ասանկ չեմ հաւտար.
Հեռանան միտքէս ասանկ սատանայ-
ական մոտածութիւններ: Գիտեմ որ
դուն զիս այնպիսի փորձութեան
մէջ չես ձգեր, որ կարողութենէս
վեր է: Կը հաւտամ առանց տարա-
կուսելու, որ փորձութեան հետ
շնորհք ալ կը խրկես, որ կարող ըլ-
լամ համբերել: Կը խրկես վրաս
փորձութիւն, որ համբերել սորվիմ,

անցած մեղքերուս համար թռու-
թիւն գտնեմ եւ առաքինի ըլլալու
առիթ ունենամ: Իրաւցընէ պէտք
եմ շնորհակալ ըլլալ, որ վրաս եր-
բեմ փորձութիւն կը խաւրես. ին-
չու որ առանց ձախորդութեան ինչ-
պէս կրնայի համբերութիւն սորզիլ.
ինչպէս կրնայի ճանչնալ՝ որ զիս կը
սիրես. ինչպէս կրնայի սրտանց զիս
քեզի յանձնել ու քեզի ապաւինի:
Անանկ է նէ փորձութեան հետ ին-
ծի ոյժ ալ պարզեւէ, Տէ՛ր իմ, որ
չըլլայ թէ տրտնջեմ ու անհամբեր
գտնուիմ. չըլլայ թէ փոքր նեղու-
թիւն մը մոռցընէ ինծի քու անթիւ
բարիքդ, որ ամէն օր կը վայելեմ:
Դուն տուր ինծի օձին խորագիտու-
թիւնը, որ յառաջագոյն իմանալով
վտանգն, անկէ փախչիմ. չըլլամ
յանձնապաստան, ինչու որ վտանգը
սիրողը՝ վտանգի մէջ կը կորսուի:
Իսկ ան վրաս խաւրած փորձու-

թեանդ, ո՞լ Արարիչ իմ բազմա-
գութ, ամենեւին չեմ տարակուսիր
որ պատրաստ ես օդնելու, որպէս զի
տակը չմնամ, այլ մանաւանդ շնորհը
ալ կու տաս յաղթելու: Արդ՝ Խրկէ
վրաս ինչ որ կ'ուզես, յաջողութիւն
կամ ձախորդութիւն, բարեկամ կամ
թշնամի, վերջապէս՝ ինչ որ կ'ուզես
եւ հոգւսա փրկութեան աղէկ կը
սեպես. քու շնորհօքդ պատրաստ
եմ ընդունելու. թէ որ դուն հետո
ըլլաս, ո՞լ կրնայ սրտիս մխիթարու-
թիւնը կտրել: Թաղը գան ամէն նե-
ղութիւններ. Ասպառածով ինով անցից
ընդ ուստիսպա. ամէն:

ՃՐԵԱԹԵԿԱՆ
ԸՆԹԹԱՔ Ի ՊԱՏԻՒ ՍՐՅՈՅ ԿՈՒՄԻՆ

Կ Ե Խ Բ Ա Կ Ե

Աղօթք սուրբ Աստուածածնի խարե-
խօսութեամիշը մադաց թողովթիս
ընդունելու համար :

Ո՛Վ քաղցրագութ Տիրուհի իմ,
նայէ մէյ մը գթած աչուըներովդ
մեղաւոր հոգւոյս խեղճութեանը, որ
տարակուսեալ հոգւով քեզի կը
դիմէ: Թէպէտ ես արժանի չեմ, որ
դուն վրաս նայիս ու ողորմիս ինձի.
բայց գիտեմ, որ սիրելի Որդւսց
մահն որ մեղաւորներուն փրկութեան
համար յանձն առաւ, քու գթած
սիրտդ ալ մասնաւոր կերպով մը ի
գութ կը շարժէ մեղաւորներուն օգ-
նելու եւ անոնց պաշտպանութիւն
ընելու: Ո՛Վ մայր ողորմութեան, ա-
նանկ է նէ նայէ խեղճ մեղաւորիս
ալ ու ողորմէ ինձի: Իրաւ որ մեղ-

քերս անթիւ են ու գործած անօրէ-
նութիւններս խիստ մեծ են. բայց
քու կարողութեանդ ու ողորմու-
թեանդ չափ չկայ. Կաղաչեմ, Մայր
Աստուծոյ, մէկ հատիկ Որդւսց սի-
րոյն համար ինձի օգնութեան հասիր.
Երկլնցուր բարերար ձեռքդ ողոր-
մելի մեղաւորիս վրայ, որ ինք զինքը
բոլոր քեզի յանձներ է: Գիտեմ,
ո՞վ Մայր ողորմութեան, որ մեղաւ-
որի մը օգնելը քեզի մեծ ուրախու-
թիւն է. ուրեմն օգնէ ինձի ալ. ին-
չու որ մեղանչելովս Աստուծոյ շնորհ-
քը եւ միանգամայն հոգիս կորսըն-
ցուցի, սատանային ձեռքը գերի ըրի:
Հիմայ ես բոլորովին քեզի ապաւի-
ներ եմ, միայն ըսէ ինձի, թէ ինչ-
պէս դարձեալ Աստուծոյ հաճոյ ըլ-
լամ. Ճամբայ մը ցուցուր ինձի, թէ
ինչ բանով իմ բարի Յիսուսիս հետ
հաշտուիմ: Ո՛Վ բարեխօս ու պաշտ-
պան մեղաւորաց սուրբ Աստուածա-

ծին, մի միայն խօսք մը ըսէ Յիսուս
սին, թէ ով Որդի իմ, գուն ողորմէ
աս խեղճ մեղաւորին. անտարակցս
շուտ մը մեղքերուս թողութիւն կը
գտնեմ: Ցուցուր, ով Մայր Աստու-
ծոյ, թէ որչափ պատրաստ ես բա-
րիք ընելու անոնց, որոնք իրենց ա-
պաւինութիւնն ու յստը քու վրադ
դրած են. ամէն:

Ե Ր Կ Ո Ւ Շ Ա Բ Թ Ի

Աղօթք սուրբ Աստուածածի ապահ-
նելու համար:

Ո՞վ թագուհի երկնի եւ երկրի,
ես որ ատենք խեղճ գերի մ՝ եղած
էի մեղաց, հիմայ զիս քեզի մշարն-
շենաւոր ծառայ կը նուիրեմ եւ
կառաջադրեմ, որ բոլոր կեանքս
քեզի պատիւ ըլլայ. կ'աղաւեմ դուն
զիս ընդունէ եւ երեսէ մի ձգեր,
ինչպէս որ արժանի եմ: Ո՞վ ամենա-
սիրելի մայր, Յիսուսէն ետքը դուն

ես միակ յօսս ու ապաւինութիւնս:
Կ'օրհնեմ ու կը գովեմ իմ Փրկիչս,
որ իր ողորմութեամբն ինծի շնորհք
տուաւ բոլոր ապաւինութիւնս քու
վրադ հաստատելու, զըր ես իմ
յաւիտենական փրկութեանս մեծ
նշան մը կը սեպեմ: Անտարակցս կը
յուսամ, որ Աստուած հզօր բարե-
խօսութեանդ համար իմ մեղքերուս
թողութիւն կը շնորհէ եւ իր ամե-
նասուրբ շնորհքն ինծի կը բաշխէ:
Բայց, ով գթած Մայր իմ, ես կրնամ
շուտ մը դարձեալ իմ առջի գէշ-
ճամբաս դառնալ. ինչու որ նոյն
վոանգները կեցած են միշտ, եւ
թշնամին երբեք չի քնանար. անոր
համար որչափ մեծ մեծ փորձու-
թիւններ առջեւս կան յաղթելու:
Ո՞վ Մայր բարեգութ, դուն ինծի
պաշտպան կեցիր ու թող մի տար,
որ նորէն մեղաց գերի ըլլամ: Գի-
տեմ որ դուն ինծի պաշտպան ըլլա-

Են ետ չես կենար. քեզի այսչափ
աղաւելէն ետքը՝ ողորմութիւնդ ու
մայրական գթած սիրտդ չի կրնար
իմ խեղճութեանս դիմանալ. բայց
կը վախնամ, որ չըլայ թէ մեղաց
առթին զքեզ մոռնամ, եւ այնպէս
կորսուիմ: Անոր համար կը խնդրեմ
քեզմէ, Սուրբ Աստուածածին, աս
շնորհըը, որ կարող ըլլամ դժոխային
թշնամին վրաս վազած ատեն շուտ մը
քեզի դիմել եւ զքեզ օգնութեան
կանչել: Ո՞վ Մարիամ, ինձ խեղճ
մեղաւորիս օգնութեան հասիր. ո՞վ
Մայր սիրելի, թող մի տար, որ ես
Աստուծոյ անհաւատարիմ ըլլամ.
ամէն:

Ե Բ Ե Ք Ը Ա Բ Թ Ի

Աղօթք սուրբ Աստուածածէն բարի
մահ խնդրելու համար:

Ո՞վ մայր ողորմութեան Կոյս
Մարիամ, արդեօք մահուանս ատենն

ինչ վիճակի մէջ պիտի դանուիմ:
Երբ գործած մեղքերս կը մտածեմ
եւ ան սոսկալի բոպէն, որ յաւիտե-
նական փրկութիւնս կամ դատա-
պարտութիւնս պիտի որոշէ, վախէս
վրաս գող կու գայ: Իմ փրկու-
թեանս ուրիշ յոյս մը չունիմ, բայց
եթէ քու Որդւոյդ անդին արիւնն,
ու քու հզօր բարեխօսութիւնդ:
Միիթարիչ վշտացելոց սուրբ Աս-
տուածածին, ան ետքի զարհուրելի
ատենը քու օգնութիւնդ իզմէ մի
հեռացըներ. ան նեղութեան բո-
պէն զիս մխիթարութենէդ մի զըր-
կեր: Թէ որ հիմայ խիղճս գործած
մեղքերուս համար, Աստուծոյ ար-
դարութեան համար ու յաւիտե-
նական փրկութեանս անստուգու-
թեան համար այսչափ ինձի նեղու-
թիւն կու տայ, ան ատեն որչափ
աւելի զիս պիտի նեղէ: Ո՞վ ապաս-
տան մեղաւորաց, քանի որ մահուանս

ժամանակը չէ մօտիկցեր, ինծի ճշշ-
մարիտ ապաշխարութեան ու առանց
մեղաց ապրելու շնորհք տուր, որ-
պէս զի գործածներուս վրայ զղամ
ու մինչեւ որ մեռնիմ ալ չմեղան-
չեմ: Կ'աղաչեմ, գթած կոյս, մեռ-
նելու ատենս ինծի օգնէ, որ երբ որ
անթիւ ու մեծամեծ մեղքերս միտքս
գալու ըլլան, յուսահատութեան
մէջ չկյնամ. զօրութիւն տուր ինծի,
որ կարող ըլլամ ան ատեն քու
սուրբ անունդ ու քու բարերար
Որդւցդ անունը սրտանց կանչել:
Գիտեմ որ չես վշտանար, թէ որ
համարձակելու ըլլամ այնպէս բան
մը քեզմէ ինդրելու, որուն ամե-
նեւին արժանի չեմ: Ո՛վ գորովա-
գութ Մայր, այնչափ է քու գթու-
թիւնդ ու քաղցրութիւնդ, որ կը
ներես իմ համարձակութեանս: Գի-
տես, Մայր, թէ որչափ գառն է ետ-
քի բոպէն, անոր համար կ'աղաչեմ,

թէ որ հնար է, ան սոսկալի ատենը
քաղցր ներկայութեամբդ զիս միի-
թարելու արժանի ընես: Կը խոստո-
վանիմ, որ ողորմելի մեղաւոր մըն
եմ ես եւ աս մեծ շնորհաց արժանի
չեմ. բայց, Մայր Աստուծոյ, գուն
ալ մեղաւորներուն պաշտպան ես. կը
խոստանամ քեզի ձեռքէս եկածին
չափ բոլըր սրտանց ջերմեռանդ ըլ-
լալ: Բայց թէ որ իմ անարժանու-
թիւնս ու անթիւ ապերախտութիւն-
ներս աս մեծ շնորհքիս արգելք ըլ-
լան, ան ատեն կ'աղաչեմ, որ գոնէ
քու միիթարութիւնդ վրայէս պա-
կաս չընես. որպէս զի Աստուծոյ սի-
րոյն մէջ աս աշխարհքէս ելլելով՝
անդիի աշխարհք զքեզ ու ամենա-
սուրբ երրորդութիւնը տեսնելու
արժանի ըլլամ. ամէն:

ՉՈՐԵՔՆԱԲՐՅ

Աղօթք սուրբ Աստուածածնի խարենառութեամիշը դժոխքին ազատեղու համար :

Ի՞ւր անգամ գոհութիւն կը մատուցանեմ քեզի, ով բարեգութ Մայր, որ զիս քու միջնորդութեամբդ դժոկիքն ազատեցիր, որուն շատ անգամ արժանի էի: Դատապարտութեանս վճիռը շատոնց վրաս կատարուած էր, թէ որ դուն, ով սուրբ Աստուածածնն, աղքիւր գթութեանս ու ողորմութեանն, Աստուածոյ արդարութենէն ինձի համար ապաշխարելու ժամանակ ընդունած չըլլայիր: Ասանկով իմ խստասրատութեանս յաղթեցիր ու սիրտս ալ շարժեցիր, որ բոլորովին քեզի դիմեմ ու քեզի ապաւինիմ: Այսափ զանազան մեծ վտանգներու մէջ ինկած ըլլալով՝ որչափ մեղաց տէր պիտի ըլլայի, թէ

որ դուն, ով Մայր ողորմութեան, ինձի համար Աստուածմէ շնորհք խընդրած եւ ինձի պաշտպան կեցած չըլլայիր: Ով բարեգութ Տիրամայր, ասկից ետքն ալ մի դադրիր զիս դժոկիքն պատսպարել ու մեղքերէն ազատ պահել: Ի՞նչ օգուտ կըլլայ ինձի մինչեւ հիմայ ըբած ողորմութիւնդ, թէ որ ես վերջապէս դատապարտուելու ըլլամ: Թողլ մի տար, որ ես քեզմէ ու քու սիրելի Որդիկէդ բաժնուիմ, որ քու բարեխօսութեամբդ մինչեւ հիմայ այսչափ ողըրմեցաւ ինձի: Ով Մայր գթութեանն, չըլլայ թէ (որ բերանս յառաջ չերթար ըսելու) քու սիրելի Որդիկ ու զքեզ ալ մէկտեղ յաւիտեանս յաւիտենից դժոկիքին մէջ ատեմ ու հայհոյեմ: Կրնած դուն դիմանալ, որ ծառաներէդ մէկն որ զքեզ սրտանց կը սիրէ, յաւիտեանս դատապարտուի. ի՞նչ կըսէր ան ա-

տեն քու գթած մայրենի սիրադ։
Ո՛վ Մարիամ, յաւիտեանս պիտի
կորսուիմ արդեօք. իրաւցընէ կը կոր-
սուիմ, թէ որ զքեղ թող տալու
ըլլամ. բայց ինչպէս կրնամ զքեղ
թողլու. ինչպէս կրնամ քու ցու-
ցուցած սէրդ մոռնալ։ Ո՛վ գթած
Մայր իմ, դուն որ ինձի այսչափ բա-
րիք ըրիր, աս շնորհքս ալ ինձի ըրէ
եւ օգնութիւնդ վրայէս ամենեւին
մի պակսեցըներ։ Հիմայ ես զքեղ
սրտանց կը սիրեմ եւ զիս բոլորովին
քեզի կը յանձնեմ. որովհետեւ ին-
ձի այնչափ շնորհք ըրիր, մանաւանդ
ան ատենն ալ, երբ որ ես ամենեւին
զքեղ մուցեր էի. Քու օրհնեալ
ձեռքդ վրաս երկընցուր եւ ինձի
պաշտպան եղիք ու բռնէ որ գժոխք
չկյեամ։ Զիս պահէ որ մահացու
մեղք չգործեմ, որ զիս գժոխք կը
տանի։

ՀԻՆԳԱՐԹԻ

Աղօթք առ սուրբ Աստուածածին
յախտենական երանութեան համար։

Ո՛վ հզօր թագուհի երկնի եւ
երկրի, դուն որ ամենասուրբ Երրոր-
դութեան մօտ սերովլեէներէն ու-
քերովլեէներէն վեր աստուածային
փառօք կը զմայիս, քու գթած ա-
շուըներդ դարձուր մէջ մը խեղճ
մեղաւորիս վրայ, որ աս ողբալի եր-
կրէս առ քեղ կը պաղատիմ եւ
օգնութիւնդ կը խնդրեմ։ Տես, ով
Մարիամ, ինչ վտանգներու մէջ կը
պտըտիմ։ յաւիտեանս կրնամ հոգիս
կորսընցընել, քանի որ աս աշխարհ-
քիս մէջ եմ։ Դուն ես իմ ապաւի-
նութիւնա, զքեղ կ'աղաչեմ, ով մայր
շնորհաց, որ զիս արքայութիւն ընդ-
ունիս, որպէս զի հօն զԱստուած
եւ զքեղ յաւիտեան սիրեմ ու գո-
վեմ։ Երբ պիտի ծագի այն ցանկա-
5*

լի օրն՝ որ յաւիտենական կորստեան վտանգներէն աղատելով, սիրելի Փրկչիս մայրը՝ որ հոգւցս փրկութեանը համար այսչափ աշխատեցաւ, պիտի արժանի ըլլամ տեսնել: Ե՞րբ պիտի գայ ան ատենը, որ կարող ըւլսմ՝ ան սուրբ ու օրհնեալ ձեռքը պագնել՝ որ զիս շատ անդամ դժոխւքէն աղատեց եւ ինծի պէս անարժանի մը այնչափ հարուստ պարգեւներ տուաւ:

Ո՛վ Մայր իմ, աս աշխարհքս շատ հեղ քեզի ապերախտ գտնուեցայ. բայց արքայութեան մէջ ալ ապերախտ չեմ ըլլար. հոն ամէն ուժովս յաւիտեան զքեզ կը սիրեմ ու ըրած ապերախտութեանս տեղ յաւիտենական գոհութիւն ու փառաբանութիւն քեզի կը մատուցանեմ: Ճնորհակալ եմ Աստուծոյ գթութեանը, որ Յիսուսին պատուական արեան ու քեզի յուսալու եւ ա-

պաւինելու շնորհք տուաւ ինծի: Անտարակցոյ գիտեմ, որ գուն իմ մեղքերուս համար թողութիւն կ'ընդունիս, եւ մաքիս լցոս ու զօրութիւն ալ կու տաս Աստուծոյ կամքը կատարելու եւ եաքը արքայութիւն համնելու: Աս յշյն ամէն քու ծառաներդ ունեցան եւ անոնցմէ մէկը չխաբուեցաւ. անոր համար իմ յշյս ալ զիս չ'ամըցցըներ: Ճնորհք տուրինծի, որ քու վրադ ունեցած ապաւինութիւնս օրէ օր աւելնայ եւ անդիի աշխարհքը քու Որդիդ՝ քու սուրբ որովայնիդ օրհնեալ պտուղը ցուցուր ինծի, ով գթած, ով բարեգութ, ով քաղցր կըս Մարիամ. որպէս զի կարող ըլլամ քու Որդիդ եւ զքեզ միշտ եւ յաւիտեան գովել ու սիրել:

Ո՛վ մայր բարեգութ, խնդրէ ինծի համար մեղքերուս թողութիւն, ի բարին յարատեւութիւն, բարի

մահ եւ ետքը արքայութեան փառքը. բայց մասնաւորապէս աս շնորհքը, որ ես միշտ քու գիրկդ վազեմ: Թէպէտ աս խնդրած շնորհքներս շատ մեծ բաներ են, որոնց ես ամենեւին արդիւնք կամ արժանաւորութիւն մը չունիմ. բայց ովլ թագուհի ամենազօր, ասոնք ինձի պարգեւելը քեզի գիւրին բան մըն է. ինչու որ Աստուած զքեզ շատ կը սիրէ եւ քու խօսքդ ու բարեխօսութիւնդ երբեք գեաինը չ'իյնար: Անանկ է նէ դուն ինձի համար աղաչէ Յիսուսին. միայն ըսէ անոր, որ ես քու որդեգիրդ եմ եւ զիս քու պաշտպանութեանդ տակն առած ես. աս բաւական է ինձի ամէն շնորհք Աստուծմէ ընդունելու: Ո՛վ Մարիամ, Մայր սիրելի, իմ բոլոր ապաւինութիւնս դուն ես. կուզեմ զքեզ միշտ սիրել ու քեզի ապաւինած ու բախութեամբ ալ կը մեռնիմ, ամէն:

ՈՒՐԲԱՐ

Ազօթք զթիսոս ևս զուրք Աստուծածին սիրելոն համար:

Ո՛վ ամենասուրբ Կյս, աղէկ գիտեմ որ գուն Աստուծոյ արարածներուն մէջ ամենէն աւելի ազնիւը, մաքուրը, գեղեցիկը, սուրբն ու սիրելին ես: Երանի թէ ամէն մարդալ քու արժանաւորութիւնդ ու բարերարութիւնդ աղէկ ճանչնար եւ զքեզ սիրէր: Հիմայ ասովլ կը միսիարուիմ, որ այնչափ բիւրաւոր արդար հոգիներ թէ արքայութեան մէջ եւ թէ աս աշխարհքիս մէջ որ կը գտնուին, ամենը քու սքանչելի գեղեցկութիւնդ ու անպատճելի շնորհքներդ կը գովեն եւ զքեզ կը սիրեն: Ամենէն աւելի անոր կուրախանամ, որ Աստուած զքեզ աւելի կը սիրէ, քան թէ բոլոր հրեշտակներն ու մարդիկները միատեղ: Ո՛վ

ամենազօր թագուհի, ես ողորմելիս
ալ՝ թէպէտ շատ նուաստ, բայց մաս-
նաւոր սէր մ'ունիմ քեզի, եւ կը
բաղձամ՝ որ աւելի ու վառեալ սէր
ունենամ. եւ աս պարզեւը քեզ-
մէ առնելու համար աղաչելէն եր-
բեք չեմ դադրիթ: Ընդունէ Աս-
տուծմէ ինծի համար աս շնորհքն որ
յաւիտենական փրկութեան ստոյգ
նշան է, եւ անոնց մինակ կը տրուի,
որոնք Աստուծմէ արքայութեան հա-
մար ընտրուած են:

Կը ճանչնամ նաեւ մեծ պարտաւ-
որութիւնս որ ունիմ զՅիսուս՝ քու
սիրելի Որդիթ ամէն բանէն աւելի
սիրելու: Գիտեմ որ ուրիշ բանի
աւելի չես բաղձար, բայց եթէ քու
սիրելի Որդիթ ամենէն ալ սիրուի.
անոր համար կ'աղաչեմ քեզի, Մայր
Աստուծոյ, որ ինծի համար աս
շնորհքն ընդունիս. որպէս զի կարող
ըլլամ ինչպէս որ պէտք է՝ զՅիսուս

սիրել: Քու բարեխօսութիւնդ ամէն
բանի կարող է. ես երկրաւոր բարիք
քեզմէ չեմ ինդրեր, հապա ան բա-
նը միայն կը ինդրեմ, որ քու սիրոդ
ալ կը բաղձայ խնդրելս: Կրնայ ըլ-
լալ, որ դուն չկատարես աս աղա-
չանքս, որ քեզի այնչափ հաճելի է.
Գիտեմ որ աղաչանքս Աստուծոյ առ-
ջեւ կը հանես եւ ինծի համար բա-
րեխօս կ'ըլլա: Քեզի աղաչելէն ու
պաղատելէն չեմ դադրիթ, մինչեւ
որ ապահով չեմ ըլլար Աստուծս
կորսնցընելու ամէն վլանգներէն:
Եւ երբ որ արքայութիւնը զքեզ
տեսնելու արժանի կ'ըլլամ, զքեզ
կորսնցընելու երկիւղէն աղատած՝
կը սիրեմ զԱստուծ եւ զքեզ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԾԱԲԱԲ

Աղօթք սուրբ Աստուածածին բարե-
խօսութեանը համար :

Գորովագութ ողջրմած Մայր իմ,
մէկ կողմանէ քու անհամար բարե-
րարութիւններդ միտքս կու գան.
միւս կողմանէ խելքէ մոքէ դուրս
ըրած ապերախտութիւններս աշքիս
առջեւ կելքն։ Ես արժանի չեմ
քու շնորհքիդ, անանկ ալ դարձեալ
քու ողջրմութիւնէդ երեք չեմ յու-
սահատիր. ինչու որ ողջրմութիւնդ
ապերախտութենէս շատ աւելի է:
Ովհ հզօր բարեխօս սուրբ Աստուա-
ծածին, գթութիւն ըսէ վաս. դուն
ես շնորհաց գանձապետը, քու ձե-
ռօքդ կը բաժնուին ամէն մեղաւ-
որներուն տրուելու շնորհքները. ա-
նոր համար Աստուած քեզի ասանկ
մեծ կարողութիւն, չատնելու գանձ
ու գթած սիրտ տուաւ, որ դուն մեր

նեղութեան ատեն մեզի օգնութեան
հասնիս: Ովհ Մայր գթութեան, նե-
ղութեանս ատեն զիս երեսէ մի
ձգեր: Մեծ փառք է քեզի մայրենի
սիրովդ գրկել այնպիսի ողջրմէլլները,
որոնք ամենուն երեսէն ձգուած են.
քու հզօր պաշտպանութիւնդ բաւ-
ական է զանոնք ամէն յուսահատու-
թենէ աղատելու: Իմ յաւիտենա-
կան փրկութիւնս քու ձեռքդ կը
յանձնեմ, եւ աս խեղձ հոգիս՝ որ
արդէն կորսուած է, քու բարեխօ-
սութեամբդ պիտի փրկուի: Զիս մի
վորնաեր, որ կը բաղձամ ամենայն
յօժարութեամբ քու հաւատարիմ
ծառաներուդ կարգը մտնել: Ընդու-
նէ զիս հզօր պաշտպանութեանդ
տակ. ան ատեն բանէ մըն ալ չեմ
վախնար. ոչ մեղքերէս, ինչու որ
աս չարեացս գէմ զօրաւոր ճար մը
կը գտնես. ոչ դժոխային թշնամի-
ներէն, ինչու որ քու զօրութիւնդ

աւելի մեծ է, քան թէ բոլոր դժոխ-
քին սյժը. ոչ Յիսուսէն իմ՝ արդար
դատաւորէս, ինչու որ մի միայն
խօսքդ, որ ինձի համար իրեն խօսիս,
անոր բարկութիւնը կ'անցընէ: Միայն
մէկ բանէ կը վախնամ, այսինքն չըլ-
լայ թէ ծուլութեամբս քու ծառայ-
ութենէդ պաղիմ եւ ինձի կորըս-
տեան ճամբայ բանամ: Ով սուրբ
Աստուածածին, քու հզօր բարեխօ-
սութիւնդ վրայէս պակաս մի ըներ
եւ միշտ օգնական եղիր ինձի. ամէն:

ԱՎՈԹԱՔ

ՍՐԵԱՑ ՊԱՏԵՐԱԳԻՆ

Եկեղեցի մտած ատեն:

Տէր իմ եւ Աստուած իմ, ես ան-
արժան մեղաւորս ահա քու շնորհաց
տունդ եկած եմ. որպէս զի հոգեւ-
որ աղքատութիւնս առջեւդ բանամ,
եւ խեղճութիւնս զքեզ ողըրմու-
թեան շարժէ: Գիտեմ, որ որչափ
աւելի աղէկ կը մտածեմ քու շար-
չարանքներուդ յիշատակը, այնչափ
աւելի կը վառի ու կը բորբոքի
սիրտս սուրբ սիրովդ, եւ կը զօրա-
նայ հոգիս ալ առաքինութեան գան-
ձեր ժողվելու: Անանկ է նէ, ով
Փրկիչ իմ, տուր ինձի ան սիրտը,
ան զգացումը, որ ունեցաւ քու ա-
մենասիրելի Մայրդ խաչին քովը
կեցած ատեն: Ես ալ ստուգիւ կը
հաւտամ, որ աս անարիւն պատա-
րագը՝ Գողգոթա լեռն եղած արիւ-

նոտ պատարագին հետ նոյն է. եւ
նոյն շնորհքները հոս ալ կը բաշխին,
ինչպէս որ հոն ալ՝ բաշխեցան ա-
նոնց, զորոնք դռւն արժանի բրիր
այնպիսի աստուածային պարգևներն
ընդունելու:

Երբ քահանան պատարագի կ'եղի:

Ո՞րչափ պէտք է որ գոհանամ-
քեզմէ, ով Աստուած իմ, որ առա-
քեալներուն եւ անոնց յաջորդնե-
րուն ապսպրեցիր քու չարչարանք-
ներուդ յիշատակը աս սրբազն
պատարագը մատուցանելով նորո-
գել ու դարձեալ մտուցնիս բերել,
եւ լեզուաւ չպատմուելու շնորհք-
ներու արժանի ըլլալ: Ահա աչքիս
առջեւը կը տեսնեմ քու փրկարար
չարչարանքներուդ օրինակը. կը
տեսնեմ զքեղ, որ քահանային կեր-
պովը ձիթենեաց լեռան վրայ գացեր
ցաւալի մտածսանց ու անմիջիթար

տրտմութեան մէջ մնացած կը հո-
գաս ու երկնաւոր Հօրդ կ'աղա-
չես: Դուն ով Փրկիչ իմ, զօրու-
թիւն ու շնորհք տուր ինծի որ քու
ամենասուրբ օրինակիդ միշտ հե-
տեւիմ եւ միայն քեզի հաճոյ ըլլալու
ջանամ: Միսիթարէ խեղճ հոգիս ալ,
որ աս ողորմելի աշխարհքիս աքսո-
րանքին մէջ միշտ տրտում ու ան-
հանգիստ է եւ միշտ զքեղ կը
վնտուէ. տուր զքեղ ինծի, Տէր իմ,
եւ աս միայն հերիք է ինծի:

Եւ վասն սրբուհոյ Աստուածածնիմ:

Ո՞վ թագուհի երկնաւոր, գուն որ
խաչին քովը կենալով քու սիրական
Որդւսդ քաշած չարչարանքներուն
ցաւոցը չարչարակից եղար, միջնոր-
դութիւն ըրէ ինծի համար քու Որ-
դւսդ, որ իմ քարացեալ սիրտս
կակղացընէ, որ կարող ըլլամ մեղ-
քերուս գէշութիւնը ձանչնալ ու

անոնցմէ գանիլ։ Դարձեալ շնորհէ
ինծի սիրտ ցաւակցութեան, զոր դուն
խաչին քովը կեցած ատենդ ունե-
ցար, որ ես ալ կարող ըլլամ մաս-
նակից ըլլալ Քրիստոսի չարչարանք-
ներուն, որպէս զի արքայութեան
մէջ ալ անոր փառքին արժանի
ըլլամ։

Խոստովանեիմ առաջի Աստուծոյ։

Եհա, Տէր իմ, ես ալ քահանային
հետ կը խոստովանիմ իմ մեղքերս
քու առջեւդ, եւ սուրբ Աստուա-
ծածնի ու ամէն սուրբերուն առ-
ջեւը, ինչու որ գիտեմ՝ թէ շատ ան-
դամ մեղանչելովս զքեզ վշտացու-
ցած եմ։ Ո՛քափ մեծ է եղեր անօ-
րէնութիւնս, մինչեւ հարկ եղաւ որ
դուն մարմին առնուս ու մեղքերս
քաւելու համար խաչին վրայ արեանդ
վերջին կաթիլը թափես։ Թէ որ զիս
սիրելուդ համար այսչափ բաներ

կրեցիր, կը յուսամ քու ողորմու-
թենէդ, որ իմ խոստովանութիւնս
ալ կ'ընդունիս եւ կատարեալ զդիման
շնորհէ ալ կը պարգեւես, որ ասկից
ետեւ փախչիմ մէղաց առիթներէն,
որ այնչափ չարչարանք քաշելու
պատճառ եղան քեզի։ աս աշխարհ-
քիս մէջ ժամանակ ալ կու տաս
ինծի, որ մեղքերուս վրայ ապաշ-
խարեմ ու քեզի հաճելի բարե-
գործութիւն ընեմ։ Աս ունեցած
առաջադրութեանս՝ դուն, Տէր իմ,
Հաստատութիւն տուր ու սրտիս
բաղձանքը բորբոքէ, որ օրէ օր միշտ
սիրոս աւելի վառուի սուրբ սիրովդ։

Ի յարկի սրբութեամ։

Որպիսի՛ յարգութեամբ ու խո-
նարհութեամբ պէտք է երկրպա-
գութիւն ընենք քեզի մէնք հողեղէն
արարածքս, ո՞լ Աստուած իմ, որ նոյն
ինքն սրբութիւն ես. մէնք ամէն

կերպ պակսութիւն ունինք։ Աս
տունա՝ որ հրեշտակներու բնակարան
է, ինչպէս կը համարձակէինք մտնել,
թէ որ դուն զմեղ հրաւիրած ըլլայ-
իր՝ ըսելով. թէ Եկէք ինծի ամէն
ծանր բեռերու եւ աշխատութեան
տակ մնացողներ, ես ձեզի հանդիսա
կու տամ. Եկէք իմ տունս, որ ձեզի
համար շինեցի, որ մեղքերնիդ քաւ-
ելու եւ թողութիւն ընդունելու
տեղն է։ Անանկ է նէ իմ մեծամեծ
մեղքերուս թողութեան ու քաւու-
թեան ուրիշ տեղ չկայ. անոր հա-
մար հոս քու ամենատես աչքիդ առ-
ջին եկած եմ ու երեսի գրայ ինկած
կ'երկրպագեմ քեզի, եւ քու ան-
հուն ողղրմութիւնդ որուն չափ չկայ՝
յաւիտեանս յաւիտենից կ'օրհնեմ։

Օրհնեալ թագակորութիւն։

Միշտ օրհնելու պարտական ենք
քու թագաւորութիւնդ, ով ամե-

նասուրբ Երրորդութիւն, որ այնչափ
կը փառաւորես քու սիրելի ծառաւ-
ներդ արքայութեան մէջ, մինչեւ
քու անհասանելի փառքիդ արժանի
կ'լնես ու կ'ընդունիս անոնց բարե-
խօսութիւնը։ Արդ՝ ես ալ սուրբ
եկեղեցւյ չետ աս օրուան սուրբս
ինծի բարեխօս կը բոնեմ ու կը
խնդրեմ որ լսես անոր աղաչանաց։
Նախ առաջին սուրբ Աստուածածնի
բարեխօսութեամբը տուր ինծի ա-
նանկ շնորհք մը, որ տկարութիւնս
զօրացընէ։ Եւ ինչպէս որ սուրբերը
կրցան յաղթել իրենց մարմնոյն,
աշխարհքին ու սատանային, նոյնպէս
ես ալ շնորհքովդ կարող ըլլամ իմ
մարմնոյս չար ցանկութիւնները
զապել. աշխարհքիս անցաւոր մեծու-
թեանը չետ սիրտս չկապել ու սա-
տանային խաբէութիւններուն չե-
տեւիլ։ Զօրութիւն տուր ինծի, որ
աս բաներս իրօք ու գործքով ալ
6*

կատարեմ, որպէս զի ես ալ քու
սիրելի ծառաներուդ հետ արքայու-
թեան մէջ օրհնեմ քու թագաւո-
րութիւնդ:

Սուրբ Աստվածած:

Դու Տէր իմ մարդասէր, այնչափ
մեր հողեղէն բնութիւնը պատուե-
ցի՞ մինչեւ աս հրեշտակային երեք-
սրբեան փառաբանութիւնն երգե-
լու մէզի համարձակութիւն տուիր:
Ո՛վ Աստուած իմ, որ ամենեւին
սրբութիւն ես, զօրութիւն տուր
ինծի որ սրբութեամբ ապրիմ. դուն
որ միանդամայն հզօր ես ու քու
զօրութեանդ ոչ ոք կրնայ դէմ
գնել, զօրութիւն տուր ինծի, որ
բարի առաջադրութիւնս կարող ըլ-
լամ կատարել: Դուն՝ որ աղքիւր ես
անմահ կենդանութեան, իմ մեռեալ
հոգիս ողջացուր: Դու Տէր իմ Տէր,
աւելի աղէկ գիտես ինչ որ ինծի

պէտք է՝ քան թէ ես դուն աւելի
պատրաստ ես տալու, քան թէ ես
առնելու. անանկ է նէ դուն ողորմէ
ինծի ու հոգւոյս փրկութեան օգ-
տակարը ցուցուր ինծի. շնորհք ալ
աւելցուր, որ կարող ըլլամ պա-
տուիրաններդ պահել:

Գէրժն առ Աւետուրուն առ Վարդու-
րու լու, ինչպէս որ և լեէր, նե որ Աւ-
ետուր ի բնութանը իսուեւ ըլլամ: Իս Հա-
յուսունու առ հանունոյն ճէր Գուրեւ զուրցէ ե-
ւալու Աւետուրու, որ մէ բնութեան անուղու-
թեան անեւ, որ չէ ինոր Աւետուրուն ը-
լլամ: Ճառարու իսրհարդունեւը, եւ նե որ
ինքնանութեան անեւներ են կըսէր ոյտ
իւնանիւն կըսէն առ լու դոյ իւլի:

Խաղաղութեամի քով Քրիստո:

Տուր ինծի, մարդասէր Փրկիչ
իմ, ան խաղաղութիւնն որ աշկերտ-
ներուդ խոստացար, թէ տալու խա-
ղաղութիւնս աշխարհքիս խաղաղու-
թեան պէս չէ: Տուր որ նախ եւ
յառաջ իմ մարմնոյս ու հոգւոյս

մէջ խաղաղութիւն ընեմ. այսինքն
ապստամբ մարմինս հոգւոյս իշխա-
նութեան տակ հնազանդեցընեմ,
որ ալ չկարենայ քու պատուիրան-
ներուդ գէմ գործել: Աս շնորհըը
պարգեւելէն ետքը՝ տուր ինծի ան
շնորհն ալ, որ ուրիշ խոռվեաները
խաղաղեցընեմ: Դուն ով խաղաղու-
թիւնդ աշխարհի, դուն խոստացար՝
որ կուռողներուն մէջ խաղաղութիւն
ձգողներն որդիք Աստուծոյ ըսուին:
Իմ բոլոր փափաքս ան է, որ ա-
մէնիս ալ քու սուրբ շնորհօքդ
զքեզ ամէն բանի արարիչ ճանչ-
նանք. եւ մէկ ճշմարիտ հաւատով
ու միաբանութեամբ քեզի երկրպա-
գութիւն ընենք: Հեռացո մեզմէ
ամէն չար ախտերը, ինչպիսի է կոիւ,
թշնամութիւն, նախանձ, հերձուած,
որ ամէնն ալ խաղաղութեան թշնամի
են: Եւ այսպէս ծաղկելով մեր մէջը
սէրն ու խաղաղութիւնը՝ քու ա-

նուանդ փառք ու պատիւ ըլլանք
անհաւատներուն առջեւը:

Հոհացայց սրբութեամիք:

Ուա ու մաքրէ հոգիս ամէն
աղտերէ քու սուրբ արեամբդ ու
քաւէ անմիւ մեղքերս, ով գթած
Փրկիչ իմ Յիսուս. քու բարերար
ողորմութեանդ ցօլը մեղուցեալ
հոգւոյս վրայ թափէ, որ գարշելի
կիրքերուս բոցը մարէ ու սիրոս
միրովդ բորբոքէ: Ահա աս սուրբ
պատարագին հետ զիս բոլորովին
քեզի կ'ընծայեմ, Տէր իմ, քաղցրու-
թեամբ մը նայէ, ու մի անարժան
համարիր: Գիտեմ՝ որ ըրած ընծառ
ընչին բան մըն է, ու ինք իրեն յարգ
մը չունի. անոր համար կ'աղաւեմ,
որ անարժան ընծառ ընդունիս եւ
աս սուրբ պատարագիս հետ քու
երկնաւոր Հօրդ մատուցանես:

Թղջոյն տոհք միմնանց:

Տէր իմ, երբ որ կը յիշեմ պատուիրաններդ ու սուրբ օրինակներդ, որ մեզի յիշելիք թողուցիր, շատ կ'ամչնամ: Դուն աշկերտներուդ եւ անոնց հետեւողներուն մէկզմէկ սիրելնին՝ քրիստոնէայ ըլլալուն նշան տուիր: Առաջին ատենուան քրիստոնեաներն աս նշանով կ'իմացընէին իրենց քրիստոնէութիւնն անհաւատներուն առջեւ: Անոր համար աս սուրբ խորհուրդը կատարուելու ատեն՝ եկեղեցւոյ մէջ մէկզմէկ կը բարեւենիք ու մէկզմէկ կը համբուրենիք: Բայց ես ողորմելիս որչափ հեռու եմ քու տուած պատուիրաններէդ. ինչպէս ինծի քրիստոնէի անունը կընայ վայլել, երբ որ քրիստոնէի նշան, այսինքն՝ եղբայրսիրութիւն ըւնիմ: Վայ ինծի, արեւն իմ բարկութեանս վրայ պիտի չմտնէր.

Իսկ ես ամիսներով եղբօրս գէմ ոիս պաշեցիր: Դուն յառաջագոյն զգուշացուցիր, որ պէտք է պատարագը թողուլ ու նախ երթալ եղբօրը հետ հաշտուիլ: Իսկ ես ոմակալութեան ախտով կուրացեալ, ամենեւին հոգ չեմ ըներ պատուիրանդ բոնելու եւ եղբօրս հետ հաշտուելու: Իրաւ քու ամենապատուելի անունդ՝ որ կանչուած է իմ վրաս, փառաւորուելու տեղ՝ աւելի նախատուած է անհաւատներու առջեւ: Բայց հիմայի փառս անուան քո կ'առաջադրեմ, որ ամէն թշնամիներուս եւ բոլոր ինծի չարիք հասցընողներուն սրտանց ներեմ, ու իրենցմէ յառաջ ես թողութիւն ինգրեմ: Թէ որ տեսնեմ որ անօթի են կամ ծարաւ կամ նեղեալ, ամենէն յառաջ ես անոնց օգնութեան համնիմ: Դուն ովք Փրկիչ իմ, զքեզիաչ համար հանողներուն համար աղօթք ըրիր. ահա ես ալ իմ թշնամիներուս

Համար կ'աղացեմ, որ անոնց ներես,
շնորհք տաս, հոգեւոր ու մարմնաւոր
բարիքներով լեցընես եւ միատեղ
զմեղ երկնից արքայութեան արժանի
ընես քու ողորմութեամբ:

Սուրբ, սուրբ, սուրբ, ջէ՞ր զօրու-
թեահից:

Ո՛Լ Տէր իմ, ահա կը տեսնեմ
հոգւոյս աչքովը, որ բոլոր հրեշ-
տակներուն բազմութիւնը, հրեշ-
տակապետները, սերովքէներն ու
քերովքէները, երկինքէն վար կիջ-
նեն, որ ներկայ գտնուին աս փըր-
կագործ պատարագին նուիրման ա-
տեն: Կը տեսնեմ զքեղ ալ՝ իմ
Աստուածս ու Փրկիչս, որ նցն ինքն
կը մատուցուիս ու կ'ընծայուիս Աս-
տուծոյ Հօր պատարագ, նորոգելով
մեր մտքին մէջ ան չարչարանքները,
արեանդ հեղումն ու դառն մահդ,
որ մեզի համար քաշեցիր, զմեղ

սատանային գերութենէն փրկելու
համար: Հրեշտակներն իսկ երբ որ
կը մտածեն աս մեր վրայ ունեցած
սէրդ, կը զմայլին, կը հիանան եւ
երեքսրբեան օրհնութեամբ զքեղ
անդադար կը փառաբանեն: Մենք
ալ անոնցմէ սորվելով աս փառա-
բանութիւնը, կ'երգենք ու կը փա-
ռաբանենք, թէ դուն՝ որ ամենեւին
սրբութիւն ես, քու փառքդ ամէն
տեղ բոնած է: Մեր հողեղէն սիրտը,
վասն զի չի կրնար՝ ինչպէս որ պէտք
է զքեղ սիրել, եւ ոչ խօսք ունինք
բաւական, որ զքեղ փառաւորենք.
անոր համար կը լսնդրեմ, որ աս
հրեշտակային փառաբանութեան
պակսութիւնը դուն լեցընես եւ
պատարագ տեսնելու ատենը սիրտս
այնպէս վառես, ինչպէս որ հրեշ-
տակներուն սիրտը կը բորբոքի ար-
քայութեան մէջ, հոս տեղս զքեղ
փառաբանելու ատեննին:

Առէք կերէք: Արքէք ի սմանէ:

Արտանց կը հաւտամ ու կը խռուտվանիմ, որ գուն հիմայ իմ առջեւս ներկայ ես. հացն ու գինին քու ամենազօր խօսքովդ փոխեցիր, եւ ըրիր ճշմարտապէս պատուական մարմինդ ու արիւնդ, որ ամէն հաւատացեալք յիշեն սէրդ, ճաշակեն մարմինդ ու արիւնդ, եւ սիրովդ բորբոքեալ սիթ առնուն. իրենց տկարութիւնը զօրանայ քեղի հաճոյ կեանք վարելու եւ իրենց աղքատութիւնը հարստացընելու: Տուր ինձի ալ շնորհք, որ աս ամէն բարեաց արժանի ըլլամ. չըլլայ թէ այսպիսի շնորհաց գանձը ձեռքս ունենալով, աղքատ ու ողբրմելի մնամ: Դուն ծագէ սրտիս մէջ ան աստուածային լցուր, որ աղէկ ճանշնամ աս սուրբ խորհուրդին յարդը, եւ այնպիսի ջերմեռանդութեամբ լսեմ, ինչպէս

որ լսեցին քու սիրելի ծառաներդ, որ հիմա, քեզի հետ կը թագաւորեն արքայութեան մէջ:

Են զբոյս ի քոյոցս:

Ի՞նչ ընծայ կրնայ տանիլ իր թագաւորին աղքատ մը, որն որ եւ ոչ ուտելիք ունենայ իր կեանքը պահելու համար: Խսկ ես քու աստուածութեանդ առջեւ եւ ոչ աղքատ ըսուելու արժանի եմ. վասն զի ոչինչ եմ բոլորովին քու առջեւդ: Ի վերայ այսր ամենաշնի դուն, ով թագաւորդ թագաւորաց, այնպէս պատուեցիր մեր բնութիւնը, որ մեզի մարմնակից եղար. զմեղ արքայութեան որդեգիր ըրիր, որուն հրեշտակներն ալ երկինքը կը նախանձին: Հիմայ մեր ոչնչութիւնն այնպէս փառաւորեցիր, որ ունինք մեր ձեռքն Աստուծոյ արժանի ընծայ մը. այսինքն նշն խսկ որդւոյն Աստուծոյ մարմինն ու ա-

Երիւնը: Ո՛րչափ պարտական ենք զքեզ
օրհնել, գովել ու գոհանալ, երբ որ
միտքերնիս կը բերենք, թէ մեր միջ
նորդն ու բարեխօսը քու ամենա-
սուրբ մարմինդ ու արիւնդ է. եւ աս
պատուական ընծաները գուն մեր
ձեռքէն կ'ընդունիս եւ Աստուծոյ
Հօր կը նուիրես: Կրնայ ըլլալ, որ
այսպիսի պատարագ ու ընծայ ընդու-
նելի չըլլայ, երբ որ Որդւցն Աստու-
ծոյ մարմինն ու արիւնը կը նուիրուի,
եւ նոյն Որդին Աստուած կը նուիրէ:
Այսպիսի պարգեւի հրեշտակներն
արժանի չեղան, եւ ոչ իսկ հրեշ-
տակային միտք կրնայ բաւական օրհ-
նութիւն ու փառաբանութիւն մա-
տուցանել Աստուծոյ այսչափ մար-
դասիրութեան: Աս միայն կ'աղաւեմ,
որ վրայէս շնորհքդ չպակսեցընես.
որպէս զի այսպիսի սրբազն խոր-
հըրդոյ ատեն ձեռքէս եկածին չափ
աղէկ մտադրութիւն ընեմ, եւ այս-

պիսի գերազանց պարգեւէ մասն
ընդունիմ:

Որպէս զի եղիցի սա:

Իրաւցընէ, Տէր իմ, մեծ պարգեւ
ու շնորհք կրնամ ընդունիլ աս
սուրբ խորհուրդներուն միջնորդու-
թեամբը, թէ որ ինչպէս պէտք է՝
այնպիսի ջերմեռանդութեամբ մատ-
չիմ: Ասկայն մեծ դատապարտութիւն
է, եթէ անպատճաստ գտնուիմ ու
միտքս ասդին անդին ցրուեմ: Աս
սեղանիս վրայ ան սիրոյ հուրը կը
բորբոքի, զոր գուն վառելու համար
աշխարհք եկար, եւ ուզեցիր որ ա-
մենուն սիրտը վառի: Եւ այսչափ
սաստիկ հրայ առջեւը կենալով, թէ
որ փոյթ ու արթնութիւն չունենամ,
ամենեւին մասն չեմ ընդունիր: Հոս
կը տեսնուի ան ամէն չարչանացդ
յիշատակը, որոնց պատճառ եղան
իմ մեղքերս. սակայն թէ որ աղօթքս

անմտադրութեամբ ու ծուլութեամբ
ընեմ պսպիսի աշաւոր խորհրդեան
ատենը, ամենեւին չեմ իմանար, թէ
որչափ գարշելի են եղեր մեղքերս:
Հոս կը դանուի աղբեւր ամեն շնոր-
հաց, որ օռվոր ես դուն բաշխել
քու ծառաներուդ: Բայց ես, թէ որ
հոգ չունենամ ճանչնալու իմ աղ-
քատութիւնս ու կարօտութիւնս,
որ ունիմ սուրբ շնորհացդ օգնա-
կանութեանը, աս պատարագս տես-
նելով ամենեւին օգուտ մը չեմ
տեսներ, շնորհք մը չեմ ընդունիր,
պակսութիւններս չեմ կրնար ճանչ-
նալ, բարի բան մը միտքս չի գար,
որ առաջադրեմ. կամ թէ որ գալու
ալ ըլլայ, ուժ չեմ ունենար կատա-
րելու: Թէ որ իմ ծուլութեանս
նայիմ, արժանի եմ, որ աս խոր-
հուրդն ինծի գատապարտութիւն
ըլլայ, քան թէ քաւութիւն ու թո-
ղութիւն գործած մեղքերուս: Բայց

երբ որ քու մերդ կը մտածեմ, յսս
ու վստահութիւն կ'ունենամ, որ զիս
ամենեւին երեսէ չես ձգեր:

Յիշեա յէր եւ ողորմաս:

Կանարհութեամբ գետինն ինկած
կ'աղաշեմ քեղի, չայր երկնաւոր, աս
սուրբ պատարագիս զօրութեամբը
ողըրմէ բոլոր աշխարհքիս: Տէր իմ,
նայէ միանդամ խաչին վրայ, եւ
տես թէ քու Միածին Որդիդ ինչեր
քաշեր է մեր փրկութեանը համար:
Յիշէ անոր սոսկալի չարչարանքները,
յիշէ անոր թափած անգին արիւնը,
յիշէ անոր պատուական մահը, եւ
գթութիւն ըրէ մեզի, օգնութեան
հասիր ամենուն ալ: Կը խնդեմ նախ՝
որ բոլոր աշխարհքիս խաղաղութիւն,
սուրբ Եկեղեցւոյ հաստատութիւն
պարգեւես: Գաղթեցուր հալածան-
քը Եկեղեցւոյ մէջն. մեղաւորներուն
դարձ տուր. բանտի մէջ եղողներուն

աղատութիւն շնորհէ. հիւանդներուն
առողջութիւն պարզեւէ. եւ ամէն
տեսակ չար փորձանքներէն զմեղ
աղատէ:

Յիշես ու ողօրմիս աս սուրբ
պատարագովս ննջեցեալ հոգինեւ-
րուն, որնք ուղիղ հաւատով ու
զղջումով մոռած են. աս աչեղ պա-
տարագին արդեամին ան տրտմած.
Հոգիները միմիթարէ ու քու տեսու-
թեանդ արժանի ըրէ:

Յիշէ զմեղ ալ, որ աս սուրբ
պատարագիս ներկայ ենք, եւ ինչ
որ մեզի օգտակար է, ան շնորհէ:
Յիշէ նաեւ իմ ծնողքս, ազգական-
ներս ու բարեկամներս, եւ անոնց
սրտին բարի բաղձանքը կատարէ.
մասնաւորապէս ինծի բարիք ընող-
ներուն հազարապատիկ վարձք տուր.
ինծիթշնամութիւն ընտղներուն ներէ
ու շնորհք տուր: Դուն շխտէ մեր
ամենուս սրտին բաղձանքը. ան բանի

բաղձանքն որ մեր յաւիտենական
փրկութեանը արգելք չըլլար: Դուն
մաքրէ մեր միտքն ու խորհուրդները,
որ արժանի ըլլանք սրբութեամբ
ընդունիլ քու սրբարար մարմինդ ու
պատուական արիւնդ:

Եհ եղիցի ողորմնիթին:

Ահաւասիկ կը լսեմ, որ դուն
քահանացին բերնովն ինծի կը խոս-
տանաս քու ողօրմաւթիւնդ: Իրաւցը-
նէ քու ողօրմութիւնդ չափ չունի.
ինչու որ բոլորովին անարժան էինք
ապրելու, թէ որ դուն քու գթու-
թեամբդ մեզի ողօրմելու չըլլար:
Ինչ մեծ ողօրմութիւն է, որ դուն
մարմինդ ու արիւնդ աս սուրբ խոր-
հըրդեամբ մեզի պարգեւեցիր. եւ
խոստացար մեզի ամէն հոգեւոր
ինդիրքնիս կատարել, յաւիտենական
կեանք պարգեւել ու քեզի հետ մէկ
տեղ թագաւորեցընել: Մէկ կողմանէ

որչափ որ մեծ է քու ողորմութիւնդ, մեկալ կողմանէ ալ այնչափ խելքէ մտքէ գուրս է մեր տղայամտութիւնը: Այսպէս մեծամեծ պարգեւներդ ու խոստմունքներդ ամենեւին բանի տեղ չենք դներ: Ճատանգամ ինծի փոքր երկրաւոր բարիք մը պարգեւողին աւելի երախտագէտ կը լլամ, քան թէ քեզի. որ զիս ալ բոլոր ունեցածս ալ գուն ստեղծեր ես: Անոր համար կաղաշեմ; ով ողորմած Տէր, որ վրաս ողորմութիւնդ աւելցընես. բանաս աչքս, որ ձանչնամ”թէ ինչ է տարբերութիւնը հոգեւորին ու մարմնաւորին, ժամանակաւորին ու յաւիտենականին մէջ. ձանչնամ մեղքիս գարշութիւնն ու առաքինութեան սիրելի ըլլալը: Հիմայ կը մատչիմ քեզի, երբ որ շնորհաց ու ողորմութեան աթոռը նստեր ես, եւ պատրաստ ես ամէն քեզի եկողներուն վրայ քու սուրբ

վէրքերէդ բղիսած արիւնը թափել ու սրտերնին վառել: Վառէ իմ սառած սիրտս ալ, որ սիրովդ բորբոքի ու ողորմութիւնդ յաւիտեանս չմոռնայ:

Հայր մեր, որ յերկիճն ես:

Ով հայր յաւիտենական, որ վրանիս գթալով Միածին Որդիդ մեզի խըրկեցիր, մեզի հաւատոց խորհուրդները սորվեցընելու եւ մեզի իր վարքովն օրինակ տալու համար: Ես ալ կը ջանամ անոր օրինակներուն հետեւելով քու անունդ սուրբ ընել աս աշխարհքիս մէջ. անդիի աշխարհքն ալ արքայութեան մէջ փառաբանել քու ամենաբարի կամքդ, որ պատրաստ ես մեզի միշտ բարիք ընելու: Աս աշխարհքիս մէջ զիս ծնած օրէս ի վեր ողջ պահեցիր, եւ կենաց հարկաւոր եղածն առատապէս պարգեւեցիր: Թէպէտ ես ապերախտ գըտ-

նուեցայ, չճանչցայ իմ բարերարս.
սակայն դուն այնպիսի զարմանալի
կերակուր մը պարգեւեցիր, որ հրեշ-
տակներն իսկ զարմացան, այսինքն
քու Միածնիդ պատուական մարմինն
ու արիւնը: Դարձեալ ապերախտ
գտնուեցայ, չյարգեցի ինչպէս որ
պէտք էր աս սուրբ խորհուրդը, եւ
ապերախտութեանս համար չունեցայ
ան շնորհը, որով ամենեւին աղատ
ըլլամ մեղքերէ: Շատ անդամ մե-
ղանչեցի խորհրդով, բանիւ եւ գոր-
ծով. թող ինծի իմ յանցանքներս:
Ահաւասիկ, թէ որ իմ ձայնիս չես
լսեր, բարեխօս ունիմ ինծի քու
Որդիդ, որ իր արեան անսահման
գինը կը մատուցանէ քեզի իմ մեղ-
քերուս համար: Ես թէպէտ մեղքը
թշնամի եղած եմ քեզի. սակայն
դուն պատրաստ ես ինծի ներելու,
որով օրինակ կու տաս ինծի ալ, որ
ես ալ իմ թշնամիներուս դիւրաւ

թողութիւն տամ: Մանաւանդ թէ
ես քեզմէ թողութիւն առնելէն յա-
ռաջ, սրտանց կը ներեմ ամենուն
որոնք ինծի վնաս մը տուեր են.
որպէս զի համարձակութիւն ունե-
նամ ըսելու. ինչպէս որ ես իմ
թշնամիներուս ներեցի, դուն ալ
ինծի այնպէս ներէ, բարեխօսու-
թեամբ քու Միածնիդ ու սուրբ
Աստուածածնի եւ ամէն սուրբե-
րուն:

ի սրբութիւն սրբոց:

Ով սրբութիւն սրբոց, ով կեն-
դանի մարմին եւ արիւն Յիսուսի,
սրտանց կը հաւտամ ու բերնովս կը
խոստովանիմ, որ ահա առջեւս կը
կատարուի ան մեծ խորհուրդը, որ
գողգոթա լեռան վրայ կատարեցաւ:
Կը տեսնեմ զքեզ հաւտաց աչքովս
խաչն վրայ, որ մեզի համար միշնորդ
կըլլաս Աստուածոյ արդարութեանը:

Ո՞րչափ պարտական ենք զքեղ օրհն-
նելու, ով գթած Փրկիչ, որ զմեղ
պյառափ սիրեցիր: Օրհնութիւն ու-
փառաբանութիւն երդեն ամէն ա-
րարածք՝ Աստուծոյ անսահման մե-
ծութեան: Օրհնեալ ըլլայ Հայր եր-
կնաւոր Աստուած, որ իր մէկ հատիկ
սիրելի Որդին աշխարհք Խրկեց մեր
փրկութեանը համար: Օրհնեալ
ըլլայ Ճշմարիտ Որդին Աստուած, որ
մեղի համար մարմին առաւ, եւ իր
սուրբ արեամբն զմեղ փրկեց: Օրհն-
եալ ըլլայ Ճշմարիտ Հոգին սուրբ
Աստուած, որ անբաւ շնորհքներով
զմեղ լեցուց ու լուսաւորեց: Ընդ-
ունե իմ աս անարժան օրհնու-
թիւնս, ով ամենասուրբ Երրորդու-
թիւն: Եւ արժանի ըրէ զիս երկնից
արքայութեան մէջ հրեշտակներուն
հետ անդադար զքեղ օրհնելու:

ի սուրբ ի սուրբ:

Ով Տէր իմ Յիսուս Քրիստոս,
ահա խաչին վրայ բազկատարած գա-
մուած, ձեռութեներդ բացած պատ-
րաստ ես զիս ու ամէն քեզի եկող-
ներն ընդունելու: Ես Մագդաղե-
նացոյն հետ խաչելութեանդ ոտքը
կիյնամ, եւ կը խնդրեմ աչքիս
արցունքով, որ մեղքերով մեռած
հոգիս ողջըննայ, վասն զի գուն ես
իմ կեանքս: Գիտեմ՝ որ զիս ալ չես
մերժեր, թէպէտ շատ անգամ ապե-
րախտ գտնուած ըլլամ քեզի. ինչու
որ գուն ես մեղաւորներուն յօյսը:
Ով գառն Աստուծոյ, որ բոլոր աշ-
խարհքիս մեղաց բեռը կոնակդ վեր-
ցուցիր եւ զանոնք ազատելու հա-
մար պատուական արիւնդ թափեցիր.
Հիմայ կ'աղաւեմ քեզի, որ իմ մեղ-
քերուս ալ քաւութիւն եւ թողու-
թիւն տաս: Երկնաւոր օրհնու-

Թեամբդ օրհնէ հոգիս ու մարմինս,
որպէս զի միշտ զքեղ սիրէ ու սուրբ
պատուիրաններէդ չխոտորի:

Շաշակելիկն առաջ:

Ով բարի Յիսուս, դուն զմեղ
Հրաւիրեցիր, թէ ով ծարուած է
ինծի գայ: Ահա հոգիս քանի որ
ստեղծուած է, արարած բաներու
հետ ըլլալով՝ միշտ ծարաւի ու ան-
հանգիստ է: Թողեր է սրբազն
կողդ, որ ինծի համար յաւիտենա-
կան կենաց աղբիւր վազցուցիր, գա-
ցեր աշխարհքիս անցաւոր բաներով
ծարաւն անցընել կուզէ: Դու Փըր-
կիչ իմ, ողորմէ հոգւցս խեղձու-
թեանն ու գութ շարժէ. Ըուսաւ-
որէ միտքս, սիրտս փոխէ, որ աս-
կէ ետեւ զքեղ գտնելու ետեւէ
ըլլայ. շնորհք տուր, որ սիրտս քու
քաղցր ու սիրալիր հրաւերդ ընդու-
նելով՝ աս ողորմութեան աղբիւրը

վազէ եղջերուի մը պէս, որ լեռնե-
րու վրայ ջուր կը փնտուէ: Ո՛քչափ ան-
սահման է քու սէրդ, որ ինծի այս-
պիսի սեղան պատրաստելու համար
մեռնիլն յանձն առիր: Ուրիշ բան
չեմ տեսներ աս սեղանիս վրայ, բայց
եթէ քու ձշմարիտ մարմինդ ու
սուրբ արիւնդ, որ մեզի համար զոհ
եղեր է: Ով Տէր իմ Յիսուս, աս
ինչ մեծ շնորհք, աս ինչ մեծ սէր է
ցուցուցածդ վրաս, որ զքեղ իմ հո-
գւցս կերակուր կը պատրաստես: Ես
արժանի էի գործած մեղքերուս
համար բիւր անդամ մեռնելու. բայց
իմ անօրէնութիւններս դուն վրադ
առիր ու ինծի համար չարչարուե-
ցար: Ով ողորմած փրկիչ իմ, վառէ
բորբոքէ սիրտս աստուածային սի-
րովդ, եւ ամենասուրբ սրտիդ հետ
միացուր: Մաքրէ հոգիս ամէն եր-
կրաւոր բաներէն, որ շատ անդամ
սրբութեամբ աս պատուական խոր-

Հըրդայն հաղորդուելու արժանի ըւլամ: Անանկ է նէ կը խնդրեմ հիմայ՝ որ ինձի շնորհք տաս, որպէս զի ըլլամ ես ալ անոնցմէ, որոնք այսպիսի բարերարութեան դէմ ապերախտութիւն ըրած են: Գաս իմ սիրտս հոգեւորապէս, պատրաստես հոն քեզի արժանի բնամկարան մը, որ երբ որ քու սուրբ մարմինդ ձաշակեմ, աս խորհուրդը քեզի փառք ըլլայ, ինձի ալ առողջութիւն ու կեանք:

Ծաշակմանէ ետքը :

Ալ գոհանամ քեզմէ, չայր ամենակալ, որ խրկեցիր քու Միածինդ, որ աս սուրբ խորհուրդը հաստատեց սուրբ Եկեղեցւց մէջ, ուր սուրբ Երրորդութիւնը կը փառաբանենք:

Ալ գոհանամ քեզմէ, Որդիդ Միածին, որ կենարար մարմնովդ ու

արեամբդ մեզի կենդանութիւն տուիր:

Ալ գոհանամ քեզմէ, ով սուրբ Հոգի, որ միշտ մեզի հետ ես ու Եկեղեցին անշարժ կը պահես, որ հաւատացեալները միշտ սուրբ Երրորդութիւնը փառաւորեն:

Ինդունէ իմ անարժան գոհութիւնս հրեշտակներուն ու սուրբերուն հետ, եւ արժանի ըրէ, որ ես ալ օր մը զքեզ տեսնեմ ու սուրբերուն հետ փառաբանեմ յաւիտեանս յաւիտենից:

Որ օրինեն զայնոսիկի:

Դու, Տէր իմ, խոստացար, որ ամէն աղաւանքնիս կը կատարես, ինչ որ քու սուրբ անուամբդ կը խընդրենք: Զեմ խնդրեր մարմնաւոր բարիք, ինչու որ գուն մինչեւ հիմայ ինչ որ պէտք էր մեզի հոգացիր, եւ ապազրեցիր՝ որ վաղուան համար

Հոգանք: Կը խնդրեմ միայն, որ աս
սուրբ պատարագիս ու սրբազն
չարչարանքներուդ արդիւնքն ամե-
նուս վրայ գայ. զմեղ օրհնէ, սրբէ
ու պահէ: Մեր բանին գործքին յա-
ջողութիւն տայ. զմեղ հոգւոց ու
մարմնոց փորձանքներէն աղատէ: Ան-
հաւատներուն լցու տայ, որ ճշմարիտ
սուրբ կրօնը ճանչնան. մեղաւորնե-
րուն դարձ ու բարի վարք շնորհէ:
Ննջեցելոց հոգւոց հանդիստ պար-
գեւէ, եւ անդիի աշխարհք ամենուս
ալ յաւիտենական կեանք. ամէն:

Պատարագէն ետքը:

Ենորհակալ եմ, Փրկիչ իմ Յի-
սուս, եւ կօրհնեմ անբաւ ողորմու-
թիւնդ ու սէրդ, որ մեր վրայ ցու-
ցուցիր: Ահա աս սուրբ պատարագը
տեսնելով՝ չարչարանքներուդ յի-
շատակը նորէն միտքս եկաւ. իբրեւ
թէ աչքիս առջեւը զինուորներն

զքեղ բռնեցին կապեցին, դատաւ-
որին առջին տարին. կարմիր քղամիդ
հաղցընելէն ետքը՝ գլուխոդ փշէ
պսակով պսակեցին ու անինայ ծե-
ծեցին. անկից ալ խաչը կռնակդ ա-
ռած Գողդոմա լեռն առին տարին,
զքեղ հոն խաչեցին. եւ անանկ սաս-
տիկ ցաւերու մեջ սուրբ հոգիդ Աս-
տուծոյ ձեռքն աւանդեցիր մեր մեղ-
քերուն քաւութեան ու թողու-
թեան համար: Ով մարդասէր Տէր եւ
Փրկիչ իմ, քու սուրբ չարչարանաց
ու մահուանդ արդեամբը շնորհք
ու զօրութիւն տուր ինծի, որ զքեղ
միշտ սիրեմ, եւ մեղանչելով նորէն
քու չարչարանքներդ չաւելցընեմ:
Դուն խոստացար, Տէր իմ, անսուտ
բերնովդ, որ մինչեւ աշխարհքիս
կատարած մեղի հետ պիտի ըլլաս.
ուրեմն թող մի տար զիս, որ քեղ-
մէ երբեք բաժնուիմ:

Աղօթք ամեն հաստացելոց համար:

Ով ամենակարող Աստուած յաւ-
իտենական, Հայր Երկնաւոր, գլխած
աչուըներովի նայէ մեր խեղճու-
թեանն ու կարօտութեանը: Ողորմէ
ամեն քրիստոնեաներուն, որոնց հա-
մար քու Միածին Որդիի Յիսուս
Քրիստոս, մեր Տէրն ու Փրկիչը մե-
ղաւորաց ձեռքը մատնուեցաւ, եւ
իր պատուական արիւնը խաչին վրայ
վազուց: Անանկ է նէ, ով Հայր
բարեգութ, քու Միածին Որդւսցի
անհուն արդեամբը վերցուր մեր
վրայէն ան պատիմները, որոնց ի-
րաւցընէ արժանի ենք. ազատէ զմեզ
ամեն փորձանքներէն ու վտանգնե-
րէն. Խափանէ վնասակար ապստամ-
բութիւնները, պատերազմները,
սղութիւնը, սովը, հիւանդութիւն-
ները, ժանտախտն ու դառն ժա-
մանակները: Լուսաւորէ ու զօրա-

ցուր Հոգեւոր եւ մարմնաւոր իշխան-
ներն ու առաջնորդները բարի գործ-
քերու մէջ. որպէս զի օրէ օր ծաղ-
կին ու յառաջ Երթան ան բաները,
որոնք քու անուանդ պատիւ են ու
մեր փրկութեան ու հասարակաց
խաղաղութեան օգտակար: Ով Աս-
տուած խաղաղութեան, պարգեւէ
մեզի այնպիսի միաբանութիւն հաւ-
ատոյ, որ մէջերնիս հերձուած մը
կամ տարածայնութիւն մը չգտնուի:
Արտերնուս զղըում շնորհէ, եւ մեր
վարուց ուղղութիւն պարգեւէ:
Վառէ մեր սրտին մէջ քու սիրոյ
հուրդ: Մեզի փափագ ու եռանդ
մը տուր ամեն տեսակ առաքինու-
թիւնները կատարելու. որպէս զի
հնազանդ ծառաներու պէս թէ կեն-
դանութեան եւ թէ մեռած ատեն-
նիս քեզի հաճոյ ու սիրելի ըլլանք:
Ով Հայր բարեգութ, Կուզես որ
մէնք մէկմէկու համար ալ աղօթք

ընենք. անանկ է նէ կ'աղաշենք քեզի,
որ ողորմիս մեր բարեկամներուն
ու թշնամիներուն, առողջներուն ու
հիւանդներուն, արտմութեան ու
նեղութեան մէջ եղող քրիստոնեա-
ներուն, կենդանիներուն ու մեռած-
ներուն։ Քեզի կը յանձնենք բոլոր
մենք զմեղ ու մեր ամէն ընելիքը,
մեր կենդն ու մեր մահը։ Դուն
քու շնորհքդ աս աշխարհքիս մէջ
մեր վրայէն մի պակսեցըներ. եւ ան-
դիի աշխարհք արժանի ըրէ, որ ըն-
տրելց հետ յաւիտենական ուրա-
խութեան ու երջանկութեան մէջ
զքեղ սիրենք ու անդադար փառա-
բանենք։ Աս շնորհքս մեզի պար-
գեւէ, Հայր երկնաւոր, քու սիրելի
Որդւսդ Յիսուսի Քրիստոսի ու մեր
Փրկչին միջնորդութեամբը, որ քեզի
ու Հոգւսդ սրբոյ հետ կենդանի է
եւ կը թագաւորէ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն։

ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՏՈՎԱՐՆՈՒԹԵԱՆ

Երդոր ի դիմաց Քրիստոսի ի սիրա
մեղուցելոյն։

Ան որդեակ, անդամ մը ինծի
նայէ, որ աս գառն խաչափայտին
վրայ բաղկատարած գամուած եմ։
Տեսացաւագին վէրքերս, որ զքեղ
սիրելուս համար յանձն առի։ Տես
արիւնալից գլուխս փշով պսակուած,
որպէս զի քու մեղացդ փշերը մա-
քրեմ։ Տես սրտիս վրայ բացուած
վէրքը, որ քու քարացեալ սիրտ
կը փնտոէ։ Տես ի վախճանի գլուխս
խոնարհած ու մեռած քու փրկու-
թեանդ համար։ Ահա քու հոգւսդ
օդտին համար այսչափ չարչարանք-
ներ կը ելէս ետեւ՝ ի՞նչպէս դուն ին-
ծի դէմ թշնամի եղար ու ցաւերս
նորոգեցիր։ Ինչո՞ւ ատ հոգիդ՝ որ ես
ինծի համար ստեղծեր էի ու մա-

Հուամիս փրկեցի, ատ խեղձութեան
մէջ ձգեցիր, դարձեալ սատանային
դերի ըստը, բարի Փրկիչդ թող տա-
լով՝ անոր հետեւեցար: Քանի քանի
անդամ իմ ազդեցութիւններովս
զքեղ կանչեցի, բայց դուն ականջդ
գոյցեցիր, ձայնս շմեցիր. որչափ եր-
կար զքեղ փնտուեցի, եւ դուն իզմե-
հեռացար: Զէ՞ն չործեցէր, որդեակ:

Բայց մի վախնար, որդեակ, մի
վախնար. թէպէտ դուն զիս մոռցար,
բայց ես զքեղ չմոռցայ. դարձեալ
առջի ունեցած սիրովս զքեղ կ'ընդ-
ունիմ: Եթէ յանցաւոր գտնուե-
ցար, ես թողութիւն տալու պա-
տրաստ եմ. միայն մեզքերուդ վրայ
զդա ու սրտանց մեզայ դոչէ: Թէ
որ հիւանդ ես հոգւով, ես եմ ան-
երկնային վարպետ բժիշկը, որ մէկ
խօսքով ալ կրնամ հոգիդ ողջացընել:
Թէ որ մեղաւոր ես, ես ողորմած եմ.
արդարներուն համար աշխարհք չե-

կայ, հապա մեղաւորներն ապաշխա-
րութեան կանչելու համար: Ես մե-
զաւորներէն չեմ քաշուիր, միշտ ա-
անոնց հետ ըլլալը կը սիրեմ. մինչեւ
չընայք զիս բամբասեցին, թէ ինչու
շարունակ մեղաւորներուն ու մաք-
սաւորներուն հետ կը նստիմ կ'ել-
լեմ ու մէկտեղ կ'ուտեմ կը խմեմ:

Երդէն գիտես, որդեակ կորու-
սեալ ոչխարին պատմութիւնն Աւե-
տարանիս մէջ: Ահա ես եմ ան բարի
հովիւր, իսկ դուն կորսուած ոչխարն
ես. բոլոր ոչխարները թողուցած՝
զքեղ գտնելու ետեւէն ինկած եմ.
Երանց դլախը, վտանգաւոր ու
գաղանակեր ճամբաններու մէջ կոր-
սուած ոչխարդ կը վինտուեմ ու
գտնելու կը փափագիմ: Ե՛կ կոր-
սուած ոչխար, ահա քու բարի հո-
վիւր. եկ մեղաւոր հոգի, ահա քու
փրկիչդ: Գիտեմ որ խիստ յոգնած
ես այնպիսի դարշելի մեղաց ճամ-

բաներու մէջ պտըտելէն ու վըադ
ոյժ չէ մնացեր. հոգ չէ, ես զքեղ
իմ ուսիս վըայ կ'առնում, զքեղ
գտնելուս ուրախութիւնը բաւական
է ինծի: Դարձիր, որդեակ, դարձիր
անառակ որդւյն հետ գթած հօրդ
տունը. հերիք այսչափ ժամանակ
իզմէ հեռացար, եւ օտարութեան
մէջ կը չարչարուիս ու անօթի կը
տանջուիս: Ես եմ ան գթած հայրը.
Եկ ինծի դիմէ մեղայ գոչելով. զքեղ
չեմ վընտեր, սիրով զքեղ կը գըր-
կեմ ու հաշտութեան համբոյր ալ
կու տամ քեզի. ատ աղտեղած հա-
գուստիգ տեղը՝ պատուական զգեստ-
ներ կը հագցընեմ: Որդեակ. վէճ
համի, չէ որորէց ուշ. ինչ որ կ'ու-
զես, սիրով կը կատարեմ, միայն
աչքիդ արցունքը տուրինծի. թէպէտ
քիչ ալ ըլլայ, ան բաւական է հո-
գւսդ աղտեղութիւնը լուանալու:
Մեղաւոր կինն իր արցունքովն արդա-

րացուցի. Պետրոս առաքելոյն լացքին
նայելով՝ ըրած ուրացութեան նե-
րեցի. Եւ ան խեղճ մօր արցունքին
սիրտս չղիմանալով, մեռած աղջկանը
կենդանութիւն տուի: Ես գթած եմ,
աղաչանքդ շուտով կը լսեմ. խաչիս
ոտքն ինկիր ու սրտանց հառաչանք
մըրէ: Ի՞նչպէս կրնամ աս վիրաւ-
որուած ձեռուըներովս զքեղ պատ-
ժել ու քեզի դէմ վրէժինդրութիւն
ընել, որ զքեղ պատժէն ազատելու
համար ձեռուըներէս այնչափ արիւն
թափեցի. Ի՞նչպէս զքեղ չսիրեմ ու
սրտիս մէջէն դուրս հանեմ վընտեմ,
որ զքեղ սրտիս մէջ ընդունելու հա-
մար աս վէլքս բացի: Եկ որդեակ,
ապաշխարութեան դարձովդ ցաւերս
թեթեցուր. երկնաւոր Հայրս, հրեշ-
տակներն ու բոլոր արքայութեան
մէջ եղած սուրբերն ուրախացուր.
որ իմ Հայրս ալիր երկնաւոր օրհ-
նութիւններովն օրհնէ ու զանազան

շնորհքներով դքեզ լեցընէ, եւ ի
վախճանի իր արքայութիւնն ընդունի:

Հառածամբ մեղսոցեալ սրտի առ
թիսուս Փրկիչ:

ՈՎ ողղրմած Փրկիչ իմ Յիսուս
Քրիստոս, աշա մեղաւոր հոգիս
խաչիդ ոտքն ինկեր է, եւ փղձկած
սրտով արցունք կը թափէ ու ան-
միտմար կու լայ կողըայ: Վայ ինձ,
Տէր իմ, վայ ինձ. աս ինչ խեղձու-
թեան մէջ մտեր է հոգիս. աս ինչ
սոսկալի յաւիտենական կորստեան
վտանգներու մէջ զիս ձգեր են
մեղքերս. իսկ ես բոլորովին կուրա-
ցեալ՝ ասանկ անհոգ կ'ապրիմ: Այս
Տէր իմ, կ'ամչնամ աչուրներս վեր
վերցընելու եւ քեզի նայելու. ինչու
որ ես պատճառ եղայ մեղանչելովս
առ դառն չարչարանքները նորէն
քեզի կրել տալու: Իմ մեծամեծ
մեղքերս էին, Տէր իմ, որ սուրբ

մարմնոյդ վրայ ատչափ ցաւագին
վէրքեր բացին. իմ աղտեղի ու չար
խորհուրդներս էին, Տէր իմ, որ առ
անգութ փշեղէն պսակն աստուա-
ծային գլուխու դրին. իմ գարշելի
կիրքերս էին, Տէր իմ, որ գթած
սիրտդ վիրաւորեցին: Բայց գու, ով
բարեգութ Յիսուս, այսչափ անօ-
րէնութիւններս չյիշելէն զատ՝ ե-
տեւէս ալ ինկեր ես, կորսուած ոչ-
խարս կը փնտուես. անոյշ հրաւեր-
ներովդ քարացեալ սիրտս շարժել
կ'ուզես, որ աս կորստեան ձամբա-
ներէն ետ կենամ, ապաշխարու-
թեամբ քեզի դառնամ ու հետդ
հաշտուիմ: Աշա Տէր, հիմա սրտանց
քեզի գարձեր եմ. ոտքդ ինկած
մեղայ կը գոչեմ: Քէշ մայն մէռայ,
Տէր. եւ զչառ առաջէ ու աբարէ: Աս է
սրտիս մեծ ցաւը, որ իմ արարիչս
ու Փրկիչս անչափ վշտացուցի եւ
երկար ատեն իրմէ հեռացայ. եւ

ան ծայրագոյն բարութիւնը չճանչ-
ցայ: Կու լամ կ'ողբամ, Տէր իմ, եւ
չեմ գիտեր, թէ ուսկից աս ցաւա-
դին սրտիս միխթարութիւն մը պիտի
գտնեմ: Ով ողորմած Աստուած, մե-
ղաւորիս ձայնը լսէ ու դթութիւն
ըրէ ինծի. աչքիս արցունքները թող
վկայեն, աչքիս արցունքներն աղա-
ղակեն, թէ հիմակ որչափ զքեզ կը
սիրէ հոգիս, ինչպէս սրտանց զքեզ
գտնելու ետեւէն է: Ուրեմն Տէր
իմ, դուն քու աստուածային սիրովդ
բորբոքէ սիրտս, մոռքիս լցս տուր ու
կամքս զօրացուր, որ մէջ մ'ալ մեղք
չգործեմ ու զքեզ չվշտացընեմ:

Իսայ կը խնդրեմ հիմայ, Փրկիչ
իմ, որ հոգւցս բժշկութիւն տաս
ու ողորմիս ինծի. ինչու որ հոգիս
հիւանդ է եւ բարեգործութիւն
ընելու ոյժ չէ մնացեր վրան: Կը
պաղատիմ քեզի ու սրտանց կ'աղա-
չեմ. Տէր, ահաւասէի առ դուն սէ-

րէր՝ հիւանդացեւը է: Տէր իմ, ահա
ան հոգին՝ որ դուն կը սիրէիր, հիւ-
անդացեր է. ան հոգին՝ որ դուն
անդին արեամբդ գնեցիր, ցաւագար
մնացեր է. ով երկնային բժիշկ
հոգւոց, դուն խնամ տար վրաս,
բժշկէ հոգւցս ցաւերը, որ աս
խեղճութենէս աղատիմ, շնորհացդ
մէջ կենդանանամ: Լսէ սրտիս աս
հառաչանքն, ով Աստուած իմ, եւ
երկնային օգնութիւնդ խրկէ ինծի,
որ կարող ըլլամ մեղքերուս վրայ
զգջալ ու դարձեալ սուրբ աւազանին
շնորհքն ընդունիլ. ամէն:

Աղօթք մեղքերը յիշելու համար:

Երեգակն արդարութեան Յիսուս
Քրիստոս, որ աշխարհք գալովդ ի-
բրեւ առաւօտ ամէն քեզի հաւատա-
ցողները լուսաւորեցիր, ծագէ իմ
սիրտս ալ քու ճառագայթ, որ ըռւ-
սաւորուիմ ու տեսնեմ ամէն ծա-

ծուկ մեղքերս: Եթէ դուն չես լուսաւորեր, կարծեմ որ ամենեւին մեղք չունիմ. բայց թէ որ դուն լուսաւորելու ըլլաս, շամանդաղներու պէս, (որոնք կը տեսնուին արեւին պատուհանէն ներս զարկած ատենը) իմ անթիւ մեղքերս երեւան կ'ելքն: Գիտեմ որ մարմնաւոր աչքով կցրերուն դուն ողըրմեցարու լցո տուիր, երբ աղաղակեցին թէ Յիսուս, Որդի Գաւթի, ողըրմեաց մեղ: Հիմակ ես ալ իմ հոգւոյս աչուըներուն լցո կը խնդրեմ, կ'աղաջեմ որ աչուըներս բանաս: Շատ մոլութիւններ ունիմ, որ շատ արգելք կ'ըլլան՝ ինչպէս որ պէտք է՝ տեսնելու մեղքերս, որոնց գլխաւորն է անձնասիրութիւնս: Մեծ մեղքերս ինձի պղտիկ կը ցուցընէ, պղտիկները բոլորովին կը ծածկէ: Առուտուրի մէջ խարէութիւնը վարպետութիւն կը ցուցընէ. բամբասանքն եւ ուրիշ

շին անունն աւրելը՝ ճշմարտութիւն ու անտարբեր պատմութիւն մը կ'երեւցընէ. Հայհոյելն ու անառակ խօսքեր խօսիլը զուարձախօսութիւն կարծել կու տայ. ոխ ովահելն ու թշնամի ըլլան՝ ոչինչ բան մը կը ցուցընէ: Բայց դու, Տէր իմ բազմագութ, թող մի տար որ ես նոյն խաւարին մէջ մնամ. Հապա շնորհք տուր, որ խոստովանութիւնս ինչպէս որ պէտք է՝ այնպէս ամբողջ ըլլայ:

Ես կը ջանամ ձեռքէս եկածին չափ սուրբ շնորհքդ ամէն բան միտքս բերել ու խոստովանիլ. բայց թէ որ բան մը ակամայ մոռնալու ըլլամ, դուն մնացած պակսութիւնը լցցուր ու ան շնորհքը տուր, իբր թէ կատարեալ խոստովանած ըլլայի: Թէ որ ետքէն միտքս գալու ըլլայ, պատրաստ եմ միշտ ամէն մեղքս, ինչ տեսակ որ ըլլայ, խոստովանելու: Փարատէ վրայէս ամօթն ալ, որ հա-

մարձակ խոստովանիմ։ Դարձեալ
շնորհէ, որ խիղճո զիս չչարչարէ,
ինչպէս որ խղճահարները կը չար-
չարուին, երկբայելով թէ արդեօք
մեղք մը մոռցեր եմ՝ թէ չէ. թէ
արդեօք խոստովանութիւնս ամբողջ
եղաւ՝ թէ չէ. արդեօք Աստուծմէ
շնորհք առի թէ չէ։ Աս ամէն խոր-
հուրդներս դուն, Տէր իմ, փարատէ
իմ մաքէս, եւ զորութիւն տուր, որ
ձեռքէս եկածն ընեմ ու խոստո-
վանակ ըլլալով, սրտիս հանգստու-
թիւն գտնեմ։

Աղօթք առ Յիսոսս Փրկիչ խղնի
մնաց քննոյթենէն ետքը ետքը։

Խաչելեալ Տէր իմ Յիսուս Քրիս-
տոս, ահա աս խղճմտանքի քննու-
թեան մէջ տրտմագին պատկերդ
աչքիս առջին եկաւ. տեսայ որ չար-
չարանքներուդ սկսած ատենը՝ երբ
գեթսեմանի պարտէզին մէջ երեսի

վրայ գետինն ինկած երկնաւոր Հօրդ
կ'աղօթէիր, բոլոր աս մեղքերս ու
անօրէնութիւններս մէկիկ մէկիկ
միտքդ բերելով, ան սոսկալի տագ-
նապլքաշեցիր, մինչեւ արեան քըր-
տինք քրտնեցար. Ետքը իմ սիրոյս
համար ամէնը մէկէն վրադ առիր.
Եւ անանկով քու երկնաւոր Հօրդ
առջեւը դուն զեկեղ ինծի համար ու
իմ անօրէն մեղքերուս տեղը քաւ-
ութեան զոհ ընծայեցիր. Եւ յօժար
սրտով վազեցիր խաչին վրայ գա-
մուեցար, սուրբ արիւնդ թափեցիր
ու երկնաւոր Հայորդ ինծի հետ հաշ-
տեցուցիր։ Սիրելի՛ Յիսուս իմ, կը
տեմնեմ որ խաչուած ատենդ իմ
ամէն մէկ մեղքերս ու անօրէնու-
թիւններս քեզի ինչ ցաւ ու կսկիծ
տուեր են։ Բայց վայ ինծի, որ աս ա-
սանկ գիտնալէս ետքը, ես այսչափ
անթիւ անհամար անդամ դարձեալ
մեղք գործելու համարձակեր եմ.

ու սաստիկ ցաւերդ ու կսկիծներդ
նորոգեր եմ: ԱՇ Յիսուս, աս ի՞նչ
կուրութիւն, ի՞նչ ապերախտու-
թիւն, ի՞նչ քարասրտութիւն է, որ
ես ըրեր եմ: Ո՛վ սիրելի Յիսուս իմ,
իմ միջնորդս ու քրիչս դուն ես.
Քու պատուական մահդ, սուրբ ա-
րեանդ հեղումն իմ մեղքերուս թո-
ղութեան համար է: Ահա ասոնց
վրայ յշսս դնելով՝ քու կենարար
խաչիդ ոտքը կ'իյնամ ու բոլոր
սրտանց զղղում կ'ընեմ. Եւ մէյ մ'ալ
մեղք չգործելու սրտանց աղէկ ա-
ռաջադրութիւն կը դնեմ: Դուն
լուսաւորէ միտքս ու սրտիս զեղջ
տուր, որ գործած մեղքերուս վրայ
կատարեալ ապաշխարութիւն ընեմ:

Աղօթք զղջիան:

Ո՛րչափ մեծ անխելքութիւն ըրեր
եմ, Տէր իմ, մեղանչելով. քանի
թշուառութեան մէջ ի՞նք զի՞նքս

ձգեր եմ պատուիրաններուդ դէմ
գործելով: Հպարտանալովս ու վրաս
մեծ խօսելով՝ քու աչքէդ ելած եմ,
ամէն զիս տեսնողներն ալ խենթի
տեղ դրած ու ծաղը ըրած են:
Բարկանալով՝ անբան գազաններու
նմանած եմ: Որկրամոլութեամբս՝
առողջութեանս վեսս տուած եմ:
Կախանձելով՝ ես ինծի անգութ
դահիճ եղած եմ: Վերջապէս ամէն
մէկ մեղքով զքեղ վշտացուցած ու
ինծի մեծամեծ վեսսներ տուած եմ:
Դուն ինծի զօրութիւն տուիր ամէն
մոլութիւններու յաղթելու. իսկ ես
անոնց գերի եղայ: Իմ մեղքերս են,
որ խղճիս հանգիստն ու խաղաղու-
թիւնը կ'աւրեն եւ զիս կը չարչա-
րեն: Իմ մեղքերս են, որ մկրտու-
թեան շնորհքն իզմէ կը կողոպտեն
ու հոգիս բոլորովին խեղճութեան
մէջ կը թողուն: Վերջապէս իմ մեղ-
քերս են, որ զիս արքայութենէ ու

քու երանելի տեսութենէդ կը զըրկեն:

Ի՞նչ մեծ անխելքութիւն է իմ ըրածս, որ փոքր մարմնաւոր վնաս մը չքաշելու համար գիշեր ցորեկ հոգ կընեմ, գլուխ կը յոգնեցընեմ. իսկ այսպիսի վնաս մը չկրելու, որուն նմանը չեկրնար ըլլալ՝ ամենեւին հոգ չունիմ:

Եփսոս ինծի, ինչու ձեռքէս եկածին չափ մեղք չգործելու չաշխատեցայ. ինչպէս եղաւ, որ սուրբ մկրտութեան անգին շնորհքը կորսընցուցի: Ո՛րչափ անսահման արդինք ու առաքինութիւններ կընայի մինչեւ աս օրս վասարկելու որ ամենեւին փոյթ չունեցայ. մանաւանդթէ բարեգործութեամբ արդինք ու երկնից արքայութիւնը վաստրկելու տեղ, մեղք գործելովս յաւիտենական պատժյ արժանի եղայ: Տուր ինծի, Տէր իմ, քու անզեղջ

շնորհքդ ու լուսաւորէ զիս, որ աղէկ մը ճանչնամ մեղքերուս գարշութիւնը, եւ այնպէս մը գանիմ, որ մէջ մ'ալ չգործեմ: Սրտանց կը բաղձամ, Տէր իմ, որ աս խոստովանութենէս ետքը ամէն մեղքերէս աղատ ըլլամ. եւ առաքինութեան գանձեր վաստրկելով, թէ աս աշխարհքս մաքուր խղճմանքով բարի ապրիմ, եւ թէ անդիի աշխարհքն զքեղ տեսնելու արժանի ըլլամ. ամէն:

Այ աղօժք:

ՈՎ հովիւ բարի Յիսուս Քրիստոս, մնորեցայ կորսուած ոչխարի մը պէս, գուն երկինքէն իջար զիս վնատուելու համար: Գիտեմ, որ երկնիքն աւելի ուրախութիւն կ'ըլլայ իմ վրաս, երբ որ դարձի գալու ըլլամ, քան թէ արդարներուն վրայ, որոնց ապաշխարութիւն պէտք չէ:

Ես մեղաւորս կորսնցուցի խղճմուանցս հանդիսաբը, մանաւանդ թէ կորսնցուցի ամենաբարի Աստուածսու սրտիս միսիթարութիւնը։ Վրասունեցած սէրդ բանի տեղ չգրի, որ զիս շահնելու համար մինչեւ արեանդ վերջին կաթիլը թափեցիր. եւ աշխարհային ունայնութեան ետեւէ եղայ։ Շատ անդամ ետեւէս ինկարբարի ազդեցութիւններովդ, որ զիս դարձի բերես. իսկ ես քեզի խուլեղայ, իմ մոլութիւններս աւելի սիրեցի, քան թէ զքեզ՝ ամենաբարի Աստուածս, Աբարիս ու Փրկիչս։ Իրաւցընէ արժանի էի, որ զիս բոլորովին երեսէ ձգէիր, ամենեւին միտքս չբերելով ոչ դարձ կամ ապաշխարութիւն, ոչ դժոխիքի վախ եւ ոչ աբքայութեան սէրը։ Արժանի էի, որ երբեք քեզի հետ կարող ըլլայի հաշտուիլ. բայց քու մարդասիրութիւնդ այնչափ է, որ իմ սաստիկ

ապերախտութեանս կը յաղթէ։ Այնչափ մէծ է իմ անխելքութիւնս, որ մեղանչելով՝ ամէն օր ինծի կորըստեան հոր կը փորեմ. թէ որ դուն զիս պահնելու ըլլայիր, շատոնց կորսուած էի յախտենական կորուստը։ Այսօր շնորհօբդ կ'առաջադրեմ դառնալ կորստեան ճամբաներէս. Կինամ գթութեանդ առջեւ, անշառակ որդւոյն հետ կ'աղաղակեմ. Հայր, մեղայ յերկինս. արժանի չեմ ասկէ ետքը աբքայութեան որդի ըստուելու։ Ծնդունէ սրտիս զզումը. առաջադրութեանս դուն օգնէ, որ կարող ըլլամ կատարել։ Զես ուզեր որ ես մեղաւորս կորսուիմ, հապակը բաղձաս որ դարձի գամ ու փըրկուիմ։ Անանկ է նէ ես ալ սուրբ շնորհացդ հետ մէկտեղ գործելով՝ կը ջանամ ասկէ ետքը հաստատուն առաջադրութեամբ առջի ըրածներս շխտկել, միայն զքեզ սիրել, քեզի

ծառայել, քեզի հաճց ըլլալ: Որպէս զի արժանապէս զքեղ սիրոս ընդունելով, աս աշխարհքիս վրայ դուն ինձի հետ ըլլաս. եւ արժանի ընես, որ ես ալ քեզի հետ ըլլամ անդիի աշխարհքն արբայութեանդ մէջ. ամէն:

Աղօթք զդժման եւ տուածադրութեան:

Տէր իմ եւ Աստուած իմ, գուն ծայրագյն ու անսահման բարութիւն ըլլալվի՝ ամէն բանէ վեր սիրելի ես. բոլոր ստեղծած բաներուդ անսահման տէրն ըլլալով, իշրաւունք ալ ունիս, որ ամէն ստեղծած բաներդ զքեղ սիրեն եւ զքեղ ամենեւին չվշտացընեն ինչ կերպով որ ըլլայ: Իսկ ես թշուառական ու ապերախտ մեղաւորս՝ մանկութենէս մինչեւ հիմայ բիւրակերպ անօրէն մեղքերովս քու աստուածային սէրդ ոտքի տակ առի, քեզմէ երես դար-

ձուցի, եւ շատ անդամ զքեղ անսահման բարիդ ինձի գէմ բարկութիւն շարժեցի: Սակայն ողորմած ու գթած Տէր իմ եւ Աստուած իմ, մեղք գործելու սկսած ատենէս մինչեւ հիմայ որչափ որ մեղմնչեր եմ նէ, բոլոր մեղքերուս վրայ կատարեալ սրտանց կը ցաւիմ ու կը զըղցամ: Իրաւ է, Տէր իմ, որ իմ մեղքերովս արբայութենէն զըկուեցայ ու դժոխոց արժանի եղայ: Բայց ես ասոր համար չեմ զղչար, Տէր իմ եւ Աստուած, այլ պարզապէս քու սիրոցդ համար կը զղչամ ու կը ցաւիմ. որ գուն ամէն բանէն վեր սիրելի ես: Կ'առաջագրեմ, ով ողորմած Աստուած իմ, որ ասկից եաքը մէջ մ'ալ մեղք չգործեմ ու զքեղ ալ չվշտացընեմ: Ասկից եաքը հազար անդամ կ'ուզեմ մեռնիլ, քան թէ մէկ անդամ միայն մեղք գործել ու զքեղ բարկացընել: Աս ալ կ'ա-

ուաջադրեմ Տէր իմ, որ ասկից ետքը մեղքէն ալ, մեղքի առիթներէն ալ փախչիմ: Բայց գիտեմ, որ առանց քու շնորհացդ բան մը չեմ կրնար ընել. անոր համար խոնարհութեամբ կը խնդրեմ, Տէր, սուրբ շնորհքդ ու օգնութիւնդ տուր ինծի, որ անով առաջադրութեանս վրայ հաստատ կարենամ կենալ: Կ'աղաւչեմ, Տէր իմ, որ աս աշխարհքիս մէջ ինծի ամենեւին չխնայես, գլուխս զարնես, կամքս կոտրես ու զօրաւոր ձեռքովդ սիրոս ի բարին դարձընես. որ ասկէ ետքը մեղքէն հեռու կենալով՝ միշտ զքեղ սիրեմ, քեզի ծառայեմ, պատուիրաններդ պահեմ ու սուրբ կամքդ կատարեմ. ամէն:

Աղ աղօթք:

Հայր ողորմութեան, ահա աստուածային աթուիդ առջեւն իյնալով ներումն կը խնդրեմ մեղքե-

րուս: Կը Ճանչնամ սխալմունքս, կը խոստովանիմ, որ անառակ որդւոյն պէս զքեղ իմ երկնաւոր Հայրս թողուցի ու զանազան մեղքերով հոգիս աս խեղճութեան մէջ ձգեցի: Սակայն ով բարեգութ Հայր, ահա ամէն մեղքերուս վրայ զզչալով ու խիստ ցաւելով՝ կը գոչեմ կ'աղաղակեմ. Հայր, Թշուայերինն եւ սուսան Ջու: Հայր, քու Միածին Որդւոյդ չարչարանիքները, սուրբ արիւնն ու մահը յիշէ, որ իմ հոգւոյս գինն է. եւ անոր արդիւնքներովը մեղաւոր հոգւոյս ողորմէ, զօր գուն քու անարատ ձեռօքդ ստեղծեցիր: Ահա Հայր իմ ողորմած, անառակ որդւոյն պէս նորէն քեզի կը գառնամ, խոնարհութեամբ քեզի երկրպագութիւն կ'ընեմ. զքեղ կը պատուեմ, կը յարգեմ ու բոլոր սրտովն, մըտքովս ու զօրութեամբս զքեղ կը սիրեմ ու սիրելու կը բաղձամ: Ա-

Հա Հայր բարեգութ, ինչ մեղք որ
գործեր եմ մտքով, խօսքով, գործ-
քով ու զանցառութեամբ, կամաւ
եւ ակամայ, ամենուն վրայ քու սի-
րսդ համար սրտանց կը ցաւիմ, եւ
ձեռքէս եկածին չափ անոնցմէ կը
զգուշանամ։ Քու ամենատես աչքիդ
առջեւ սրտիս ամէն ծածուկ վէքքերն
ու չարութիւնները կը բանամ։ Քեզ-
մէ գաղտուկ բան մը չիկրնար բլալ.
դուն ինձի օգնութիւն ըրէ, որ խոս-
տովանած ատենս չըլսայ թէ սատա-
նային որոգայթին մէջ իյնալով՝
պակսութիւն մ'ընեմ ու խոստո-
վանանքին սուրբ խորհուրդն աւրեմ։
Գթած Հայր իմ, սուրբ շնորհքդ
տուր ինձի, որ աղէկ պատրաստու-
թեամբ ու աղէկ առաջադրութեամբ
մը սկսիմ ու կատարեմ։ Ահա Յի-
սուսի քրիստոսի Տեառն մերս ար-
դիւնքները, փառաւորեալ միշտ կյս
Աստուածածինը, պաշտպան սուր-

բերա, բոլոր հրեշտակներն ու մաս-
նաւորապէս պահապան հրեշտակս
ինձի բարեխօս կը բռնեմ։ Կ'աղա-
ցեմ, Տէր իմ, որ անոնց բարեխօ-
սութեամբն ամենակարող ձեռքդ
վրաս դնես, որ աս սուրբ խոստո-
վանանքս արժանապէս կատարելով՝
սուրբ շնորհացդ մէջ նորէն հաս-
տատուիմ։ Ասորառն, Դաւեալ զի՞ս զի-
շաւորս։ Յիսուս Որդէ Քառանին, Պար-
եաց ինչ. ամէն։

ԵԹԹԱՆ ՍԵՎԾՈՍՔ

ԱՊԱՇԽԱՐԱՒԹԵԱՆ

Թէ պէտք Բալը առընդուն առաջական հա-
րաւուկ գրութ ըլլալով կարմանաւէ աղբեցաւնիւն-
ունիւն, բայց առ էօնն առընդուն աղբեցաւնիւն-
ունիւն միւր լորժուկ զանուն աղբեցաւն հըն է,
որ շնորհ լուս Որդիւնիւն կրութ գրութ-
ըլլալով միւր մորդուն հասկաւուն բայց լու-
սունը համար համ ու լուս գրութունի ու լուսուն-
ունիւնիւն զանուն կրութ գրութ միւր համար հա-
մար բայց բայց միւր մորդուն բայց լուսուն-
ունիւն ու լուս գրութ մորդուն բայց լուսուն-
ունիւն առ էօնն աղբեցաւն աղբեցաւն իւն է առ էօնն աղ-

Սաղմոս զ.

Տէր, մի սրտմտութեամբ քով յան-
դիմաներ զիս. եւ մի բարկու-
թեամբ քով իրատեր զիս:

Ողորմեա ինձ, Տէր, զի հիւանդ եմ
ես. բժշկեա զանձն իմ, զի խռո-
վեցան սակերը իմ:

Անձն իմ յցի խռովեցաւ, եւ դու
Տէր մինչեւ յերբ:

Դարձ Տէր եւ փրկեա զանձնիմ. կեցո
զիս Տէրը սողորմութեան քում:

Զի ոչ ոք է որ ի մահու յիշէ զքեզ,
կամ ի գժոխս խօստովան առնիցի
առ քեզ:

Վաստակեցայ ես ի հեծութեան
իմում. լուացի զամենայն գիշեր
զմահիճն իմ, եւ արտասուօք
իմովք զանկողինս իմ թացի:

Խռովեցաւ ի սրտմտութենէ ակն
իմ. եւ մաշեցայ ես ի վերայ ա-
մենայն թշնամեաց իմոց:

Սաղմոս զ.

Տէր, մեղքերուս համար սրդողե-
լով զիս մի պատժեր. եւ արդար
բարկութեամբդ զիս մի խրատեր:
Ողորմէ ինձի, Տէր իմ, ինչու որ հո-
գիս հիւանդ է. զիս ողջնցուր, վասն
զի հոգւոյս կարողութիւնները մեղ-
քերուս համար իրար անցեր են:
Ես ալ մեծ խղճմտանիքի անհանգըս-
տութեան մէջ եմ. Տէր իմ, ե՞րբ
պիտի ողորմիս դուն ինձի: Դարձիր
մէջ մ'ինձի նայէ. ազատէ զիս աս
խեղճութենէ, ինչու որ քու ողոր-
մութիւնդ շատ մեծ է, քան թէ իմ
մեղքերուս բազմութիւնը: Թէ որ
աս խեղճութեան մէջ մեռնիմ, ինչ-
պէս բերանս պիտի բացուի զքեզ
օրհնելու. գերեզմանի մէջ ով կրնայ
զքեզ դովել: Գիշեր ու ցորեկ ող-
բալէն ոյժս կտրեցաւ. արցունքներս
աղբիւրի պէս կը վաղէին ու բոլոր
գետինը կը թրչէին: Բարկութենէս

Ի բաց կացէք յինէն ամենէքեան,
ոչք գործէք զանօրէնութիւն:
Լուաւ Տէր ձայնի լալց իմց, լուաւ
Տէր աղօթից իմոց. եւ Տէր
զինդրուածո իմ ընկալաւ:
Ամաչեսցեն եւ խռովեսցին յոյժ
ամենայն թշնամիք իմ. դարձցին
յետս եւ ամաչեսցեն յոյժ վաղ-
վաղակի եւ խռովեսցին:

Սաղմոս ԱԱ.

Երանի, որում թողութիւն եղեւ
մեղաց, եւ ծածկեցան ամենայն
յանցանք նորա:
Երանի առն, որում ոչ համարի Տէր
զմեղս նորա. եւ ոչ գոյ նենդու-
թիւն ի բերան նորա:
Լուեցի ես եւ մաշեցան ամենայն
ոսկեբք իմ, առ աղաղակել ինձ
առ Տէր զօրհանապազ ի տուե
եւ ի գիշերի:

աչուըներս դարձան. սիրոս ալ
թշնամեացս վրայ մաշեցաւ: Հե-
ռացէք դացէք իղմէ շար խորհուրդ-
ներ, որ զիս մեղք խոթելու համար
վրաս եկած էք: Աստուած լալու ձայ-
նիս լսեց ու ինծի ողորմեցաւ, եւ
սրտիս բաղձանկը կատարեց: Թող
հոգւցս ամէն թշնամիներն ամչնան,
շուտ մը ետ դառնան, որպէս զի հո-
գիս իր Արարչին հետ միանայ:

Սաղմոս ԱԱ.

Երանի ան մարդուն, որուն մեղաց
թողութիւն եղաւ. եւ բոլոր մեղ-
քերն Աստուած բանի տեղ չփոներ
սրտանց խռոսովանելուն համար:
Երկայն ատեն մեղքի մէջ լուռ կե-
ցայ, բայց ետքը Աստուծոյ հետ
հաշտուիլ ուղեցի. գիշեր ու ցորեկ
առ Աստուած աղաղակելին չէի
դադրեր, մինչեւ ոսկըներս մաշե-
ցան: Աասն զի մեծամեծ հոգեւոր ու

Ծանրացաւ ձեռն քս ի վերայ իմ,
դարձայ ի թշուառութիւնիմ, զի
հարան յիս փուշք:
Զմելս իմ ցուցի քեզ, եւ զանօրէնու-
թիւնս իմ ոչ ծածկեցի ի քէն:
Ասացի թէ պատմեցից ինձէն զմելս
իմ. եւ գու թողցես զամենացն
ամբարշտութիւնս մեղաց իմոց:
Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ
քեզ ամենայն սուրբք ի ժամ
ընդունելի:
Բայց միայն ի ջուրցն հեղեղաց բաշ-
մաց, որք առ նոսա ինչ ոչ մեր-
ձենան:
Գու ես ապաւէն իմ ի նեղութենէ
յայսմանէ, որ շուրջ եղեւ զինեւ:
Ցնծութիւն իմ, փրկեա զիս յայն-
ցանէ, ոյք պաշրեցին զիս:
Իմաստուն արարից զքեզ, եւ խե-
լամուտի ճանապարհի յոր գնաս-
ցես, եւ հաստատեցից ի վերայ
քս զաւս իմ:

մարմնաւոր պատուհաններ վրաս
խրկեցիր եւ սրտիս հանգստութիւ-
նը բոլորովին կորսնցուցի. Խըդ-
մոանքս ալ փուշի մը պէս զիս կը
խայլէր: Մինչեւ որ սիրտս զղում
ունեցաւ, եւ առաջադրութիւն դրի
մեղքերս քու առ ջիդ խոստովանելու,
անօրէնութիւններս քեզմէ չծած-
կելու: Գիտեմ որ ամէն մեղքերս կը
ներես, երբ որ ես իզմէ ցաւով ու
զղմամբ պատմելու ըլլամ: Անոր հա-
մար ամէն բարեպաշտներն այսպիսի
ընդունելի ատեն քեզի աղաչելէն
չեն դագրիր. որ սասանկ սաստիկ
փորձանքներու հեղեղն իրենց վեաս
մը կարող ըլլայ հասցընել: Գուն
ես Տէր իմ օգնականս, դուն զիս ա-
զատէ աս նեղութենէն՝ որ իմ չորս
զիս առեր է: Գուն ես սրտիս միի-
թարութիւնը. զիս չար կիրքերուս
ձեռքէն փրկէ: Ես քու միտքդ կը
լուսաւորեմ (կ'ըսէ Աստուած), եւ

Մի լինիք որպէս զձիս եւ դջորիս, զի
ոչ գոյ ի նոսա իմաստութիւն. ի
սանձս եւ ի դանդանաւանդս
Ճմլեսցես զկզակս նոցա, որք առ
քեզ ինչ ոչ մերձեսցին:
Քաղում տանջանք են մեղաւորաց.
բայց ոյք յուսան ի Տէր՝ ողորմու-
թիւն Տեառն շուրջ եղեցի
զնորօք:

Ուրախ լերուք եւ ցնծացէք ար-
դարք. ի Տէր պարծեցարուք ա-
մենեքեան, ոյք ուղիղ էք սրտիւք:

Սաղմոս Լի.

Տէր, մի սրտմութեամբ քով յան-
դիմաներ զիս, եւ մի բարկու-
թեամբ քով խրատեր զիս:

Թէ ինչ Ճամբայ պիտի բռնես, ես
քեզի կը սորվեցընեմ. աչքս ու
ինամքս քու վրայէդ չի պակսիր:
Զիերու կամ ջրիներու պէս անբան
մի ըլլաք, ինչպէս հելմանոսներն են,
որ առաքինութեան Ճամբան քալելու
համար սանձ պէտք է. անանկով ալ
իրենց արարչնն չեն մերձենար ու
բարերարնին մէյ մը մտուընին չեն
բերեր: Մեղաւորներուն համար շատ
պատրաստած տանջանքներ կան. բայց
որոնք որ Աստուծոյ կ'ապաւինին, ինք
զանոնք ողորմութեամբն ամէն բանէ
կ'ազատէ: Ուրախացէք եւ խնդացէք
ով արդարներ, որ ձեր սիրտն Աս-
տուծոյ հետ շիտակ է, ու Աստուծոյ
անունը ձեզի պարծանք եղած է:

Սաղմոս Լի.

Տէր, թէպէտ ես պատժուելու
արժանի եմ, բայց որդողած ատենդ
զիս մի պատժեր. եւ արդար բար-
10*

Զի նետք քո հարան յիս. եւ յիս
հաստատեցաւ ձեռն քո:

Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ
յերեսաց բարկութեան քո:

Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց՝
յերեսաց մեղաց իմոց:

Անօրէնութիւնք իմ բարձրացան
քան զգլուխ իմ, որպէս զըեռն
ծանր ծանրացան ի վերաց իմ:

Նեխեցան եւ փտեցան վէլք իմ:
յերեսաց անզգամութեան իմոց:

Տառապեցայ եւ խոնարհ եղէ մինչեւ
յոյժ. զօրհանապաղ տրտում
դնայի. զի անձն իմ լի եղեւ չար-
չարանք, եւ ոչ գոյ բժշկութիւն
մարմնոյ իմոց:

Չարչարեցայ եւ խոնարհ եղէ մինչեւ
յոյժ. մոնչեի առ հեծութեան
սրտի իմոց:

Տէր առաջի քոյ է ամենայն ցանկու-
թիւն իմ, եւ հեծութիւն իմ ի
քէն ոչ ծածկեցաւ:

Կութեամբդ մի խրատեր: Խնչու որ
նեղութեան նետերը զիս խորունկ
խոցեցին. եւ արդար բարկութիւնդ
վըաս տիրեր է: Քու արդար բար-
կութիւնդ տեսնելով՝ մարմնա աշու
գողու մէջ ինկաւ. եւ մեղքերուս
համար խոջմատանքս ամենեւին հան-
գըստութիւն չունի: Անօրէնութիւն-
ներս գլխէս վեր գիղուեցան, եւ
ծանր բեռան պէս զիս կը ձնշեն:
Այնչափ է իմ անզգամութիւնս, որ
մեղացս վէրքերը փտտիլ ու շարաւով
լցոնիլ սկսան: Այնպիսի ողորմելու-
թեան մէջ ինկայ, որ աչքս գետնէն
չէի կրնար վերցընել. այնպիսի ցաւ-
երու մէջ մնացի, որ երբեք ողջ ըն-
նալու ձար չկայ: Անանկ խեղու-
թեան մէջ ինկայ, մինչեւ սրտիս
հեւալէն չէի կրնար բան մը զըու-
ցել: Տէ՛ր իմ, դուն որ ամէն բանս
կը տեսնես ու կը լսես, քաշածս
քեզմէ գաղտուկ չէ. իմ փափաքս ու

Սիրտ իմ խոռովեցաւ յիս եւ եթող
զիս զօրութիւն իմ. լցո աչաց
իմոց, եւ այս ոչ եղեւ ընդ իս:
Քարեկամք իմ եւ մերձաւորք իմ
առաջի իմ մերձեցան եւ կացին.
եւ մերձաւորք իմ հեռի եղեւ
յինէն:

Բռնադատէին զիս եւ խնդրէին զանձն
իմ, զիք խորհէին չար ի վերայ
իմ. խորհեցան զանօրէնութիւն
եւ զնենդութիւն զօրհանապաղ
խորհեցան:

Ա. Յ. Ես որպէս խոռով՝ որ ոչ լսէ. եւ
որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան
իւր:

Եղէ ես որպէս մարդ, որ ոչ լսէ,
եւ ոչ գոն խօսք ի բերան նորա:
Ես ի քեզ Տէր յուսացայ, եւ գու
լուիցես ինձ Տէր Աստուած իմ:
Ասացի, թէ մի ուրախ եղիցին յիս
թշնամիք իմ. ի սասանել ոտից

սրտիս ախը դուն գիտես: Աիրտս
անանկ խոռովութեան ու յուսահա-
տութեան մէջ է, որ վրաս զժ
չմնաց. մտքիս լցոն ալ մթնցաւ: Բո-
լոր բարեկամներս ու դրացիներս, որ
նեղութեան ատենն ինծի կօգնէին,
մէյ մը երեւցան, եւ զիս աս վիճակի
մէջ տեսնելով՝ թող տուին գացին:
Թշնամիներս ինծի գէմ ելան. եւ
բոլոր օրն ուրիշ բան չէին ըներ,
եթէ ոչ անօրէնութիւն ու չարու-
թիւն կը մտածէին ու միտքս կը
ձգէին. եւ կուզէին որ գործքով ալ
կատարեմ: Բայց ես խոռով դարձայ,
անոնց ամենեւին ականջ չդրի. կամ
համր եղայ, որ բերանը չի բանար.
արձանի մը պէս՝ որ չի լսեր ու
բերանը խօսք չկայ: Թէպէտ շատ
յուսահատելու բաներ կան, բայց
ես քեզմէ, Տէր իմ, յոյս չեմ
կտրեր. ով Տէր Աստուած իմ, դուն
լսէ աղաչանացս ձայնը: Միտքս

իմոց, ի վերայ իմ մեծամեծս
խօսեցան;
Ես ի տանջանս պատրաստ եմ, եւ
ցաւք իմ առաջի իմ են յամե-
նայն ժամ:
Զանօրէնութիւնս իմ պատմեցից, եւ
հոդացայց վասն մեղաց իմոց:
Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանի են
եւ զօրացեալք են քան զիս. եւ
բաղումք են, ոյք ատեն զիս ի
տարապարտուց:
Ոյք հատուցին ինձ չար փոխանակ
բարւոյ, չարախօսէին զինէն, զի
ես երթայի զշետ արդարու-
թեան:
Մի թողուր զիս Տէր Աստուած իմ,
եւ մի ի բացեայ առնիր յինէն.
Հայեաց յօդնել ինձ Տէր փրկու-
թեան իմոյ:

զրի, որ ձեռքէս եկածին չափ ջանամ,
որպէս զի թշնամիներս վրաս չուրա-
խանան. անոնք զիս մեղքի վտանգ-
ներու մէջ տեսնելով՝ սկսան մէծ
ինտում ընել: Պատրաստ եմ մեղ-
քերուս համար ամէն կերպ տանջանք
ու նեղութիւն քաշելու, երբ որ
խրկես: Անօրէնութիւններս սրտանց
կը խոստովանիմ ու ձեռքէս եկածին
չափ կը ջանամ ապաշխարել: Բայց
ինչ ընեմ, Տէր իմ, որ թշնամիներս
դեռ կենդանի են ու իզմէ աւելի
զօրացած են. շատեր ալ կան, որ
զիս անիրաւ տեղ կ'ատեն: Ես իրենց
բարիք ըրի, եւ անոնք ինծի չարիք
հասուցին. վրաս գէշ խօսեցան, ին-
չու որ ես ուզեցի արդար ճամբայ
բռնել: Տէր Աստուած իմ, զիս թող
մի տար ու իզմէ մի չեռանար, քու
օգնութիւնդ մի ուշացըներ, ինչու
որ գուն ես իմ փրկիչս:

Սաղմոն Ժ.

Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի
ողորմութեան քում, եւ ըստ
բազում գթութեան քում քաւ-
եա զանօրէնութիւնս իմ:

Առաւել լուա զիս յանօրէնութենէ
իմէ, եւ ի մեղաց իմոց սուրբ
արա զիս:

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն
գիտեմ, եւ մեղք իմ առաջի իմ
են յամենայն ժամ:

Քեզ միայն մեղաց, Տէր, եւ զչար
առաջի քո արարի:

Որպէս արդար եղիցես ի բանս քո,
եւ յաղթեացես ի դատելն քո:

Անօրէնութեամբ յղացայ, եւ ի մեղս
ծնաւ զիս մայր իմ:

Դու Տէր զՃմարտութիւն սիրեցեր,
զանցայս եւ զՃածկեալս իմաս-
տութեամբ քով յայտնեցեր ինձ:
Ցողեա յիս մշտկաւ, եւ սուրբ եղեց.

Սաղմոն Ժ.

Ողորմէ ինծի, Աստուած իմ, որ
ողորմութիւնդ մեծ է. քաւէ անօ-
րէնութիւնս, որ գթութիւնդ շատ
է: Մեղաց աղտերու մէջ թաթխուե-
ցայ. լուա զիս, եւ մեղքերս ու
անօրէնութիւններս մաքրէ: Ես ան-
ձամբ ըրած անօրէնութիւններս գի-
տեմ. ու մեղքերս մաքէս չեն ելլեր
ամեննեւին: Քու աչացդ առջին ու
քեզի գէմ, որ զիս ստեղծեցիր ու
կը պահպանես, յանդգնեցայ մեղք
գործել: Բայց դուն ինչպէս որ խոս-
տացար մեղաւորներուն թողութիւն
տալ, քու խօսքիդ իրաւ ըլլալն իմ
վրաս ալ ցուցուր. եւ զիս դատելու
ատենդ ողորմութիւնդ յաղթէ ար-
դարութեանդ: Վասն զի մեղքի մէջ
ծնած ըլլալով՝ միշտ գիւրաւ մեղաց
մէջ կիյնանք: Թէպէտ ասով չենք
կրնար բողորովին արդարանալ, ինչու

լուա, եւ քան զջիւն սպիտակ
եղէց:

Լսելի արա ինձ Տէր զցնծութիւն եւ
զուրախութիւն, եւ ցնծացեն
ոսկերք իմ տառապեալք:

Դարձո զերեսս քո ի մեղաց իմց,
եւ զամենայն անօրէնութիւնս իմ
քաւեա յինէն:

Զսիրտ սուրբ հաստեա յիս Աս-
տուած, եւ զՀոգի ուղիղ նորո-
գեա ի փորի իմում:

Մի ընկենուր զիս Տէր յերեսաց
քոց. եւ զՀոգի քո սուրբ մի հա-
ներ յինէն:

Տուր ինձ զցնծութիւն փրկութեան,
եւ հոգւով պետութեան քո
հաստատեա զիս:

Ուսուցից անօրինաց զՃանապարհս
քո, եւ ամպարիշտք առ քեզ
դարձցին:

Փրկեա զիս յարենէ Աստուած, Աս-
տուած փրկութեան իմց, եւ ցըն-

որ դուն ճշմարտութիւնը կը սիրես,
եւ ինչ որ գաղտուկ է ու մեր սրբ-
տին ծածուկներն ալ քու իմաս-
տութեամբդ մեղի կը յայտնես: Յօ-
ղէ իմ վրաս բարերար ողորմու-
թիւնդ, որպէս զի մաքրուիմ. լուա
հոգիս քու շնորհացդ անձրեւովը,
որ ձիւնէն ճերմակ ըլլայ: Անցշ
միսիթարութեան ձայնդ լսեցուր
սրտիս, որ հոգւոյս զօրութիւնն ու-
րախութեամբ լեցուի: Իմ մեղքե-
րուս, Տէր իմ, բարկացած աչքը մի
նայիր. եւ ամէն անօրէնութիւններս
քաւէ: Փոխէ սիրտս, եւ այնպէս
սիրտ մը տուր, որ առաքինութեան
ու սրբութեան ետեւէն ըլլայ: Զըւ-
լայ որ դարձեալ մեղանչելուս հա-
մար զիս երեսէ ձգես. եւ սուրբ
Հոգւոյն շնորհքը վրայէս հանելով՝
առաջուան պէս խեղճ միամ: Հապա
նորէն շնորհքներ խրկելով՝ պահէ
խղճմտանացս փրկաւէտ ուրախու-

ծասցէ լեզու իմ յարդարութեան
քում:

Տէր եթէ զըրթունս իմ բանաս,
բերան իմ երգեցէ զօրհնու-
թիւնս քո:

Թէ կամեցեալ էիր, պատարագս
մատուցանէաք. բայց դու ընդ
ողջակէցս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ,
զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ
Աստուած ոչ արհամարհէ:

Բարի արա Տէր կամօք քովք Սիովի.
Եւ շննեսցին պարիսպքն երուսա-
ղէմի:

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս
արդարութեան, յորժամ ուխտից
պատարագս հանցեն ի սեղան քո
զուարակս:

թիւնը. եւ հոգւցս ոյժ տուր որ մար-
մայն վրայ իշխան ըլլայ: Ես ալ կը
ջանամ քու սուրբ պատուիրաններդ
անօրէններուն սորվեցընել. որպէս զի
անոնք ալ քեզի դառնան ապաշխա-
րեն: Իմ չար վարքս շատերուն գայ-
թակղութեան պատճառ եղաւ ու
շատերուն արիւնը մտայ. բայց դու
Տէր Աստուած իմ, զիս պահէ, որ
ուրիշը չգայթակղեցընեմ. եւ լեզուս
արդարութեանդ քարող ըլլայ: Գուն,
Տէր իմ, բաց բերանս, որ զքեզ օրհ-
նէ ու փառաբանէ: Գիտեմ որ խո-
նարհ սիրան աւելի հաճոյ է քեզի՝
քան զոհ մատուցանելը: Տէր, բա-
րերար կամօքդ բարիք ըրէ հոգւցս.
ողորմութիւնդ պարսպի պէս մար-
մայս պաշտպան ըլլայ: Երբ ողոր-
մութիւնդ վրայէս անպակաս կ'ըլլայ,
կընամ բարի գործքեր քեզի մա-
տուցանել, եւ զիս բոլորովին քեզի
սիրոյ սեղանի վրայ զոհ ընել:

Մաղմնս ՇԱ.

Տէր, լուր աղօթից իմաց, եւ աղաղակ
իմ՝ առ քեղ եկեսցէ. մի դար-
ձուցաներ զերեսս քո յինէն:
Յաւուր նեղութեան իմց խոնարհե-
ցո առ իս զունկն քո. յորում
աւուր կարդամ առ քեղ, վաղ-
վաղակի լուր ինձ:

Սպառեցան որպէս ծուխ աւուրբ
իմ, եւ ոսկերք իմ որպէս խորիւ
չորացան:

Հարայ ես որպէս խոտ, եւ ցամաքեցաւ
սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց
իմ ի ձայնէ հեծութեան իմց:

Ացեցաւ ոսկը իմի մարմին իմ, նմա-
նեցայ ես հաւալսան անապատի:

Եղէ ես որպէս բռւ աւերակի, տքնե-
ցայ եւ եղէ ես որպէս Ճնճղուկ
միայն ի տանիս:

Կախատեցին զիս թշնամիք իմ՝ զօրւ-

Մաղմնս ՇԱ.

Տէր, լսէ աղօթքս, ձայնս քեզի
հասնի. երեսդ իզմէ մի դարձըներ:
Նեղութեանս ատեն ականջդ ինծի
խոնարհեցուր. եւ զքեղ կանչած
ատենս շուտ մը ինծի օգնութեան
հասիր: Այնչափ նեղութիւն կրեցի,
որ կեանքս ծուխի պէս անցաւ, ես
ալ խոտի պէս չորցայ. սրտիս ցաւէն
հաց ուտելս մոռցայ. սրտիս նեղու-
թենէն կաշի ու ոսկը դարձայ. անա-
պատի մէջ եղած թոշուններու պէս
խեղճ մնացի, կամ աւերակներու
բուերուն նմանեցայ, Ճնճղուկներու
պէս միս մինակ մնացի: Բոլոր օրը
թշնամիներս զիս նախատեցին. ե-
րեսպաշտները ծածուկ մէջերնին
երդում ըրին որ զիս կորսնցընեն:
Մոխիրը հացի տեղ կերայ. խմած
ջուրս արցունքով խառնեցի: Ինչու
որ տեսայ՝ թէ դուն ալ Արարիչս

Հանապազ, եւ գովիչք իմ ինեւ
երդնուին:

Զմիկիր որպէս զշաց կերպ, եւ զըմ
պելին իմ արտասուզք խառնեցի:

Յերեսաց բարկութեան սրտմտու-
թեան քո, զի դու բարձրացուցեր
եւ խոնարհեցուցեր զիս:

Աւուրբ իմ որպէս հովանի անցին,
եւ ես որպէս խոտ ցամաքեցայ:

Դու Տէր յաւիտեան կաս, եւ յիշա-
տակ քո յազգէ մինչեւ յազգ:

Դու յարուցեալ գթասցիս ի վերպ
Սիովի. ժամանակ գթալոյ նորա
հասեալ է ժամ:

Հաճեցան ծառայք քո ընդ քարինս
նորա, եւ ի հողս նորա գթասցին:

Երկիցեն հեթանոսք յանուանէ
քումմէ. եւ ամենայն թագաւորք
երկրի ի փառաց քոց:

Շինէ Տէր զՍիոն, եւ երեւեցի
փառք իւրովք ի նմա:

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց,

ինծի բարկացեր ես. դուն որչափ որ
զիս բարձրացուցիր զանազան շնորհ-
քով, այնչափ ցածութեան մէջ ին-
կայ մեղանչելովս: Իմ օրերս շուքի
պէս անցան գացին. ես ալ խոտի մը
պէս չորցայ: Դուն յաւիտեանս նշյն
կը մնաս ու ամենուն կ'ողորմիս. բա-
րերարութեանդ յիշատակն ամէն
ազգաց մէջ կը պատմուի: Անանկ է
նէ հոգւոյս ալ ողորմիս, որ մեզացս
համար ետքի խեղճութեան մէջ ին-
կեր է. հիմակ է անոր ողորմելու ա-
տենը: Սուրբերն ալ տեսնելով իմ
ողորմելի վիճակս, բարեխօս կըլլան,
որ ինծի ողորմիս: Թողդ տեսնեն հե-
թանոսներն ըրած բարիքներդ, եւ
անհաւատ թագաւորները վախնան
անուանէդ: Երբոր հոգւոյս կորսըն-
ցուցած շնորհքներն ետ դարձընե-
լու զարդարելու ըլլաս, ան ատեն
փառքդ ամենուն յայտնի կ'երեւայ,
որ ինծի պէս մեղաւորի ալ կ'ողորմիս:

եւ ոչ արհամարհեաց զինդրըւ-
ածս նոցա:

Գրեսցի այս յազգ այլ, ժողովուրդ
որ ստացեալ է, օրհնեսցէ զՏէր:
Հայեցաւ նա ի բարձանց ի սրբու-
թենէ իւրմէ. Տէր յերկնից յեր-
կիր հայեցաւ:

Լսել զիեծութիւն կապելոց. եւ
արձակել զորդիս մահապարտաց:
Պատմել ի Սին զանուն Տեառն, եւ
զօրհնութիւնս նորա յերուսա-
ղէմ:

Ժողովել ժողովորդոց ի միասին, եւ
թագաւորաց ծառայել Տեառն:

Պատասխանի ետ նմա ի ճանապարհի
զօրութեան իւրոց, զնուազութիւն
աւուրց իմոց ասա ինձ, եւ մի
հաներ զիս ի կէս աւուրց իմոց.
զի յազգէ յազգ են ամք քո:

Խսկըանէ, Տէր, զիմունս երկիր
հաստատեցեր, եւ գործք ձեռաց
քոց երկինք են:

Դու, Տէր իմ, միշտ խոնարհներուն
աղօթքը կը լսես ու անոնց աղա-
շանքը չես արհամարհեր: Աստուծոյ
բարերարութեան ու ողորմութեան
յիշատակը թող գրուի, որ ուրիշ
ազգերն ալ կարդան ու Ճանչնան
իրենց բարերարը: Եւ հաւատացեալ
ժողովուրդը զԱստուած օրհնէ:
Միշտ Աստուած երկինքէն երկիր կը
նայի, որ մեղքերով կապուածներուն
հառաջանաց լսէ, եւ գժոխոց ար-
ժանի եղող մեղաւորներն ազատէ.
որ պատմուի մեր Աստուծոյ անունը
հաւատացելոց մէջ. լսեն ուրիշ հե-
թանոսներն ալ, եւ թագաւորները
դառնան ու Աստուծոյ ծառայեն:
Թէպէտ մեր կեանքը կարծ է, անոր
համար Աստուծոյ ընելու բարիքնե-
րուն շատը չեմ կրնար տեսնել. բայց
կ'աղաչեմ՝ առանց ապաշխարութեան
աս աշխարհքէս զիս մի հաներ, որ
աս Ճամբուս վրայ տեսնեմ քու բա-

Նոքա անցանեն, եւ գու կաս եւ
մաս յաւիտեան:

Ամենեքեան որպէս զձորձս մաշես-
ցին. եւ որպէս զվերարկուս փո-
խեսցես զնոսա, եւ փոխեսցին:

Քայց գու նոյն ես, եւ ամք քո ոչ
անցանեն. որդիք ծառայից քոց
բնակեսցին ի նմա, եւ զաւակի
նոցա յաւիտեան յաջողեսցի:

Մաղմոս ը'իթ.

Ի խորոց կարդացի առ քեզ, Տէր,
Տէր լուր ձայնի իմում:
Եղեցին ականջք քո ի լսել զձայն
աղօթից իմոց:
Թէ զանօրէնութիւնս քննես, Տէր,

բերարութիւններդ, եւ պատմեմ
իզմէ ետեւ եկողներուն: Շատ առա-
ջուց երկրիս հիմերը գուն դրիք. եր-
կինքն ալ քու ձեռացդ գործածն է:
Ամէն բան կ'անցնի կ'երթայ, բայց
դուն մինակ նոյն կը մնաս: Ամէն
բան լաթի մը պէս կը մաշի, եւ ինչ-
պէս որ կ'ուզես կը փոխուի: Բայց
դուն ամենեւին չես փոխուիր. քու-
տարիներդ մերինին պէս չեն անցնիր:
Որոնք որ աշխարհքիս մէջ քեզի
հաճելի ծառայ են, անոնք երկինքը
բնակելու արժանի կ'ըլլան. եւ անոնց
զաւակներուն միշտ ամէն բան կը
յաջողի:

Մաղմոս ը'իթ.

Խեղձութեան փոսին մէջէն, ուր
մեզօքս ինկայ, քեզի կ'աղաղակեմ,
Տէր իմ. լսէ ձայնս: Ականջդ պատ-
րաստ ըլլայ աղօթքիս ձայնը լսելու:
Թէ որ անօրէնութիւններս քննել

Տէր ո կարէ կալ առաջի քո, զի
ի քէն է քաւութիւն:
Վասն անուան քո համբերի, Տէր,
համբեր անձն իմ բանի քում.
յուսացաւ անձն իմ ի Տէր:
Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ,
ի պահէ առաւօտու յուսացաւ
իսրայէլ ի Տէր:
Ի Տեառնէ է ողբրմութիւն բազում.
եւ ի նմանէ է փրկութիւն, եւ
նա փրկեաց զիսրայէլ յամենայն
նեղութեանց նորա:

Սաղմոս յ'ԽԲ.

Տէր, լուր աղօթից իմոց, ունկն դիր
խնդրուածաց իմոց ճշմարտու-
թեամբ քով:
Լուր ինձ արդարութեամբ քով, եւ
մի մտաներ ի դատաստան ընդ

ուզես, ով կրնայ արդար երեւալ.
ինչու որ գուն միայն կրնաս մեր մեղ-
քերուն թողութիւն տալ: Քանի որ
համբերեցի՝ յսս գուն էիր. քու
անոյշ խօսքդ էր՝ որ խոստացար զըղ-
ջում ունեցողներուն ներել: Առ-
տուընէ մինչեւ իրիկուն հաւատա-
ցելոց աչքը քու ողբրմութեանդ
վրան է. յսս ունին որ գուն պիտի
ողբրմիս ու արդարութեամբդ պիտի
չգատես: Ողբրմութիւնը քեզմէ է.
մեր փրկութիւնը քեզմէ կը յուսանք.
գուն խոստացար զմեղ ամէն նեղու-
թենէ ազատել:

Սաղմոս յ'ԽԲ.

Տէր իմ, լսէ աղօթքիս ձայնը, եւ
Ճշմարտութեամբդ աղաշանացս ա-
կանջ դիր: Քանի որ աս մարմինը
վրանիս է, ով կրնայ առջեւդ արդար
երեւալ, եթէ արդարութեամբ դա-

ծառայի քում, զի ոչ արդարանայ
առաջի քո ամենայն կենդանի:
Հալածեաց թշնամին զանձն իմ, խո-
նարհ արար յերկիր զկեանս իմ,
եւ նստոյց զիս ի խաւարի որպէս
մեռեալ յաւիտենից:
Զանձրացաւ յիս հոգի իմ, եւ սիրտ
իմ խռովեցաւ յիս:
Ցիշեցի զաւուրսն զառաջինս, խորհե-
ցայ յամենայն գործս քո, յարա-
րածս ձեռաց քոց խորհեցայ, եւ
համբարձի առ քեզ զձեռս իմ:
Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ
քեզ. վաղվաղակի լուր ինձ Տէր.
զի նուաղեցաւ յինէն հոգի իմ:
Մի գարձուցաներ զերեսս քո յինէն,
նմանիցիմ այնոցիկ, ոյք իջանեն ի
գուբ:

Լսելի արա ինձ յառաւօտու զողոր-
մութիւնս քո, զի ես ի քեզ Տէր
յուսացայ:

Ցոյց ինձ ճանապարհ, յոր գնացից.

տես: Թշնամիս ետեւէս ինկաւ, կու-
զէր զիս մեղք խոթել. միտքս գէշ
խորհուրդներ ձգեց, որպէս զիս զիս
յաւիտեանս կորսնցընէ: Միտքս բո-
լորովին շփոթեցաւ ու հոգւոյս Ճարն
հատաւ: Քու ըրած բարիքներդ
միտքս ինկան, յիշեցի որ շատ ան-
դամ զիս մեծամեծ վտանգներէ ա-
զատեցիր, ձեռուներս վերցուցած
քեզի աղաչեցի, ինչու որ գուն ես
մինակ իմ յոյս: Հոգիս՝ ցամքած
երկրի մը պէս օգնութեանդ ծա-
րուած է. եւ վրաս ոյժ չէ մնացեր:
Երեսդ իզմէ մի գարձըներ, չըլլայ որ
անոնց նմանիմ, որոնք յուսահատու-
թեան մէջ ինկած են: Դուն ես իմ
ամէն յոյս, փարատէ յուսահատու-
թեան մութը, եւ շնորհացդ լցոլ
սիրտս ծագէ: Դուն ես հոգւոյս ա-
ռաջնորդը, ցուցուր ինձի, թէ քեզի
հաճոյ ըլլալու համար ինչ Ճամբայ
բռնեմ, ինչու որ զիս բոլորովին քեզի

զի առ քեզ, Տէր, համբարձի
զանձն իմ:

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց, Տէր,
զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո ինձ առնել զկամն քո. զի դու
ես Աստուած իմ:

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ
ի յերկիր ուղիղ:

Վասն անուան քո, Տէր, կեցուսցես
զիս. արդարութեամբ քով հան-
ցես ի նեղութենէ զանձն իմ:

Ողորմութեամբ քով սատակեսցես
զթշնամիս իմ. եւ կորուսցես զա-
մենայն նեղիչս անձին իմց, զի ես
ծառայ քո եմ:

յանձնեցի: Դուն ես օգնութիւնս,
թշնամիներուս ձեռքէն զիս ազատէ.
ինչու որ բոլորովին քեզի ապաւէնե-
ցայ: Դուն ես իմ Աստուածս, քու
կամքդ ինծի սորվեցուր, որ առանց
մեղք գործելու ապրիմ: Քու սուրբ
հոգիդ արքայութեան ճամփուն մէջ
ինծի առաջնորդ ըլլայ: Քու անուանդ
փառացը համար զիս արքայութիւն
հասցընես. եւ աս նեղութենէն ազա-
տելով՝ յաւիտենական կեանքը պար-
գեւես: Քու ողորմութիւնդ իմ ա-
մէն թշնամիներուս յաղթէ ու ամէն
ինծի նեղութիւն տուողները հալածէ
վերցընէ. ինչու որ ես քու ծառադ
կատարելու:

Յարական:

Օղման իմց գարտասուս արկանեմ առաջի քո, Քրիստոս, թող ինձ զմելս իմ որպէս երբեմն զպունկին, որ միայնդ ես բազմագութ: Անկանիմ առաջի քո, Քրիստոս, որ հովիտ ես բանաւոր հօտի, ինդրեա եւ զիս զմոլորեալս, որ միայնդ ես բազմագութ: Զմելս իմ ցուցից քեզ, Քրիստոս, որ բժիշկդ ես հոգւոց եւ տէր կենաց, բժշկեա եւ զիմ զիւնանդութիւնս, որ միայնդ ես բազմագութ:

Աղօթք իռստովաճութենէ ետքը:

Վ հաւասիկ Տէ՛ր իմ, կը լսէ հոգիս ան միմիթարական խօսքը. Հիմակ ողջնար, զգսց կեցիր որ ալ չմեղանէս: Անբաւ շնորհակալութիւն պիտի մատուցանեմ քեզի ու ողորմութիւնդ յաւիտեան յիշեմ, որ

այսչափ իմ դարձիս սպասեցիր. բարի ազդեցութիւններ միտքս ձգեցիր, մինչեւ որ զիս դարձի բերիր, եւ դարձեալ ընդունեցար իբրեւ անառակ որդին: Հիմակ այնչափ դարշելի է ինծի մեղքը, մինչեւ աւելի կը բաղձամ մեռնիլ, քան թէ առաջադրութեանս դէմ ընել եւ դարձեալ քեզի հետ թշնամի ըլլալ: Իրաւցընէ ամօթէս գետինը կ'անցնիմ, որ այնչափ անդամ քեզի խօսք տուեր եւ քիչ մ'ետքը այնպէս դորձեր եմ, իբր թէ ամենեւին խօսք տուած չըլլայի: Բայց ասկէ ետքը կը ջանամ ամէն մեղաց առիթներէն զգուշանալ. մանաւանդ ան մեղքէն, որ հասարակօրէն շատ կը գործեմ: Դուն որ վրաս այսչափ ողորմութիւն ցուցուցիր, կը յուսամ որ ինծի յարատեւութեան շնորհք ալ կուտաս, որ մէյ մ'ալ զքեզ չվշտացընեմ: Լուսաւորէ միտքս, որ ճանչ-

նամ՝ թէ որչափ գարշելի բան է
մեղանշելը: Դուն իմացուր ինծի, թէ
ինչպէս կամաց կամաց կը սկսիմ
նորէն սէր ձգել անցած մեղքերուս,
ինչպէս առանց զգալու նորէն ճիւղեր
կու տան ու կը մեծնան, մինչեւ որ
զիս նորէն մեղաց մէջ ձգեն: Դուն
ինծի զգաստութիւն ու արթնու-
թիւն տուր, որ ախտերս բուսածին
պէս իմանամ, չթողում՝ որ մեծնան,
հապա անմիջապէս արմատէն փրցը-
նեմ: Ան պզտի ու ներելի մեղքերն
են, որ մեծամեծ մեղքերու ճամբայ
կը բանան. անոր համար կը ջանամ
ասկէց ետքը ան պզտիկներէն աւելի
զգուշանալ, որ մեծերուն մէջ չկյնամ:
Դուն ինչպէս որ ինծի մեղքէ հե-
ռանալու ճամբաներն իմացուցիր,
նյոնպէս ալ կատարումը դուն յա-
ջողէ. ինչու որ քեզի կը վայլէ փառք
ու իշխանութիւն հիմայ ու յաւի-
տեանս. ամէն:

Սաղմոն:

Բարձր առնեմ դքեզ, Տէ՛ր, զի ըն-
կալար զիս, եւ ոչ ուրախ արա-
րեր զթշնամիս իմ յիս:
Տէ՛ր Աստուած իմ, կարդացիառ քեզ,
եւ բժշկեցեր զիս. Տէ՛ր, հաներ ի
դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս
յայնցանէ, ոյք իջանեն ի գուբ:
Լուաւ ինձ Տէ՛ր եւ ողորմեցաւ. եւ
Տէ՛ր եղեւ ինձ օգնական:
Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն,
զերծ յինէն զքուրծ. եւ ինձ
զգեցոյց զուրախութիւն:
Որպէս սաղմոս ասասցեն քեզ փառք
իմ, եւ այլ մի եւս զղացայց.
Տէ՛ր Աստուած, իմ յաւիտեան
խոստովան եղէց քեզ:

Շարական:

Որ զպատմուճանն առաջին զոր
զգեցուցեր օծմամբ Հոգւցին. մեր-

կացաք մեղօք ըստ նախահօրն պատրանաց. զգեցո զնյն վերստին ողորմութեամբ քո Քրիստոս:

Այլ աղօթք:

Մարդասէր Տէր իմ Յիսուս Քրիստոս, դուն չէ թէ մեղաւորին դատապարտուիլը, հապա դարձն ու փրկուիլը կ'ուզես. անոր համար կ'աղաւեմ, որ գթած աշքովդ եղած խոստովանանքիս նայիս ու ճշմարիտ զղջումն ընդունիս: Բայց Տէր իմ ողորմած, թէ որ մարդկային տկարութեամբ կամաց դէմ աս սուրբ Խորհրդոյս մէջ պակսութիւն մ'ըրած եմ, դուն ինծի համար թափած անդին արիւնէդ կաթիլ մ'առ, եւ անով ակամայ պակսութիւններս լեցուր: Դուն Տէր, որ զքեզ խաչ հանողներուն համար քու երկնաւոր Հօրէդ ներում խնդրեցիր, ահա ես ալ անոնցմէ մէկն եմ. որ անթիւ

անհամար անգամ զքեզ խաչ հանեցի ու սուրբ արիւնդ ոտքի տակ առի կոխեցի. կ'աղաւեմ՝ նյն գթած աշքովդ ինծի ալ նայիս ու ողորմիս ներես: Ահա Տէր, թէ որ ուրիշը ինծի դէմ բան մ'ըրած կամ ըսած է, սրտանց թողութիւն կ'ընեմ. եւ թէ որ ես ալ ուրիշին բան մ'ըրած կամ ըսած, կամ թէ որ գայթակութիւն տալով ուրիշին մեղաց պատճառ եղած եմ, սրտանց թողութիւն կը իննդրեմ: Ահա Տէր, ասկից ետքը ես քուկդ եմ. անոր համար կ'աղաւեմ՝ դուն միշտ հետս եղիր, որ ես ալ հետդ ըլլամ: Տէր, ասկէ ետեւ յոյսս սուրբ խաչեդ ու մահուանդ վրայ կը դնեմ. ես զիս ու ինչ որ ունիմ բոլորովին քեզի կը նուիրեմ. դուն զիս հոգա մինչեւ որ մեւնիմ ու հոգիս ձեռքդ աւանդեմ: Դուն մարդասէր բժիշկ ըլլալովդ՝ հիւանդները կանչելու եկար. ես ալ

շատ կերպ սովորութիւններով
հիւանդ եմ. գուն իմ հոգիս բժշկէ
ու ամէն չար սովորութիւնները
վրայէս վերցուր: Գու աստուածային
երկիւզա սրախս մէջ հաստատէ, որ
ճշմարտիւ քեզի հետ միշտ հաշտ
ըլլամ: Ո՛վ բարի Յիսուս, ըսէ իմ
հոգւցոյ ալ ան ուրախական խօսքը.
Այսօր Եղէս Քրիստոնէն դանս այս մէկ
ամէն:

ՊՐՏՐԵՍՏՈՒԹԻՒՆ

ԱԹ ՍՈՒՐԵ ՀԵՂՋՐԴՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԾԽԱԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Կերպորութիւնն հակառայ:

Ո՛վ բարեգութ Փրկիչ իմ, որ-
չափ քեզի ծանր նստաւ աս սուրբ
Խորհուրդը սահմաննելը. գուն եր-
կինքէն իջար ու ծառայի կերպա-
րանք մոտար, թողուցիր հայրենի գիրկն
ու եկար մարս մէջ տղու պէս խան-
ձարուր պատեցար: Գուն որ սե-
րովեէից ու քերովը էից ահաւոր էիր,
ինձի համար խաչին վրայ մեռնիլ
ուղեցիր: Հիմակ այսօր ալ պատ-
րաստ ես զքեզ ինձի տալու եւ
սրախս մէջ բնակելու: Խաչին վրայ
ծածկեցիր միայն քու աստուածու-
թիւնդ. իսկ հոս ո՛չ աստուածու-
թիւնդ եւ ո՛չ մարդկութիւնդ կե-

բեւայ մեր աչքին: Սակայն ես հաստատուն կը հաւտամ: ինչու որ դունքուն անսխալ բերնովդ ըսիր: Ես եմ երկինքէն իջած կենդանի հացը. ով որ աս հացէն կ'ուտէ, յաւիտեան չի մեռնիր. իմ մարմինս ճշմարիտ կերակուր է, եւ իմ արիւնս ճշմարիտ ըմպելի է: Այնպէս ճշմարիտ կու գան ինծի աս քու խօսքերդ, որ կը բաղձամ արիւնս ալ աս հաւատքիս վրայ թափել: Բայց կը խնդրեմ որ ինծի հաւատքիս համաձայն գործք ալ յաջողես: Ինչու որ գործքիս նայելու ըլլամ՝ անհաւատներէն քիչ վար կը մնամ: Ամենեւին առանց երկրացելու կը հաւատամ, որ զքեղ սրտիս մէջ պիտի ընդունիմ, իմ Աստուածս արարիչս ու Փրկիչս. եւ սիրտս զջում չունի, ան վառեալ բաղձանքը չունի, որ պէտք էր ունենալ. միտքս ամենեւին անհոգ է, ինք զինքը չիժողվեր չիպատրաստուիր

այսպիսի հիւր մը արժանապէս ընդունելու: Եթէ բարեկամս տունս հրաւիրեմ, կը ջանամ ամէն իր չսիրած բաներն աչքէն հեռացընել. իսկ զքեղ պիտի ընդունիմ, եւ չեմ ջանար ինչպէս որ պէտք է մեղքէ սոսկում ունենալ, ուսկից որ դուն մեծապէս կը գանիս: Անոր համար հիմա՝ յառաջ քան զքեղ ընդունելս՝ եկած ինկած եմ առջեւդ, գուն ինծի շնորհք տուր, զօրացուր հաւատքս. ինչու որ իմ անպատրաստութիւնս այսպիսի սրբազն խորհուրդ ընդունելու, հաւատոյ պակսութենէ յառաջ կու գայ: Լոյս տուր մտքիս, որ ձանչնայ թէ զնվ պիտի ընդունի, ինչպէս պիտ'որ ընդունի ու ինչու համար պիտի ընդունի: Ոիրտս մաքրեամէն մեղաց աղտեղութենէն, որ քեզի արժանի բնակարան ըլլայ: Կ'աղաւեմ, Տէր, որ լեզուս արձակես քու հրաշալի մարդասիրութիւնդ

պատմելու. եւ բարի վարպով օրինակ
տալու նախ՝ անզեղջ մեղաւորներուն,
երկրորդ՝ անհաւատներուն, որ անոնք
ալ սուրբ հաւատքն ու աս հրաշալի
խորհուրդը ինչպէս որ պէտք է
յարգեն. որպէս զի ամէն աշխարհք
զքեղ փառաւորէ, եւ սրբազնն ա-
րեանդ գինը քաւութիւն ըլլաց թէ
ինծի ու թէ՛ ամէն մեղաւորներուն:

Եկրգործոնթիւն յուսոյ:

Թագաւոր թագաւորաց Տէ՛ր իմ
Յիսուս, ես ով եմ, որ դուն այսչափ
վրաս սէր կը ցուցընես, կը հոգաս,
կը խնամես, եւ բոլոր աստուածու-
թիւնդ ու մարդկութիւնդ ինծի կը
պարգևես, որ զքեղ ընդունիմ աս
աղքատիկ սրտիս բնակարանն ու
քեզի հետ միանամ: Դուն ամէն
բանի Տէ՛ր ես, խակ ես հող ու մոխիր
ու ոչինչ եմ: Դուն Տէ՛ր ես, եւ ես
ծառադ ալ ըսուելու արժանի չեմ:

Դուն արարիչը ես, եւ ես ապերախտ
արարած: Դուն սրբութիւն ես ու
ամենեւին մաքրութիւն, եւ ես զա-
նազան մեղք վիրաւոր ու դարշու-
թեամբ լցուած: Երկինք ու հրեշ-
տակները, սերովելէք ու քերովելէք
առջիդ չեն դիմանար, եւ ես մեղաւ-
որս զքեղ ինչպէս պիտի ընդունիմ:
Պետրոս առաքեալը կ'աղաղակէր
քեզի, Հեռոն գնա իզմէ Տէ՛ր, ինչու
որ մեղաւոր մարդ մըն եմ. եւ ես
ինչպէս թող տամ, որ մեղուցեալ
հոգիս գաս ու հոն բնակիս: Յովշ-
հաննէս Ակրտիչը սոսկացաւ՝ երբոր
Յորդանան գետը մկրտուելու եկար-
եւ ես մեղաւորս ինչպէս կրնամ
ինքիրմէս համարձակիլ քեզի մօտե-
նալու, եւ չսոսկամ իմ անարժանու-
թեանս համար: Խրաւցընէ պէտք է
որ ես ալ հարիւրապետին հետ ըսեմ
սրտանց. Տէ՛ր, վէ՛ր բաւական՝ ենէ ընդ
յարկաւ ինով մոցէս: Քանի անդամ որ

քեզի մերձեցայ ու զքեզ իմ քաղցր
Փրկիչս ընդունեցայ, կը համարձակէի
քու հրաւերգ լսելով, որ սիրտ կու
տաս մեղաւորներուն քեզի մօտե-
նալու եւ զքեզ ընդունելով մեղաց
թողութիւն գտնելու: Բայց հիմակ
ինչ երեսով առջեւդ երեւնամ.
ինչու որ շատ անդամ զքեզ հազիւ
թէ ընդունած՝ դարձեալ նորէն մե-
ղանչելով, սրտիս մէջէն վընտեցի.
աւելի սիրեցի մոլութիւններս քան
թէ զքեզ իմ Աստուածս ու բարե-
րարս: Թէ որ ապերախտութիւններս
մտածեմ, յուսահատութիւն կու
գայ միտքս, կարծեմ որ ալ ճար
չկայ քեզի հետ հաշտուելու: Բայց
դիտեմ որ ողբրմութիւնդ չափ չունի.
թէ որ ճանչնամ սիսալանքս, դիւրաւ
կը ներես մեղքերուս: Ասկէ ետքը
հաստատուն յցս ունիմ, որ օգնու-
թեամբ ալ զքեզ չեմ վշտացըներ:
Դուն պատրաստ ես օգնելու. իսկ

Եթէ զօրութիւնս ու ապաւինու-
թիւնս դուն ես, ով կրնայ ինծի դէմ
դնել: Թէ եւ երկայն ատեն սովորած
ըլլամ մեղանչելու, ամենեւին չեմ
յուսահատիր. Աստուծով կրնամ
չար սովորութեանս ալ յաղթել:
Զքեզ որ բոլորովին ինծի տուիր,
ինչ բան կրնայ գտնուիլ, որ ինծի
չպարգեւես: Անանկ է նէ առանց
երկրայելու հաստատապէս կ'առա-
ջադրեմ ամէն չար սովորութենէս
դադրիլ. եւ այնպէս աղէկ ապրիլ, որ
միշտ դուն ինծի հետ ըլլաս եւ ես
քեզի հետ. ամէն:

Կ'երգործոնոթիւնն սիրոյ:

Տէր իմ, ներէ համարձակու-
թեանս, որ կը յանդգնիմ առջիդ
երեւնալ, ու ամենասուրբ Հաղոր-
դութեան առջեւ քեզի հետ խօսիլ:
Յանկարծ մէկէն ի մէկ կը զգամ
սրտիս մէջ նոր ազգեցութիւն մը,

սիրտս անպատմելի ուրախութեամբ
կը լեցուի, մինչեւ ուրախութենէս
չեմ կրնար արցունքս բռնել: Հիմակ
առաջուրնէ աւելի կը վիրաւորեն
սիրտս սիրոյ յիշատակներդ. քանի
անգամ որ կը դարձընեմ աչքս ու
զքեղ խաչին վրայ կախուած կը
տեսնեմ, բոլոր մարմինդ վիրաւորած
ու արիւնով լեցուած, կարծեմ որ
ամէն մէկ վէրքերդ սուր սլաքներու
պէս կը թռչին կու գան ու սիրտս
անչափ սիրովդ կը վիրաւորեն: Դուն
ով Տէր իմ, զիս փրկելու համար՝
մանաւանդ թէ զքեղ ինծի պար-
գեւելու համար՝ ինչ չես քաշեր.
որ բարեկամաւելի սէր կրնար ցու-
ցընել իր բարեկամին, ինչպէս որ
դուն ինծի ցուցուցիր որ քեզի թըշ-
նամի ալ էի: Աս ամէն բանն ինչո՞ւ
համար կրեցիր: Տէր իմ, դիտեմ. որ-
պէս զի ես ալ զքեղ սիրեմ: Բաց,
Տէր իմ, աչքս, որ զիս ճանչնամ,

թէ ես ով եմ, և ճանչնամ թէ
դուն ով ես, որ այնպէս կը փափա-
գիս իզմէ սիրուելու: Աչա պատրաստ
եմ, աչա սիրտս յօժար է սուրբ
աղբեցութիւններդ ընդունելու. սի-
րովդ խոցէ սիրտս խորունկ, որ մի-
նակ զքեղ սիրէ: Դուն ինչպէս որ
զիս սիրելուդ համար բոլորովին
զքեղ ինծի պարգեւելու պատրաստ
ես, նյնպէս ես ալ զքեղ սիրելուն՝
զիս բոլոր քեզի կը նուիրեմ: Զեմ
կրնար լալէս դադրիլ, երբ կը յիշեմ
որ զքեղ Աստուածս ու փրկիչս
վշտացուցի. դուն ինչ կը մտածէիր
վրաս, եւ ես քեզմէ որչափ հեռու
կը պտըտէի: Դուն գիշեր ու ցորեկ
կը սպասէիր ինծի խորանին վրայ ա-
մենասուրբ Հաղորդութեան մէջ.
յուսալով որ գուցէ ատենօք զըդ-
ջացեալ սրտիւ քեզի կը դառնամ
կը նայիմ, որպէս զի սիրտս սիրովդ
վառէիր: Աչաւասիկ սէրդ այնպէս

մը զիս վիրաւորեց, որ կը հրաժարիմ ամէն աշխարհային ունայնութենէ, եւ կը ջանամ որ ուրիշներուն սիրտն ալ աս հրաշալի Հաղորդութեան սիրովը բորբոքեմ: Երանիթէ կարող ըլլայի արժանի ըլլալ անշնորհքին, որ գործքով ցուցընէի սէրս, աս խորհրդին ճշմարտութեան վրայ արիւնս թափելով: Դու Տէր իմ, աւելցուր հաւատքս, յշյսս ու սէրս, եւ անանկ մը վառէ սիրտս ալ սիրովդ, որ զքեզ միայն սիրէ. ամէն:

Մադմու:

Տէր հովուեսցէ զիս. եւ ինձ ինչ ոչպակասեսցի:

Ի վայրի գալարւոջ՝ անդ բնակեցոյց զիս. եւ առ ջուրս հանգստեան մնօյց զիս:

Պատրաստ արարեր առաջի իմ սեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց:

Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակքո որպէս անապակ արբեցոյց զիս: Մեծ եղեւ մինչեւ յերկինս ողըմութիւն քո. մինչեւ յամպս ճըշմարտութիւն քո: Բարձրեալ ես գու յերկինս, Աստուած. եւ յամենայն երկրի են փառք քո:

Ծարտկան:

Յաստուածային կայծակունսն իսրովքէիցն անհպելին՝ անմաքրապէս մերձեցաք գոլ պարտական քում խորհրդոյ. շնորհեա զնոյն մաքրութեամբ ի թողութիւն մեղաց մերոց:

Առ աղօթք:

Ո՛Վ քաղցր Փրկիչ իմ Յիսուս, Կ'աղաւեմ զքեզ վիրաւորած սրտիդ սիրոյն համար սիրտս աստուածային սիրովդ բորբոքէ, որ աշխարհային բաներէն հեռանալով՝ զքեզ իմ

արարիչս ու **Sէրս** միայն արժանապէս սիրեմ:

Եկուր, **ո՛վ** քաղցր հանդիստ սրտիս ու հոգւցս. հոս սիրտս բնակէ, որ սիրովդ ու կարօտովդ զմայլիմ. աստուածային միսիթարութեանդ անուշութիւնը զիս քեզի հետ կապէ, անանկ որ գիշեր ցորեկ զքեզ մտածեմ, մինչեւ որ երանական տեսութեան արժանի ըլլալով յաւիտեանս յաւիտենից քեզի հետ մնամ:

Քու ներկայութեանդ ատեն, **ո՛վ** քաղցր փրկիչս, թռող երկինք եւ երկիր լուռ կենան. դուն մինակ խօսէ սրտիս մէջ, Աստուած իմ, եւ զիս լուսաւորէ, որ զքեզ ճանչնամ. վասն զի դուն միայն ամէն բանէն վեր սիրելի ու արժանի ես, որ ամէն սիրտ մինակ զքեզ սիրէ:

Ո՛վ կենդանի աղբիւր աստուածային սիրոյ, քեզի կու տամ սիրտս. դուն ստացիր ու ուզածիդ պէս

վարէ. որպէս զի կարող չըլլան արարածք զիս քեզմէ հեռացընել, եւ աստուածային միսիթարութենէդ ու հոգեւոր տեսութենէդ զըկել:

Ո՛վ երկնաւոր սիրելի փեսայ հոգւցս, դուն զիս ետեւէդ ձգէ եւ առաջնորդէ. քու սքանչելի հնձանդ տար, ու խմցուր ինծի աստուածային բաժակէդ, զոր խաչին վրայ պատրաստեցիր, որ ամէն հաւատացելոց սիրտը կը զուարձացընէ:

Եկուր, **Փրկիչ** իմ, եկուր միակ սէրս ու բովանդակ յոյսս. եկուր իմ մէկիկ միսիթարութիւնս, եւ խօսէ սրտիս մէջ. **Փրկիչ** +* Ես Եմ: Աս խօսքով իմ ամէն զգայութիւններս ոյժ ու նորէն հոգի կ'առնուն, աս աշխարհքիս մէջ սիրոյդ ճաշակը կը վայելեն, որ արքայութեան մէջ սիրելի ծառաներուդ պահեր ես:

Սիրելի Յիսուս իմ, եկուր, եկուր. Ես սիրտս քեզի պատրաստելու ջա-

նացի. կը յուսամ, որ սրտիս մէջ
օտար բան մը չկայ: Բայց թէ որ
սրտիս վերնատունն ուզածիդ պէս
զարդարուած բնակարան չէ, դուն
յառաջ շնորհօքդ զարդարէ, ու
անկէ ետքը եկուր սիրելի Յիսուս
իմ, եկուր սիրտս մտիր. սուրբ սրո-
տիդ հետ միացուր սիրտս. ասկից
ետքը մինչեւ յաւիտեանս յաւիտե-
նից ես քեզի հետ ըլլամ, դուն ալ
իմ հետս ըլլաս. ամէն:

ԱՊՈԹԻՔ

ՃՆՈՐՀԵԿԱԼՈՒԹԵԱՆ

Հաղորդութեանէն ետքը:

Տէր, աս ինչ մեծ շնորհք է ինծի,
որ դուն երկնի եւ երկրի արարիչ
ըլլալով՝ մեղաւոր հոգւոյս անզարդ
ու աղքատիկ բնակարանը գալու-
խոնարհեցար: Ի՞նչպէս կը ըլլայ, գորո-
վագութ Փրկիչս, որ անմեղ սերով՝

բէներուն ու քերովքէներուն չըրած
բարերարութիւնդ՝ ինծի պէս ողոր-
մելի մարդու մ'ըրիր, որ քու ճըշ-
մարիտ ու կենդանի սուրբ մարմինդ
ճաշակեմ: Ես հողէ ստեղծած ու
ոչնչէ գոյացած մահկանացու մարդ
մըն եմ՝ անմիւ անհամար խեղջու-
թեամբ լի. իսկ դուն ամենակարող
ու անսահսան մեծութիւն ես:

Արդ՝ վրաս ինչ արժանաւոր բան
գտար, որ անձառելի սիրովդ խոնար-
հեցար ու ինծի եկար: Ահա Տէր
իմ, ոչ նահապետներուն պէս կա-
տարեալ հաւատք ունիմ. ոչ Յով-
հաննէս Մկրտչն պէս մաքրութիւն
ունիմ. ոչ առաքեալներուն պէս
սէր ունիմ. ոչ ալ ուրիշ սրբոց պէս
մեծ չերմեռանդութիւն ունիմ: Ու-
րիշ բան չէ, Տէ՛ր իմ, մինակ ան-
սահման գթութիւնդ ու ողորմած
ըլլալդ է, որ իմ անօրէնութիւննե-
րուս յաւիտեան չբարկանալովդ՝ ան-
13*

պատմելի ներողութեանդ շնորհքը
ցուցուցիր, մարդասիրութեամբդ
մեղքերս ջնջեցիր, զիս յաւիտե-
նական դատապարտութենէ աղատե-
լով՝ երկնից արքայութեան ճամբան
դրիր: Ասանկ խելքէ մտքէ վեր մեծ
շնորհացդ համար՝ ես զքեղ ինչ
կերպով օրհնեմ ու փառաբանեմ:
Օրհնեալ ըլլաս, Տէ՛ր, յաւիտեանս
յաւիտենից: Բոլոր հրեշտակներն ու
ամեն ստեղծած բաներդ ինծի հետ
միանան եւ զքեղ յաւիտեանս օրհն-
են, գովեն ու փառաւորեն: Տէ՛ր
իմ, ուրիշ բան մը չունիմ, որ ըրած
բարերարութիւններուդ փոխարէն
հատուցանեմ. անոր համար սիրելի
Փրկիչ իմ, ես զիս բոլորովին քեզի
կու տամ կընծայեմ. ասկից ետքը
յաւիտեան քուկդ եմ. ինչ որ կու-
զես՝ ըրէ ինծի. ես զքեղ յաւի-
տեանս յաւիտենից կօրհնեմ. ամեն:

Այլ աղօթք:

Ահաւասիկ Տէ՛ր իմ, չգանեցար
անարժան սիրու մննել ու հոն բնա-
կել: Ի՞նչ մեծ ու չյուսալու շնորհ-
քի արժանի եղայ. սիրու քերով-
բէից աթոռ եղաւ: Հոն բազմեր է
իմ արարիչս ու փրկիչս, որուն՝ եր-
կինքն հրեշտակները երկրպագու-
թիւն կընեն: Կը լսեմ որ կը զըու-
ցես հոգւցյս, հոս քեզի եկած եմ
ամեն խնդիրքդ կատարելու. խնդրէ
իզմէ ինչ որ կ'ուզես:

Տէ՛ր, ինչ բան կրնամ խնդրել
քեզմէ, բայց եմէ այնպէս շնորհացդ
մէջ պահես զիս, որ զքեղ մէջ մ'ալ
չկորմնցընեմ: Կը խնդրեմ քեզմէ՝
ինչպէս որ կոյրերը խնդրեցին, որ
հոգւցյս աչուընները բանաս ու լցո
տաս, որ աղէկ Ճանչնամ՝ թէ որչափ
չար է զքեղ վշտացընելը: Թէ որ
քեզի հետ աւրուելու ըլլամ, սիրու

ինչ հանդիստ կրնայ ունենալ. ով
կրնայ խիղճս հանդարտեցընել: Ո՞ր-
շափ անմտութիւն գործեր եմ քեզ-
մէ հեռանալովս, զքեղ թող տա-
լովս ու սիրտս արարածական բանե-
րու հետ չափէ գուրս զբաղեցընե-
լովս: Ահա խոնարհութեամբ շնոր-
հաց աթոռիդ առջեւն ինկած՝ կը
խնդրեմ քեզմէ, որ ինծի աս շնորհքն
ընես: Գուն որ այնչափ իմ ետեւէս
պտըտեցար, խիղճս այնչափ բարի
ազդեցութիւններով դրդեցիր, ու-
րախացար որ ես ալ զզումի եկայ,
ճանչցայ սխալանքս ու վրաս ունեցած
անհուն գթութիւնդ. հիմակ ալ ար-
ժանի համարեցար ինծի հետ միա-
նալ, եւ ուզեցիր, որ քեզմէ մաս-
նաւոր շնորհք ալ ինդրեմ:

Այս Տէր, քեզմէ ի զատ ինչ
ինդրեմ. քեզմէ աւելի սիրելի ուր
գտնեմ. երբ գուն զքեղ բոլորովին
ինծի տուիր, ալ ինչ բանի կարօ-

տութիւն կրնամ ունենալ: Այնչափ
չիւանդներ, ցաւագարներ հանգեր-
ձիդ միայն դպչելով՝ կը բժշկութեն.
Հիմակ ես նոյն իսկ բժշկութեան
աղքեւրը սրտիս մէջն ունիմ. ամէն
շնորհաց տէրն ինծի եկեր է ու
երկնից արքայութիւնը սիրտս փո-
խադրուեր է: Ո՞վ անհասանելի աս-
տուածային բարութիւն, ով անձա-
ռելի ողորմութիւն: Կ'աղաշեմ, Տէ՛ր
իմ, կ'աղաշեմ, աս անպատմելի սէրդ-
վրայէս մի պակսեցըներ, յաւիտեան
իզմէ մի զատուիր, որ զքեղ երբեմ
տեսնելու ալ արժանի ըլլամ. ամէն:

Այլ աղօթք:

ՈՎ մարդասէր Յիսուս Փրկիչ
իմ, թող երկինք եւ երկիր անսահ-
ման ողորմութիւնդ գովեն. սրտիս
ամէն մէկ շարժումը զքեղ անդա-
դար օրհնէ. հոգւոյս ամէն կարո-
ղութիւնները քեզմէ գոհանան: Ո՞վ

Եմ ես, որ դուն իմ աղքատ սրտիս
բնակարանն այցելութեան եկար:

Քեզի հետ, Տէր իմ, չքակուելու
սիրոյ կապով զիս կապէ. դուն ով
բարեգութ Փրկիչս, սուրբ շնորհացդ
օծութիւնը հեղ սրտիս վրայ, որ
սուրբ սէրդ վառէ բորբոքէ բոլոր
հոգւցս կարողութիւնները:

ՈՎ անմեղ գառն Աստուծոյ, որ
ինձի համար մեռար. սուրբ արդիւնքդ
հոգւցս աղտերը լուայ, հին մարդը
մեռցընէ, սիրտս նորոգէ, որ դուն
մինակ յաւիտեան բնակիս:

ՈՎ ուրախութիւն սրտիս, այսօր
քու անարժան ծառայիդ հոգին ու-
րախացուր երկնային միմիթարու-
թեամբդ: Սիրտս սուրբ շնորհացդ
ցօղովը ցօղէ ու զովացուր. պարգեւէ
ինձի ան շնորհքն, որ սուրբ ուրա-
խութեամբ ու ներքին սիրով բոր-
բոքած՝ արցունք թափելով միհ-
թարուիմ:

ՈՎ սէր իմ յաւիտենական, որ
զիս երբեք չես մոռնար. դուն իմ
ետեւէս ինկար, զիս վնասուեցիր, որ
յաւիտեան չկորսուիմ. տուր ինձի
սերովըէներուն ու քերովըէներուն
վառած սէրը, որ քու ողորմութեանդ
ու մարդասիրութեանդ կարող ըլլամ
արժանապէս շնորհակալ ըլլալ:

ՈՎ գթած Յիսուս, կուրութիւնս
լուսաւորէ, որ զքեզ ու սքանչելի
սէրդ ճանչնամ. ամէն աշխարհային
բաները սիրոյդ համար արհամար-
հեմ: Զիս սուրբ վիրօքդ զօրացուր,
որ ոչ ոք զիս քեզմէ կարող ըլլայ
բաժնել:

Սիրելի Փրկիչ իմ, տես հոգւցս
աղքատութիւնը, եւ քու պարգեւ-
ներովդ հարստացուր: Տուր ինձի
խոնարհութիւնդ, համբերութիւնդ,
հնազանդութիւնդ, հեղութիւնդ ու
սէրդ: Աս ամէն առաքինութիւնները
սրտիս մէջ տպաւորէ, Տէր իմ, եւ

Երկնային օրհնութեամբ զիս լեցուր, որ բոլորովին քեզի արժանի ըլլամ:

Այլ աղօթք:

ՈՎ բարեգութ Տէր իմ Յիսուս
Քրիստոս, իրաւցընէ մեր մարդկային
ընութենէն վեր է մեզի ըրած բարե-
րարութիւնդ. ով կրնայ համարձակիլ՝
որ աս ահեղ սուրբ Խորհրդոյս
մօտենայ. որովհետեւ աս Խորհուրդն
ընդունելու համար մէծ արժանաւու-
րութիւն պէտք է. իսկ ես ամէն
կերպ արժանաւորութենէ զըկուած
եմ: Սակայն գիտեմ, Տէր, ու կը
խոստովանիմ, որ մինակ քու ողոր-
մութեանդ շնորհքն է: Բայց գիտես,
ողորմած Տէր իմ, որ ամէն կողմանէ
տկար ըլլալովս՝ ես ինքիրմէս կարող
չեմ քեզի արժանաւոր պատիւ ու
մէծարանք ընելու. անոր համար կը
խնդրեմ, Տէր իմ Յիսուս, տուր

սրտիս աստուածային սուրբ սիրոսդ
շնորհքը, որ անովլ վառիմ բորբոքիմ;
Հոգւովս ու մարմնովս զիս քեզի հա-
ճյական պատարագ մատուցանեմ:

Ահա Տէր իմ, քու ամենատես աշ-
քիդ առջեւը կեցեր եմ, սրտիս ամէն
կողմը կը տեսնես, ինչ բանի կա-
րօտ ըլլալս իզմէ աղէկ գիտես, որ աս
աշխարհքիս Ճամբորդութեանը մէջ
անոնցմով արքայութիւն կարող ըւ-
լամ հասնիլ: Տէր, ոտուըներուս
ոյժ տուր, որ մեղքի ու դժոկքի
Ճամբէն փախչիմ եւ արդարութեան
Ճամբէն երթամ: Չեռուըներուս
զէնք տուր, որ չար սատանային փոր-
ձանքներուն յաղթեմ, եւ բարի
գործոց ետեւէ ըլլալով՝ քեզի հա-
ճյական արդիւնք ժողվեմ: Ակրտս
ալ սատանային ցանած որովներէն
մաքրէ ու սուրբ պատուիրաններդ
տնկէ, որ միշտ կամքդ կատարելով՝
քեզի հաճոյ ըլլամ: Ականջներս ալ

գոցէ, որ աս աշխարհքիս իսրեբայ
ձայները չլաեն ու սիրտս անոր խրատ-
ներուն ու սիրոյն չդարձնեն։ Ով
Տէր իմ Յիսուս, աչուըներուս սուրբ
երկիւղդ պահապան դիր, որ ասկից
ետքը չըլլայ թէ անվայել նայուածք-
ներու հետ ըլլան, եւ անսանկով
չըլլայ թէ սիրտս կամ ուրիշն սիրտը
չարութեամբ մը վիրաւորեմ։ Աեր-
ջապէս Տէր իմ, ինծի պէտք եղած
բաները գուն աւելի աղէկ դիտես.
ահա ես քուկդ եմ. գուն յաւի-
տենական փրկութիւնս կուզես.
ուստի գուն քու ուզածիդ պէս զիս
ճամբայ դիր, զիս առաքինութեամբդ
զարդարէ, որ քեզի հաճելի ու սի-
րելի ըլլամ. ամէն։

Այլ աղօթք։

Ենթաւ գոհութիւն կը մատուցա-
նեմ քեզի, Տէր իմ ողորմած։ Գուն
անսահման բարութեամբդ ու ողոր-

մութեամբդ զիս շարժեցիր, որ հա-
մարձակիմ քեզի այցելութիւն ը-
նել, զքեզ սրտիս բնակարանն ընդ-
ունիլ։ Ով մարդասէր Փրկիչ իմ,
դուն ես սրտիս միսիթարութիւնը։
Հոգւս կատարեալ խաղաղութիւնը։
Իրաւցընէ թէ որ իմ անարժանու-
թեանս նայելու ըլլամ, պէտք է որ
գետրոս առաքելըն պէս ես ալ կան-
չեմ։ Հեռու գնա իզմէ, Տէր իմ,
ինչու որ մեղաւոր մարդ մըն եմ ես։
Բայց ով Փրկիչ իմ, թէ որ գուն
իզմէ հեռանաս, ինչ կը լլայ վիճակս.
ես որո՞ւ դիմեմ, ուսկի՞ց շնորհք
խնդրեմ։ ով կրնայ սիրտս կատա-
րեալ միսիթարել, ով աղքատու-
թեանս օգնել։ Քեզմէ հրաժարիլ՝
դժոխքէն ծանր է. իսկ քեզի հետ
ըլլալ՝ արքայութիւն է. անոր համար
ահիւ եւ գողութեամբ քեզի մեր-
ձեցայ եւ խոնարհութեամբ սուրբ
սեղանդ դիմեցի։ Գիտեմ որ շատ

սիրելի է քեզի սրտի մաքրութիւնը.
դուն որ հաճեցար այսօր իմ սիրտս
բնակիլ եւ սուրբ մարմինդ ու ա-
րիւնդ հիմակ ինծի պարգեւեցիր,
դուն մաքրէ սիրտս ու քեզի ար-
ժանի բնակարան պատրաստէ: Թող
մի տար՝ որ սիրտս անմաքուր ու
երկրաւոր սիրով վառուի. միայն
քու մէրդ բորբոքի սրտիս մէջ:
Բաւական ըլլան անցած ատենուան
գործածներս. ինչ որ քեզի դէմ
ըրի՝ դուն ներէ, քաւէ, ալ մի յիշեր.
նաեւ ոյժ տուր ինծի, որ ես ալ
գանիմ: Հիմա կ'իմանամ, թէ որչափ
քաղցր է զքեզ սիրելը, եւ որչափ
դառն է քեզմէ բաժնուիլը: Եթէ
աչացս կաթիլ մ'արցունք պարգեւէ-
իր, որ սրտանց լսյի զքեզ վշտացը-
նելուս համար, մեծ մխիթարութիւն
կը համարէի ինծի. թէ որ լալը մի-
նակ ասչափ մխիթարական է, հապա
ինչ անպատմելի ուրախութիւն կ'ըւ-

լսյ ինծի, երբ որ կարող ըլլայ սիրտս
ուրախանալ քեզի հաճյ ըլլալուս
համար: Դուն արժանի ըրիր զիս աս
երջանիկ րոպէին. մեծապէս շնոր-
հակալ եմ Տէր, որ ինծի լցո տուիր
ձանչնալու անցեալ թշուառութիւնս,
եւ զքեզ կորմնցընելուս համար
զղալու: Նաեւ դուն իսկ եկար
սիրտս բնակեցար, որպէս զի դուն
զիս սիրես, ես ալ զքեզ: Աչաւ-
ասիկ բոլոր ուրախութիւնս յիս է.
արքայութիւնն ու յաւիտենական
կեանքը սրտիս մէջ կը կրեմ, Աս-
տուածս ու իմ ամէն բանս: Դուն
շնորհէ, որ զքեզ՝ սրտիս միակ մխի-
թարութիւնը միշտ ինծի հետ ունե-
նամ. արթնցուր թմրած սիրտս, քու
երկնային սիրովէ բորբոքէ, աչքս
ալ լուսաւորէ, որ աս աչաւոր խոր-
հըսդոյս կարող ըլլամնայիլ. զօրու-
թիւն տուր ինծի աներկրայ հաւա-
տով հաւատալու, որ աս հրաշալի չա-

Ղորդութեան խորհրդացն մէջ՝ դու
նշյն ինքն Յիսուս Քրիստոս Որդի
Աստուծոյ բոլոր աստուածութեամբդ
ու մարդկութեամբդ ճշմարտապէս
ու կատարելապէս կը գտնուիս: Տուր
ինծի, Փրկիչ իմ, ան եռանդը, զոր
սիրելի ծառաներդ ունեցան, մա-
նաւանդ ամենասուրբ Մայրդ ու մեր
ամենուն միջնորդն ու բարեխօսը,
երբոր հրեշտակն իրեն աւետեց, թէ
դուն իրմէ մարմին պիտի առնուս:
Կը բաղձամ ես ալ այնպիսի եռանդ
ունենալ, որպէս զի աս աշխարհքիս
մէջ միշտ քեզի հաճոյ ըլլալով, ան-
դիի աշխարհքը դէմ առ դէմ կա-
րենամ տեսնել ու յաւիտեանս
յաւիտենից զմայլելով զքեզի փա-
ռաւորել. ամէն:

Այլ աղօթք:

Թռէ որ թագաւոր մը ողորմելի
աղքատի տունն այցելութիւն ընել

ուզէ, ան աղքատն ուր կրնայ նատե-
ցընել թագաւորը. ինչ կրնայ առջեւն
հանել, կամ ինչպէս կրնայ թագաւո-
րի արժանի պատիւ ընել: Հիմակ
ալ իմ աղքատ հոգիս ընդունեցաւ՝
չէ թէ երկրաւոր թագաւոր մը,
հապա թագաւորաց թագաւորը,
ամէն բանի Տէրն ու արարիչը: Չեմ
գիտեր՝ առջիդ ինչ հանեմ. կամ
ինչպէս կարող ըլլամ արժանապէս
զքեզ պատուել: Դու Տէր իմ, գիտես
աղքատութիւնս. քեզի ընծայ տալու
բանս ազատութիւնս է ու կամքս:
Դուն զքեզ բոլորովին ինծի տուիր,
եւ կ'ուզես որ ես ալ զիս բոլորովին
քեզի տամ: Անոր համար կը նուի-
րեմ քեզի զգայութիւններս, խնդրե-
լով որ միայն հաճոյքդ կատարե-
լու ծառայեն ինծի: Աշխարհքիս որ
ուրախութիւնը կամ զբօսանքն ա-
նանկ կրնայ մարդուն սիրալ բանալ,
ինչպէս ան հոգեւոր զուարձու-

թիւնը, զօր դուն կը պարգեւես
սիրելի ծառաներուդ քու ամենա-
սուրբ հաճցքդ կատարելնուն հա-
մար:

Կը մատուցանեմ քեզի նաեւ
բոլոր հոգւոյս ու մարմնոյս կարողու-
թիւնները, գլխաւորաբար կամքս,
որ ամենեւին քեզի հպատակ ըլլայ.
յիշողութիւնս ուրիշ բանի չծառայէ,
բայց եթէ ինձի ըրած մեծամեծ
երախտիքդ ու ցուցուցած սէրդ յի-
շեցընելու: Միտքս ուրիշ բան չմտա-
ծէ, բայց եթէ անսահման կատա-
րելութիւնդ, որ անդադար ինձի
բարիքներ կը շնորհես: Կամքս ուրիշ
բանի համար ինձի չծառայէ, բայց
եթէ զքեզ միակ Աստուածս ու
Փրկիչս ամէն բանէ աւելի սիրէ, եւ
աստուածային արդար կամացդ միշտ
համաձայնի: Այսպիսի հաստատուն
առաջադրութեամբ զիս ու բոլոր ու-
նեցածս քեզի կը մատուցանեմ, ով

Փրկիչ իմ. ընդունէ իմ դրսի ու
ներսի զգայարանքներս. խորհուրդս,
բաղձանքս, յօժարութիւնս, ազա-
տութիւնս, մարմնոյս ամէն անդամ-
ներն ու հոգւոյս կարողութիւնները,
իբրեւ չնչին ընծայ մը, որ ինք իրեն
բան մը չէ, բայց զօրութեամբ ար-
դեանցդ հաճոյ եւ ընդունելի է
քեզի:

Ընդունէ, Տէր իմ, աս մեղաւորի
ողջակէզը. Խրկէ երկինքէն վրաս
սուրբ Հոգւոյն անշիջաննելի սիրս
կրակը, որ վառէ, սրբէ ու քաւէ աս
ընծայովս ինչ որ անհաճոյ է ամե-
նասուրբ աչուըներուդ. որպէս զի
աս օրուընէ ետքը ես բոլորովին
քուկդ ըլլամ ու միշտ կամքդ կա-
տարեմ:

Ո՛Վ ամէնօրհնեալ սրբուհի կոյս
Մարիամ, կ'աղաւեմ որ աս անարժան
ընծաս արժանաւոր ձեռքովդ ամե-
նասուրբ երրորդութեան առջեւը

Հանես: Դուն բարեխօս եղիք, որ աս
նուէրս ընդունելի ըլլայ, եւ ինձի
համար շնորհք ալ ինդրէ, որպէս զի
տկարութիւնս զօրանայ, եւ կարող
ըլլամ մինչեւ յետին շունչ Աստու-
ծոյ հաւատարիմ գտնուիլ. ամէն:

Մաղմու:

Գո՞հացայց զքէն Տէր, բոլորով
սրաիւ իմով պատմեցից զամենայն
սքանչելիս քո:
Ուրախ եղէց եւ ցնծացայց ի քեզ.
սաղմոս ասացից անուան Տեառն
Քարձրելց:

Խոստովան եղէց քեզ, Տէր, զի լուար
ինձ. եւ եղեր ինձ ի փրկութիւն:
Այս օր է զոր արար Տէր. եկայք
ցնծացուք եւ ուրախ եղիցուք
ի սմա:

Աստուած իմ ես գու, եւ խոստովան
եղէց քեզ. Աստուած իմ ես
գու, եւ բարձր արարից զքեզ:

Յաւիտեան ոչ մոռացայց զարդարու-
թիւնս քո. զի նոքաք կեցուցեր զիս:

Երգ:

Ուագաւորն արարածոց զշացն
կենաց ետ քաղցելոց. եւ զբաժակն
ուրախարար՝ որք յԱգամայ տրտմե-
ցելոց. այս նոր ուխտ է իմց արեան՝
փոխան հնոյ ուխտին արեան. զոր
յիշատակ իմ առնիցէք մինչեւ եկից
ես միւսանգամ: Ժողովեալքս ի քէն
հայցեմք՝ ընդ ժողովեալ մետասանին;
յոր զկենարարդ քո մարմին՝ բաշ-
խեալ ետուր ընդ բաժակին. շնորհեա
եւ մեզ Տէր ընդ նոսին՝ հաղորդ
լինել քում սեղանին. կենաց հացիդ՝
յոր փափագիմք եւ ըմպելսոյդ ում
ծարաւիմք:

Այլ աղօթք:

Ո՛հ, Տէր, երանի թէ զքեզ մի-
նակուկ գտնէի, սիրտս քեզի բանայի

ու քեզմով զմայլէի, ինչպէս որ
սիրտս կը փափագի. անանկ որ աս-
կէց ետքը մարդ մը զիս չանարդէր,
եւ ամենեւին ստեղծուած մ'ալ զիս
չշարժէր կամ բնաւ ինծի չնայէր.
այլ մինակ դուն հետս խօսէիր, ես
ալ քեզի հետ, ինչպէս որ սիրելին
սիրելոյն հետ կը խօսի ու բարե-
կամը բարեկամին հետ կ'ապրի: Աս
կ'աղաջնմ, ասոր կը բաղձամ, որ
բոլորովին քեզի հետ միաւորուիմ.
սիրտս ամեն արարածական բաներէն
ետ դարձընեմ, եւ սուրբ Հաղոր-
դութիւնն առնելով՝ քանի կ'երթամ
երկնաւոր մատածութիւններուն անցշ
համը սրտիս մէջ զգամ:

Տէր, Երբ պիտի ըլլայ, որ բոլորո-
վին քեզի հետ մէկ ըլլամ եւ ես
զիս բոլորովին մոռնամ: Տէր, շնորհը
ըրէ, որ դուն քովս ըլլաս, ես ալ
քովդ ըլլամ. եւ անանկով միատեղ
մնամք:

Տէր, բիւրաւոր սիրելիներուն մէ-
չէն ընտրուած սիրելին դուն ես.
կ'ուզեմ որ բոլոր կենացս մէջ քովդ
բնակիմ. իմ խաղաղաբարս դուն ես.
ամենակատար խաղաղութիւնն ու
Ճշմարիտ հանգիստը քու քովդ է.
քեզմէ դուրս աշխատանք ու խիստ
մեծ ողորմելութիւն է: Դուն ծած-
կուած Աստուած ես ու ամբարիշտ-
ներուն հետ բան դործ չունիս,
խոնարհներուն ու պարզամիտներուն
հետ կը խօսակցիս: Ա՛հ Տէ՛ր, քու
հոգիդ ինչ անցյշ հոգի է, որ քու
անուշութիւնդ զաւկըներուդ ցուցը-
նելու համար՝ երկինքէն իշած հրեշ-
տակային հացով զիրենք կը կերա-
կրես: Աս ինչ անպատմելի շնորհը,
է, աս ինչ զարմանալի խոնարհու-
թիւն է, աս ինչ անհուն սէր է՝ որ
մարդկան եղաւ: Բայց աս մեծ շնոր-
հաց ու սիրոյն համար իմ Տիրոջն
ինչ հատուցում ընեմ: Ուրիշ հա-

Ճցյական բան մը չունիմ Տիրոջս
ընծայելու, մինակ բոլոր իմ՝ սիրտս
կատարեալ իրեն հետ կը միաւորեմ։
Ահա միայն բաղձանքս աս է, որ
սիրտս քեզի հետ միաւ որի. ամէն։

Աղօթք առ Յիսուս վասն խարի մա-
հուան Հաղորդութենէ եարբ։

Ողորմած փրկէս իմ Յիսուս, աս
աշխարհքիս վրայ մեր կեանքն ինչ է.
բայց եթէ խոտ կամ ծաղիկ մը, որ
այսօր կը բումնի կը բացուի, մէյ
մ'ալ վաղը կը թոռմի ու կը չորնայ։
Արդ ասանկ կեանք մ'ունենալէս
ետքը, ես յօսս կենացս վրայ ինչ-
պէս դնեմ. ահա մարդ չկայ, որ մի-
նակ օր մըն ալ ապրելու խօսք տայ
ինծի։

Ո՛վ կրնայ, Տէր իմ, քու յաւիտե-
նական վճռոյդ խելք հասցընել ու
գիտնալ՝ թէ որ մարդուն վախճանը
երբ պիտի ըլլայ։ Ասոր համար, Տէ՛ր

իմ, գուցէ աս ետքի անգամն ըլլայ,
որ արժանաւորութենէս վեր գքեղ
աղքատ սրտիս բնակարանն ընդու-
նեցայ ու սուրբ անմահ մարմինդ
ճաշակեցի։ Կ'աղաչեմ կը պաղատիմ
քեզի, բարի Յիսուս, սուրբ Հաղոր-
դութիւնս որ առի, վերջին թոշակի
տեղ առած ըլլամ։ Դուն, ով ողոր-
մած Տէր, այնչափ ողորմութեամբդ
ինծի ճամբու պաշար եղիր, մինչեւ
կեանքիս ետքի շունչը զիս պահէ,
իզմէ մի զատուիր ու ձեռքդ վրայէս
մի վերցըներ։ Յիշէ, Տէ՛ր իմ, որ
դուն ըսիր, թէ ով որ իմ մարմինս
կը ճաշակէ՝ յաւիտեան կեանք կ'ու-
նենայ։ Սատանային ալ սաստէ, որ
ասկից ետքը մինչեւ որ մեռնիմ քովս
չմօտենայ. ինչու որ ես զիս քեզի
տուի, յասս բոլորովին քու վրադ դրի.
դուն ալ ձեռքովդ վրաս խաչակնեէ,
որ եթէ թշնամիս նենդութեամբ
վրաս վազելու համարձակի, ողորմած

ձեռքիդ գաղտնի աստուածային զօրութեամբն ամչնալով՝ քովէս հաշածուի: Ասկից ետքը՝ քիչ ապրիմ, շատ ապրիմ, գուն ֆրկիչ իմ Յիսուս, միշտ հետո եղիր, որ մեռնելու աշենս հոգիս ձեռքդ կարող ըլլամ աւանդել. գուն ալ Տէ՛ր իմ, գթած ու անոյշ նայուածքովդ զիս մսիթարես. ու երկնից արքայութեանդ արդարներուն կարգը զիս գասես, որ անոնց հետ միատեղ զքեզ յաւիտեանս յաւիտենից օր հնեմ ու փառաւորեմ. ամէն:

*Աղօթք յիշատակառ շարժարանաց
Քրիստոսի:*

Ո՛վ պատուական արիւն քրիստոսի, որ հոգւոյ սաստիկ նեղութենէ ու տրտմութենէ՝ քրտինքով թափուեցարբովանդակ մարմնոյն վրայէն. ուրախ եմ որ աս անմահարար բաժակին մէջ կատարելապէս ամփո-

փուած ես ու ամէն հաւատացելոց երկրպագութիւնը կ'ընդունիս: Ահա երեսի վրայ գետինն ինկած՝ խոնարհութեամբ քեզի երկրպագութիւն կ'ընեմ ու կ'օրհնեմ. կ'աղաչեմ քեզի, ով արիւն Յիսուսի, որ զիս յաւիտենական նեղութենէն ու տրտմութենէն ազատես, որուն մեղացս համար բիւր անգամ արժանի եղայ:

Ո՛վ հրաշալի մարմին Յիսուսի, որ անգութ զինուորներուն ձեռքն անչափ նախատինք ու չարչարանք քաշեցիր. գլխէն մինչեւ ոտքդ ողջ տեղ չմնաց, ամէն տեսակ ցաւերու մէջ ինկար. հիմակ աս սուրբ սեղանիս վրայ զքեզ կը պաշտենք ու կը յարգենք, որ աշխարհքիս մեղացքաւութեան ու թողութեան համար կը բաշխուիս:

Ո՛վ ազնիւ բաժակ Տեառն իմոյ Յիսուսի, ան պատուական արեամբ լցուած, զոր իմ Փրկիչս խիստ ծեծին

տակ վիրաւորեալ մարմնէն թափեց.
նաեւ ան անդին արեամբն՝ որ աս-
տուածային գլուխը փշերով խո-
ցուած ատեն թափուեցաւ. կ'աղա-
չեմ, Տէր իմ, լուա ու սրբէ զիս աս
աստուածային արեան հեղեղովը, որ
իմ սիրոյս համար այնչափ սաստիկ
ցաւերով թափուեցաւ, որպէս զի
բոլորովին սիրովդ բորբոքիմ:

Ո՛վ երկնային հաց հրեշտակաց,
որ գուն խաչին հնձեցար ու մա-
հուամբդ բոլոր աշխարհք լիացուցիր
շնորհօք, արժանի ըսէ զիս այսօր
չարչարանացդ արդիւնքը վայելելու
ի կեցութիւն հոգւոյ իմոյ:

Ո՛վ ամենասիրելի Յիսուս, որ աս
սրբազն բաժակին մէջ սուրբ արիւնդ
դրիր, զոր խաչին վրայ գամուած ա-
տենդ աստուածային ձեռուըներէդ
ու ոտուըներէդ աղբիւրի պէս վաղ-
ցուցիր: Աս պատուական արիւնովդ
կը խնդրեմ, Տէր իմ, հոգւոյս աղտե-

դութիւնը մաքրես, որ հինգ զգայ-
արանօքս սուրբ պատուիրաններուգ
գէմ գործեր եմ, եւ շնորհք ալ
տաս ինծի, որ աս փրկաւէտ բաժակը
սրբութեամբ ու արժանապէս ընդ-
ունիմ ու սուրբ չարչարանքներուգ
յիշատակը յաւիտեան չմոռնամ:

Ո՛վ անմեղ խոց կողին Յիսուսի,
ով խորք աստուածային ողորմու-
թեան, զիս ամփոփէ պահէ, եւ վի-
րաւորեալ սրտիդ մէջ տեղի տուր
ինծի, որ յաւիտեանս քեզմէ չբաժ-
նուիմ:

Ա՛ն Յիսուս, ընդունէ աս ետքի
աղաչանքս ալ, որ սուրբ գերեզմանիդ
վրայ ինկած լալով կը պաղատիմ:
Ո՛վ խաչեցեալ Տէր իմ եւ Աստուած
իմ, սրբէ աս իմ հոգւոյս գերեզ-
մանը, ուր որ քու անձառելի խոնար-
հութեամբդ մտար. որպէս զի որչափ
որ հոն կը կենաս՝ քեզի արժանաւոր
բնակարան ըլլայ: Եւ ինչպէս որ Արի-

մաթացւցն վիմափոր գերեզմանին
մէջ մէկը չմտաւ՝ ոչ յառաջ եւ ոչ
ետքը, ասանկ ալ կ'աղաչեմ, ով
ողբանած Յիսուս, որ իմ սրտիս
գերեզմանն ասկից ետքը մէկը չմտնէ
ու չապականէ. այլ սուրբ ու նոր
պահէ, Տէր իմ, միայն քեզի համար
ի փառս անուան քո ի յաւիտեան.
ամէն:

ԱՊՈՔԻՔ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԵՑ
ԵՒ

ԱԹ ՍՈՒՐԲԸ

ի տօնի ծննդեան փրխտոսի:
ՈՎ Աստուածային սիրուն մա-
նուկ, ահա հաւատոյ աչքովս կը
տեսնեմ զքեզ այսօր անշուք այրի
մէջ ծնած, խանձարրով անբաննե-
րուն մսուրը դրուած: Կը մերձենամ
ես ալ անմեղ հովիւներուն հետ
քեզի երկրպագութիւն ընելու: ՈՎ
անհասանելի Բան Աստուած, աս
ինչ խեղճ կերպարանք մտեր ես.
երկինքը սերովբեներն ու քերովբե-
ները դողալով համարձակ երեսդ
նայելու չէին իշխեր. մարդիկ զքեզ
թողուցեր են, մէկը զքեզ չէ ընդ-
ունած. անոր համար գացեր ան-
բան կենդանիներու ախոռի մը մէջ
անանկ աղքատօրէն ծներ ես. եւ

մսուրը պառկեր ան ցուրտ ատենը՝
մարդկան կուրութեան ու ապերախ-
տութեան վրայ կու լաս: Յէ-րոն են,
եւ իշխն զն ու ընկալն:

Ո՛վ ցանկալի մանուկ Յիսուս,
աշա ամէն բանէն աւելի սիրտս քե-
զե կը բաղձայ եւ զքեղ կ'ուզէ:
Եկուր Տէր իմ Յիսուս, շնորհօքդ
սրտիս մէջ ծնիր: Թէպէտ շատ ան-
զարդ ու անվայելուչ է սրտիս բնա-
կարանը, եւ զքեղ ընդունելու ար-
ժանաւոր տեղ մը չունիմ. բայց
Տէր իմ, աշխարհային բաներէն բո-
լորովին պարապ է, մէջն ուրիշ բան
չես գտներ, միայն քեզի համար պա-
տրաստած այր մը: Դուն երկնային
շնորհքներովդ մէջն զարդարէ եւ
սուրբ սիրովդ վառէ բորբոքէ սիրտս,
որ ամէն սիրս պազութիւնները
վերնան ու չըլսայ որ քու գալըս-
տեանդ արգելք մը դնեն: Ընդար-
ձակէ լեզուս, որ այսօր հրեշտակնե-

րուն հետ զքեղ փառաբանեմ, քե-
զի փառք տամ: Փառք ի բարձունս
Աստուծոյ: Հաղար փառք ու գոհու-
թիւն քեզի, Փրկիչ իմ Յիսուս, որ
փրկութեանս համար երկինքէն իջար,
մարմին առիր ու աղքատին ախոռի
մը մէջ ծնար:

Ահա երջանիկ այրին մէջ սուրբ
մսուրիդ առջին գետինն ինկած՝ կ'ա-
ղաշեմ քեզի, ամենասիրելի մանուկ
Յիսուս, անոյշ աչուլներովդ մէյ
մ'ինծի նայէ ու միսիթարէ սիրտս:
Տուր ինծի ան եռանդը, զորն որ ու-
նէին ամենասուրբ մայրդ ու սուրբ
Յովկէփ՝ երբոր զքեղ կը տեսնէին
մսուրի մէջ իրենց առջեւը: Տուր
ինծի ան երջանիկ հովիւներուն
սուրբ միամտութիւնը, որ ես ալ
զքեղ գտնելու, զքեղ տեսնելու
արժանի ըլլամ՝ արբայութեան մէջ.
ամէն:

Յարական:

Ի Հօրէ ծագեցար լուսաւորել
զարարածս. արդարութեան արեգակն
Տէր փառք քեզ: Ծնար ի յայրին,
ընծայեցար բեթղեհէմ. արդարու-
թեան արեգակն Տէր փառք քեզ:

Դոր տարի:

Ահա գետինն ինկած խոնարհու-
թեամբ երկրպագութիւն կը մատու-
ցանեմ քեզի, ով ամենակարոլ Աս-
տուած իմ, եւ ամբաւ գոհութիւն ու
օրհնութիւն կը մատուցանեմ՝ ինձի
ըրած անթիւ անհամար բարերարու-
թիւններուդ համար, որ զիս արժա-
նաւորութենէս վեր ամէն կերպ հո-
գւոյ ու մարմնոյ փորձանկներէն ան-
վաս պահելով՝ ողջ առողջ հասուցիր
աս նոր տարեգլուխս: Հազար փառք
քեզի, ողորմած Աստուած իմ, որ
գթած հօր պէս ողորմութիւնդ

վրայէս պակաս չըրիր. թէպէտ ես
շատ անգամ ապերախտ գտնուեցայ
քեզի, բայց դուն անզգամութեանս
ներեցիր: Օր մը չտեսայ՝ որ քեզմէ
մասնաւոր զանազան բարիքներ չընդ-
ունիմ. իսկ ես օր մը գոնէ քեզի
արժանապէս չծառայեցի: Գուն զիս
տնկեցիր սուրբ եկեղեցւոյ մէջ ու
ամէն հարկաւոր հոգը տարիր: Քու
սուրբ ազգեցութիւններդ միշտ ան-
պակաս գրդեցին իմ խղճմտանքս.
Հոգւոյն սրբոյ ընորհքներովը մաքիս
խաւարը լուսաւորեցիր, եւ իմ հո-
գեւոր հօրերուս խրամներովը շատ
անգամ զիս քեզի կանչեցիր, որ
չըլայ թէ յաւիտեանս կորսուիմ:

Կը խոնտովանիմ, Տէր իմ, որ
բաւական պտուղ չունիմ աստուա-
ծութեանդ առջեւը հանելու, եւ
քեզի ընծայ մատուցանելու: Թէ որ
իզմէ խիստ համար պահանջելու
ըլաս, ինչ կ'ըլլայ իմ բանս: Իրաւ-
15*

յընէ արժանի եմ, որ ան սոսկալի
վճիռն ինծի համար ալ զբուցես թէ
Կտրեցէք ատ ծառը. ինչո՞ւ համար
պարապ տեղ երկիրը կը խափանէ
իմ հոգեւոր պարտեզիս մէջ:

Բայց գիտեմ, Տէր, որ դուն եր-
կայնամիտ ես ու բազումողորմ, ըրած-
ներուս կը համբերես ու թողութիւն
ալ կու տաս. ինչու որ աւելի կ'ուզես
որ ես գառնամ, քան թէ կորսուիմ:
Ահա սուրբ կյս Աստուածածնի
բարեխօսութեամբը հաստատ կ'ա-
ռաջադրեմ ու կը խոստանամ, որ
բոլոր աս նոր տարին ջանամ մեղքէ
դգուշանալ ու բարի ապրիլ: Դուն
ոլորմած չէր, թափէ երկինքէն
վըաս ամէն երկնային օրհնութիւն-
ներդ. Հոգւցն սրբոյ շնորհքովը զիս
լեցուր, եւ օրհնաբանեալ սուրբ կյս
Տիրամօր պաշտպանութիւնը շնորհէ
ինծի, որ բոլոր տարին ի փառս քո
անցընեմ:

Յարական:

Ի քեզ եմք ապաւինեալ, Քրիս-
տոսի Մայր Աստուծոյ մերոյ: Որ քան
զարեգակն պայծառագոյն Մարիամ,
մի դադարեր բարեխօսել վասն մեր,
Քրիստոսի Մայր Աստուծոյ մերոյ:

Ի տօնի անոնանադրութեամ Յիսոնի:

ՈՎ երկրպագելի քաղցր անուն
Յիսուսի, ով ամենասիրելի Յիսուս,
ահաւասիկ խօնարհ սրտիւ երեսի
վրայ ինկած երկրպագութիւն կ'ընեմ
քեզի ու սրտանց կը խոստովանիմ,
թէ դուն ես Տէր իմ՝ Յիսուս՝ մեր
Ճշմարիտ Փրկիչը: ՈՎ ահաւոր անուն,
ով բազալի Յիսուս, աս սուրբ
Փրկիչ անունովդ զմեզ ամէն փոր-
ձանքներէն ազատէ. դուն յուսա-
հատեալ հոգիներու քաջալերու-
թիւն, դուն ցաւագին սրտերու միսի-
թարութիւն, դուն մեղաւորներու

փրկութիւն։ Կը պաղատիմ քեզի,
ովք բարի Յիսուս, որ այսօրւան թա-
փած պատուական արիւնովդ մեղքե-
րուս աղտեղութիւնը մաքրես ու
քու սուրբ անուանդ զօրութիւնը
վրայէս անպակաս ընես։

Դուն խոստացար, Տէր իմ Յի-
սուս, թէ ինչ որ քու սուրբ անու-
նովդ խնդրելու ըլլամկ՝ անտարակցյա
կընդունինք։ Կ'աղաշեմ քեզի, միջ-
նորդութեամբ ամենասուրբ Մօրդ,
ամէն մեղքի առիթներէն զիս պահէ,
ու ամէն փորձանքներէն զիս աղատէ.
մասնաւոր շնորհք ալ տուր, որ չար
կիրքերս մէկդի ձգելով՝ առաքինու-
թեան եւեւէ ըլլամ, բարի ապ-
րիմ։ Բայց ամէն բանէն աւելի աս
շնորհքը կը խնդրեմ քեզմէ, ովք
փրկիչ իմ Յիսուս, որ մեռնելու ա-
տենս աս սուրբ արիւնդ միխթարու-
թիւն ըլլայ ինծի, եւ ան ետքի նեղու-
թեանս ատենը զիս դժոխային թշնա-

միներուս ձեռքէն փրկէ. օգնու-
թեան հասիր ինծի, որ չըլլայ թէ
գերի ըլլամ անոնց։ Ովք քաղցր
Յիսուս, աս սուրբ անունդ միշտ բեր-
նէս անպակաս ըլլայ. մեռած ատենս
ալ աս ըլլայ ետքի խօսքս. Յիսուս,
Յիսուս, Յիսուս, հոգիս քեզի Կը
յանձնեմ. ամէն։

Երգ։

Աէր անուն Յիսուս, սիրով քով
ձմլեա, սիրս իմ քարեղէն։ Վասն
գթութեան, վասն ողորմութեան,
վերստին կեցո։

Ի տօնի յայտնութեան։

Մարդասէր Փրկիչ իմ Յիսուս
քրիստոս, թէպէտ աղքատութեամբ
ծնանելով՝ շատ խոնարհ կերպարանք
մտար. բայց աստուածութեանդ լցոր
մինչեւ հեթանոսները լուսաւորեց։

Այսօր յայտնեցիր զքեղ, Աստուած
ամենակալ, ան երեք թագաւորնե-
րուն, որ ծննդեանդ լուսաւոր աստղը
տեսնելով՝ հեռու տեղերէ եկան
քեզի երկրպագութիւն ըրին: Ո՞վ
Տէր, ես որ քրիստոնեայ ծնած եմ
ու սուրբ Եկեղեցւց մէջ մեծած,
աս թագաւորներէն շատ վար մնացի:
Անոնք իրենց կեանքը վտանդի մէջ
դրին, իրենց հայրենիքը թողուցին,
եւ ան հեռու ճամբորդութեամբ
զքեղ Ճշմարիտ թագաւորդ կը փրն-
արուէին ու տեսոյդ կարօտ էին. իսկ
ես այսչափ տարի զանազան երեւելի
տօներուն, որ միշտ ամէն տեղ փրկա-
գործ խորհրդներդ կը քարոզուին,
ամենեւին զքեղ միտքս չբերի, քեզի
չդիմեցի, քեզմէ լցա չինդրեցի:
Հիմակ ինչ երեսով առջիդ ելլեմ,
ո՞վ սիրուն մանուկ Յիսուս, եւ քեզի
ինչ արժանաւոր ընծայ մատուցա-
նեմ: Չունիմ, Տէր, ան երեք թա-

գաւորներուն պէս ոսկի, այսինքն՝
առաքինական գործքեր քեզի ընծայ-
ելու. չունիմ կնդրուկ, այսինքն՝
անուշահոտ աղօմքներ առ ջեւդ հա-
նելու. չունիմ զմուռս, այսինքն՝
զանազան մահացուցմունքներ քեզի
պարգեւելու. անոր համար մինչեւ
հիմակ ինծի չյայտնուեցար, իզմէ
պատկառելի երեսդ ծածկեցիր, եւ
ես ալ աս խեղձութեան մէջ մնացի:
Բայց հիմայ կը ճանչնամ ողորմելու-
թիւնս, քեզի կը դիմեմ, փափաքելի
տեսոյդ կը կարօտիմ:

Տէր իմ Յիսուս, չեմ ինդրեր
լուսաւոր աստեղ առաջնորդութիւնը
զքեղ գտնելու համար. Հապա կը
ինդրեմ գթած մօրդ բարեխօսու-
թիւնը: Ո՞վ քաղցրագութ սուրբ
Աստուածածին, քեզի կ'աղաշեմ,
գուն ինծի միջնորդ եղիր սիրելի Որ-
դւոյդ առջին. գուն մայրենի գթու-
թեամբդ առաջնորդէ ինծի, որ ես

ալ արքայութեան մէջ զՅիսուս տեսանելու արժանի ըլլամբ. ամէն:

Յարական:

Կ բեթղեհէմ Հրէաստանի երեւի արդարութեան արեգակն. այսօր երկրպագի անեղն յարեւելից եկեալ մոգուցն. եւ փառաբանի յերջանիկ ի բացօթեայ հովուացն:

Ի տօնի միրտութեան:

Շաւական չեղաւ, Տէր իմ, որ ինծի համար մարմին առիր, ողորմելի այրի մը մէջ ծնար. ահա այսօր անձառելի խոնարհութեամբ մեղաւորի մը պէս գացիր Յորդանան գետը, քու ծառայէդ մկրտուիլ ուղեցիր, որպէս զի բոլոր արդարութեան պարտքը լեցընես: Մկրտեցար, ով Փրկիչս Յիսուս, որ մաքրութեան կարօտ չէիր, հապա որպէս զի մե-

ղացս աղտը մաքրես ու դարձեալ շնորհօդդ զարդարես:

Մենք մեր նախահօր Ագամայ մեղքը՝ սկզբնական արդարութիւնը կորսընցուցած ու երկնաւոր Հօրդ թշնամի եղած էինք. իսկ դու, Տէր իմ, աս մկրտութեան սուրբ խորհրդովը զմեզ նորէն երկնաւոր Հօրդ հետ հաշտեցուցիր ու որդիք Աստուծոյ կոչուելու զմեզ արժանի ըրիր: ՈՎ Տէր, այսչափ ըրած բարերարութիւններուդ համար ես միշտ պարտական եմ զքեզ օրհնելու եւ փառաւորելու: Հաւատով կ'երկրպագեմ քեզի, ով Աստուծած իմ Յիսուս, եւ կը խոստովանիմ զքեզ Միածին Որդի Աստուծոյ, ինչպէս որ այսօր մկրտուելու ատենդ չոգին սուրբ աղաւնակերպ տեսլեամբ երկինքէն վկայեց:

Կ'աղաչեմ, ով ողորմած Փրկիչ իմ, աս փառաւոր տօնին՝ հեղ վրաս

Հոգւցն սրբոյ շնորհքը, լուա, մաքրէ
հոգւցս աղտերը, որ սուրբ մկրտու-
թենէ եւեւ մեղանելով բիւր ան-
դամ աղտեղեցի: Գիտեմ, Տէր, որ
զիս մաքրելու համար ջուր չես
փնտռեր, աչքիս արցունքը կ'ուղես.
բայց, Տէրիմ, ատ շնորհքը տախն ալ
քու ձեռքդ է. տուր աշուշներուս
աղբիւրի պէս արցունք, որ անով
հոգիս լուամ ու սրբեմ: Թէ որ
շնորհօք արդարանալու արժանի չեմ,
արցունքովս կը բաղձամ մաքրուիլ:
“Թէ ոչ շնորհօք, այլ արտասուօք”:
Լսէ, Տէր իմ, աղաւանքիս ձայնը, եւ
տուր ինծի պյար սուրբ մկրտու-
թեան շնորհքը:

Յարական:

Վկրտի Քրիստոս եւ սրբին ամե-
նայն արարածք, եւ տայ մեղ թո-
ղութիւն մեղաց ջովվ եւ Հոգւով
Վերասրբելով զմեղ:

ի տօնի ջեառնեղառաջի:

Ո՛ւ մարդացեալ Աստուած իմ
Յիսուս, մեր վրայ ունեցած սէրդ
այնչափ մեծ է, որ մարդկային լեզու
չիկրնար պատմել: Դուն որ ամե-
նենին եւ ոչ մեղաց արատ մ'ունէիր,
մեղաւորի մը պէս տաճարն եկար.
դուն բոլորովին սրբութիւն ըլլալով՝
անմաքրութենէ մաքրուիլ կ'ուղէիր:
Զարմացան երկինք, հրեշտակներն
ապշած մնացին. գերագոյն մաքրու-
թեամբ ծնար, ով սուրբդ սրբոց. եւ
այսօր զքեղ երկնաւոր Հօրդ ըն-
ծայելով, Աստուծոյ հետ զիս հաշ-
տեցուցիր ու Աստուծոյ որդի ըրիր:
Իսկ ես, Տէր իմ, քու շնորհացդ
անփոյթ գտնուելով՝ ամէն կերպ աղտ
ու կեղտ վրաս առի, եւ չեմ ուզեր
սրբուիլ. դուն բոլորովին արդար էիր,
եւ մեղաւորի կերպարանք մոտար. իսկ ես
մեղաւոր եմ, եւ զիս արդար կը կար-

ծեմ: Գուն ողջրմած Տէր, լոյս տուր
ինծի ու օգնէ իմ տկարութեանս:

Սիմեոն ծերունւցին հետ կ'աղա-
չեմ զքեզ, սուրբ Կըս Աստուածա-
ծին, եւ կը խնդրեմ արտասուզ.
Երբ ինծի ալ պիտի ցուցընես սիրե-
լի Աստուածորդիդ. Երբ անպատմելի
սիրովդ պիտի զմայլիմ. Երբ հոգիս
պիտի մխիթարես: Թէ որ աս մեծ
շնորհքին արժանի չեմ, գոնէ աս
շնորհքն ըրէ ինծի, Մայր ողջրմու-
թեան, որ Հաղորդութիւն առած
ատենս արժանապէս Փրկիչս սրտիս
մէջն ընդունիմ ու Սիմեոն ծերու-
նւցին պէս սրտանց ես ալ աղաղակեմ.
Աբդ՝ աբյակէս զքաւայս +ո ի խուլալու-
նէն: Ահա հաւատով աս Խորհր-
դեան մէջ տեսայ Փրկիչս ու ճըշ-
մարիտ Աստուածս. փափաքս լե-
ցուեցաւ, հերկի այսչափ ատեն աշ-
խարհքիս մէջ կը տառապիմ: Այս-
օր իմ խնդրուածքս ալ կատարէ,

սուրբ Կըս Աստուածածին. քու հզօր
միջնորդութեամբդ. մեղքերուս թո-
ղութիւն առ, չար կիբըերէս ու
փորձանկներէ զիս աղատէ. որ մա-
հուանս ատեն խաղաղութեամբ
հանգչիմ ու երթամ սիրելի Փըրկ-
չիս հետ միանամ:

Լսէ այսօր աղաշանկիս ձայնը, Տի-
րամայր, ինծի խոնարհութեան ու
մաքրութեան շնորհք տուր, որ ես
ալ կարող ըլլամ զիս բոլորովին
Յիսուսին ու քեզի ընծայ ընել: Կայէ
գթած աչքովդ սրտիս բաղձանկին,
եւ ընդունէ աս անարժան ընծաս:

Յարական:

Որ արձակիչդ ես կապելոց՝ պար-
գեւատու ամենեցուն, այսօր հայց-
մամբ ծերունւցին արձակեա եւ զիս
զբազմամելս ի կապանաց մահու ի
կեանսդ յաւիտենից:

ԱՊՈՔ
Կ Մ Ե Ֆ Պ Ե Հ Ս

ԱԹԱՋԻՆ ԿԻՐԱԿԻ

Մտեղծուամի աղաւայ :

Դուն Տէր իմ, առաջին մարդն
ստեղծած ատենդ անանկ անպատմե-
լի երջանկութեամբ զինքը զարդա-
րեցիր, որ գրախոտին մէջ ամէն կերպ
ուրախութիւնն ունէր: Բայց ինքն
անհնազանդ գտնուելով հրամանիդ,
զրկուեցաւ ան ցանկալի վիճակէն:
Կը խոստովանիմ, որ եթէ դուն անոր
չողօրմէիր, մենք արժանի էինք կորըս-
տեան: Ողորմէցար, Տէր իմ, եւ գար-
ձեալ նորոգեցիր մեր կործանեալ
բնութիւնը. այնչափ սրբազան խոր-
հուրդներ դրիր, որ մեզի շնորհը
կու տան, զմեզ կը զօրացընեն, որ
մարմինը հոգւոյն հնազանդեցընենք:
Դուն ինծի համար քառսուն օր պա-

հեցիր, բան մը չկերար, որ ես ալ
սուրբ օրինակիդ հետեւելով՝ մար-
մինս մահացընեմ ու հոգիս զօրա-
ցընեմ, որ չըլայ թէ սատանային
փորձութիւններէն յաղթուի Ադա-
մայ պէս ու անոնց դէմ դնել չկա-
րենայ:

Ո՛վ Աստուած իմ, դուն լցո տուր
մնքիս ու արթնցուր հոգիս աս մա-
հաբեր թմրութենէն, որ դոնէ աս
մեծ պահքի սուրբ օրերն աղէկ ան-
ցընեմ: չարչարանքներդ միշտ յիշեմ,
ամէն մեղքերուս վրայ զղամ ու
ցաւիմ, մանաւանդ որկրամոլութեանս
վրայ, որ թէ հոգւոյս եւ թէ մար-
միցս վնասակար է: Մարմինս ամեհի
գաղան մը դարձեր է, ամենեւին
հոգւոյս չիհնազանդիր. եւ ոչ ահաւ-
որ հրամանդ, որ լեռները կը դողա-
ցընէ ու աշխարհքս հաստատուն կը
պահէ, կրցաւ մարմինս զսպել ու
սուրբ պատուիրաններուդ խոնար-

Հեցընել: Տես, ողորմած Տէր, ան հոգին, որ դուն ամենակատար պատկերիդ նման ստեղծեցիր, ինչ ողորմելի խեղճութեան մէջ է ինկեր. առաջի անմեղութիւնը կորալնցուցերէ, մարմինը հոգւցն դէմ ապլուտամբեր է. հոգիս կը բաղձայ սուրբ պատուիրաններուդ. հետեւիլ, բայց մարմինս դէմ կ'ելք: Ահա գետինն ինկած կ'աղաւեմ կը պաղատիմ, գորովագութ արարիչ իմ, լսէ հառաչանքիս ձայնը, դուն ողորմէ յուսահատելցս, նորոգէ հոգիս սուրբ Հոգւցն շնորհքովը: Տուր ինծի անմեղութեան շնորհք, ինչպէս որ Ադամնց տուիր. բաց ինծի ալ երկնաւոր դրախտին դուռը, ինչպէս որ քեզի հետ խաջուած աւազակին բացիր. իմ հոգւցս ալ լսէ ան միաբարական խօսքը. Այսօր ընդ էս էցես է դրտիպին. ամէն:

Շարական:

Վասն որոյ աղաւեա, Մայր Աստուծոյ Մարիամ, զՄիածին քո զՈրդին, զի շնորհեսցէ ըստ աւազակին՝ ժառանգել վերստին մեզ դդրախտին փայելութիւն:

Շարթու մէջ լնելող աղօթք:

Այր գթութեանց եւ ողորմութեանց, մարդասէր աչքովդ նայէ ստեղծուածիդ, որ խոնարհութեամբ առաջի ինկած աս սուրբ օրերս ապաշխարութեամբ անցընել կ'ուզէ: Բաց, Տէ՛ր, հոգւցս աչուլները, որ աշխարհային ընդունայնութիւնները ճանչնամ ու սիրտս անանկ բաներու հետ չկապեմ, զօրոնք երբոր է նէ օր մը պիտի թող տամ. ինչու որ ես աշխարհքիս վոայ օտարական եմ Ճամբորդի մը պէս. օր մը պիտի գայ, որ ամէն մէկ անցուցած օրերուա-

Համար պիտի տամ: Ի՞նչ օգուտ եղաւ ինծի աշխարհքիս մեղանչական ուրախութիւններէն, շուքի պէս անցան գացին. ձեռքս ուրիշ բան չմնաց, բայց եթէ խղճմտանքի անհանդըստութիւն ու մեղապարտութիւն: Վայ իմ կուրութեանս, ուրախութիւնն որ մեղանչելու ատենս ունէի շատ քիչ տեւեց է. իսկ տրտութիւնն ու պատիժը, թէ որ քեզի հետ հաշտուելու չաշխատիմ, յաւիտեանս պիտի ըլլայ:

Իրաւցընէ, Տէր իմ, արժանի չէի, որ այսպիսի սրբազն օրեր տեսնեմ ու ապաշխարութեան միջոց ունենամ. բայց դուն, ողորմած Տէր, որ զիս աս օրերուս հասցուցիր, Մագդաղենացւոյն ապաշխարութեան հոգին ալ պարգեւէ, որ ոտքդ ինկած գիշեր ցորեկ լալէն չդադրիմ: Ողորմէ ինծի, որ հոգիս պէսպէս մեղքերով հիւանդ մնացեր է անդամալու-

ծին պէս, բարեգործութիւն ընելու յժմ չունի. քեզի կ'աղաղակէ, ով բժիշկ հոգւոց բարի Յիսուս, գթութիւնը իմ հոգւոց ալ պիտի ըսես ան միսիթարական խօսքը. Թաղէտւ լէցին Արդ ու երբ զքեզ մէջ մ'ալ պիտի չվշտացընեմ. զքեզ միայն պիտի սիրեմ ու սուրբ պատուիրաններդ չմունամ: Ողորմած Յիսուս Քրիստոս Փրկիչ իմ, կ'աղաչեմ, չնորհք տուրինծի, որ ես ալ օրինակիդ հետեւելով՝ աղօթքով ու պահքով չար սատանային փորձութիւններուն յաղթեմ ու գէշ կիզքերս մահացընեմ: Սուրբ եւ պատուական խաչիդ զօրութեամբը պահէ ու զօրացուր զիս, Տէր իմ. Թող մի տար որ թշնամին վրաս պարծի: Ի եւ Տէր յուսացայ, մէ ամաղէցի յառէտեան:

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

Անկումն ադաման:

Եւ էետու բաբելոնց՝ անդ նստեած
էւ լայտ, յործամ յիշեած զեղ Սիան:
Ո՛չ Տէր, երբոր միտքս կու գան ան
անպատմելի դրախտին դուարձու-
թիւնները, ամենակատար երջանկու-
թիւնը, ան սուրբ անմեղութեան վի-
ճակն ու մարդուս համար ստեղծած
անհամար բարիքներդ, չեմ կըս-
նար կերպով մը զիս միմիթարել: Աս
ողորմելի աշխարհքիս աքսորանքին
մէջ մնացեր եմ. բոլոր կեանքիս մէջ
ցաւագին անէծքներու տակ ինկեր
եմ. ցաւերէ եւ թշուառութենէ ի
զատ բան մը չեմ ունեցեր: Թշնամիք
ըլրս դիս առեր են, յաղթելու ոյժ
չկայ վրաս: Ապստամբ մարմինս գլուխ
վերցուցեր է ու հոգւոյս հակառակ
կը բաղձայ. կամքս զօրութիւն չունի.
մոքիս լոյսը խաւարած՝ իր վնասը չի-

տեսներ. Խղճմոանքս ալ բոլորո-
վին թմրեր մնացեր է: Ո՛վ ողորմած
Աստուած, աս ի՞նչ թշուառութեան
մէջ զիս թողուցեր ես, ատ ի՞նչ իւեղճ
վիճակի մէջ զիս ձգեր ես. դուն ա-
մենակարող արարիչ ըլլալով՝ ասանկ
ողորմելի արարած ստեղծեր ես:

Ո՛չ Տէր, ներէ անզգամութեանս.
ի՞նչ հայհոյութիւն է աս բերնէս ե-
լածը: Զէ, ամենաբարի արարիչ իմ,
չէ. դուն զիս ասանկ թշուառ չստեղ-
ծեցիր, դուն աս վէրքերը վրաս
չգրիր. բոլոր ես եղայ պատճառ այս-
չափ չարեաց. ես պատուիրաններուդ
անհնազանդ գտնուելով, Ադամայ
պէս առջի երջանկութիւնս կորսըն-
ցուցի: Դուն երկնից արքայութիւնն
ինծի բնակարան պատրաստեցիր, իսկ
ես անկից հեռացայ. անմահարար կե-
րակուր տուիր ինծի, իսկ ես յարգը
չձանչցայ. զիս անձնիշնան ազատ ը-
րիր, իսկ ես ախտերուս գերի եղայ:

Անոր համար պէտք եղաւ, որ դու
Տէր իմ Յիսուս Քրիստոս, աշխարհք
դաս, իմ հօգւոյս անհամար ցաւերն
ու հիւանդութիւնները բժշկես, եւ
զիս նորէն կենդանացընես քու մա-
հուամբդ: Որչափ ցաւեր ու չար-
չարանքներ քաշեցիր, Փրկիչ իմ, մե-
զացս համար. գլուխդ մինչեւ ոսքդ
առողջ տեղ մը չմնաց վրագ, եւ ան-
ետքի նեղութեան մէջ ծարւած ա-
տենդ՝ լեզով խառնած քացախ խմե-
ցիր, որ որկրամոլութեանս յանցանքը
քաւես ու ինծի ժուժկալութիւն
սորվեցընես: Միշտ պարտական եմ,
Փրկիչ իմ, քեզի շնորհակալ ըլլալու-
եւ անդադար զքեզ օրհնելու: Դուն
զքեզ բոլորովին ինծի ու իմ մե-
զացս համար տուիր. ես ալ զիս բո-
լորովին քեզի կընծայեմ, եւ մաս-
նաւորապէս աս սուրբ պահոց ատեն
կը ջանամ զիս մահացուցանել, որ
քեզի հետ մեղքերէս յարութիւն

առնեմ: Ողորմած Յիսուս, որ ոչ
կամիս զմահ մեղաւորին, քու ան-
դին արդեանցդ համար ընդունէ զիս
երկնային դրախտը. ամէն:

Յարական:

Ըստ նախահօրն տրտմութեան՝ որ
վասն ելիցն ի դրախտէն կենաց, ըն-
կալցուք զտրտմութիւն ապաշխա-
րութեան. զի յարութեամբն Քրիս-
տոսի արժանասցուք մտից դրախտին
եկեղեցւց:

Յարթու միջ ընկերու աղօթք:

Յիսուս Քրիստոս մարդասէր Փր-
կիչ իմ, դուն զիս վինտուելու համար
աշխարհք եկար, մարմին առիր, եւ
զիս գտնելու համար որ կորսուած էի
ամէն աշխատանք յանձն առիր. պա-
տուիրեցիր ինծի ալ որ սուրբ օրի-
նակներուդ հետեւիմ ու քեզի նմա-
նող ըլլամ: Դուն ինծի սորվեցու-

ցիր, որ ինչպէս իմ թշնամիներուս՝
մարմնոյ ու աշխարհի յաղթերմ. իսկ
ես իմ զգայաբանքներս չլսպելուս
համար անոնց գերի եղած եմ: Մեր
նախահայրն Աղամ կերակրոյ ցան-
կութեամբ խարուեցաւ. նախ առա-
ջն եւա դարձաւ նայեցաւ՝ աչքին
գեղեցիկ երեւնալով. ետքը սկսաւ
Ադամայ հրամցընել. ան ալ զգու-
շութիւն չընելով՝ ընկերով հաճցըն
ընելու համար հրամանդ դժբախ-
տութեամբ ոտքի տակ առաւ: Անանկ
ալ ես, Տէր իմ, խիստ անզգոյշ եմ
աչքս լսպելու. շատ անգամ համ-
արձակ կը նայիմ ան բաներուն, որ
գուն սուրբ հրամանաւդ արգելած
ես. եւ նայելով անանկ ախորժակ
եկած է որ թշուառաբար մեղքի
մէջ ինկած եմ: Շատ անգամ ալ
հերիք չէ որ մինակ ես իյնամ, հա-
պա եւային պէս ուրիշին ալ արգե-
լած պտուղը կը հրամցընեմ. բեր-

նովս՝ չար խօսքերովս ընկերիս պատ-
ճառ ըլլալով, որ ան ալ ինձի հետ
իյնայ: Վայ ինձ, բերանս աւելի մար-
դասպան է, քան թէ կայենին ձեռ-
քը. անիկայ մարմինը միայն սպաննեց,
հոգին պսակեցաւ. իսկ ես եղբօրս
մարմինը ողջ՝ հոգին սպաննեցի: Եթէ
կայենէն անանկ խիստ վրէժ պահան-
չեցիր, հապա ես ասանկ մնալու որ
ըլլամ, քանի գժոխքի արժանի չեմ:
Ո՞՛Տէր, գիտեմ որ բոնած ճամ-
բաս չար է, ալ չեմ ուղեր աս ճամ-
բուս մէջ մնալ. կ'առաջադրեմ քու
օրինակներուդ հետեւիլ, որ մարմնոյ
ու աշխարհի կարող ըլլամ յաղթել:
Դուն ինձի շնորհք տուր, որ աչ-
քովս համարձակ չնայիմ ան բանե-
րուն, զոր գուն արգելած ես. մա-
նաւանդ աչքէս յառաջ միտքս դար-
ձնեմ: Դարձեալ կարողութիւն
տուր, որ բերնիս աղէկ պահապան
գնեմ, որ չբացուի ուրիշները բամ-

բասելու, հայհցելու, սուտ զըռւ-
ցելու եւ չար խրատ տալու. հապա
միտքս ու բաղձանքս ըլլայ քու ու
րէնքդ, խօսքս ալ օգտակար, որ
լսողներուն շինութիւն ըլլայ:

Ե Ր Պ Ա Ր Գ Կ Ե Ր Ա Վ Կ Բ

Անառակիճ:

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որչափ
անթիւ են ինծի ըրած բարերարու-
թիւններդ: Դուն զիս մկրտութեան
շնորհաց արժանի ըրիր ու երկնից
արքայութեան ալ որդեգիր գրեցիր.
ուղեցիր որ մեզի մարմնակից ըլլաս,
որ մենք ալ քեզի հետ արքայութեան
ժառանդակից ըլլանք: Ի՞նչ աւե-
լի մեծ բան կրնար մեր միաբը մտա-
ծել. մանաւանդ թէ ինչպէս կրնայիր
քեզմէ աւելի վեր բան մը մեզի հա-
մար սահմանել, բայց եթէ զքեզու
քու արքայութիւնդ: Կը խոստովա-
նիմ, Տէր, որ շատ մեծ է ինծի ըրած

բարիքդ. սուրբ մկրտութեան աւա-
զանին ծնունդ ընելով՝ արքայու-
թեան ալ ժառանդ ըրեր ես: Բայց
ով Փրկիչ իմ, ես աս ամէն ըրած
բարերարութիւններդ ամենեւին
չըիշեցի. անառակ որդւցն պէս հե-
ռացայ իմ գթած հօրմէս, բաժնուե-
ցայ քեզմէ, եւ բոլոր հոգեւոր ժա-
ռանդութիւնս, որ իրաւունք ունէի
արքայութեան որդի ըլլալու՝ մեղան-
չելով կորսնցուցի: Իմ բոլոր կեանքս
բերկրութիւն մ'եղաւ իմ գարշելի
կիրքերուս. եւ քանի որ գնաց սո-
վորութիւնը վրաս զօրանալով՝ ետքի
թշուառութեան մէջ ինկայ:

Հայր գթութեան, նայէ մէյ մը
խեղճութեանս. լցոս մը ծագէ մտքիս
մէջ, որ Ճանանամ, թէ ինչ վիճակէ
ինկայ ու ինչ ողըրմելութեան հա-
սայ: Շնորհ ու զօրութիւն տուր,
որ կատարեալ ապաշխարութեամբ
ու սրտանց խոստովանութեամբ

քեզի դառնամ, անառակ որդւցն
հետ գթած հօրդ գոչեմ. Հայք,
Աբով յերինս եւ առաջի ուոյ. ալ ար-
ժանի չեմ արքայութեան ժառանգ
ու որդի ըսուելու. ես ըրած անօրէ-
նութիւններս գիտեմ, կը խոստո-
վանիմ որ թողութեան արժանաւոր
չեմ. բայց միայն աս շնորհքը կը
խնդրեմ որ զիս բոլորովին երեսէ
չձես, որ չըլսյ թէ անտէրունչ
յաւիտեանս կորսուիմ: Հայք ողոր-
մութեան, լսէ անառակ որդւցդ
ողորմուկ ձայնը. Հայք մեղայ. բաւա-
կան է աս միայն գթած սիրտդ վրաս
ի գութ շարժելու, որ ինծի դարձեալ
ողորմիս: Տուր ինծի ան հաշտութեան
համբոյրը. առջի անմեղութեանս հո-
գեւոր հագուստներն ինծի նորէն
հագցուր, որ սուրբ միրտութեան
ատենը շնորհեցիր. եւ արժանի ըրէ
զիս, որ աս ուրախութեան մէջ քու
սուրբ Միածնիդ մարմինն ու արիւնն

արժանապէս ու ջերմեռանդութեամբ
ընդունիմ:

Ո՞վ Հայք երկնաւոր, երեսի վրայ
ինկած կ'աղաւեմ քեզի, թող մի
տար զիս որ մէյ մ'ալ մեղօք քեզմէ
բաժնուիմ ու հեռանամ. տուր այսօր
երկնաւորաց ան մեծ ուրախութիւնը՝
ապաշխարութեան հոգի ու կատա-
ձեալ դարձի շնորհք տալով ինծի,
որ ես ալ արժանի ըլլամի հանդեր-
ձեալն երկնից սուրբ արքայութեան
մէջ կրկին ուրախանալ հրեշտակ-
ներուն հետ ու միշտ զքեղ օրհնել
ի յաւիտեան. ամէն:

Յարական:

Ի՞նդ անառակին որդւց գոչեմք
առ հայրդ գթած. մեղաք յերկինս
եւ առաջի քո, քաւիչ յանցանաց.
Ել ընդ առաջ սիրով գրկեա համ-
բուրիւ, մաքրեա զմեղ ի մեղաց
մերոց:

Յարթոն մէջ ընելու աղօթք :

ՈՎ ողորմած Տէր իմ եւ Աստուած իմ, ցաւագնեալ սրտիւ եւ ինքիրմէս կը խոստովանիմ իմ անհամար մեղքերս ու բոլոր սրտանց կը ցաւիմ զքեղ վշտացընելուս: ՈՎ Հայր ողորմութեան, դուն սրտիս զեղչ տուր, աշուշներուս աղքիւրի պէս արցունք շնորհէ, որ գոնէ աս սուրբ ապաշխարութեան օրերը մեղաց թմրութենէն արթննամ, աչքս բանամ տեսնեմ իմ խեղճութիւնս, եւ քեզի գթած հօրդ դառնալով՝ ոտքդ իյնամ, յամ ողբամ ու մինչեւ հիմա ըրած ապերախտութեանս թողութիւն խնդրեմ. Յարուցեալ քնացէց առ հայր իմ, եւ առացէց զնա, հայր Քրայ: Աս էմ մի միայն սրտիս միսիթարութիւնն ու բովանդակ յոյս: Հայր Երկնաւոր, անառակ որդւսդ խեղճութեանը նայէ մէյ մը,

որ մերկ խայտառակ ետքի ողորմելութեան մէջ ինկեր է ու ոաքդ փաթթուած լալով մեղայ կը կանչէ: Հայր, Քրայ յերինս եւ առաջէ ու: ու եւս եմ որժանէ հովէլ որդէ ու: որ զէս կբեւ զէ և վահանաց ուց: Հայր սուրբ, գիտեմ որ հայրական սիրադ կոտրեցի որդիական ժառանգութեանս շնորհքն՝ որ սուրբ մկրտութեամբ ինձի պարգեւեցիր, արդէն կորանցուցի. անոր համար ասկից ետքը արժանի չեմ քեզի որդի լուսուելու. բայց աս շնորհքը միայն կը խնդրեմ, որ ըրածներուս ներես, ալ չիշես եւ զիս քու ապաշխարող ծառաներուդ կարգն անցընես: Քանի որ կենդանի եմ, միշտ արցունք թափելէն չդադրիմ, հայրական սէրդ ոտքի տակ առնելուս ու քեզմէ բաժնուելուս համար. որպէս զի ի հանգերձեալն միմիթարութեանդ ալ արժանի ըլլամ. ամէն:

ՀՈՐՌՈՐԴ ԿԵՐԱԿԻ

ԺԱՌԵԿԻԱ:

Ամենախնամ Տէր եւ Աստուած
իմ, ես ողորմելի ստեղծուածս Աս-
տուածութեանդ առջին յանդգնե-
ցայ խորհրդով, բանիւ եւ գործով
մեղանչել: Դուն ապսպրեցիր ինծի,
որ դունապանի մը պէս արթուն կե-
նամ ու սուրբ սրտիւ գալստեանդ
սպասեմ, որ երբոր դու Տէր իմ,
դուռը զարնես, այսինքն՝ հօգիս մար-
մէս բաժնուելու ատեն՝ պատրաստ
դտնուիմ: Տնտեսին առակն ինծի
պատմելով ցուցուցիր, թէ մեր խիղճը
միշտ մեղքէ մաքուր պէտք ենք պա-
հել, որ քննութիւն ըրած ատենդ
դատաստանիդ առջին պարտական
չգտնուինք: Բայց իմ մեղացս պարտ-
քերն անթիւ են, Տէր իմ. ինչ պիտի
ընեմ, թէ որ դատաստանի օրը ինծի
ալ ըսելու ըլլաս. Տուր շնամար ո՞նդե-

առելեան +: Իրաւցընէ թէ որ աս
ժամհուս՝ արդարութեամբդ զիս դա-
տելու ըլլաս, արժանի եմ որ դա-
տապարտութեանս վճիռը լսեմ. ար-
ժանի եմ որ քաղցր տեսութենէդ
զգկուիմ:

Ո՛Տ Տէր իմ, երբոր աս միտքս
կու դայ, կը դողամ կը սոսկամ, թէ
այնչափ կորսնցուցած շնորհքներուս
համար ինչ պատասխան պիտի տամ
քեզի: Հիմա Տէր իմ, ոտքդ ինկած
խոնարհալար կ'աղաչեմ կը պաղա-
տիմ. Երկայնակա լէր առ իս, ես զա-
մայն հատուցչից եւշ: Ո՛Վ ողորմած
Աստուած իմ, դուն սրտիս զեղջ
տուր, մտքիս լցոս ծագէ, որ օգնա-
կանութեամբդ քանի որ կեանք
տուեր ես, մեղքերուս պարտքերն
ապաշխարութեամբ վճարեմ: Գի-
տեմ, Փրկիչ իմ Յիսուս, թէ որ ես
մեղքերուս վրայ զղամ ու առջեւդ
խոստովանիմ, պատրաստ ես պարտ-

Քերս ջնջելու. անոր համար բոլոր սրտանց մեղայ կը գոչեմ քեզի անհրաւ գանուելուս համար. եւ ասկէց ետքը աւելի կ'ուզեմ մեռնիլ, քան թէ զքեզ նորէն վշտացընել:

Ահա բարեխօս ունիմ ինծի ամենասիրելի Մայրդ սուրբ Աստուածածին. լսէ անոր աղաշանքին, Յիսուս իմ, եւ ինծի շնորհք ու կարողութիւն տուր, որ ճշմարիտ ապաշխարութեամբ աս աշխարհքս պարագերս վճարելով, մեռնելէս ետքը ցանկալի տեսոյդ արժանի ըլլամ. եւ ան ուրախալի լուրը լսեմ աստուածային բերնէդ. Անձիւ, ծառայ բարձ է հաւատաբիւմ, հուր յուրական-նիւն դեառն ու. ամէն.

Յարական:

Ո՞ր տիրականս առ ի քէն կարգեալ անտես բնութեան մերսյ, իմաստութեամբ զպարտիս եթող

քսոց պարտապանաց. թող եւ զմեր զյանցանս ողորմնաւթեամբդ քո Քրիստոս:

Յաշթոհ մէջ ընելու աղօթք:

Երբոր, Տէր, ըրածներս կը յիշեմ եւ արդար գատաստանդ կը մոտածեմ, քեզի դէմ ըրած ապերախտութիւններս միաքս գալով՝ բոլոր մարմինս դող կ'ելլէ ու կը յուսահատիմ: Գործած մեղքերուս համար հարցուփորձ ընելու որ ըլլաս, ինչ պատախան պիտի տամ քեզի, եւ արդար գատաստանիդ ձեռքէն ինչ պէս պիտի աղատիմ: Ո՛հ Տէր իմ, մեղքերս ծովու աւազէն ալ շատ են. որ մէկը պատմեմ, որ մէկուն վրայ լամ: Ահա հպարտութեամբս աչքէդ ելեր եմ, զիս արդար համարելով՝ շատ անգամ չարաչար մեղաց մէջ ինկեր եմ. ուրիշները քամահեր միշտ ամենէն վեր ըլլալու բաղձացեր

եմ. մէյ մը չեմ յիշած, թէ դուն
խոնարհներուն միայն կ'ողորմիս: Կա-
խանձով ընկերիս բարեացը վրայ
տրտմեր եմ, իր մէծութեանն աչք
եմ տնկեր, անոր յաջողութեանը
չկրնալով տանիլ անունն աւրեր եմ
եւ զինքը վար ձգելու ջանացեր եմ:
Բարկութեամբ ինքիրմէս ելած՝ ը-
րածս չեմ գիտցեր. բերնէս շատ
հայհոյութիւն հաներ եմ. խոռովու-
թեան պատճառ եղեր եմ, եւ քրիս-
տոնէի անուան անվայել խօսքով ու
գործքով ուրիշները նախատեր եմ:
Ագահութեամբ բոլոր սիրոս ու
յոյսս ստրկի վրայ անանկ գրեր եմ,
որ Յուդային պէս զքեզ բոլորովին
մոռցեր՝ քեզմէ աւելի ստակը սիրեր
եմ: Աղքատներուն չեմ ողորմեր ու
հոգւոյս համար ստակ մը չեմ ծա-
խեր: Ծուլութեամբ հոգիս ամէն
հոգեւորէն, աղօթքէն ու ջերմեռան-
դութիւններէն պաղեր է, խոստո-

վանանքս այսօրւան վաղուան ձգելով՝
երկար ատեն չեմ խոստովանած. Եւ
կարօտներուն ձեռքէս եկած բարիքը
չեմ ըրած: Որկրամոլութեամբ չա-
փէն աւելի ինք զինքս ուտելու խմե-
լու տուեր եմ, որ անկէց մեղք եմ
մուեր ու առողջութեանս վիաս հաս-
ցուցեր: Իսկ անպարկեշտ խօսքերովս
ու գործքերովս՝ կը խոստովանիմ որ
շատ հեղ սուրբ պատուիրանիդ գէմ
գործեր եմ: Գուն իմ սիրոս Աս-
տուծոյ տաճար ու Հոգւոյն սրբոց
բնակարան շինեցիր. իսկ ես գար-
շելի կիրքերովս պղծեցի ու սատա-
նացին գերի ըրի:

Ով գմած Փրկիչ իմ, այսչափ
հիւանդութիւններով պաշարուած
անդամալցծ հոգիս առջեղ ինկեր
բժշկութիւն կը խնդրեմ. ովլութիշկ
հոգւոց, ամենակարող զօրութեամբդ
ինծի ալ հրամայէ որ հոգւոյս հիւան-
դութիւններէն ողջնամ, վեր եւ

լեմ. Եւ փառք տալով զքեղ յաւիտեանս յաւիտենից օրհնեմ:

ՀԵՆԳԵՐՈՐԴ ԿԵՐԱԿԻ
Թատառորին:

Տէր իմ՝ եւ Աստուած իմ, դուն ստեղծեցիր իմ հոգիս ու մարմինս, եւ անոնց վրայ դատաւոր դրիբ միտքս, որ արդար դատաստան ընէ հոգւոյս ու մարմնոյս մէջ։ Բայց իմ՝ անհոգութեամբս մարմինս այնչափ գլուխ վերցուց, որ միտքս ալ իրեն հետ մոլորեցաւ ու ամենեւին արդար դատաստան չըներ, նման ան դատաւորին, որ Աստուծմէ չէր վախնար ու մարդկանէ չէր ամշնար։ Իսկ Խեղձ հոգիս ամէն շնորհքէ զըկուած՝ ողորմելի կերպարանքով այրի կնկան պէս քեզի երկնաւոր դատաւորիդ Յիսուսի կ'աղաչէ կը պաղատի ու օդնութիւն կը խնդրէ. Դա՞տ արա ինչ, Տէր, յոսովէ իմէ։ թէ որ անարժան

աղօթքիս ձայնը քեզի լսելի չ'օլլար, գոնէ աչքէս թափած արցունքս զքեղի գութ շարժէ, որ հոգւոյս ու մարմնոյս մէջ խաղաղութիւն ընես. ինչու որ հոգիս ամէն կողմանէ մարմնոյս գերի եղած է ու ձեռքէն պրծելու ամենեւին ճար չկայ։

Միտքս թէպէտ կ'իմանայ, թէ իր հրամանն անիրաւ է, քեզի իր արարչին հաճոյ չէ, բայց զօրութիւն չունի, որ մարմնոյն կամացը յաղթէ։ Միտքս կ'իմանայ, որ աս սրբազնն օրերը պէտք է մարմինն աւելի մահացընել, զգայարանքները զսպել, ապաշխարութեան ետեւէ ըլլալ, երբեմն նաեւ անմեղ զբօսանքներէն ետ կենալ. բայց չէ թէ միայն կը խոնարհի մարմնոյն անմեղ ուղածները կատարելու, հապա թէ որ մեղանչական բան մ'ալ ուզէ, ուժ չունի հրաման չտալու, գէմ կենալու։ Ո՛չ Տէր, ոտքդ ինկած կու լամ

Կողբամ. Դաստ արտ ինչ, Տէր, յասովին
իմ, որ մարմինս է: Զեմ գիտեր, Տէր
ինչ ընելիքս աս ընտանի թշնամոյս
հետ. միշտ հետս մէկտեղ է, չեմ
կրնար իրմէ բաժնուիլ, հետը գլուխ
ելլելու զօրութիւն չունիմ. բայց Տէր
իմ Յիտուս, դուն այսօրուան աւ-
ետարանին մէջ ինծի սորվեցուցիր,
որ խոնարհութեամբ անդադար ա-
զօթք ընեմ, քեզի աղասելէն չձան-
ձրանամ, որ հեծութիւնս տեմնե-
լով՝ ողորմիս ինծի: Անանկ է նէ, Տէր
իմ ողորմած, օգնէ ինծի սուրբ
շնորհքովդ, լուսաւորէ ու ուժով-
ցուր միտքս, որ նախ ուղիղ դատաս-
տան ընէ, եւ ըրածը գործքով կա-
տարել տայ. որպէս զի մարմինս բա-
րեկիրթ ու հոգիս առաքինասէր, եւ
երկուքին վըայ ալ միտքս ուղիղ
դատաւոր ըլլայ:

Յարտկան:

Դաստոր արդար որ հաստատե-
ցեր ի մեզ գատող բնութեան զմիտս
մեր. շնորհեա սմա դատել զանձինս
իրաւամբք եւ արդարութեամբ.
ինսյեա ի մեզ, Տէր, ողորմութեամբ:

Յարթու մէջ ընելու աղօթք:

Տէր իմ Յիտուս Քրիստոս, դուն
ինծի պատուիրեցիր, որ աղօթք ընե-
լէն չդադրիմ. որպէս զի փորձու-
թեան մէջ չիյնամ: Բայց ես շատ
անգամ սատանային փորձանքներէն
յաղթուեր եմ, ինչու որ արժանաւ-
որ աղօթքով քեզի դիմելու եւ օգ-
նութիւնդ ինդրելու անփոյթ եմ
եղեր: Աղօթք ըրած ատենս բերնէս
ելածն ես իսկ չեմ հասկըցեր, խելքս
միտքս ուրիշ տեղ, սիրտս ուրիշ
բաներու ետեւէ եղեր է. անոր հա-
մար քեզմէ շնորհք ընդունելու

տեղ՝ աչքէդ ելեր, աւելի դատա-
պարտութեան արժանի եղեր եմ:

Ո՛վ մարդասէր Փրկիչ իմ, սուրբ
աղօթիցդ ու հառաջանացդ արդիւն-
քովը, որ գեթսէմանի պարտէղնն
մէջ արիւն քրտնիք թափելով փըր-
կութեանս համար Հօր Աստուծոյ
ընծայեցիր, ինծի ալ աղօթքի ու
զերմեռանդութեան հոգի սուր, որ
աղօթքիս ատենը ամէն բան մոքիս
մէջէն մէկդի ձգեմ, եւ բոլոր միտքս
քեզի վերցընելով՝ մոադրութեամբ
ու սիրով աղօթք ընեմ:

Դուն սրտագէտ Աստուծած, գիտես
սիրոս ու ըրած աղաչանիքներս կը
լսես. քու բարերարութեամբդ գթա
վրաս. սուրբ Հոգւցն շնորհքովը
փարատէ մոքիս մէջ եղած խաւա-
րային Խորհուրդները: Սաստէ, Տէր,
չար սատանային ալ, որ աղօթքիս
ատենը քովս չմօտենայ, ամենազօր
խաչիդ զօրութեամբը հալածուի

Երթայ: Երկինքէն սուրբ հրեշտակ-
ները խրկէ ինծի, որ զքեկ անոնց
հետ միատեղ անուելի ձայնիւ փա-
ռաբանեմ յաւիտեանս. ամէն:

ՎԵՅՏՈՐԳԻ ԿԻՐԱԿԻ

յապստեամ:

Խոնարհեալ անձամբ աշխւ եւ
գողութեամբ առջեղ կիյնամ, ով
Աստուծած իմ. օր մը պիտի գայ, որ
արդար դատաստանիդ առջեւ բո-
վանդակ կենացս մէջ ըրածներուս՝
մէկիկ մէկիկ համար պիտի տամ
քեզի: Մահը գուրս հասեր մօտե-
ցեր է. երբոր դուն արդարութեամբդ
զիս դատելու ըլլաս, պզտիկութենէս
և վեր ըրած չար գործքերս առջիս
դնես, ի՞նչ կըլլայ իմ բանս, Տէր
իմ: Թէ որ արդար հոգիները դա-
տաստանէդ կը գողան կը սարսին, ես
մեղաւոր անձամբ ի՞նչպէս պիտի աչ-
քիդ երեւամ:

Ահաւոր գալստեանդ ատեն երկնք եւ երկիր բոլոր իրար պիտի անցնին. իսկ դռւ, Տէր իմ, պիտի գաս դատաւորական աթոռ նստիս ամէն մարդիկը դատելու համար: Տէրունական սուրբ խաչդ պիտի կանգնես մէջտեղը, անոնք որ քեզի հաւատացին ու քեզի խաչակից եղան աս աշխարհքս, քեզի հետ ալ յաւետեանս պիտի թագաւորեն. ես ան ատեն արդեօք ինչպէս աշու դողու մէջ պիտի գտնուիմ: Ո՛չ Տէր, քանի որ ներողութեան ու շնորհաց աթոռը նստեր ես, քեզի կը դիմեմ. դուն ես իմ արարիչս ու փրկիչս, թող մի տար զիս ան ետքի նեղութեանս ատենը: Յիշէ, Տէր իմ, ան քաշած դառն չարչանքներդ, սուրբ մարմնոյդ ցաւագին վէրքերը, փշէ պսակը, լեղին ու քացախը, եւ փրկագործ խաչդ, որուն վրայ մեռար: Գին եմ արեանդ, գին են ասոնք փրկու-

թեանս, ասոնց անհուն արդեամբը կը խնդրեմ, որ հոգիս յաւիտենական պատժէն փրկես ու սիրելեացդ կարգը դասես, օրհնեալ զաւակներուդ հետ քեզի կանչելով. Եկայտ օբհեալդ Հօր ի՞նչ:

Ո՛վ սուրբ Աստուածածին, մայր փրկութեան եւ ողորմութեան, կաղաչեմ՝ դատաստանին օրը զիս դատելու չնստիս, Աստուծոյ արդարութեան ձեռքը չմատնես. հապա Աստուածորդւոյդ բարեխօս ու միջնորդը լլաս: Գթած տիրամայր, քաշած անտանելի ցաւերդ միտքդ բեր, Յիսուսին հինգ վէրքերուն նայելով՝ վրաս մասնաւոր գութ մը ունեցիր, որ մայրական մէծ իշխանութեամբդ պաշտպան կենաս ինծի ու փրկես. ամէն:

Յարական:

Օկենդանագիր անարատ ծնողի
քո արկանեմք առաջի անխակալ
տէրութեանդ քո. յորժամ գաս
փառք Հօր դատել զթշնամին խաչի
քո. ներեա յանցանաց մերոց բարե-
խօսութեամբ մօր քո եւ կուսի. ա-
ղաչեմք զքեզ, Տէր, պահպանեա զմեզ
ընդ հովանեաւ խաչի քո սուբր:

Յարթու մէջ լնելու աղօթք:

ՈՎ փրկիչ աշխարհի, ճանապարհ,
Ճշմարտութիւն եւ կեանք յաւիտե-
նական, Տէր իմ Յիսուս, աս ողորմելի
կենացս եաքի բոսկէն որ հասնիմ,
թող մի տար զիս անօդնական, ողոր-
մութիւնդ իղմ. մի հեռացըներ:
Գուն ես ապաւէնս ու փրկիչս ան
սարսափելի օրը. քեզի կաղաղակեմ,
ողորմութեան Աստուած, ու առջիդ
կը դնեմ աղաչանքս: Կենացս իրի-

կունը մօտեցեր է, աշուըներուս լցար
շատ չերթար կը մթըննայ կ'անցնի.
դուն ով լցս Ճշմարիտ Քրիստոս,
ծագէ ինծի ան ատեն երեսացդ լցան
ու մեղացս խաւարը փարատէ:

Չանձրացած եմ Տէր իմ աս
տաղոկալի կեանքէս. ինչու որ զքեզ
վշտացընելէն ու յանցանքներս աւ-
ելցընելէն ի զատ ուրիշ բան մը
չունիմ: Այսօր կ'առաջադրեմ, վա-
զը դարձեալ կ'իյնամ. մարմինս հո-
գւսո դէմ կը բաղձայ, աշխարհը ու
սատանան անդադար զիս կը նեղեն.
ո՛չ Տէր, կը կանչեմ կը պաղատիմ
սրտանց. Լաւ էր ինչ Թուանեւ, ուն
շայս կեանս իմ: Միայն արդար դա-
տաստանդ զիս կը գողացընէ, Տէր, եւ
չեմ դիտեր ինչպէս քեզի հետ հաշ-
տուիմ: Ահա բոլոր երկնից սուրբե-
րը, մանաւանդ գթած մայրդ ինծի
բարեխօս կը բռնեմ, որ իրենց ար-
ժանաւոր ինդրուածքովը քու ար-

դար գատաստանիդ ձեռքէն ազատելով՝ զիս' երկնից արքայութիւնն ընդունին, ուր զքեզ յաւիտեանս օրշնեմ. ամէն:

Ճ Ա Գ Կ Ա Զ Ա Ր Դ

Կիրակի:

Այսօր, Տէր իմ, մեծ հանդիսիւ երուսաղէմ մտած ատենդ՝ տեսնելով Երուսաղէմացւոց կուրութիւնը, որ այնչափ հրաշքներ տեսան ու բարի խրատներ լսեցին աստաւածային բերնէդ, սակայն չհաւտացին. սիրտդ շարժեցաւ, լացիր անոր վրայ ըսելով. Ենէ ժիրէր դու քոնէ յաւառը յայսին շետապունիւն +. այս ինքն՝ անկից ետքը երեսդ իրենցմէ պիտի ծածկէիր, ինչու որ չճանչցան իրենց եղած այցելութեան օրերը:

Ո՞վ Տէր իմ, որչափ իմ հոգւցս վրայ ալ լացած ես, որչափ բարի ազգեցութիւններով իմ սրտիս այց-

ելութիւն ըրած ես. եւ քանի անգամ սուրբ Հաղորդութեամբ սիրտս եկեր մտեր ես. բայց ես ապերախտ գտնուելովս ու քեզի արժանաւորական յարգութիւն չընելովս՝ զքեզ վորնտած եմ, չեմ ընդունած. անոր համար զրեաներէն ալ աւելի յանցաւոր գտնուած եմ:

Բայց Փրկիչ իմ գորովագութ, ես հաստատուն կ'առաջադրեմ, որ ասկից ետքը ասանկ անշնորհակալ ու ապերախտ չըլլամ քեզի. ամէն կերպ սիրով կ'ընդունիմ այցելութիւններդ. իմ չար սովորութիւններս կը մերկանամ վրայէս ու ոտքիդ տակը կը տարածեմ, որ գուՏէր, յաղթանակաւ վրայէն անցնիս: Կ'առնում ձեռքս ձիթենւոյ ձիւզեր, եւ այսպիսի փառաւոր հանդիսի օրս տղայոց հետ զքեզ կ'օրհնեմ ու կը փառաւորեմ՝ այնչափ սարդասիրութեանդ համար: Ովանաւ Բարձրելոյն,

օրհնեալ ու դաստ յանուն Տեսուն, իսու-
թառնին յէրկնա, եւ դաստ է բարյունա:
Կ'աղացեմ, Տէր, տուր ինծի յարա-
տեւութեան չնորհք ալ, որ կարող
ըլլամ մոլութիւններուս կատարեալ
յաղթել. ըլլայ որ զքեզ օրհնելու
տեղ՝ քիչ մը ետքը Հրէից պէս կան-
չեմ. Ի իսւ հու պա: Անոր համար
կը խնդրեմ, որ միշտ քեզի հաւա-
տարիմ մնամ:

Յարական:

Ուստի եւ մեք զյաղթական օրհ-
նութեանցն զձայն՝ մատուցանեմք
քեզ թագաւոր փառաց ընդ տղայսն
օրհնարաննելով. բարեբանեալ որ
եկիրդ ի կեցուցանել:

ԱԻՍԳ ԵՐԿՈՒՃԾԲԹԱՒ

Աղօժք առ թիսոս, որ ի մեջ պար-
տիզին:

Յիսուս Քրիստոս բաղձալի փրկիչ
հոգւցս, ան ինչ ցաւադին գիշեր

եղաւ քեզի համար, երբոր յառաջ
քան անդութ թշնամեացդ ձեռքը
մատնուիլլ, գեթսւեմանի պարտիզին
մէջ մտար աղօժելու. հոն բոլոր քա-
շելու չարչարանքներդ մէկիկ մէ-
կիկ աչքիդ առջին բերիր, խաչին
դառն մահը յիշելով՝ անանկ սոս-
կալի մահաբեր տրտմութեան մէջ
ընկղմած մնացիր, որ երեսի վրայ
գետինն ինկած՝ մինչեւ արիւն քըր-
տինք քրտնեցար ու մահուան դուռն
հասածի պէս մեծ տագնապ կրեցիր:

Ո՛չ անմիմիթար Փրկիչ իմ, հի-
մայ կ'իմանամ որ մեղքերուս ծան-
րութիւնը զքեզ վար ձգեր է. ա-
պերախտութիւններս առիթ եղեր
են ան մեծ տրտմութիւնը քեզի
պատճառելու: Ո՛վ ցաւագին Տէր
իմ, զքեզ անօդնական երկրի վրայ
ինկած տեսնելուս՝ սիրտս շատ կը
ցաւի. առաքեալները զքեզ միսիթա-
րելու տեղ՝ մինակ թողուցեր մէկին

քաշուած քնացեր են. թէպէտ եկար զիրենք արթնցուցիր, որ քեզի հետ աղօթք ընեն. բայց միշտ քուն դտար:

Աչա առաքեալներուն պէս ես ալ խիստ անհոգ եմ աղօթքիս. աղօթքէն ամենեւին համ չեմ առնուր. անոր համար աղօթից շնորհք տուր ինծի, որ միշտ սուրբ օրինակիդ հետեւիմ:

Ինչպէս դու Տէր իմ Յիսուս, առ մեծ տրտմութեանդ ատեն ուրիշ բան չըրիր, բայց եթէ աւելի մտադրութեամբ աղօթքի կեցար ու վըշտագին սրտով երկնաւոր Հօրդ դիմեցիր. Հայր, անց յինէն շայ բաժակ. Բայց ու որդէն ես իսպէճ, այլ որդէն դու:

Վ'աղաչեմ, Տէր իմ, տուր ինծի աս շնորհքը, որ մանաւանդ նեղութեանս ատեն աղօթքով քեզի դիմեմ ու ամէն բան սուրբ կամացդ յանձնեմ, ըսելով միշտ, Ո՞ւ որդէն ես

իսպէճ, այլ որդէն դու: թէ հոգեւոր փորձանք ըլլայ եւ թէ մարմնաւոր վիշտ ու ձախորդութիւն, երբոր դուն անանկ կամեցեր ես նէ, կուզեմ ամէնն ալ սիրով տանիլ: Բայց դիտես, սիրելի Փրկիչ իմ, որ նեղութեանդ ատեն հրեշտակը զքեզ զօրացուց ու մսիթարեց. ասանկ ալ դուն զօրացուցիչդ հրեշտակաց, նեղութեանս ատեն զիս թող մի տար, այլ մսիթարիչ սուրբ Հոգին Խրկէնծի, ամէն:

Երգ տեսոն Ներսիսի:

Այսօր անձառ լուսցն ծագումն ի վրկութեան մեր կատարումն. խոնարհի ի վերնատունն՝ ի ստուերական տօնից լրումն. նախ քան զընթրիսն խորհրդոյ՝ սիածաւ զենչակ արկօղն լուսց. եւ ջուր առեալ ծառայաբար՝ զոտս լուանապը զաշակերտացն:

բանին հօր փառաց լուսոյ՝ պետ-
րոս մերձիլ յոտս ոչ ներէր. այնմ
ձեռաց որոյ են գործք՝ երկնից եր-
կինք եւ երկրաւորք. որով կուրաց
աշք բացան՝ խուլք եւ համելք ար-
ձակեցան, որ վերածեաց զինքն ի
ծովէն սաստեաց ալեացն եւ լուցին:

Գլխոյն ընտրեալ հօտին փոքու՝
սաստէր զինորհուրդն՝ ոչ գիտելց.
որով դառնայր եւ հնազանթէր՝
զոտսն եւ զգլուխս մաքրել մաղթէր.
գլխոյս ասէ չէ ինչ պիտոյ՝ լուա-
ցումն ջրոյ զի լուացեալ է. ոտիցդ
պէտք են մաքրութեան՝ յօդիլ ի
գլուխս սրբութեամբ:

Դասուց իւրոց աշակերտաց՝ զոր
նախ բանիւ վարդապետեաց. այսօր
գործով զծայրագոյն՝ եցսց յինքեան
զիսնարհութիւն. սպասաւորեալ հո-
ղեղինաց՝ այն որ անհասն է հրեղի-
նաց. տարեալ պաշտօն իւր ծառայ-
ից՝ այն որ պաշտին ի սրովըէից:

Եթէ տէրս ասէ էից եւ վարդա-
պետս բոլորից. զաշակերտացդ եւ
զծառայից՝ զոտս լուացի ի հնոյ աղ-
տից. միմեանց եւ դուք համարնու-
թեամբ՝ ցուցէք զնոյն խոնարհու-
թիւն. բարձրացելցն ի կործանումն
եւ անկելց բնութեանդ կանգնումն:

Զոր մաքրեցեր յաւաղանին՝ մա-
քուր ձեռօք զոտս նոցին. եւ ուսու-
ցեր խոնարհութեամբ՝ յաղթող լի-
նել չար հպարտին. եւ զիմ լուա-
զտիղմն մեղաց՝ աղաչանօք սրբսց գըն-
դին. եւ զգնացս ուղղեա զոտին՝ խո-
նարհութեամբ ելիւք յերկինս:

ԵՒԾԿ ԵՐԵՎԱՆՑԲԹԻ

Աղօթք չարչարանաց Քրիստոսի:

Կը տեսնեմ զքեզ, ով Տէր Յի-
սուս, իբրեւ չարագործ մը անօրէն-
ներուն ձեռքը մատնուած. աւազակի
մը պէս բռներ են զքեզ, սուրբերով
թուրերով չորս գիդ առեր են, ո-

ըոնց գլուխն ու առաջնորդն եղեր է
Յուղա առաքեալներէդ մէկը, որուն
քիչ մը յառաջ պատուական մար-
միէդ հաղորդած էիր։ Մեծ յաւ-
եղաւ սրաիդ Յուղային ապերախ-
տութիւնը. անոր համար վշտագին
սրտով իրեն ըսիր. Յուղա, համբու-
րէլով հարնես շորդէ հարդոյ։ Ո՛չ
Տէր, շատ անդամ աս խօսքն իմ
հոգւս ալ կ'ըսես, որ քու սեղանէդ
հաղորդուելէս ետքը, կ'ելլեմ Յու-
դայի պէս մեղքերովս քեզի մատնիչ
կ'ըլլամ։

Ետքը կապեցին բարերար ձե-
ռութներդ, որ իբրեւ թէ իրենց բա-
րիք ընես, անխնայ քաշկոտելով
տարին զքեղ դատաւորին առջին հա-
նեցին, առանց յանցանքի մը զքեղ
Ճշմարիտ դատաւորդ անմեղաբար
դատապարտեցին, ու սկսան սիրտ
չդիմանալու չարչարանքներ տալ
քեզի։ Ես եմ Տէր ան մահապարտը,

ինձի կը վայէին ան քաշած չարչա-
րանքներդ. Եւ գուն ինձի գթալով՝
բոլորն ալ վրադ առիր ու մեղացս
համար զոհ եղար։

Արդէն սաստիկ ծեծէն կուսածին
մարմնոյդ վրայ ողջ տեղ չէր մնա-
ցեր, արիւնալից վէրբերդ նաեւ քա-
րերն ալ ի գութ կը շարժէին. բայց
վայ ինձ, Տէ՛ր իմ, բաւական չեղաւ
քարասիրտ դահիճներուն սիրտն ի
ցաւակցութիւն շարժելու։ Զքեղ
Ճշմարիտ թագաւորդ թագաւորաց
սուտ թագաւորի պէս քարի մը վրայ
նստեցուցին, ծիրանոյ տեղ՝ մերկ ու
վէրբով լցուած մարմնոյդ վրայ՝
կարմիր քղամիդ նախատանաց ձգե-
ցին. Թագի տեղ՝ փշերով շինած
պսակ մը անդթաբար սուրբ գլուխոց
դրին. ալքոնական դաւազանի տեղ՝
անարդ եղէդ մը ձեռքդ տուին. Եւ
վինուորներն զքեղ ծաղը ընելով՝
կու դային առջիդ կիյնային, եղէ-

գով գլուխդ կը ծեծէին, ապտակ կը
զարնէին, երեսդ կը թքնէին ու անանկ
բաներ կընէին, որ խեղձութեան
մարդուն սիրտը չէր դիմանար:

Ով համբերով Յիսուս, ով եր-
կայնամիտ Տէր, սիրտս կտոր կտոր
կըլլայ զքեզ ասանկ տեսնելուս:
Իմ հոգւսյս վէրքերը բժշկելու
համար բոլոր մարմնովդ վիրաւորե-
ցար. իմ մեղացս փշերը խլելու
համար փշով պսակուեցար. եւ այն-
շափ նախատանաց ու նեղութիւննե-
րու համբերեցիր, որպէս զի իմ
անձնասիրութիւնս ու հպարտու-
թիւնս կոխես:

Երկիր պագանեմ քեզ ով փշով
պսակուած գլուխ Տեառն իմց Յի-
սուսի, որ երկնից աստղները չէին
արժանի զքեզ պսակելու: Երկիր
պագանեմ քեզ, ով լուսապայծառ
աչք Յիսուսի, որ բոլորովին խաւա-
րեր է ու արիւններ վրայէն կը վա-

զեն: Երկիր պագանեմ քեզ ով հրա-
շալի գէմք Յիսուսի, որ հրեշտակ-
ները տեսնելով չէին յագենար, իմ
սիրոյս համար ապտակեցար, թքով
լցուած անշքացար: Ով գեղեցիկդ
յորդիս մարդկան, ինչպէս ողորմելի
կերպարանք մտեր ես:

Կ'աղաշեմ, ով ցաւագին Փրկիչ
իմ, սուրբ չարչարանացդ արդեամբը
շնորհք տուր ինձի. փշով պսակուե-
լուդ համար՝ մաքէս ամէն չար խոր-
հուրդները մաքրէ ու զօրութիւն
տուր ինձի, որ աս աշխարհիս դառն
ձախորդութիւններուն համբերեմ:
Թքով ու գէշ խօսքերով նախա-
տուելուդ համար՝ զիս պահէ, որ
ուրիշներուն վրայ գէշ չխօսիմ,
չբամբասեմ ու նախատական խօս-
քերուն սիրով տանիմ: Սաստիկ
ձաղանացդ ու կարմիր ծիրանւոյդ
համար աստուածային շնորհքովդ

Հոգւցոս մերկութիւնը ծածկէ. որով
քեզի հաճոյ ըլլամ. ամէն:

Երգ անտոն Ներսիսի:

Ելից զօրէնան Մովսեսի՝ զոր խօ-
սեցաւ ի Սինայի. եկեր զգառն
օրինակի եւ զբաղարջն ընդ եղեգին.
զշինն ի նորս փոխելով, զստուերն
ի լոյս Ճշմարտելով. փոխան գառին
ինքն գոլով, գառն Աստուծոյ նուի-
րելով:

Ընդ բաղարջին հաց անխմօր՝ ետ
զմարմինն իւր զերկնաւոր. զկու-
սածինն անսերմնաւոր, զանապական
եւ զչոգեւոր. ընդ ոչխարին արեան
ուխտին՝ ետ մեզ զարիւն իւր ուխտ
կրկին. եւ եղեգան գառնագունին՝
փոխան զվարս աստուածային:

Թագաւորն արարածոց՝ զհացն
կենաց ետ քաղցելոց. եւ զբաժակն
ուրախարար՝ որբ յԱդամայ արտմե-
ցելոց. այս նոր ուխտ է իմց արեան՝

փոխան հնոյ ուխտին արեան. զոր
յիշատակ իմ առնիցէք՝ մինչեւ եկից
ես միւսանգամ:

Ժողովեալքս ի քէն հայցեմք՝ ընդ
ժողովեալ մետասանին. որ զկենա-
րարդ քո մարմին՝ բաշխեալ ետուր
ընդ բաժակին. շնորհեա եւ մեզ
Տէր ընդ նոսին՝ հաղորդ լինել քում
սեղանին. կենաց հացիդ յոր փա-
փագիմք եւ ըմակելցող ում ծարա-
իմք:

Ի յընտրելոց աշակերտաց՝ Յու-
գաս մեկնեալ ի սուրբ գառանցն.
զբարձող մեղաց զգառն Աստուծոյ՝
մատնէր ի մահ ընդ արծաթոյ. ի
յընթրիմն հոգեւոր՝ մերձի ժպիրհն
եւ նենդաւոր. ուտելով ընդ վար-
դապետն՝ յաճախէ զխարէու թիւն:

Վշան խօսէր աղերսալի՛ խաւարե-
լոյն վասն գարձի. մի ոմն ի ձէնչ
ասէ եղբարի՝ զիս մատնելոց է առ ի
մահ. Պետրոս լուեալ զայն զարհու-

րէր, եւ ակնարկէր առ Յովչաննէս՝
Հարցանել թէ ով իցէ՝ դաւաճա-
նող վարդապետին:

ԱԿԱԳ ՅՈՐԵ-ՔՃԱԲԹԻ

Աղօթք առ Թիսոս, որ բարձեալ
տանի զիաշեալ:

Ո՞րչափ մեծ եղաւ, Տէ՛ր իմ Յի-
սուս, Հրէից ըրած անգթութիւնը,
որ զքեզ անանկ խեղճ կերպարան-
քը խոթելէն ետքը, ամէնը միատեղ
սկսան աղաղակել. Խաչոցի. Խաչոցի:
Ո՞վ աստուածային արդարութիւն,
մէկն ալ չգտնուեցաւ, Փրկիչ իմ,
որ վրադ ի գութ շարժէր: Ո՞վ ան-
մեղ գառն Աստուծոյ, ձեռուըներդ
կապած, գլուխդ փշով պսակուած,
բովանդակ մարմինդ վէրքերով լե-
ցուած, վրադ ուժ չէր մնացեր, ահա
ծանր խաչ մըն ալ բերին ուսիդ
վրայ դրին: Գրկեցիր աս ալ սիրով,
Տէ՛ր իմ ողորմած, մէր մեղաց ծան-

րութիւնն անով վերցուցիր. Եւ
ինչու որ կենաց փայտովն ամենքս
ալ մեռանք մեղք, անանկ ալ խա-
չին փայտովն զմեղ մահուանէ փրս-
կեցիր: Բայց ամեն բանէն աւելի խաչ
եղան քեզի իմ մեղքերս, որ քրիս-
տոնեայ ըլլալովն՝ շատ անգամ չա-
րաչար կիբբերս կատարելու համար՝
Հրեաներէն ալ ապերախտ գտնուե-
ցայ, թող տուի որ դուն չարչա-
րուիս, անոնց պէս պոռացի. Երթայ
խաչուի Յիսուս. Ես իմ կամքս կ'ու-
ղեմ ընել: Ո՞չ ցաւագին Տէ՛ր, ան-
ծանր խաչիդ տակէն մէջ մը ինծի
նայէ, քարացեալ սիրով քու բոր-
քոքեալ սիրովդ շարժէ ու քաշած
սոսկալի ցաւերուդ զիս ալ մասնա-
կից ըրէ:

Խաչով գետինն ինկեր մնացեր
ես, զքեզ վեր վերցընող մը չկայ.
անգութ զինուորները չուաններով
ասդին անդին կը քաշկոտեն, օգնե-

լու տեղ՝ կը զարնեն ու չըսած խօսքելնին չի մնար: Բայց դու ովհ համբերող Յիսուս, յիշելով իմ փրկութիւնս, մեծ սէրդ զքեղ գետնէն վերցուց. Բայց ինչ օգուտ՝ որ նորէն մեծադյն ցաւ մը առջեղ ելաւ: Տեսսար ան բազմութեան մէջ ամենասիրելի Մայրդ, անոր արտասուալից աչուըներուն նայելով՝ լսեցիր սրտիդ մէջ անոր ցաւադին ձայնը: Վախ սիրելի որդեակ իմ Յիսուս, կըսէր սուրբ Աստուածածին. ովհ քաղցրիկ որդեակ, ատ ինչ խեղճ կերպարանք մտեր ես, ինչ գէշութիւն ըսիր դու, որդեակ, որ վրադ խղճացող մը չի դանուիր, զքեղ բռներ մեռցընելու կը տանին. ողըրմէ, որդեակ, խեղճ մօրդ ողըրմէ, խառնէ իմ կեանքս ալքու կենացդ հետ: Աս ցաւդ, Տէր իմ, ամեն քաշածներէդ մեծ եղաւ. բայց աս ալ ինձի համար յանձն առիր, որպէս զի իմ յաւիտենական

դատապարտութեանս վճիռը ջնջես, վերցընես ու երկնաւոր Հայրդ ինձի հետ հաշտեցընես:

Ովհ Մայր ցաւագին սուրբ Աստուածածին, կաղաչեմ, այսօր դուն սրտիս զեղջ ու Ճշմարիտ ցաւ տուր, որ մեղքերուս վրայ լամ ողբամ, որոնցմով պատճառ եղայ ան դառն խան անմեղ Որդւցդ Յիսուսի վրայ դնելու. շնորհք ու համերութիւն պարգեւէ ինձի, որ իմ թեթեւ խաչերս առանց տրանջելու եւ սիրով տանիմ:

Երգ տեառն Ներսիսի:

Խնամով սիրոյն յիւր սիրելեաց՝ զտրտմութիւնն փարատեաց. Թացեալ պատառ այց Յուդայի՝ նշաւակեալ զգողն մատնիչ. զոր առեալ եւ մերկացաւ՝ յաստուածային հոգւոյն շնորհաց. մատնեցաւ նախաչարին՝ ընդ մատնութեան վարդապետին:

‘Օայրագցն լուսոյն զբկեալ՝ խաւարասէրն արտաքս ելեալ. Տէրն յայտնէր լոյս եղելոցն՝ զգայթակղելն ի գիշերի. Պետրոս խօսէր խրախուսելի եւ կշտամբէր հաւախօսի. զիւրն յաշխարհէ զփսիիլն ասէր եւ զգալուստ չոգւցին պատմեր:

Կերբրոնեան յայնկցս ձորդյն՝ ի վերնատունն ել խորհրդոցն. եմուտ պարտէղ ընդ պարտիզի, եմցծ զԱղդամ յԱգին գրախտին. մուծցես եւ զմեղ Տէր ընդ նմին՝ ուստի հաներ նախ զառաջինն. զի ժառանգել զՀայրենին՝ արժանասցուք մէք վերըստին:

Հոգայր զկրիցն տրտմաբար՝ երիքն եղեալ առանձնաբար. փրկել զաշխարհս հոգիս յօժար, բայց է բնութիւն մարմնոյս տկար. ոչ ոմն ուժեղ եւ զօրաւոր, եւ ոմն անզօր վտանգաւոր. այլ մի եւ նոյն գոլ միաւոր՝ կրէր զկիրսն կամաւոր:

Չայնիւ մաղթէր աղօթական՝ վասն իմ առ Հայր իւր էական. ծունը գնէր խոնարհական, որում կրկնի ծունը ամենայն. Եթէ փրկիլ մարդկան հնար է առանց մահու իմ որդրեալ է, բաժակ մահուս յինէն անցցէ, ոչ իմ կամաւայլ քցու եսցէ:

Ղօղեալ յերկիւղ քրտանցն հոսման՝ ոլոռնաձեւ կայլակ վիճման. ի զօրանալ հրեշտակ մերձեալ՝ զօրինական գիլն լցեալ. զի կատարեալ էառ զընութիւն՝ Աստուածն Բան զմարդկութեան. պարտ էր զերկիւղ եւ զտրտմաւթիւն՝ յիւրումն կրել անօրէնութիւն:

ԱԽԵԳ ՀԻՆԳՃՐԵԹԻ

Ի յիշատակ ոտնուայի եռ սրբոյ հաղորդութեան:

ԱՅնչափ մեծ եղաւ սէրդ, Տէր իմ եւ փրկիչ իմ Յիսուս, որ ետքի

իրիկունն առաքեալներէդ բաժնուելու ատեն՝ սիրտդ լեցուած սկսար զերենք միսիթարել, եւ անձառելի խոնարհութեամբդ ուզեցիր ոտուընին լուանալ, որ դրսի մաքրութեամբը հոգւցն աղտեղութիւնը մաքրես ու իրենց խոնարհութեան օրինակ տաս: Ո՛վ անհասանելի խոնարհութիւն Յիսուսիդ. երկինքը սերովեներն ու քերովեները քեզի կը սպասաւորէին. այսօր վերնատունը խոնարհեալ առաքելոց ոտքը լուացիր: Կ'աղաչեմ քեզի, գթած Տէր, որ առաքելոց բարեխօսութեամբն այսօր իմ մեղքերուս աղտեղութիւնը լուաս, եւ խոնարհութեան շնորհք ալ տաս, որ հպարտութեանս յաղթեմ ու քեզի նմանող ըլլամ:

Բայց աւելի մեծ ու անհուն սէր ցուցուցիր, Տէր իմ եւ Աստուած Յիսուս, եւ անպատմելի շնորհք ու

սքանչելիք, որ բոլոր երկնայինք զարմացան մնացին: Ո՛վ մարդասէր Յիսուս, չմոռցուելու յիշատակ մը թողուցիր մեզի, որպէս զի միշտ մեզի հետ ըլլաս ու յաւիտեան մեզմէ չբաժնուիս. քու անմահարար մարմինդ մեր հոգւցն կերակուր ըսիր, եւ աս ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդը հաստատելով՝ այսօր քու աստուածային ձեռքովդ առաքեալներուն բաշխեցիր: Ասկից մեծ ինչ բան կրնայիր ընել մեզի, ով քաղցր Յիսուս, քեզմէ աւելի ինչ կրնայիր մեզի պարգեւել:

Գիտեմ, Փրկիչ իմ, որ շատ անգամ իմ սիրտս եկած ես. բայց ես զքեզ արժանաւորապէս չեմ ընդունած: Հիմայ կը պաղատիմ քեզի, Տէր իմ, որ այսօր իմ սրտիս վերնատունը շնորհքներովդ մաքրես ու զարդարես, եւ զիս անարժանս ալ սուրբ առաքելոց հետ քու սեղանիդ հա-

զորդ ընես: Տուր ինծի ան հրեշտակային կենաց հացը, որուն սրտանց կը փափագիմ. խմբուր ծարուած հոգւոյս անմահարար փրկութեան բաժակը, որ քու սիրովդ զմայլիմ: Տպաւորէ սրտիս մէջ քու վշտագին չարչարանացդ յիշատակը, որ աս սուրբ Խորհրդեան մէջ մէզ մէզ յիշելիք թողուցիր: Թողլ մի տար, Տէր, որ զքեզ սրտիս մէջ ընդունելէն ետք՝ սատանան իր չար հնարքներովը զիս մեղք խոթէ ու Յուդային պէս զքեզ իմ Փրկիչս մեղքը վաճառել տայ: Ո՛վ սրբութիւն սրբոց, զքեզ բոլոր երկինք չեն կրնար տանիլ, հրեշտակները կը սարսափին, սակայն եւ այնպէս արժանի ըրիր զիս ասանկ մեծագոյն պարզեւի. խոնարհութեամբ եկուր, Տէր իմ, սրտիս վերնատունը բազմէ, երկնաւոր Հայրդալ հետդ բեր, որ միշտ սրտիս մէջ բնակիք, եւ ես ալ ի ձեզ բնակե-

լով շնորհօք՝ յաւիտեանս յաւիտենից ձեզի հետ միանամ. ամէն:

Երգ Ցեառն Կերսիսի:

Ճառագայթ փառաց էին՝ որ ըստ բնութեանս մարդկային, տագնապեցար ի գիշերին՝ աղօթելով առ Հայր յերկինս. ծագեա ի մեզ զլցագ երկնային եւ փարատեա զերկիւղ չարին. մասունք հոգւոց մեր եւ մարմին՝ յերկիւղ քո սուրբ բեւեռեսցին:

Մերձեալ Յուդաս՝ որ մատնելոց, հանդերձ դասուն Փարիսեցւոց. անկան նման ստորանկելոց՝ որբ յաւիտեան չեն կանդնելոց. Յուդաս նենդաւ համբուրելով՝ առիթ մահունշան տալով. փոխան սիրոյ զնա մատնելով՝ չար ընդ բարւոց վճարելով:

Յայնժամ առ գութ սիրոյն Պետրոս՝ զջառային անուն Մաղքոս. եւ հատ սուսերբ զականցն աջը՝ որ ոչ լուաւ Տեառն իւրոյ. իսկ Տէրն մեր

արագապէս՝ յունկն մերձեալ բժըշ-
կապէս, առողջացցց աստուածապէս՝
զր ոչ տեսին կուրացն հանդէս:

Նոր հօտին փոքու ցրուեալ՝ քան-
զի զհօվիւն քաջ հարեալ. զետրոս
միայն ըզհետ երթեալ՝ ի յաղջկանէ
վիմին շարժեալ. նշանակեալ հաւն
խօսէր՝ առ ի զետրոս Տէրն ակնար-
կէր. զբանն յիշէր դառն արտա-
սուէր՝ ի գլորմանէն դարձեալ կանդ-
նէր:

Ծնորհեալ վիմին եկեղեցւոյ՝ զօր
պահեցեր ի հօսելոյ, եւ կանդնեցեր
ի գլորելոյ՝ վասըն սրտիւն արտա-
սուելոյ. կանդնեա եւ զիս Տէր ընդ
նմին՝ ի գլորմանէ սայթաքողին. տա-
լով աչաց յորդ արտասուս եւ ջուր
նման ծովու գլխոյս:

Ո՛վ կամաւ զանկապելին՝ կապեալ
զձեռսն արձակողին. ի յապարան-
սըն տանէին՝ Կայիափայ եւ Աննային.
ծառայն զերեսն այն ապտակէր՝ յորմէ

սրովըէն թեւասքօղէր. թուք արձա-
կեալ պիղծ բերանով՝ յայն որ կու-
րին լոյս ծագեաց թքովն:

ՄԻԵԳ ՈՒՐՅԱՅԹ.

Աղօթք առ խաչելեազն Քրիստոս :

Հայր երկնաւոր, նայէ երկինքէն
հաշտ ակամի աս սուրբ պատարա-
գին, որ Միածին Որդիիդ դառն խաչին
վրայ կը մատուցանէ քեզի իմ մեղացս
համար: Անցուր վրայէս արդար բար-
կութիւնդ՝ անոր խեղճութեան վրայ
գթալով: Տես, գորովագութ Հայր,
միրելի Որդւոյդ պատմուծանն ա-
րիւններու մէջ թաթխուած, տես
մէկհատիկ Որդիիդ խաչին վրայ բար-
ձրացեր, ձեռուըներէն ոտուըներէն
դամուերէ. անոր սուրբ արեան ձայնն
առ քեզ կ'աղաղակէ ու մեղքե-
րուս թողութիւն կը խնդրէ. Հայր,
նոռ դոցոյս: Ո՛վ Հայր իմ, թող աս
մեղաւոր հոգւոյն յանցանքները. ես

անոր տեղն այնչափ չարչարանք քաշեցի, խաչին վրայ գամուեցայ ու բոլոր արիւնս թափեցի անոր փրկութեան համար. Հայր, Առև Դույո:

Ասինչ գթած սիրտ է, խաչելեալ Տէր իմ Յիսուս, որ ան սաստիկ ցաւերուդ մէջ զիս կը հոգաս: Ո՛վ քաղցր Փրկիչ իմ, խաչին վրայ մերկ ողորմելի կախուեր ես, թշնամիներդ չորս գիդ առեր են: Աիրելի Մօրմէդ ուրիշ միսիթարանք մը չունիս. բայց ինչ օգուտ, որ ան ալ խաչիդ տակ կեցեր կու լսյ: Ծարաւի եմ կը կանչես խաչէն. լեզւով խառնած քացախ կու տան բերանդ: Երկնաւոր Հօրդ կ'աղաղակես. Ասուսած էմ, Ասուսած էմ, ընդէւր նոռէր ուն. ան ալ ձայնդ չի լսեր: Վա՛խ ցաւագին Փրկիչ իմ Յիսուս, երկնի եւ երկրի մէջ չորս գամէն կախուեր կեցեր ես. եւ գթացող սիրտ մը չխտնուիր: Քարերը կը պատուաին, արեգակը

լցուը կը գոցէ, լուսինը կը խաւարի ու երկիրն ի հիմանց կը շարժի. միայն իմ քարացեալ սիրտս ասանկ անդեղը մնացեր է. ես եմ ան ապառաժ սիրտն՝ որ կը տեսնեմ զքեղ մեղացս համար արեան մէջ թաթիւած, եւ գոնէ քեզի ցաւակից չեմ ըլլար:

Ահա հիմայ խաչիդ պլուած՝ կու լամ կը կանչեմ. ո՛վ վասն իմ խաչեցեալ Փրկիչ, առ աս աչուըներուս թափած աբցունքը, որուն քու սիրտդ ծարաւի է. եւ այսօր սրտիս ճշմարիտ զեղջը տեսնելդ՝ անտանելի ցաւերուդ փափր միսիթարանք ըլլայ: Ո՛վ ցաւագին Տէր, տուրինձի ետքի օրհնութիւնդ. Հինգ սուրբ վէլքերէդ վազցուր վրաս երկնային շնորհքներ ու ողորմութիւն. բայց վայ ինձ, Յիսուս իմ, գուն դլուխդ փար ծոեր մեռեր ես: Ո՛վ մեռեալ Աստուած իմ Յի-

սուս, աչա օր թողութեան, աչա
ողորմութեան աթոռ. քու բազ-
կատարած բազուկդ կը դիմեմ ու
վիրաւորեալ սրտիդ մէջ կ'ապաւ-
ինիմ: Մի բաժներ զիս սրտիդ մէ-
ջէն, Տէր, որ խաչին վրայ թափած
անդին արեամբդ փրկեցիր:

Ո՛վ փայտ փրկութեան, ինչպէս
սիրոս կը ճմիես. քու անբարբառ
ձայնդ սրտիս ներսի դին կը թափ-
անցէ: Քեզմէ կը բաշխի ու կը տա-
րածուի ամէն քրիստոնէից շնորհք,
համբերութիւն, քաջալերութիւն,
միսիթարութիւն, սէր ու սրբութիւն.
անոր համար սրտանց քեզի կը փաթ-
թուիմ, քու վրադ Յիսուսին քաշած
չարչարանքները թող սիրոս տպաւո-
րին, որ Յիսուսի հետ խաչին վրայ
ապրիմ ու մոռնիմ. ամէն:

Երգ ջեառն ներսիսի:

Զար կապանաց մարդկան լուծիչ,
որ կապեցար ընդ կապելոյն. զիս
արձակեա յինքնակապէն՝ մեղաց
կապից դժոխայնոյն. որ ընդ մեղք
պարտաւորին՝ կացեր անմեղդ ի
յատենին. յորժամ փառօք գաս
հայրենին՝ մի գատեսցես զիս ընդ
նմին:

Պատկառանօք հինն Ադամն՝ որ
ձալեցար վասն նորա. Ծնծեա զամօթ
մեղաց լրբին՝ որով զերեսս իմ ծած-
կեցին. որ ներեցեր չար ծառային՝
ածեալ ձեռօք քեզ ապտակին. հար
ուժգնակի զգէմն չարին, որպէս եւ
զիս եհար ուժգին:

Զահն լուսոյ յառաւօտին՝ ի
յուրբաթու հնոյ զատկին. կայր
առաջի դատաւորին, ծառայն նստէր
ի յատենին. ի հարցանել զիզատոսի
Տէրն ոչ առնէր պատասխանի. զի

Կանխասաց գիրն լցցի, եղէ ես մարդ,
որ ոչ խօսի:

Ուսմկական դասք զինուորաց՝ ար-
կին հանդերձ նախատանաց, այնմ
որպ զգեստն է լցոս փառաց՝ իբրեւ
զօթոց զինքեամբ արկած. ի ծունք
իշեալ կատակէին, զգլուին եղե-
գամբ հարկանէին, պսակ ի փշոց
բոլորէին՝ զփուշ մեղացն բարձողն:

Սոսկալին սերովըէից՝ բառնոցը
ինքեամբ զփայտ խաչին. մինչ ի
տեղի գողգոթացին՝ յորում եղեալ
մարդն առաջին. ետուն ըմպել գինի
զմռսեալ եւ կերակուր լեղեաւ
խառնեալ. որով զպտղոյն դառն
ճաշակ փոխեաց մեղ քաղցր եւ
ախորժակ:

Վերնականքն զարհուրեալ՝ տեսին
զՏէրն մերկացեալ. եւ զհանդերձն
բաժանեալ՝ պատմուճանին վիճակ
արկեալ. զձեռն եւ զտոսն ծա-
կեցին՝ ըստ յայտնապէս դաւթեան

ձայնին. ընդ փայտ խաչին բեւեռե-
ցին՝ զմատունսն որ գրեաց ի տախ-
տակին:

ԱԽԵԳ ՃԱԲԵՐՁ.

ի պատին թաղման ծետոն:

Առարբ Աստուածածին, ինչ տըստ-
մագին օր եղաւ այսօր քեզի համար,
որ մէկհատիկ սիրելի Որդիկ աչքիդ
առջին խիստ տանջանքներով մեռած
տեսնելէդ ետքը՝ խաչին իշեցուցին,
զիրկդ տուին: Ով մայր ցաւագին,
ինչ սոսկալի ցաւ զգաց գթած
սիրտդ, երբոր տեսար միակ Որդւցդ
գլուխը փշերով ծածկուած, աչուը-
ները մթնցած, բերանը դոց, ձե-
ռուըները ոտուըները պատուած,
եւ բովանդակ մարմնոյն վրայ ողջ տեղ
մը չէ մնացեր: Ողբալով ասանկ կը
կանչէիր. Վայ ինձ խեղճ մօրս, քաղ-
ցրիկ որդեակ, վայ ինձ. ով անմեղ
որդեակ, քու մարդասիրութիւնդ

զքեղ ուր հասցուց, մարդիկներուն
այնչափ բարկը ընելուդ համար՝
զքեղ անողորմաբար խաչին վրայ
մեցուցին: Ո՛վ որդեակ, ուսկից գլուշ
նեմ մէյ մ'ալ քեզի նման, առանց
քեզի ինչպէս ապրիմ, ինչով սիրտս
մփիթարեմ:

Բայց ես, ով Մայր վշտագին, քու
ոտքդ ինկած՝ կաղաչեմ, թող տուր,
Տիրամայր, թող տուր, որ ես լամ
ողբամ իմ մեռեալ Փրկչս վրայ, որ
ես պատճառ եղայ անոր մահուանը.
իմ մեղքերս զինքն աս խեղջութեան
ըերին: Այսօրուան ցաւերուդ ու սի-
րելի Արդւցդ քաշած չարչարանաց
համար ողորմէ ինձի. գին եմ Յիսու-
սի պատօւական արեան, անոր հա-
մար իբրեւ քու որդւցդ գթա իմ
վրաս ու մասնակից ըրէ զիս ցաւե-
րուդ: Մանաւամնդ ան ետքի քաշած
ցաւիդ, երբոր մեռեալ սիրելի Արդիդ
գրկէդ առին ու գերեզմանը դրին:

Ո՛չ մեռեալ Փրկիչ իմ, սուրբ
գերեզմանիդ վրայ ինկած՝ ցաւագին
Մօրդ հետ կ'ուզեմ ողբալ: Ո՛վ ան-
մահութեան պարգեւատու Տէր, ով
արեգակդ արդարութեան, այսօր մե-
ռեալ գերեզմանի մէջ թաղուեր
ես. եւ ճառագայթդ փառաց չօր՝
երկրի մէջ ծածկուեր ես. ով ճշմարիտ
ցնծութիւնդ երկնից, այսօր արարածք
տրամութեամբ վրադ արցունք կը
թափին:

Ո՛վ մեռեալ Աստուած իմ Յի-
սուս Քրիստոս, աս օրս է օր թողու-
թեան եւ գթութեան, մի զրկեր վիս
քու շնորհքէդ: Այս Յիսուս իմ,
բոլոր մարմնացդ վէրբերէն ողորմու-
թեան աղքիւրներ կը վազեն. մա-
նաւանդ վիրաւորուած սիրտդ գթու-
թիւն գթութիւն կ'աղաղակէ: Գուն
փրկագործութեամնդ անհուն ար-
դիւնքը հոգւցյս պարգեւէ, որ ա-
նով քեզի յաւիտեան հաճոյ ըլլամ:

Երգ տեսառն ներսիսի:

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց՝
ոսք ընդ ոտից ընթանալեաց. փայտ
ընդ փայտի դառն պտղոյ՝ կեանք ընդ
մահու փոխարկելով. ի մէջ երկուց
անօրինաց՝ կայր մերկացեալ տուողն
օրինաց. զոր ոչ տեսին աչքն կու-
րաց՝ բաց ի միջն աւազակաց:

Իսպէից արեգականն՝ զտիւն արար
գիշերամման. զստուերն քող արկ
մերկութեանն՝ զի մի տեսցէ ակն
անսարժան. ի միջօրեայն նսեմացաւ.
յորժամ Ագամ մեղօք մեռաւ. ի
յիններորդն ի լոյս դարձաւ՝ յորժամ
մահուամք մահն լուծաւ:

Ցօղէր արտօսր ցաւագին՝ Մայր
Տեառն որ կայր մերձ առ խաչին.
յորժամ լսէր զծարաւին՝ բար-
բառելց իւր Միածնին. ետուն քա-
ցախ խառնեալ լեզն այնմ որ բըղ-
խեաց գետ յԱգենի. եւ ի վիմէն

վտակ բարի՝ արբոցց տսհմին դառ-

նացողի:

Իիւծեալ յերրորդ ժամու օձին՝
զմիտս նախնուոյ մօրն Եւայի. ի վեցն
անկեալ մարդն առաջին՝ հաւանական
բանիւ նորին. ի սղն ժամու Տէրն ի
խաչին զի քաւեսցէ զմեղս նոցին.
եւ յորժամ ել Ագամն հին՝ եդ
զաւազակն ի մէջ դրախտին:

Փարելի բարբառ ընդ իմ էլի էլի
առ Հայր գոչէր զշոգին կամաւ. Հօր
աւանդէր՝ զշոգիս մարդկան նցն
ընծայէր. երկիր հիմամիք սասանեցաւ
եւ վարագոյն ընդ մէջ հերձաւ.
վէք ի յինքեանց պատառեցան եւ
գերեզմանք մահու բացան:

Քարոզի ի սքանչելեաց՝ Աստուած
մարմնով վասն իմ խաչեալ. մերով
բնութեամբս մեռանի՝ Աստուած ան-
մահ խոստովանի. կրկնավտակ կողին
աղբերբք՝ եկեղեցի իւր հաստատի.

ջրովի մաքրի, զարիւնն ըմպէ, զՈրդի
ընդ Հօր փառաւորէ:

Ի Տ Օ Կ Ի Զ Ա Տ Կ Ի Ն

Առաջին օր:

Փառք հրաշալի յարութեան քո,
Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ քու
ամենակարող զօրութեամբդ գե-
րեզմանին արդելքը մէկդի ընելով՝
աստուածային ձրիւք զարդարուած
ու փառաւորեալ մարմնով յարու-
թիւն առիր. Եւ յաղթական մա-
հուամբդ զմեղ յաւիտենական մա-
հուընէ ազատեցիր: Ո՛վ մարդասէր
Փրկիչ իմ, ծագէ մտքիս մէջ սուրբ
յարութեանդ լցուը. մեղօք մեռած
հոգւոյս՝ որ իր շար սովորութիւն-
ներուն տակը թաղուած է, դուն
այսօր յարութիւն պարզեւէ. մեղաց
դիշերուան միժութիւնը որ չորս դիս
պաշարեր է, դուն փարատէ ու լու-
սաւորէ:

Կւղաբեր սուրբ կանանց հետ
կենսատու գերեզմանդ կը գիմեմ,
եւ անուշահոտ խունկի տեղ՝ իմ
անարժան աղօթքս քեզի կը մատու-
ցանեմ: Մազդաղենացւոյն պէս բաղ-
ձալի Փրկիչը լալով կը մինտոեմ:
Բարձին նշէրն էմ է գերեզմանէ ասորէ, Ե-
՞ւ գերեզմ ա՞ր երին զնո՞ւ: Ակա Տէր,
քանի որ չէի մեղանչեր, զքեզ սըս-
տիս գերեզմանին մէջ ունեիր. երբոր
ապերախտութեամբ քեզի դէմ մե-
ղանչեցի, գուն ալ զիս սրբարար
շնորհքէր զըկելով՝ սրտիս մէջէն
շեռացար դացիր:

Աս սուրբ Զատկին օրը կը բաղ-
ձամ սուրբ Հաղորդութեամբ զքեզ
նորէն սիրտս բերել ու սուրբ յա-
րութեանդ պտուղը վայելել. բայց
կ'աղաչեմ, Տէր, իմ անարժանու-
թեանն համար զիս չզրկես՝ ըսելով.
Մէ՛ Գրիշէնար յէս: Նայէ գթութեամբդ
սրտիս փափաքին, եռանդ ու շնորհք

տուր ինծի. հալածէ հոգւցս թշնամիները: Թէեւ սրտիս դռները գոց ըլլան, դուն աստուածային զօրութեամբդ վանէ ամէն արգելքը. ինչպէս որ դռները գոց վերնատունը մտար, ուր առաքեալները ժողվածէն եւ ըսէ հոգւցս. Խաղաղութէն ընդ ուշ:

Յարական:

Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր. քեզ աւետիք խնդութեան, հարան ի յերկրէ եկեղեցի. օրհնեա ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիրիս: Այսօր զատիկ մեր զենմամբ քրիստոսի. արացուք տօն ցնծութեամբ, նորոգեալք ի հնութենէ մեղաց ասելով. քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Երկրորդ օր:

Քարեգութ Փրկիչ իմ, երբոր թաղուեցար նոր գերեզմանին մէջ,

Հոգիդ իջաւ լիմպոսը՝ արդար հոգիներն ան մութքանտէն ազատելու համար: Եւ ետքը այնչափ անթիւ սուրբ նահապետները քեզի հետ մէկտեղ բերելով՝ եկար դարձեալ գերեզմանը, եւ անոր կնիքն ու քարերը խորտակելով՝ աստուածապէս յարութիւն առիր: Կ'ուրախանամ ես ալ քանի որ աս փառաւոր յարութեան յիշատակը միտքս կը բերեմ. ինչպէս որ կը սորվեցընէ ինծի սուրբ կաթուղիկէ եկեղեցին: Ո՛չչափ մէծ հանդէս եր տեսնել այնչափ երանելի նահապետներուն ու մարդարէներուն հոգիները, որոնց մէջ դուն ալ քու փառաւորեալ մարմնովի արեգակի պէս կը փայլէիր, որուն մարմնաւոր աչուլներ չեն դիմանար:

Ե՛րբ պիտի ըլլայ, Տէ՛լ, որ զքեզ փառաւորեալ տեսնեմ, ու հրեշտակներուն հետ մէկտեղ փառաբանեմ: Ե՛րբ պիտի կարող ըլլամ ես ալ

ան երջանիկ դասին մեջ գտնուիլ,
ուր որ են նահապետներն ու մար-
դարէները եւ երկնից ամէն սուր-
բերը, բողը հրեշտակաց ու հրեշ-
տակապետաց գունդերը, եւ անոնց
ձայնակից ըլլալ: Ե՞րբ պիտի գայ ան
ատենը, որ զքեղ մեր մարմնովը
փառաւորեալ պայծառացեալ տես-
նելու արժանի պիտի ըլլամ: Բայց
քանի որ զըկուած եմ, Տէր, երջանիկ
արքայութենէդ, գոնէ ինձի շնորհք
տուր, որ քաղցրանայ հոգւցս զքեղ
փառաբանելը, յիշելով փառաւոր
տնօրէնութիւններդ եւ մանաւանդ
սուրբ յարութեանդ յիշատակը: Ե-
րանի թէ ամէն աշխարհք ու ամէն
ազգեր անդադար զքեղ փառաբա-
նէն: ինչու որ քեզի կը վայլէ փառք
եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Այլ աղօթք վասն մեռելոց:

Տէր իմ Յիսուս Քրիստոս, այն-
չափ անսահման է արեանդ գինը, որ
չէ թէ միայն կենդանի եղողներուն
մեղքերը կը ջնջէ, հապանաեւ մեռ-
նողներուն մեղաց պատիժներն ալ
կը քաւէ: Դուն մեղի խրատ տուիր,
որ մեր ոստիին հետ հաշտուելու
նայինք ու մեր պարաքը վճարենք,
քանի որ ճամբան ենք. ըլլայ թէ
դատաւորին ձեռքը մատնուինք ու
բանտ դրուինք, ուսկից դժուար է
աղատիլը: Բայց շատերն աստուա-
ծային արդարութեան ունեցած
պարաքը չվճարելով մեռած են. Հի-
մա մենք կենդանիքս կ'աղաւենք, որ
ան հոգիներուն պատիժը թեթեւ-
ցընես: Կաթեցուր անոնց վրայ պա-
տուական արեանդ մէկ կաթիլը՝ որ
բաւական է իրենց մեղքերն ու պա-
տիժը քաւելու:

Մանաւանդ սուրբ պատարագին
նուերը, զըր քահանան կը մատու-
ցանէ անոնց հոգւղյն համար, մաս-
նաւորապէս յիշեցընէ ան հոգիները,
որոնք երկայն ատեն մեծ տանջանաց
մէջ են. իրենց մեղաց թողութիւն ու
ազատութիւն շնորհէ: Տէր իմ բաղ-
մագութ, քու արեանդ գինն է մեր
ննիցեցելոց հոգիները, քու արեանդ
գինը մի գատապարտեր. ձեռացդ
ստեղծուածներն են, քու ստեղ-
ծուածդ երեսէ մի ձգեր: Ողորմէ ին-
ձի ալ ու թողութիւն տուր իմ մե-
ղացս. որպէս զի գատաստանին օրն
ազատիմ ան սոսկալի տանջանքներէն:

Հարական:

Իանդ Աստուած երեւեալ մար-
մավ յերկրի քահանայապետ ճըշ-
մարիտ. որ ի վերայ խաչին պատա-
րագեալ բարձօղ մեղաց գառն ան-
արատ. աղաւեմք զքեզ յիշեալ զհո-

գիս ննիցեցելոց մերոց եւ հանգո ի
քում արքայութեան:

Երրորդ օր:

Ո՛վ բարեգութ Տէր եւ Փրկիչ,
հազար շնորհակալութիւն կը մա-
տուցանեմ անսահման գթութեանդ,
որ զիս գառն չարչարանքներովդ ու
մահուամբդ փրկեցիր չար թշնա-
մոյն ձեռքէն: Երբոր Տէր իմ, խաչին
վրայ մեռար, ամէն արարածք տրու-
մութեամբ զքեզ կողբային. իսկ
սուրբ յարութեանդ աւետիքը լսե-
լով՝ նոր ուրախութեամբ միհմա-
րուեցան:

Լուսապայծառ յրեշտակները
սուրբ գերեզմանիդ չորս գին բոլո-
րած ցնծութեամբ կը կանչեն. Զե-
տոր, այլ յարեւան: Երջանիկ կոյս Աս-
տուածամպրն անպատմելի իննդու-
թեամբ սիրտը լցուած՝ զքեզ յա-
րուցեալ միածին Որդիդ կը բարեւէ

գոչելով. Զարդեն + էաւուտ իմ. շարդեն + սաղմուն + և օրհնութեամբ: Առուրբ աւոաքեալներն ու իւղաբեր կանայք բոլոր աշխարհքիս աւետիս կու տան. Թէ արդարէւ յարեւու Տէր: Ո՛՛ Տէր, իմ հոգիս ալ սուրբ յարութեանդ կը փափաքի ու ցանկալի տեսոյդ մեծ կարօտ ունի. ասանկ շնորհաց օր մը իմ աղաչանքս ալ լսէ:

Լիս ճշմարիտ Քրիստոս, ծագէ այսօր սրտիս մէջ հրաշափառ յարութեանդ լցուր. մի զըկեր սիրող հոգիս մեծամեծ պարգեւներէդ, որ յարութենէդ ետքը շատերուն բաշխեցիր: Աւելցուր հաւատքս, հաստատէ յշաս ու բորբոքէ սրտիս մէջ ճշմարիտ սէրդ, որ տուած երանութեանդ արժանի ըլլամ: Ցուցուր հոգւցս ան սուրբ վէրքերդ, որ ամէն մէկն արբայութեան մէջ արեգակի պէս կը փայլին, որ մեծ փափագով առանց կշտանալու պագնեմ

ու անոնցմով զմայլիմ: Բաց, Տէր, հոգւցոյս աչու ըները, որ զքեզ բարերար փրկիչս Ճանչնամ եւ արժանապէս օրհնեմ ու գովիմ. ամէն:

Յարական:

Այսօր հրեշտակը ի բարձունս ուրախանան ընդ մարդկան. որք իշեալ ի յերկնից տան աւետիս աշխարհի. ցնծացէք այսօր Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Ի ՏՕՆԻ ԱԽԵՏՄԱՆ

Ով ամենասուրբ Մարիամ, ով ամենախսնարհ կրյս, մեծագոյն սրբութեանդ ու մաքրութեանդ համար այնչափ հաճոյ եղար Աստուծոյ առջեւ, որ մինչեւ զքեզ իրեն Մայր ընտրեց ու բոլոր երկնի եւ երկրի թագուհի ըրաւ: Մեծապէս կ'ուրախանամ, սուրբ Աստուածածին, տեսնելով զքեզ այսօր աստուածամայ-

բութեան գերադոյն շնորհքին արժանի եղած. որ միածին Որդին Աստուծոյ երկինքը թողուցեր ու անապական արգանդիդ մէջ քու արիւնէդ իրեն մարմին առեր, մարդ եղեր է ինծի համար: Հոդին սուրբ բոլորվին վրադ ինչաւ ու անոր շնորհքը քեզի հովանի եղաւ: Հայրն երկնաւոր զքեզ իրեն սիրելի դուստր ընտրեց. իսկ Որդին Աստուծոյ բովանդակ ի քեզ ու քուկդ եղաւ:

Խոնարհութեամբ առջիդ ինկած կողըունեմ զքեզ գարիել հրեշտակապետին հետ: Ողջնն ընդ քեզ Կ'յս Մարիամ՝ լի շնորհօք: Ո՛վ Մայր Աստուծոյ, որչափ որ անարժան ըւլամ շնորհքիդ, ասանկ ուրախալի օր մը զիս մի մերժեր ողորմութենէդ: Կ'յս գթած, մարմնաւոր իշխաններն իրենց իշխանութեան հասած օրերնին՝ բանտի մէջ եղողները կ'արձակեն, մահապարտներուն կը ներեն.

իսկ դուն հզօր Թագուհի երկնից եւ հրեշտակաց, աստուածամայրութեան շնորհաց աթուը նստած՝ պիտի չողորմին ինծի: Զարաշար մեղքերովս սատանային գերի ինկայ ու Աստուծոյ արդար վճռովին ի մահդատապարտուեցայ. դուն պյոր աստուածամայրութեան իշխանութեամբդ երկրնցուր վրաս ողորմած ձեռքդ. եւ ազատելով զիս գերութենէ՝ ընդունէ քեզի մշտնջենաւոր ու հաւատարիմ ծառայ: Ո՛վ Կ'յս լի շնորհօք, լեցուր սիրտս պէսպէս շնորհքներով. ինչու որ չէ թէ միայն իմ կորսնցուցած շնորհքս դուն դտար, հապանոյն իսկ բովանդակ շնորհաց Տէրն ու գանձը քու քովդէ:

Ուրախ լեր, Կ'յս անարատ, որ բոլը ստեղծուածներու մէջ դուն միայն Մայր Աստուծոյ ընտրեցար: Ուրախ լեր, սուրբ Աստուածածին, որ պյոր Որդին Աստուծոյ երկինքն վար

ինջաւ ու քու մաքուր արգանդիկ
մէջ բնակեցաւ: Ուրախ լեր, երջանիկ
Մարիամ, որ ամենասուրբ Երրոր-
դութիւնն զքեղ անանկ գերազանց
շնորհքներով զարդարեց, որ սերով-
րէներն ու քերովքէներն իսկ երանի
կու տան քեզի: Ուրախ լեր, բեր-
կրեալ կշո Մարիամ, որ իբրեւ ա-
ռաւօտ պայծառ ծագեցար երկիրս,
եւ գիշերուան տրտմութեան խաւարը
փարատելով՝ ամենուն սիրտն ուրա-
խութեամբ լեցուցիր. անոր համար
օրհնեալ ես դույաւիտեանս, ամէն:

Յարսկան:

Կորհուրդն անձառ ծածկեալն
յազդաց եւ յաւիտեանց. յայտնեցաւ
իշմամբ հրեշտակապետին պյօր առ
կշոն Մարիամ. զոր առ Տէր ունիմք
բարեխօս վասն անձանց մերոց:

Ի ՏՕՆԻ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Տէր իմ, դուն խոստացար որ մեզ-
մէ ամենեւին չես բաժնուիր. եւ թէ
մինչեւ որ երկինք չերթաս, միսիթա-
րիչ Հոգին չիգար: Անոր համար
թէպէտ մարմնաւոր տեսլեամբ մեզ-
մէ հեռացար, բայց կաթուղիկէ եկե-
ղեցին ուրախութեան տօն կը կա-
տարէ, Հոգւցն սրբոյ միսիթարական
շնորհքը վայելելով: Կ'աղաշեմ, բա-
րերար Փրկիչ, որ իզմէ ալ չչեռա-
նաս. չըլայ թէ իմ մեղքերս ու չար
ախտերս իմ ու քու մէջդ ամպի պէս
կյանալով՝ զքեղ իզմէ զատեն: Միսի-
թարիչ Հոգիդ միշտ ինծի հետ ըւ-
լայ. սուրբ ազգեցութիւններդ զիս
միշտ միսիթարեն ու լուսաւորեն:
Ամէն բարի տուրքերն ու ամէն կա-
տարեալ պարգեւները վերէն քեզմէ
կու գան: Դուն անոր համար վեր ե-
լար բարձրացար, որ մեզի աւելի օդ-

նես, մանաւանդ ինծի՝ որ ամէն եր-
կնաւոր օգնութեան կարօտ եմ:

Այսօր աշկերտներդ առիր Զիթե-
նեաց լեռն ելար. միսիթարական խօս-
քերով անոնց սիրտ տալէն ետքը՝
ամենասուրբ ձեռքովդ զիրենք օրհ-
նեցիր: Ինչ ուրախութիւն ունեցան
առաքեալք, երբոր զքեղ տեսան,
որ աստուածային փառօք երկինք կը
վերանայիր. ինչ ինդութիւն էր
զքեղ տեսնելը, որ այնչափ նահա-
պետներու եւ մարդարէներու հոգի-
ներով ու բիւրաւոր հրեշտակներու
գնդերով երկինք կը համբառնայիր:

Այս Տէր իմ Յիսուս, հոգիս տըր-
տում տիսուր մնացեր է միշտ աս
երկրիս վըայ եւ զքեղ բաղձալի
Փրկիչդ կուզէ. գոնէ, Տէր, ասանկ
շնորհաց օր մը իսաչենքէ վըաս եր-
կինքէն օրհնեալ ձեռօքդ. տուր ին-
ծի ալ առաքեալներուդ տուած օրհ-
նութիւնդ: Գիտեմ, Տէր, որ զմեզ

որբ չես թողուր. կ'երթաս քու հայ-
րենիքդ, որպէս զի հոն մեզի համար
տեղ պատրաստես ու անկէց ետքը
իր ատենին զմեզ հոն կը կանչես.
որպէս զի ուր որ գուն ես, մենք ալ
քու ծառաներդ հոն ըլլանք: Ուստի
ես ալ աս աշխարհքս մեծ փափաքով
կը սպասեմ, որ զիս արժանի ընես
անվախճան արքայութեանդ. ամէն:

Յարական:

Ամբարձաւ Տէրն մեր Քրիստոս
օրհնութեամբ ընդ ամպս երկնից.
եւ առաքելոցն երկրպագեալ դար-
ձան յերուսաղէմ, միաբանութեամբ
վեր առաքէին զաղօթս:

Ի ՏՕՆԻ ՀՈԳԵԳՈՒՍՏԵԱՆ

Առաջին օր:

Աենդանարար սուրբ Հոգի, ինչ-
պէս որ Լուսաւոր լեզուի ձեւով ա-
ռաքելոց վըայ իջար, անոնց միտքը

լուսաւորեցիր ու սրտերնին Աստուծոյ սիրով վառեցիր. անանկ ալ վառէ հիմակ իմ սիրտս. զօրացուր տկարութիւնս ու լուսաւորէ միտքս: Առաքեալները յառաջ քան քու գալուստդ, անանկ թանձրամիտ էին, մինչեւ շատ անդամ քրիստոս զիւրենք յանդիմանեց. բայց երբոր գուն զիւրենք շնորհօք լուսաւորեցիր, ան ատեն իմացան՝ թէ ինչ է ժամանակաւորն ու յաւիտենական բարին: Այսօր լուսաւորէ իմ մոքիս թանձր խաւարն ալ, որ ճանչնայ աշխարհային ունայնութիւնը. արհամարհէ մարդկան նկատումը՝ որն որ մեծ բանի տեղ կը դնէ, եւ միայն երկնաւոր բարիքն ու առաքինութիւնը մեծ համարի:

Երբոր Քրիստոս պիտի մատնուէր, ամէն առաքեալները թողուցին ու փախան, եւ Պետրոս գլուխն առաքելոց իր երկնաւոր Վարդապետն

ուրացաւ. բայց երբոր քեզմով զօրացան, ան ատեն մեռնելու ալ բուլորովին պատրաստ էին, նեղութիւններն ու հալածանքն ուրախութեան արժանի կը համարէին: Դուն նմանապէս զիս ալ շնորհքովդ փոխէ, որ գոնէ կարող ըլլամ համբերել, ինչ հիւանդութիւն, նեղութիւն կամ փորձանք որ վրաս գալու ըլլայ: Վերջապէս ինծի հոգեւոր կեանք շնորհէ, ինչու որ գուն ես մեր հոգին կենդանացընողը. ինչպէս որ մարմինս առանց հոգւայ մեռած է, անանկ ալ հոգիս թէ որ զուրկ ըլլայ շնորհքէդ՝ հոգեւորապէս կը մեռնի. անոր համար բոլոր սրտանց կը բալծամ զքեզ ընդունիլ, ինչպէս որ առաքեալներն ընդունեցան: Եկ, սուրբ Հոգի, մեղքերուս թողութիւնն տուր, զանազան շնորհքներով զիս լեցուր. եւ արժանի ըրէ որ զքեզ չօր Աստուծոյ ու Միածին Որդւոյն

Հետփառաւորեմ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յարական:

Ազբեւը կենաց բաշխող շնորհաց՝
Հոգիդ իջեալ ի բարձանց, զանապական
պարգեւս քո բաժանեցեր
յառաքեալմն:

Երկրորդ օր:

Ո՛վ շնորհաբաշխ սուրբ Հոգի,
դուն քաղցր միհիթարիչ տրտում
Հոգիներուն. դուն գթած բժիշկ
վիրաւորուած սրտերուն. դուն ան-
վտանգ նաւահանգիստ ալէկոծելոց
աս աշխարհքիս ծովուն մէջ: Ե՛կ ովլ
խաղաղարար սրտիս, անհասանելի
շնորհքներովդ սրտիս մէջ խաղաղու-
թիւն ըրէ. Եկ, ովլ սէրդ աստուա-
ծային, բորբոքէ սրտիս մէջ անշիճա-
նելի հուրը, որ մեղքերէս սրբուիմ.
Ըուսաւորէ խաւարս ու փորձու-

թեանց հովերը դուն վրայէս ցրուէ.
բարի խորհուրդներ ազդէ մտքիս,
Հոգւոյս զօրութիւնները միայն քու-
փառացդ համար ուղղէ, որով քեզի
արժանի ըլլամ:

Կը պաղատիմ քեզի, ովլ Աստուած
իմ սուրբ Հոգի, մէյմը այցելութիւն
ըրէ սրտիս, որ մկրտութեամի աւա-
զանին շնորհաց զիս քեզի տաճար
պատրաստեցիր: Ովլ Տէր, թէպէտ
չունիմ սրտիս մէջ աստուածու-
թեանդ վայելուչ պատրաստած բնա-
կարան, որ առաքելոց պէս իմ վրաս
ալ իջնես ու միշտ հետս բնակիս.
բայց կը ջանամ ասկից ետքը շնոր-
հօքդ ամէն երկրաւոր եւ ունայն
բաներէ սիրտս հեռացընել ու սուրբ
գալստեանդ սպասել: Ակրտ սուրբ
հաստես յիս Աստուած, եւ շնորհէ ուղիւն
նորոնքեւ է քորէ իմուս: Որչափ մե-
ջաւոր որ ըլլամ, որչափ անարժան որ
ըլլամ, մի միայն շնորհքդ բաւական

է զիս բոլորովին արդարացընելու։
Ո՛վ բարերար Տէր, այսօր հաղա-
րաւոր մարդկան մէկէն բաշխեցիր
շնորհքդ. ասանկ բարեբախտ օր մը
ե՞ս միայն անբախտ ու անարժան
պիտի գտնուիմ. ամէն շնորհաց աղ-
բեր մօտ ըլլալով՝ ծարաւի՞ ետ
գառնամ։

Ո՛չ սուրբ Հոգիդ Աստուած,
տուր զքեզ բոլորովին ինձի, իմցուր
ծարուած հոգւոյս անմահարար բա-
ժակէդ. միշտ քու ցանկալի ներկայ-
ութիւնդ իզմէ անպակաս ըրէ եւ
առաջնորդէ արքայութեան ճամբան.
ամէն։

Յարական։

Անմահարար բաժակ հեղեալ
յերկնից սուրբ Հոգի. զոր արբին ի
վերնատանն դասք սուրբ առաքելոցն.
օրհնեալ ես սուրբ Հոգիդ ճշմարիտ։

Ի ՏՕՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԵԱԸՆ

Ո՛վ գանձապետ աստուածային
շնորհաց կոյս Մարիամ, որչափ ան-
հասանելի շնորհաց արժանի եղար՝
Մայր Աստուծոյ ըլլալով, որ Աս-
տուած իր ողորմութիւնը քեզի յան-
ձնեց բոլորովին, որպէս զի ամենուն
առատութեամբ բաշխես։ Մէկ ան-
գամ միայն այցելութեան երթալով
ազգականիդ՝ անբաւ շնորհք պար-
գեւեցիր. զսրբուհի եղիսաբէթ
Հոգւով սրբով լեցուցիր, զսուրբ
Յովհաննէս արդանդի մէջ սրբեցիր,
բոլոր տունն երկնային օրհնութիւն-
ներով զարդարեցիր։

Ո՛վ Մայր ողորմութեան, երբ
պիտի իմ մեղաւոր Հոգւոյս ալ այցե-
լութիւն մընես, գաս տեսնաս խեղշ-
ձութիւնս ու շնորհքներով զիս լե-
ցընես։ Սառուգիւ գիտեմ, Տիրուհի,
որ գթած սիրտ չիդիմանար, շուտ

մը կ'ողորմիս ինծի. ուրեմն մի ուշացըներ այցելութիւնդ, իմ անարժանութեանս ու ապերախտութիւններուս մի նայիր: Մասնաւոր շնորհք տուր երախտագիտութեան, որ Ճանչնամ ըրած բարիքներդ, եւ սրբուհի Խղիսաբէթին պէս աղաղակեմ քեզի. Ուստի է ինծի աս շնորհքները. ինչ մեծագոյն բարիք է ինծի եղածը, որ Մայրն Աստուծոյ ու Թագուհին երկնից իմ աղքատ սրտիս այցելութիւն կ'ընէ ու Հոգւով սրբով զիս կը Եցընէ: Օրհնեալ ես ամէն արարածոց մէջ, քաղցրագութ Մարիամ, եւ օրհնեալ ըլլայ սիրելի Աստուծորդիդ. որ զքեզ գերագոյն իշխանութեան ու փառաց հասցուց ու ասանկ ողորմած սիրտ տուաւ քեզի:

Քայց աւելի մեծագոյն շնորհք մը կը ինդրեմ քեզմէ, սուրբ Աստուծածին, մահուանս ատեն այց ել ինծի, ինչու որ շատ կարօտ եմ

Ներկայութեանդ ան ետքի նեղութեան ատենը: Մայր ես իմ փրկութեանս, մայր ես երկնային գանձուց. քու ինդրուածքդ պարապ չերթար, դուն բարեխօս եղիր ինծի ու փրկէ զիս, դթած Տիրամայր. ամէն:

Շարական:

Մայր եւ Կոյս աղախին Քրիստոսի. որ բարեխօսդ ես միշտ աշխարհի. քեզ երանեն ամենայն աղինք:

Ի ՏՕՆԻ ՎԵՐԴԵՎԱՐԻՒՆ

Առաջին օր:

Ի՞նչ անպատճելի երջանկութեան արժանի եղան, Տէր իմ, ան երեք առաքեալները, որ Թաբոր լեռան վրայ քու աստուծութեանդ լցոն իրենց յայտնեցիր. մինչեւ առաքեալները խելուընին կորսընցուցին ու չէին դիտեր ինչ կը խօսէին: Եթէ

մարմնաւոր լսո մը՝ որ փառաւորեալ
մարմնէդ ծագեցաւ, անանկ սքանչելի
ու զմայլելի եղաւ անոնց, որ ամէն
բան մոռնալով՝ կը խնդրէին քերզմէ,
որ միշտ հոն մնան. արդեօք ինչ
պիտի ըլլաս, ով Աստուած իմ, դուն
բոլորովին արքայութեան մէջ, եւ
ինչ մեծ երանութիւն է զքեզ հոն
տեսնելը:

Կ'աղաքեմ, Տէր իմ Յիսուս, լու-
սաւորէ պյոր անձառելի լուսովդ
միտքս, որ սուրբ մտածութիւններով
երկինք վերանայ ու հոգեւոր բա-
ները սիրէ: Գիտեմ, Տէր, որ միտքս
քանի որ երկրաւոր բաներու հետ
է, չիկրնար հոգեւորին համն առնուլ,
արքայութեան փափաքն ունենալ.
անոր համար վառէ սիրտս երկնային
սիրով, որ աս աշխարհիս փառքը,
պատիւն եւ ունայնութիւնը միտքս
կուրացընելով իրեն չքաշէ: Երբ
պիտ' որ ըլլաս, Տէր, որ սիրտս ամենեւ-

ին կարող չըլլայ քեզմէ բաժնուիլ,
կարող չըլլայ քեզմէ ի զատ բան մը
սիրել. այլ զքեզ արքայութեան
փառքին մէջ տեսնելով՝ միշտ զմայլի
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Շարական:

«Քրիստոս Աստուած մեր՝ շնորհեա
մեզ ընդ Պետրոսի եւ ընդ որդւոցն
Զեբեդեայ, արժանաւորիլ քում
աստուածային տեսլեանդ:

Երկրորդ օր:

Ո՛հ սուրբ արքայութիւն, ով եր-
կնային հայրենիք. երբոր զքեզ կը
յիշեմ, քու անպատմելի գեղեցկու-
թիւններդ կը մտածեմ, սիրտս կ'ելլէ
ու արցունքս չեմ կրնար բունել:
Ո՛հ Տէր, աս անցաւոր երկրիս վըայ
սիրտս միսիթարութիւն մը չունի,
քեզմէ ի զատ ինչ բանի որ կը բաղ-
ձամ, ինչ որ կ'ունենամ, ամենեւին

սիրտս չեհանգչեր, միշտ իր արարիչը
կը փնտուէ ու զքեղ կուղէ: Ասանկ
որբ մացերեմ, Տէր, աշխարհքիս մէջ.
գիշեր ցորեկ ցանկալի գալստեանդ
կը սպասում: Վայ ինչ, չէ ընդ երիտ
եղէ պանդիպունիւն իւ:

Ուր է, Տէր, անսուտ խոստումիւ,
որ երկար ատեն զիս որբ պիտի
չձգէիր, գայիր պիտ'որ զիս քու
քովդ առնուիր: Տէր, երբ պիտի
ծագի ան երջանիկ օրը, որ զքեղ
իմ Փրկիչս աչօք բացօք տեսնեմ ու
աստուածային տեսովդ զմայլիմ: Տէր,
երբ պիտի ըլլայ, որ քեզի հետ
անլուծանելի սիրով միանամ ու
յաւիտեանս քեզմէ չբաժնուիմ:
Տէր, երբ պիտի երկինքն զքեղ
անդադար օրհնեմ ու փառաբանեմ
ամէն հրեշտակներուն ու սուրբե-
րուն հետ. եւ ճշմարտապէս ըսեմ
ես ալ. Տէր, բարեսու է մեղ սար լինել:
Ո՛վ Տէր, այսչափ ըրած հառա-

չանքներս ու հեծութիւններս պա-
րապ չանցնին. գթած սրտիդ գութ
ձգեն, որ վրաս խղճալով՝ բարի
մահուամի աս արտասուալի աքսո-
րանքէն աղատես ու սուրբ արքայու-
թիւնդ ընդունիս: Ցանկամ ելանել է
հարժոյն, եւ լինել ընդ իւզ, Տէր իմ
Յիսուս. ամէն:

Օպրական:

Հառաջեցի զանլուելի զհեծու-
թիւնն առ բարեգութն Աստուած.
եւ լուաւ ինձ ի լեռնէ սրբյ իւրմէ.
եւ եհան զկեանս իմ յապականու-
թենէ:

Ի ՏՕՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

Առաջին օր.

Ո՛վ հրաշափառագոյն թագուհի
երկնից բարեգութ կոյս Մարիամ,
խոնարհութեամի ամոռիդ ոտքն
ինկած՝ երկիր պագանեմ քեղ, որ

սերովքէներէն ու քերովքէներէն
վեր բարձրագոյն իշխանութեան ու
շնորհաց հասեր ես: Լսէ այսօր
հառաջանքիս ձայնը, որ աս թշուառ
աշխարհքիս աքսորանաց մէջ՝ անմիտ-
թար սրտով արցունք թափելէն
ուրիշ բան չունիմ: Մայր ողորմու-
մութեան, գթած աչուրներդ խեղճ
մեղաւորիս վրայ դարձուր երկինքէն
եւ մի անարժան համարիր զիս շնորհ-
քիդ: Ո՛վ Կյոս ողորմած, երկինք
վերացար, որպէս զի տեսնելով ան-
կից իմ կարօտութիւնս՝ աւելի օգ-
նես ինծի:

Ի՞նչ անպատմելի ցնծութիւն եղաւ
արդեօք երկինք, երբոր բոլոր հրեշ-
տակները, սուրբերն ու նոյն ինքն
Միածին Որդիդ զքեզ մեծ փառօք
առին երկինք տարին: Ի՞նչ անօյշ
մեսեդիներու ձայն կը լսուեր հրեշ-
տակներուն ու սուրբերուն բերնէն,
որ միաբերան կը կանչէին. դու

բարձրութիւն վերին Երուսաղեմի,
դու ցնծութիւն արքայութեան, դու
Տիրուհի մեր եւ Թագուհի: Օր-
հնեալ ըլլայ ամենասուրբ Երրոր-
դութիւնը, Հայր եւ Որդի եւ Հոգին
սուրբ, որ զքեզ աս աստիճան փա-
ռաց հասցուց ու մեզի թագուհի
ըրուաւ: Ահա ասկից վերջը երանի
տան քեզի ամէն ազգերը, ով եր-
ջանիկ կցսա. ինչու որ արքայութեան
մէջ Աստուածորդւցդ աջ դիննստեր
ես ու երկնից գանձերը քեզի յան-
ձնուեր են:

Ես ալ, գթած տիրամայր, իմ
անարժան ձայնս կը խառնեմ հրեշ-
տակաց օրհնութեանցը հետ, եւ
մեծապէս կ'ուրախանամ զքեզ ա-
սանկ փառաւորեալ տեսնելուս: Յիշէ
զիս, բարեգութ Մարիամ, եւ ասանկ
շնորհաց օր մը թող մի տար, որ
ողորմութենէդ զըկուիմ: Գիտեմ, որ
ամէն բանի կարող ես եւ խօսքդ

Աստուծոյ առջին պարապ չ'երթար. անանկ է նէ տուր ինծի ճշմարիտ զղղում, Աստուծոյ սէրն ու բարի մահ. եւ արժանի ըրէ զիս, որ երկինք զքեղ օրհնեմ ու բարեբանեմ սուրբերուն հետ. ամէն:

Յարական:

Որ անմարմին բնութեամբ աստուածութեան քո Տէր. միացար մարմնով յարգանդի կուսին անյեղագէս դոլով. այսօր փոխեցեր զուրախութիւնդ երկնի եւ երկրի յանտրտում ի կեանսդ. աղաշանօք Մօր քո ողորմեա մեղ Որդի Աստուծոյ:

Երկրորդ օր:

Ո՛վ կցս տիրածին, քանի որ Աստուածորդիդ երկինք համբարձեր էր, սիրող անհանդիստ էր. հօն կը բաղձայիր ըլլալ, ուր սիրելի Որդիդ

էր: Թէպէտ ամէն օր հրեշտակներն զքեղ կը միմիթարէին, եւ նոյն ինքն քրիստոս քեզի այցելութիւն կ'ընէր. անանկ ալ ծանր էր քեզի աս աշխարհքս մնալ ու աս մարմնոյս հետ կապուած կենալ: Անոր համար մեծ ուրախութիւն ու անպատմելի սրտի ցնծութիւն ունեցար, երբոր աւետիս առիր, թէ քու Որդւոյդ արքայութիւնը կը հրաւիրիս: Եւ հազիւ թէ հոգիդ աւանդեցիր Աստուածորդւոյդ ձեռքը, փառաւորեալ մարմնովդ մէկտեղ բազմութեամբ հրեշտակաց երկինք վերափոխեցար:

Իսկ ես մեղաւորս առջիդ ինկած կը խնդրեմ, որ իմ սիրտս ալ վառես, որպէս զի բաղձայ արքայութիւնը տեսնելու: Դուն աշխարհքիս մէջ պյնչափ հոգեւոր միմիթարութիւն ունեցար, բայց ան ալ քեզի բառական չէր երեւնար. իսկ ես բոլորովին զուրկ ըլլալով հոգեւոր

միսիթարութենէ՝ թէ որ կարելի ըլլար, չեի ուղեր մեռնիլ, այլ աս աշխարհքիս մէջ կ'ուղեի յաւիտեան ապրիլ։ Դուն ամէն բոպէ կը փափաքէիր, թէ երբ պիտի գայ ան ետքի վայրկեանը. իսկ ես ամենեւին եւ ոչ կ'ուղեմ միտքս բերել, ինչու որ խղճմուանքս մաքուր չէ. եւ անպատրաստ ըլլալում՝ չեմ գիտեր թէ ինչ պատասխան պիտի տամ գործածներուս համար։

Քեզի կը դիմեմ այսօր, սուրբ Աստուածածին, օգնէ յուսահատելցս ու ողորմէ։ Աստուծմէ ետքը դուն իմ յոյս ու ապաւէնս. Քեզի յանձներ եմ հոգւցս փրկութիւնը, գքեղ ունիմ ինձի բարեխօս ու միջնորդ։ Արքայութեան մէջ այնչափ չնորհքներու հասար, մինչեւ Աստուած իր ողորմութեան գանձը քեզի տուաւ. ինձի ալ՝ որ սրտանց զքեղ այնչափ կը սիրեմ, աս ու-

րախական օրս առատութեամբ բաշխէ։ Պահէ զիս, Մայր ողորմած, ամէն փորձանքներէ, սրտիդ գութը վըայէս անպակաս ըրէ. ամէն։

Յարական։

Եյսօր յուսապատար խնդութեամբ եւ յաւէժաբար հնչմամբ նուագեմք քեզ հողեղէնքս ընդ հրաբուն սեռիցն. տօնախմլելով զյշատակ կուսի աղախնոյ եւ մօր քս. վասն որս հրձուողական ձայնիւ քեզ երգէ եկեղեցի սուրբ զնորդորհնաբանութիւն։

Ի ՏՕՆԻ ԺՆՆԴԵՑՆ ԿՈՒՍԻՆ

Իռոր աշխարհք մեղաց մթութեամբ պաշարուած խեղճ մնացեր էր, գուն միայն, հիանալի կոյս, իբրեւ ուրախարար առաւօտ ծագեցար մարդկային բնութեանս. նախաստեղին Ադամայ տրտմական անէծքը՝

Քու անձառելի ծննդեամբդ վերցուցիր ու մեզի օրհնութեան աւետիսքերիր: Բացուեցան այսօր աստուածային շնորհաց դուները, ցողեցին երկինք Աստուծոյ օրհնութեան ու ողորմութեան անձրեւը. Եւ փշաբեր անիծեալ երկիր մարդկային՝ բոււցուց այսօր անմահութեան տունկը:

Օրհնեալ ես, կըս երջանիկ, որ ամէն ստեղծուածոց մէջէն գուն միայն հրաշալի սրբութեամբ առանց մեղաց ծնար: Օրհնեալ ես, կըս երջանիկ, որ յառաջ քան ծնանիլդ՝ Աստուածամայր ընտրուեցար: Օրհնեալ ես, կըս երջանիկ, որ մեզի փրկութեան աւետիս պարգեւեցիր ու օրհնութեամբ զմեզ լեցուցիր: Օրհնեալ ես, կըս երջանիկ, որ արժանաւոր արդեամբդ ու խոնարհութեամբ՝ Աստուծոյ սիրտըշարժեցիր եւ սուրբ սիրով Աստուծոյ որդին մաքուր արգանդդ քաշեցիր:

Ո՛վ օրհնեալ կըս, կաղաչեմ կը պաղատիմ քեզի, տուր ինծի սուրբ աւաղանին շնորհքը, որ արդէն կորսընցուցի, մեղաց խաւարը փարատէ վրայէս: Միսիթարէ հոգիս ալ՝ որ ամէն շնորհքէ զըկուած՝ ողորմելութեան մէջ ինկեր է ու քեզի, սուրբ Աստուածածին, կը դիմէ. քու հրաշափառ ծննդեանդ օրը հոգեւոր պարգեւներ շնորհէ ինծի, որ բարի ապրիմ ու քեզի միշտ հաւատարիմ որդի ըլլամ: ամէն:

Յարական:

Երգեցէք որդիք Սիոնի երգ նորի ծննդեան մօր Տեառն. քանզի որ ծնաւ զանժամանակն ի Հօրէ ծնեալն այսօր ծնաւ յամուլ արդանդէ. տուք օրհնութիւն տուողին մեզ զՄայրն լուսոյ:

ի պատիւ անունն Մարիամու:

Երբոր քու սուրբ անունդ կը
իշեմ, ով ամենասիրելի Մարիամ,
բոլոր սիրոս կը բորբոքի սիրովդ, եւ
ծարաւի հոգիս զքեղ կը խնդրէ:
Ով սէր իմ Մարիամ, աս արտա-
սուելի աքսորանքիս մէջ քեղմէ ի
զատ չունիմ ինծի բարեխօս ու
պաշտպան. ուրեմն մի զոկեր զիս մե-
ղաւորս մայրական խնամքէդ. ցուցուր
իմ վրաս ալ հրաշալի անուանդ պը-
տուղը: Ով մայր իմ Մարիամ, գի-
շեր ցորեկ քու սուրբ անունդ կան-
չելէն չեմ դադրիր. երբոր դժոկիքը
միտքս կու գայ, Մարիամ կ'աղաղա-
կեմ. երբոր երկնից աղքայութեան
փառքը կը մտածեմ, մեծ փափա-
քով մը Մարիամ կը կանչեմ: Տես,
Մայր ողորմութեան, ողորմէ ինծի
ու փրկէ զիս ամէն փորձանքներէն.

ինչու որ գուն ես բոլոր իմ յոյսս
ու ապաւէնս ու մի միայն օգնականս:

Ով գթած, ով բարեգութ, ով
քաղցր կյս Մարիամ, շնորհք ըրէ
ինծի, որ մեռնելու ատենս բոլոր
սրտանց մեծագոյն ջերմեռանդու-
թեամբ ինծի օգնական կանչեմ քու
բաղձալի անունդ Մարիամ: Ով Մա-
րիամ, կենացս ետքի բոպէն օգնու-
թեան հասիր ինծի ու մսիթարէ. զիս
ներկայութեամբդ. թէ որ անունդ
միայն յիշելն անչափ քաղցրութեամբ
ու սիրով սիրոս կը լեցընէ, հապա
ինչ անպատմելի ուրախութիւն պի-
տի ըլլայ զքեղ տեսնելը, ով ցանկալի
Մարիամ: Ով սէր իմ Մարիամ, գի-
շեր ցորեկ սիրոս անհանգիստ է.
մեծապէս քու տեսոյդ կը կարօտի.
աչքէս թափած արցունքներս քու
սիրոյդ համար գութ ձգեն սրտիդ
մէջ. ով ողորմած Մարիամ, սուրբ
անուանդ արդեանցը համար ըլլայ

առ զիս Որդւսդ արքայութիւնը, որ
հոն քու փառաւորեալ անունդ Մա-
րիամ օրհնեմ ու գովեմ. ամէն:

Յարական:

Մարգարէից հանդիսարան եւ
գրաւական կենաց մարդկան Մա-
րիամ Աստուածամայր. ընդունարան
եօթնարիեան շնորհաց. խարիսխ
յուսոյ հաստատութեան. զուգաթիւ
աւուրց դարուցս անցաւորաց. օրհ-
նութեամբ երգով եկեղեցիք տիե-
զերաց պյաօր տօնեն զյիշատակ ծնըն-
դեան քո ի մօրէ:

Ի ՏՕՆԻ ՍՐԸՈՅ ԽԾԶԻԿՆ

Առաջին օր:

Օրհնեալ ես, ով երկրպագելի
խաչափայտ, որ Որդին Միածին Յի-
սուս անմեղ գառն Աստուծոյ քու
վրադ պատարագեցաւ ու աշխարհ-
քիս ամէն մեղաց ծանրութիւնը բո-

Երրովին վերցուց: Օրհնեալ ես, փայտ
կենաց եւ յոյս փրկութեան, որ աշ-
խարհքիս ծովուն մէջ եղողները
սուրբ արքայութեան ձշմարիտ ու
ցանկալի նաւահանգիստը կը հաս-
ցընես: Առաջին կենաց ծառը մեզի
մահաբեր պտուղ բերաւ. բայց դուն
նոյն իսկ կեանքը մեզի պարգեւեցիր:
Երջանիկ ես միշտ, սուրբ խաչ, որ
իմ Յիսուս փրկիչս զիս սիրելուն
համար բոլոր արիւնը վրադ թափեց,
որով ամէն երանութեան արժանի
եղար:

Հիմայ բազկատարած կաղաչեմ
քեզի, ով սուրբ խաչ, օգնական ե-
ղիր ինծի. զօրացուր տկարութիւնս,
որ չար սատանային փորձանկներուն
դէմ դնեմ, աշխարհքիս զանազան
ձախորդութեանց սիրով տանիմ,
եւ յաւիտենական վարձք ստանամ:
Գուն ողորմած Յիսուս, կնքէ վրաս
երկինքէն պատուական խաչովդ ու

օրհնէ մարմնոյս ամէն զգայարանք ները, որ ըլլայ թէ անոնցմով զքեղ վշտացընեմ:

Յարակամ:

Առւրբ խաչն օգնական հաւատացելոց կանգնեցաւ ի յերկրի յաղթող թշնամեցն. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք:

Երկրորդ օր:

Քանի անգամ, որ Տէր իմ, աչքս կը վերցընեմ, սուրբ խաչի կը նայիմ, կը լսեմ սրտիս մէջ անոյշ ձայն մը. թէ անչափ սիրեց զքեղ Յիսուս, մինչեւ քու սիրոյդ համար մեռաւ. մի մոռնար բարի Փրկիչդ:

Ո՛հ Տէր, ինչպէս մոռնամ՝ ինծի ըրած բարերարութիւններդ. սուրբ խաչին նայածիս պէս՝ միտքս կու գան բոլոր քաշած չարչարանքներդ, եւ սիրտս անշիշանելի սիրով կը բոր-

բոքեն: Հազար փառք ու գոհութիւն քեզի. օրհնեալ ըլլայ քու գթութիւնդ. սուրբ խաչի բարեխօսութեամբը զիս պահէ ու պահպանէ. մի մատներ չար թշնամեցն ձեռքը:

Երկիր պագանեմ սուրբ խաչի, մարդասէր փրկիչ իմ, եւ կը խընդրեմ անոր աներեւոյթ զօրութիւնը, որ հոգւոյս ու մարմնոյս պահպան ըլլայ: Բովանդակ յօյսս սուրբ խաչի վրայ դրած եմ, դուն առողջացուր հոգւոյս հիւանդութիւնները: Քեզի կը դիմեմ, խաչելեալ Յիսուս, եւ խաչի ոտքը կը փաթթուիմ. դուն, Տէր, շնորհք տուր ինծի, որ աս աշխարհքիս մէջ քեզի խաչակցելով՝ անդիի աշխարհք ալ արքայութեան մէջ սուրբերուն հետուախակից ըլլամ. ամէն:

Յարական:

Խաչի քո Քրիստոս երկրպագեն
արարածք ամենայն, որ ի փրկութիւն
մեղ կանգնեցաւ. սա եղիցի մեղ
պահապան յաղթող՝ ապրեցուցա-
նել զմեղ ի պատրանաց թշնամոյն:

Ի ՏՕՆԻ ԸՆԹԱՑՄԱՆ

Փառաւորեալ երջանիկ կյս, լսէ
մեղաւոր հոգւցս աղաչանքը. եւ ան
անպատմելի սրտիդ միխթարութեան
համար՝ որ զքեղ բոլորովին տաճա-
րին մէջ Աստուծոյ ընծայելովդ ու-
նեցար, բաց ինձի շնորհաց գանձերը,
միխթարէ սիրտս: Ո՛վ ամենասի-
րելի Մայր, ինչպէս որ դուն պղտի-
կուց զքեղ Աստուծոյ ընծայեցիր,
ես ալ կը փափաքիմ իմ բոլոր մնա-
ցած կեանքս քեզի ընծայել. անանկ
որ միտքս միշտ քու ըրած բարիք-
ներդ յիշէ. սիրտս միշտ զքեղ սի-

րէ, եւ լեզուս անդադար զքեղ
օրհնէ:

Կ'աղաչեմ, ով ողորմած տիրուհի
իմ, ընդունէ զիս անարժանս մայ-
րական սիրով, որ արդէն քեզի որ-
դեգիր եղած եմ եւ այսօր նորէն
զիս քեզի կընծայեմ: Օրհնէ, Մայր
սուրբ, խեղճ որդիդ ու աղատէ ա-
մէն փորձանքներէն. Հզօր պաշտ-
պանութիւնդ վրայէս անսպակաս ըրէ
ու քու քաղցր աչուշներդ իզմէ մի
գարձըներ: Ո՛վ բարեգութ Մա-
րիամ, բոլոր յշսս դուն ես. քու
դթած ձեռքդ կը յանձնեմ հոգիս.
ամէն:

Յարական:

Ես քեղ ապաւինիմք, սուրբ Աս-
տուածածին, բարեխօսեա անդադար
առ Որդիդ քո եւ Աստուած մեր՝
փրկել զմեղ ի փորձութենէ եւ յա-
մենայն վտանգից մերոց:

Ի ՏՕՆԻ ԱՆԱՐԵՏ ՅԳՈՒԹԻՒՆԻ

Ո՛վ ամենամաքուր կոյս Մարիամ,
այնչափ սիրելի եղար Աստուծոյ առ-
ջին, որ առանց արատի մը սրբու-
թեամբ յղացար, եւ ամէն շնորհք-
ներով ու մաքրութեամբ զարդա-
րուեցար. իբրեւ գեղեցիկ արու-
սեակ մը լուսաւոր առաւոտ ծագե-
ցիր մեղի: Մեծապէս կ'ուրախանամ
ու կ'օրհնեմ անարատ յղութիւնդ,
Մայր Աստուծոյ, որ ամենասուրբ
երրորդութիւնն իբրեւ նշի տա-
պան զքեզ միայն ազատ պահեց
աս ողորմելի աշխարհքիս մեղաց ջըր-
հեղեղէն. եւ նոյն իսկ բոլորից Տէրն
ի քեզ բնակելով՝ Աստուծոյ բար-
կութիւնն իջեցուց ու մեղաց ջըհե-
ղեղը ցամքեցուց:

Ո՛վ գթած Աղս, սքանչելի անա-
րատ յղութեանդ օրը շնորհք մը կը
խնդրեմ քեզմէ, Մայր ողորմութեան,

որ մեղքերուս աղտեղութիւնը սրբ-
բես ու մաքրութեան շնորհք տաս
ինձի, որով քեզի ու Միածնիդ հա-
ճոյ ըլլամ: Գիտես դուն իմ թշուա-
ռութիւններս. մեղօք յղացայ, մե-
ղօք ծնայ ու մեղօք ալ կեանկս ան-
ցուցեր եմ. դու անարատ Մայր,
գթութիւնդ վրայէս պակաս մի ը-
ներ, ապա թէ ոչ՝ բոլորովին կը յու-
սահատիմ: ու ստոյդ կը կորսուիմ:
Ո՛վ ամենասիրելի Մարիամ, սիրոս
բոլոր քեզի կու տամ, դուն մաքրէ
ամէն արատներէն՝ որ յաւիտեանս
քուկդ ըլլայ. ամէն:

Եարական:

Անթառամ ծաղիկ անդատապարտ
շառաւիդ վերաբուսեալ յարմատոյն
Յեսսեայ. զքեզ Եսայիս կանխաւ
վերագոշեաց եօթնարփեան շնորհաց
հոգւցն ընդունարանգոլ Աստուածա-
ծին եւ Կոյս զքեզ մեծացուցանեմք:

տուծոյ տեսոյն փափաքի սիրոս.
ամէն:

Ողջն քեզ Մարիամ:

Երկրորդ խնդութիւն:

Վեծապէս կ'ուրախանամ, սուրբ
Աստուածածին, յիշելով առջի խըն-
դութիւնդ, որ ունեցար Աստուա-
ծամայրութեան աւետիս առած ա-
տենդ. ամենակալն Աստուած բոլոր
արարածոց մէջէն զքեզ միայն իրեն
մայր ընտրեց ու անբաւ չնորհքնե-
րով լեցուց, եւ սերովեէներէն ու
քերովեէներէն աւելի զքեզ բար-
ձրացուց: Անոր համար կ'աղաչեմ
քեզի, սուրբ Տիրամայր, ուրախացուր
այսօր իմ սիրտս ալ՝ մաքրելով
խղճտանքս ամէն ըրածներէս. եւ
սիրտս բորբոքէ արբայութեան սի-
րովը, որ աս աշխարհքիս ունայնու-
թիւնները մէկդի ձգելով՝ միշտ Աս-

ԱՊՈՔ
Ս. ԵՍՏՈՒՅ ԱՃ ԱՃ ՆԻ
ԵԹԹԻ ԽՆԴՈՒԹԵԸՆԸ

Առաջին խնդութիւն:

Վեծապէս կ'ուրախանամ, սուրբ
Աստուածածին, յիշելով ան ծայ-
րագոյն խնդութիւնը, երբոր երկնի
եւ երկրի արարքին մայր եղար. եր-
կինքը չէր բաւական զինքը տանելու,
դուն գիրկդ առիր ու մայրական
խնամքով մեծցուցիր: Ի՞նչ մեծ ու-
րախութիւն էր սրտիդ, որ արբայու-
թեան փառքն ու երկնից ցնծու-
թիւնը միշտ հետդ ունեիր եւ անով
կը զմայլէիր: Խննարհութեամբ ոտքդ
ինկած կը ինսգրեմ, Մայր Աստուծոյ,
մի զքեր սիրտս հոգեւոր ուրախու-
թենէ. չնորհք ու բորբոքեալ սէր
տուր ինծի, որ սուրբ Հաղորդու-
թիւն առած ատենս ճշմարտապէս

զՅիսուս սրտիս մեջ ընդունիմ ու
երկնային ցնծութեամբ լեցուիմ:
Ողջն քեզ Մարիամ:

Երրորդ խնդութիւն:

Մեծապէս կուրախանամ, սուրբ
Աստուածածին, յիշելով ան մեծ
ցնծութիւնդ, երբոր տեսար Աս-
տուածորդիդ յարութիւն առնելէն
ետքը փառաւորեալ աստուածային
լուսով ու անպատմելի խնդութեամբ
լեցուեցաւ սիրտ: Ուրախ լեր, Մայր
փրկութեան, որ բոլոր աշխարհքիս
փրկագործութեան պատճառ եղար
ու երկնից գոները մեզի բացիր, որ
մեր նախահայրը մեզօք փակեց: Հի-
մայ մասնաւոր շնորհք մը տուր ին-
ձի, ով գթած Մարիամ, որ մեռեալ
հոգիս կենդանանայ ու մեղաց տըրա-
մութիւները թող տալով՝ ուրա-
խութեամբ զքեզ օրհնէ. ամէն:

Ողջն քեզ Մարիամ:

Չորրորդ խնդութիւն:

Մեծապէս կուրախանամ, սուրբ
Աստուածածին, յիշելով ան մեծ
խնդութիւնդ, երբոր քու Միածին
Որդիդ զքեզ առաւ ու անթիւ
հրեշտակներով սուրբերով երկինք
վերացուց: Ո՛վ հզօր Թագուհի, նայէ
մէյ մը երկինքէն վրաս, եւ այսօրուան
ունեցած ուրախութեանդ ու փա-
ռացդ համար բարեխօս եղիր ինձի
ու մի մոռնար զիս, ողօրմած Մայր, որ
աս արտասուելի աքսորանքիս մեջ
քու տեսութեանդ կարօտովը կը
մաշիմ: Մանաւանդ կ'աղաչեմ քեզի,
Մայր ողօրմութեան, յիշէ աս չոր-
րորդ խնդութիւնդ, որով սիրտ
յաւիտեանս լեցուեցաւ. օգնութեան
հասիր ինձի մեռնելու ատենս ու քու
ցանկալի ներկայութեամբդ ուրա-
խութեամբ զքեզ օրհնէ. ամէն:

Ողջն քեզ Մարիամ:

Հինգերորդ խնդրնթիւն:

Մեծապէս կ'ուրախանամ, սուրբ
Աստուածածին, յիշելով երկինքն
ունեցած անպատճելի մեծութիւնդ
ու խնդութիւնդ, որ Միածին Որդիդ
զքեղ իր աջ կողմը նստեցուց եւ
ամենասուրբ Երրորդութիւնն անհաւ-
սանելի շնորհքներով զքեղ լեցուց,
որ Ճառադայթներովդ բոլոր ան եր-
կնային դրախտը կը զարդարես ու կը
պայծառացընես: Ո՛վ Մայր, երբոր
զքեղ ասանկ փառաւորեալ կը յի-
շեմ, սրտիս ուրախութենէն աչքիս
արցունքը չեմ կրնար բռնել: Ո՛վ
քաղցր Մարիամ, ողորմէ խեղճու-
թեանս եւ զիս քովդ առ, սիրաս
փառքովդ լեցուր:

Ողջն քեղ Մարիամ:

Վեցերորդ խնդրնթիւն:

Մեծապէս կ'ուրախանամ, սուրբ
Աստուածածին, յիշելով ան մեծ

խնդութիւնդ, որ ունեցար արքայու-
թեան մէջ, երբոր Հայրն երկնաւոր,
Որդին Միածին եւ սուրբ Հոգին
զքեղ երկնի եւ երկրի թագուհի
ըրաւ. եւ անձառելի փառքով անանկ
պսակեց, որ ամէն հրեշտակներն ու
սուրբերը երանի կու տան քեզի եւ
միշտ կ'օրհնեն իրենց արժանաւոր
թագուհին: Ո՛վ ցնծութիւն մեր ա-
մենեցուն, երկինքը կ'ուրախանայ
զքեղ իրեն հետ ունենալուն. երկրի
վրայ մենք ալ կ'ուրախանանք յիշե-
լով փառացդ մեծութիւնը, եւ ան-
դադար շնորհակալ կ'ըլլանք ու
կ'օրհնենք զԱստուած, որ ասանկ գե-
րագոյն աստիճան զքեղ բարձրա-
ցուց: Ո՛վ մայր ողորմութեան, աս
խնդութեանդ համար շնորհք տուր
ամենուն ալ ու իմ խեղճ սիրտս ու-
րախացուր մայրական գիլութեամբդ.
ամէն:

Ողջն քեղ Մարիամ:

Եօթմերորդ խնդոհթիւն:

Մեծապէս կ'ուրախանամ, սուրբ
Աստուածածին, յիշելով ան մեծ
խնդութիւնդ ու իշխանութիւնդ, որ
Աստուած բոլորովին քու ձեռքդ
յանձնեց իր ողորմութեան ու շնոր-
հաց գանձը. որպէս զի առատու-
թեամի բաշխես ամէն կարօտներուն:
Ուրեմն ով գթած Մայր, դուն ես
մեղաւորաց յշսը, խեղճ հոգիներու
բարեխօս ու անմիտար վշտացելոց
ուրախութիւն: Մեծ ցնծութիւն է
քեզի ողորմիլը. եւ քեզի ապաւինող-
ները՝ ստոցդ փրկութեան կը հանին:
Ահա քեզի կը դիմեմ, ով գանձապետ
աստուածային գթութեան, բոլոր
մեղքերուս թողութիւն շնորհէ, եւ
շնորհք տուր ինձի, որ հաստատուն
յառաջադրութիւն գնեմ ասկից ետ-
քը միշտ Աստուծոյ շնորհաց մէջ ա-
պրելու եւ քեզի հաւատարիմ ծա-

ռայ ըլլալու: Գիտեմ, Մայր ողոր-
մութեան, թէ որչափ ցնծութիւն
պիտի ունենայ սիրտդ զիս արքայու-
թեան մէջ տեսած ատենդ. ուրեմն
ուրախացուր քու սիրտդ զիս փրկու-
թեան հասցընելովդ, եւ ուրախա-
ցուր իմ սիրտս ալ երկնից փառաց
մէջ զքեզ տեսնելու արժանի ընե-
լով. ամէն:

Ողջն քեզ Մարիամ:

ԱՊՐԹԱԿ ԱՌ ԱՄԵՆԱՅՑՆ ՍՈՒՐԵՍ

Ով ցանկալի սուրբք Աստուծոյ,
ով ճշմարիտ որդիք վերին երուսա-
ղեմի, դուք աս աշխարհքիս մէջ
յաղթեցիք չար թշնամւոյն, եւ ողոր-
մելի մահկանացու կեանքն երկնից
արքայութեան հետ փոխեցիք, եւ
Քրիստոսի ձեր զօրագլխին պէս չար-
չարուեցաք. բայց հիմայ երկնային
դրախտին մէջ յաւիտեանս կը վայե-
լէք ու հրեշտակաց հետ անդադար

կ'օրհնէք ամենասուրբ Երրորդութիւնը:

Ո՛վ երջանիկք Աստուծոյ, յիշեցէք նաեւ զիս մեղաւորս՝ որ աս թշուառ երկրիս վրայ խեղճ մնացեր եմ, բարեխօս եղէք առ Յիսուս Փըրկիս ինծի համար, եւ ամէն չար փորձանկներէն ու մեղաց առիթներէն պահելով՝ ձեր սուրբ գնդին մէջ խառնեցէք: Ո՛չ, կ'աղաւեմ, համնին ձեր ականջն ըրած հառաջանքներս ու խնդրուածներս, ձեր մաքուր ձեռքովն Աստուծոյ առջին հանեցէք սրտիս փափաքն ու անարժան աշխմքներս, որ ձեր միջնորդութեամբը Աստուծոյ ողորմութեան արժանի ըլլամ: Ամէն մէկերնիդ արեգակի պէս կը փայլեք արքայութեան մէջ, զիս ձեր ձառակայթներովը լուսաւորեցէք. դուք որ յաւիտեանս յաւիտենից կը փայլէք ան անձառ ուրախութիւնըիմ սրտիս ալնոյնը շնորհեցէք:

Դուն ո՛վ Թագուհի ամենայն սըրբոց, Մայր ողորմութեան, քեզի կը դիմեմ բոլորով սրտիւ. քու աղաւանքդ միշտ Աստուծոյ ընդունելի է, Աստուծոյ գթութեան գանձը քու ձեռքդ է: Նրկինքը բոլոր սուրբներն երանի կու տան քեզի ու կ'օրհնեն, որ ամենուն փրկութեան պատճառ եղար: Ո՛վ Թագուհի ամենայն սրբոց, պաշտպան եղիք ինծի ու մայրական գութդ վրայէս պակաս մի ըներ, օգնէ ինծի շնորհքովդ ու արժանի ըրէ ի հանդերձեալն սրբոց հետ զքեզ փառաբանելու. ամէն:

ՅԹ Ս + ՅՈՎՈՒՔ

Ո՛վ երջանիկ Աստուածահայր սուրբ Յովսէփ, երբոր քու փառքդ ու աստուածահայրութեան մեծ պատիւդ կը յիշեմ, բոլոր սիրտս կը բորբոքի սիրովդ ու կը բաղձամ միշտ զքեզ գովել: Նրանելի էիր երկրի

վրայ, ինչու որ զԱստուած քեզի
հնազանդ ունէիր ու երկնային գան-
ձը քեզի յանձնած էր Աստուած:
Աւելի երանելի էիր մահուանդ ա-
տեն, որ Յիսուս ու սուրբ Աստուա-
ծածին երկու կողմէ կեցած՝ ուրա-
խութեամբ Յիսուսին ձեռքն աւան-
դեցիր սուրբ Հոգիդ. իսկ Հիմայ եր-
կինքը մեծագոյն փառքով կը ցնծաս
Յիսուսի ու սուրբ Կուսին հետ:

Քեզի կ'աղաւեմ ու կը պաղատիմ,
ով Հայր սուրբ, բարեխօս եղիր ին-
ծի ու պաշտպանէ զիս ամէն վտանդ-
ներէն Հայրական իշխանութեամբդ:
Զերմեռանդ սրտով քեզի կը դիմէ
սովեալ Հոգիս. լեցուր զիս զանազան
շնորհքներով. Յիսուսէն մաքրու-
թեան շնորհք ինդրէ ինծի համար,
որ քեզի պէս սուրբ ու արդար ա-
պրիմ: Կայէ մշյմը երկինքէն, գթած
Հայր, եւ զիս ամենեւին մի մոռնար.
օգնութեան հասիր ինծի նեղութեան

ատեն, մանաւանդ ան ետքի վայր-
կենին՝ որ ամենէն ալ անօգնական պի-
տի մնամ Հոգեվարութեան մէջ, եւ
Հոգիս մեծ տագնապ պիտի կրէ Աս-
տուծոյ գատաստանը յիշելով: Դուն
ով սուրբդ Աստուծոյ, մի թողուր
զիս ան ատեն. միսիթարէ Հոգիս քովս
գալով, որ բարի մահուամբ Հոգիս
մաքրու ձեռքդ աւանդեմ՝ կանչելով
սրտանց Յիսուս, Մարիամ եւ սուրբ
Հայր Յովսէփ, զսիրտս եւ զՀոգիս
ձեզ յանձն առնեմ:

ԵՌ Ս. ՅՈՎԵԱՆԵԼՍ ՄԿՐՏԻՉ

ՄԵծ ջերմեռանդութեամբ սրտի
քեզի կը դիմէմ, ով սուրբ Յովհան-
նէս Մկրտիչ, որ իբրեւ արուսեակ
արդարութեան արեգականն Քրիս-
տոսի՝ ծագեցար երկրի վրայ, Յի-
սուսի փրկչին կարապետ եղար ու
ամենուն անոր գալստեան աւետիսը
տուիր: Այնչափ շնորհաց արժանի

եղար՝ որ ծնանելէդ յառաջ սրբուեցար ու առանց արատի մը ծնար. ետքն ալ հրեշտակի պէս անսպատի մէջ սրբութեամբ ապրեցար, բոլոր ժողովրդեան ապաշխարութիւն քարոզեցիր: Ամենէն աւելի երանութեան արժանի ես, որ քու ձեռքովկի Յորդանան գետին մէջ դՔրիստոս մկրտեցիր: Ո՛վ սուրբգ Աստուծոյ, քու հրաշափառ տօնախմբութեանդ օրը իմ անզեղջ սրտիս դարձ տուր ու ապաշխարութեան շնորհք պարգեւէ, որ բոլոր մեղքերս աղէկ մը խոսառվանելով՝ Աստուծմէ թողութիւն առնում: Քու խիստ ձգնութեանդ նայելով՝ մէկդի թողում աշխարհային ունայնութիւնները, որ կանցնին կ'երթան, եւ ասկից ետեւ ջանամ երկնից արքայութեան համար աշխատիլ, որ յաւիտեանս կը մնայ: Ո՛վ երջանիկդ Աստուծոյ, բարեխօս եղիր ինձի համար առ Քրիստոս.

մոքիս լըս տուր, որ չար սատանային խաբէութիւնները մտիկ չընեմ, քու միջնորդութեամբդ հալածուին երթան, եւ սուրբ հրեշտակները զիս պահպանեն. ամէն:

ԱՌ Ս. ՊԵՏՐՈՍ ԵՒ ՊՈՂՈՍ

Ո՛Վ երանելի սուրբ առաքեալք Քրիստոսի, ձեր երկնային վարդապետութեամբը բոլոր աշխարհք լուսաւորեցիք, եւ Քրիստոսի սուրբ հաւատքն ամէն երկիր քարողելով ու սուրբ արիւնիդ թափելով՝ նմանող եղաք Փրկչն Յիսուսի: Ո՛Վ սուրբ առաքեալք Աստուծոյ, երկինքէն լսեցէք մեր անարժան աղօթից ու բարեխօս եղէք Աստուծոյ: Քրիստոս ձեզի տուաւ երկնից բանլիքը. բացէք մեզի երկնից գոները: Քրիստոս Փրկիչն մեր ձեզի յանձնեց աշխարհքիս վրայ մեր մեղքերն արձակելու եւ կապելու իշխանութիւնը.

անոր համար մենք՝ որ ծանր մեղաց
կապերու տակ մնացեր ենք, ձեր առ-
ջին ինկած կը խնդրենք, որ մեր մե-
ղաց ծանրութիւնը թեթեւցնէք,
գերութեան կապերն արձակէք եւ
Յիսուսին հետ հաշտեցընէք: Ո՛վ
երջանիկ առաքեալք, սուրբ եկեղե-
ցւոյ մշտնջենաւոր խաղաղութիւն
պարգեւեցէք. գուք այսօր երկնքէն
լցոս մը ծագեցէք ամէն հերետիկու-
ներուն եւ հերձուածողներուն սիր-
տը, որ գան միանան ի մի հօտ եւ ի
մի գլուխ եկեղեցւոյ, ինչպէս որ
Փրկիչն մեր աղաւեց իր երկնաւոր
Հօրը. եւ միաբան օրհնենք զԱս-
տուած ի յաւիտեան. ամէն:

ԱԹ Ս + ՍՏԵՓԱՆՈՍ

Պարծանք սուրբ հաւատոյ, առա-
ջին մարտիրոս եւ վկայ Քրիստոսի ով
սուրբ Ստեփանոս. այսօր սուրբ եկե-
ղեցին ցնծութեամբ քու յիշատակդ

կը կատարէ, որ յայտնապէս քարո-
ղեցիր Քրիստոսի սուրբ հաւատքը
եւ պատուական արեամբդ երկնից
արքայութիւնը գնեցիր: Բացուեցաւ
երկնքը քեզի համար. տեսար ան-
հասանելին մարմնաւոր աչօք՝ Որդին
Միածին մեծ փառքով նստեալ ընդ
աջմէ Աստուծոյ Հօր: Թշնամիներդ
զքեղ կը չարչարէին, գուն Յիսու-
սին պէս կ'աղօթէիր անոնց համար.
անոնք զքեղ կը քարկոծէին, գուն
ձեռուըներդ բացած քարկոծողաց
համար թողութիւն կը խնդրէիր:
Ո՛վ նահատակ բարի, արտասուօք կը
պաղատիմ քեզի, ինչպէս որ առաջին
պտուղ եղար եկեղեցւոյն Քրիստոսի,
անանկ ալ առաջին բարեխօս եղիր
Քրիստոնէից համար առ Յիսուս փլր-
կիչ. թէ որ քարկոծողներուն հա-
մար աղօթեցիր, հիմայ մենք գետին
ինկած կ'աղաւենք քեզի, նայէ մեր
խեղճութեան, երկնային օրհնու-

թիւններ խրկէ մեզի: Խնդրէ Աստուծմէ, որ սուրբ եկեղեցւոյ հաստատութիւն տայ, ամէն հոգեւոր պաշտօնեանները Հոգւով սրբով լեցընէ, հաւատացելոց ալ սէր ու միութիւն պարգեւէ. ամէն:

ԱՅԻ Ս. Գ. Ք. Բ. Պ. Ա. Խ. Խ. Ա. Թ. Ա. Թ.

Ո՛վ երաննելի սուրբ Գրիգոր, գունքու անտանելի չարչարանքներովդ մեր ազգին լուսաւորիչ եղար, Քրիստոսի չարչարանաց պակասութիւնը քու մարմնոյդ վրայ կրելով՝ Քրիստոսի արեան գինը մեզի համար շահեցար. մեր ազգին հայր եղար աս աշխարհք՝ այնչափ բազմութիւնը մլրտելով ու ամենուն քրիստոնէական հաւատոյ մասոնքը սորվեցընելով: Խսկ անդիի աշխարհք նոյնպէս անդադար աղօթող ու բարեխօս ես Աստուծոյ մեր ազգին համար: Հիմակ ես ալ՝ որ քու հոգեւոր զաւակդ

եմ, կ'աղաշեմ քեզի պյօր, հայր սուրբ, որ քու յիշատակդ կը տօնենք, ինձի համար հզօր բարեխօս սութիւն ընես Աստուծոյ առջեւը, թէեւ ես իզմէ արժանիք մը չունիմ քեզի որդի ըսուելու:

Գուն անչափ երախտաւոր էիր մեր ազգին, որ քեզի զանազան տանջանկաներ տուղներուն համար Աստուծմէ թողըւթիւնդ ու անյիշաչարութիւնդ ինձի օրինակ ըլլան եւ մաքէս վրէժինդրութեան հոգին հանեն: Քու միջնորդութեամբդ որ Աստուծոյ առջին խիստ զօրաւոր է, շնորհք խնդրէ ինձի պյօր, որ քեզի ճշմարիտ զաւակ ու արքայութեան մէջ պարծանք ըլլամ: Մասնաւորապէս կը խնդրեմ, ով լուսաւորիչդ հոգւոց, որ Աստուծոյ առջեւ բարեխօս ու պաշտպան կենաս մեր ազգին եւ զմեզ Աստուծոյ արդար պատիժնեւ

րէն ազատես: Գթած հայր, օրհնէ զմեղ երկինքէն, որ քեզի պէս սուրբ ու բարեգործ ըլլանք. ինչպէս որ քու աղօթքդ մեզի հաւատոյ լցոր պարգեւեց, անանկ ալ շնորհէ մեզի հաւատըը կենդանի պահելու հարկաւոր եղածները, այս ինքն՝ սէր Աստուծոյ ու ընկերին եւ ամէն տեսակ բարեգործութիւններ. ամէն:

ԵԽ Ս. ՅԵԿՈՎՅ ՄՖՐԵՍՅ ՀԱՅՐԱՊԵՏ

Եյսօր, ով սբանչելի սուրբդ Աստուծոյ, որ քու յիշատակդ կը տօնենք, հրաշալի պատկերիդ առջնն ինկած կ'աղաչենք, որ հայրական գթութեամբ աչուրներդ մեզի գարձընես ու տեսնես մեր խեղճութիւնը: Քանի որ աս աշխարհքիս մէջ ենք ու մեր թշուառ մարմնոյն կը ծառայենք, արժանի ենք որ Աստուած ալ իր արդարութեամբն զմեղ անդադար պատուհասէ զանազան հիւանդու-

թիւններով: Դուն, հայր սուրբ, քու սուրբ աղօթքովդ զմեղ ազատէ ու աստուածային բարկութիւնն իջեցուր: Պահէ զմեղ ժանտամահէն, որ ըլլայ թէ առանց աղէկ պատրաստութեան եւ Աստուծոյ հետ հաշտուելու՝ մեղաց մէջ մեռնինք ու Աստուծոյ գատաստանին պարտաւոր մնանք: Օրհնէ քրիստոնեայ ժողովուրդը, որ օրէ օր աճին ու բազմանան. մեր գաշտերուն ու ջրերուն առատութիւն պարգեւէ, որպէս զի հաւատացեալները սով ու նեղութիւն չկրեն: Կ'աղաչենք քեզի, ով սուրբդ Աստուծոյ, որ մեռնելու ատենիս զմեղ անօդնական չթողուս. քու բարեխօսութեամբդ զմեղ արժանի ընես ընդունելու ամենասուրբ չաղորդութիւնն եւ ուրիշ հարկաւոր խորհուրդները, որ միսիթարեալ սրտիւ ու սրբութեամբ մեռնելու արժանի ըլլանք. ամէն:

ԱԹ Ս. ԱԿՏՈՆ ՃԳՆԱԷՒՈՐ

Ո՛Վ երաննելի սուրբ հայր Անտոն,
մարդկային բնութենէս վեր հրաշալի
սրբութեամբ փայլեցար ու անտա-
նելի ճգնութիւններ քաշեցիր լե-
ռանց մէջ. Եգիպտոսի անապատը
դրախտի նման սուրբ ճգնաւորներով
զարդարեցիր ու գլուխ ճգնաւորաց
կոչուեցար: Ո՛Վ սուրբ Անտոն, զիս
մի զրկեր քու պաշտպանութենէդ,
այլ ընդունէ քեզի հոգեւոր զաւակ.
Հնորհք ու զօրութիւն խնդրէ Աս-
տուծմէ ինձի համար, որ սատանային
փորձութիւններուն կարող ըլլամ
քաջութեամբ միշտ դէմ կենալ, որ
զիս Աստուծոյ աչքէն հանելու կը
ջանայ: Տուր ինձի, ով երաննելի հայր
սուրբ, ան վառեալ սէրը, որ ես ալ
բորբոքիմ Աստուծոյ սիրովը քեզի
պէս, որ ամէն աշխարհային բաներն
ոչինչ համարեցար. պղտիկուց աշ-

Խարհքը թող տուիր, անապատ գա-
ցիր եւ հոն անհամար նեղութեանց
ու փորձութեանց համբերեցիր: Կ'ա-
ղաշեմ քեզի, խնդրէ ինձի համար
ալ ան շնորհքը, որ գոնէ սիրտս աշ-
խարհքիս բաներուն չկապեմ, սա-
տանային փորձութեանց դէմ կենամ
ու մարմնոյս ուղածները չկատարեմ:
Պահէ զմեղ նաեւ կրակէ ու ամէն
չար պատահմոնքներէ, որպէս զի
արդելք չըլլան մեր յառաջադիմու-
թեան: Սուրբ Անտոն, զմեղ բոլոր
քեզի կը յանձնենք, մեր հոգին ու
մարմինը, դուն պաշտպանէ ու պա-
հէ. ամէն:

ԱԹ Ս. ԱԿՏՈՆ ՊԱՏՈՒՅՑԻ

Ո՛Վ սիրելի սուրբդ Աստուծոյ,
անանկ առաքինութիւններով փայ-
լեցար աշխարհքիս մէջ ու անչափ
շնորհքներու արժանի եղար, որ քու
սրբութեանդ անունն ամէն տեղ

տարածեցաւ: Կ'աղաշեմ քեզի ջերմ
եռանդ սրտով, ով սուրբ Անտոն,
մամնաւոր շնորհք խնդրէ Յիսուսէն
ինձի համար, որ գէշ վարքս փոխեմ
ու միայն հոգիս փրկելու ջանամ:
Դուն քանի որ կենդանի էիր, սիրտդ
Աստուծոյ սիրովը վառուած էր ու
միշտ մեղաւ որներունդարձին ծարաւի
էիր. Հիմակ երկինքէն, սուրբդ Աս-
տուծոյ, բարեխօս եղիր ինձ մեղաւ-
որիս ու սրտիս զեղջ տուր: Ամէն
մեղքի վտանգներէն զիս պահէ, ամէն
տեսակ փորձանքներէն զիս աղատէ,
բանիս գործքիս յաջողութիւն տուր,
ամէն տեղ պաշտպան կեցիր ինձի
թէ ծովու եւ թէ՛ ցամաքի վրայ:
Ինչպէս որ կենդանութեանս՝ անանկ
ալ մահուանս ատեն զիս մի թողուր,
օգնութեան հասիր, որ Աստուծոյ
շնորհաց մէջ հոգիս աւանդեմ:

ԸԹ Ս+ ԱՆԵ

Երջանիկ ես, ով սրբուհիդ, քու
աղնիւ զաւակովդ, որ առանց արատի
մը արժանի եղար ծնանելու զկցոն
Մարիամ Աստուծոյ մայրը, երկրիս
օրհնութիւննու երկնից ցնծութիւնը:
Սրտիդ ան մեծ ուրախութեան հա-
մար՝ որ ունիս արքայութեան մէջ,
իբրեւ մայր երկնից թագուհւոյն,
նայէ մէյ մը ինձի մայրական աչօքդ
ու տես հոգւոյս խեղճութիւնները:
Մայր սուրբ, քու առջիդ ինկած լա-
լով կը պաղատիմ, ալ մի թողուր
զիս աս ողորմելութեան մէջ, գքեզ
սիրող հոգիս մի երկար ատեն զըկեր
շնորհքներէդ: Դուն մաքրէ սիրտս
ամէն երկրաւոր ունայնութիւններէն
ու Աստուծոյ սիրովը լեցուր. մոքիս
լցոս տուր, որ սատանային խաբէու-
թիւններուն չհետեւիմ: Զիս քեզի
կը յանձնեմ, ով սրբուհի, դուն

արժանի ըրէ տեսնելու սիրելի զաւ-
ակդ եւ զՅիսուս. ամէն:

ԱԹ Ս. ՀՈԽՎԻՄԵ ԵՒ ԳԵՑԻԱՆԵ

Ո՛Վ սուրբ հարսունք երկնաւոր
փեսային Քրիստոսի, իմաստուն կու-
սանք, ձեր հաւատոյ ու սրբութեան
լուսով՝ բոլոր Հայաստան լուսաւորե-
ցիք. եւ Ճմարիտ մայր եղաք մեզի
մկրտութեան սուրբ աւազնէն զմեզ
Աստուծոյ որդի ծնանելով: Ձեր
թափած անմեղ արիւնովն Աստուծոյ
սիրտը գութ շարժեցիք ու սուրբ
Լուսաւորչին հետ գործակից եղաք
մեր փրկութեան: Ո՛Վ երանելի կու-
սանք, սիրտս բոլորովին բորբոքեալ
ձեզի կը կարօտի. աչուըներս եր-
կինք վերցուցած՝ զձեղ բարեխօս կը
կանչեմ. ձեր սուրբ յիշատակին օրը
բացէք ինծի երկնային շնորհաց գան-
ձերը. վառեցէք սիրտս աստուա-
ծային սիրով, որ բոլոր աշխարհք

մէկդի ձգելով՝ միայն Աստուծոյ հա-
ճոյ ըլլալու ջանամ: Ամէն հաւատա-
ցեաներուն համար բարեխօս եղէք,
որ քրիստոնէաբար ապրին ու ար-
քայութեան արժանի ըլլան. ամէն:

ԱԹ ՊԵՃՊՎԱՆ ՍՈՒՐԲՆ

Ո՛Վ փառաւորեալ սուրբդ Աս-
տուծոյ, երկնային փաստաբան ու
բարեխօս մեղաւոր հոգւցոյ. քեզի
կը դիմեմ բոլորով սրտիւ, ինչու որ
դուն ես իմ օգնականս ու պաշտպանս
Աստուծոյ առջին. քու աստուածա-
հաճոյ աղօթիցդ կը յանձնեմ հոգիս
ու մարմինս: Ո՛Վ ընտրեալդ Աստու-
ծոյ, կը ճանչնաս իմ տկարութիւնս,
գիտես կարօտութիւնս. անոր համար
զիս մի թողուր ու ազատէ ամէն
փորձանքներէն: Թէ որ ձախորդու-
թիւն մը հանդիպի ինծի, մօտ եղիք.
ամէն գործքիս մէջ դուն եղիք ինծի
բարի խորհրդատու. մեղաց առիթ-

ներու մէջ որ գտնուիմ, դուն զիս
յափշտակէ սատանային ձեռքէն: Ո՛վ
պաշտպան իմ, դուն ցուցուր ինծի
արքայութեան նեղ ճամբան. Եւ
ձեռքէս բռնելով՝ առաջնորդէ առ
Յիսուս փրկիչ մեր, որ հօն շնորհա-
կալ ըլլալով քեզի միատեղ ուրա-
խանակ յաւիտեանս. ամէն:

ԱՆՕԹՔ

Ա Թ Ե Ս Թ Կ Խ Ա Յ Ա Յ Ա Յ

ԱՍՏՈՒԾԱԾԱՄՈՒԹ

Առ կոյսն ցառագին:

Հայր երկնաւոր, նայէ երկինքէն
աս սուրբ ողջակիզին, որ ցաւագին
Մայրն իր մեռեալ մէկհատիկ Որդին
ձեռուըներուն վրայ առած քեզի
կը մատուցանէ. Եւ ինքն ալ խաչին
տակը կենդանւցն զոհ եղեր է ու
անտանելի ցաւերու մէջ կ'այրի կը
տուզրի: Ո՛վ անմիսիթար սուրբ Աս-
տուածածին, աննման Որդւոյդ ա-
րեան մէջ թաթիսուած ու բոլորո-
վին խոցոտուած մարմինը գիրկդ
առեր՝ մինակուկ նստեր կու լսա, եւ
անհօւն ցաւերու ծովու մէջ ընկղմեր
ես անմիսիթար: Մէյ մը Յիսուսի
վերաց պատուածներուն կը նայիս,
մէյ մը ան փշեղէն պսակին աչքդ կը

դարձընես. եւ անոր գոց աչուըները
տեսնելով դուն ալ սաստիկ ցաւերու
մէջ մթնցեր ես: Այս մայր ցաւագին,
ալ սիրոս չեղիմանար զքեղ ասանկ
խեղճ տեսնելուս. աղբիւրի նման ար-
ցունքիդ ձայնը հիմայ կը լսեմ, որ
լալով կը կանչես. Դարձէք իմ ցաւե-
րուս նայեցէք, թէ աշխարհքիս մէջ
եղած է ցաւ իմ ցաւերուս նման: Ո՛վ
վշտագին սուրբ Աստուածածին, բաց
ինծի ալ սրտիդ դառն ցաւերն ու
խոցէ սիրոս սրով քու ցաւոցդ:
Աւելի կընարեմ քեզի հետ լալ՝
քան բոլոր աշխարհքիս ուրախու-
թիւնը: Կ'ուղեմ քու ոտքիդ տակ
իմ մեռեալ Յիսուսիս վրայ լալով
մեռնիլ ու ամենեւին անկից չբաժ-
նուիլ. ամէն:

Առաջին ցան:

ՈՎ ամենասուրբ Տիրամայր, յի-
շէ ան մեծ ցաւդ, որ Ախմէսն ծերու-
նոցն գուշակութեամբը սրտիդ մէջ
ունեցար, թէ օր մը պիտի գայ՝ որ
սիրելի Որդիդ շարչարուի ու մեռնի.
Եւ աս իբրեւ սուր մը սիրոդ պիտի
անցնի: Մեծ խոց եղաւ ասիկայ
գթած սրտիդ եւ խոր տրտմութեամբ
զքեղ լեցուց, որ երեսունուիրեք
տարի միշտ կրեցիր: Այս ցաւագին
Մայր, ես ալ որչափ սուրեր խոթեր
եմ սիրոդ, եւ մեծագոյն ցաւերու-
պատճառ եղած եմ քեզի դէմ մեղք
գործելովս: Բայց հիմայ սրտանց ամեն
ըրածներուս վրայ զղալով՝ կա-
զաշեմ որ սիրելի Որդւոյդ հետ զիս
հաշտեցընես, որ Յիսուս ըլլայ ինծի
նշան կանգնելու եւ յաւիտենական
փրկութեան հասնելու: Աս առջի
խոցդ յիշելով, սուրբ Տիրամայր, կը
խնդրեմ քեզմէ, որ ինծի խոնարհու-

թեան ու համբերութեան շնորհք
տաս, որ ամէն բանի մէջ զիս Աս-
տուծոյ կամաց համակերպելով՝ քեզի
նմանող ըլլամ. ամէն:

Հայր մեր որ յերկինս:
Ողջո՞ն քեզ Մարիամ.

Երկրորդ ցան:

Ո՛վ վշտագին սուրբ Աստուա-
ծածին, յիշէ երկրորդ քաշած ցաւզ,
որ չերովդեսին հալածումէն վախ-
նալով՝ գիշերանց ելար Եգիպտոս
փախար: Ի՞նչ խեղճ ու ծանր բան
էր, որ նորածին որդիդ գիրկդ առած
սուրբ Յովսեփայ հետ՝ առանց պատ-
րաստութեան լեռնէ լեռ ան երկար
ձամբան կ'երթայիր: Ո՛վ տրտմալից
կըս, մեծ եղաւ իրաւցընէ ցաւոցդ
գառնութիւնը. բայց երանի թէ ևս
ալ նորէն սրտիդ տրտմութեամ պատ-
ճառ չըլլայի զՅիսուս սրտիս մէջէն
հալածելով: Կը խոստովանիմ, ով

սուրբ Տիրամայլը, որ շատ անգամ
չերովդեսէն վար չեմ մնացեր, չար
կիրքերս կատարելով՝ իբրեւ թէ
Յիսուսին մեռնիլն ուզեր եմ: Ո՛վ
Մայր ցաւագին, շնորհք ընդունէ
ինձի այսօր, որ ամէն արատներէն
մաքրելով՝ սիրտս՝ քեզի ու սիրելի
Որդւոցդ բնակարան մը զարդարեմ,
որ սրտիս մէջ մանէք բնակիք ի
յաւիտեան. ամէն:

Հայր մեր որ յերկինս:
Ողջո՞ն քեզ Մարիամ:

Երրորդ ցան:

Ո՛վ տրտմալից Մայր, ամէնէն մեծ
եղաւ աս ցաւդ մայրական սրտիդ.
ինչու որ ուրիշ քաշած կսկիծներուց
ատենը սիրելի Յիսուսդ քու սրտիդ
միակ միմիթարութիւնը միշտ հետդ
էր. հիմակ ան կորսընցընելով՝ գրեթէ
զքեզ ալ դառն ցաւերու մէջ կոր-
սընցուցիր: Ի՞նչ ցաւագին օրեր եղան

քեզի ան երեք օրը, ով Մայր վշտա-
դին, որ չորս դի ինկած անձկալի
զաւակի կը փնտուեիր, գիշեր ցորեկ
անմխիթար լալէն չէիր դադրեր:
Ետքը տաճարին մէջ գտար ու ցաւած
սրտով բացիր իրեն ներսի խոցդ.
Ով որդեակ, աս ի՞նչ բան ըրիր
դուն մեզի: Ո՛վ ցաւագնեալ Մայր,
թող տուր, որ ես կանչեմ ասանկ
Յիսուսին ուսքն ինկած. դուն քիչ
մը ատեն Յիսուսին տեսութենէն
զրկուեցար, բայց միշտ սրտիդ մէջ
կը կրէիր. իսկ ես մեղանչելով՝ բո-
լորովին Յիսուս կորսնցուցի ու հո-
գիս խեղճ մնացեր է: Ո՛չ Մայր ո-
ղորմութեան, աս երրորդ քաշած
ցաւդ պսօր յիշելով՝ կը պաղատիմ
քեզի, ինձի անանկ շնորհք մը տաս,
որ ճշմարտապէս գտնեմ իմ Յիսուսս
ու մէյ մ'ալ չկորսնցընեմ. ամէն:

Հայր մեր որ յերկինս:
Ողջն քեզ Մարիամ:

Զորուրդ ցառ:

ՈՎ Մայր ցաւագին, ի՞նչ սոսկալի
ցաւեր զգաց մայրական սիրտ, երբ
որ տեսար սիրելի Որդիդ անդուժ
թշնամեաց ձեռք ինկած, ի մահ
դատապարտուած, ողջ տեղ մը չէր
մնացեր բոլոր մարմնոյն վասյ, գլուխը
փշէ պսակ կապած՝ կռնակը մէկ ծանր
խաչ բեռնաւորեր էին, եւ չուանով
կապած քաշկուտելով կը տանէին
Գողգոթա լեռը խաչելու: Թէ որ
ուրիշ կանանց սիրտը չդիմանալով
անոր խեղճ կերպարանքին՝ կու լային
կ'ողբային, արդեք քու խանդակաթ
սիրտ ինչ մահաբեր ցաւեր կրեց:
Ո՛չ ցաւալից Մարիամ, մեղքերս ալ
Յիսուսին մեծ խաչ եղեր են ու ատ
կակծելի չարչարանքներուն պատճառ.
Հիմա աս չորրորդ ցաւդ յիշելով՝
Համբերութեան շնորհք կը խնդրեմ,
որ ես ալ իմ խաչ սիրով գրկելով
Յիսուսին ետեւէն երթամ մինչեւ

Գողգոթա լեռը, այսինքն՝ մինչեւ որ
մեռնիմ: Ո՛վ տուրբ Տիրամայր, տուր
ինծի վիրաւորուած սիրտ մը, որ
հետդ ցաւիմ ու քեզի պէս խաչն
տակէն չհեռանամ. ամէն:

Հայր մեր որ յերկինս:
Ողջն քեզ Մարիամ:

Հինգերորդ ցաւ:

Ո՛վ Մայր լի ամէն ցաւերով,
ահա խոցուեցաւ մայրական սիրտդ
Արմէռնի աներեւոյթ սրովն ու բու-
լորովին ցաւոց մէջ ընկղմեցար, երբ
որ տեսար Աստուածորդիդ խաչն
վրայ երեք անխնաց գամէ կախուած
ու ան կուսածին մարմինն արիւն-
ներու մէջ թաթխուած: Երկնի եւ
երկրի մէջ խաչուեր կեցեր է, եւ
ի գութ շարժող մը չկայ. մարդիկ
զինքը խաչեր են, Հայր Աստուած
ալ բոլորովին թող տուեր է: Միայն
գուն, ով վշտագին սուրբ Աստուա-

ծածին, ամէն ցաւերն ալ սրտիդ մէջ
ժողվեր ես, խաչն տակ կեցեր
կայրիս կը տոչորիս կենդանի: Ո՛հ
Մայր ցաւագին. արեւը խաւարեցաւ
ու քարերը չգիմացան. իսկ քու կե-
նացդ արեւն ինչպէս չմթնցաւ, մայ-
րենի սիրտդ ինչպէս դիմացաւ ատ-
շափ ցաւոց: Ո՛վ Մայր, ոտքդ ինկած
կ'աղաչեմ՝ պատուէ քար գարձած
սիրտս ու լցուր գառն ցաւերով,
որ ես պատճառ եղայ Յիսուսի մա-
հուան: Մի, Մայր, մի գոցեր գէմն
սրտիդ գութը, ինչու որ զիս քեզի
յանձնեց Որդիդ ու ցաւերովդ զիս
քեզի որդի ծնար. գուն զիս պաշտ-
պանէ ու քեզի արժանի որդի ըրէ:

Հայր մեր որ յերկինս:
Ողջն քեզ Մարիամ:

Վեցերորդ ցաւ:

Ո՛վ Մայր ցաւագին, ինչ սաստիկ
ցաւ ունեցար, երբոր մեռեալ Որ-

դւսդ կողը տիգով զարկին՝ մինչեւ
սիրաը պատուեցին. թէպէտ Յիսուսի
սիրաը վիրաւորեցաւ, բայց ցաւը
քու սիրտդ անցաւ: Ո՞վ անմիխթար
Մայր, ալ նստէ խաչին տակ, դիրկդ
առ սիրական Որդւսդ մեռած մարտ
մինը, գուցէ անով սիրտդ պաղըշտկի:
Այլ ափանս, դարձեալ նոր ցաւերով
սիրտդ վիրաւորեցաւ. յառաջ միայն
տեսնելով կը ցաւէիր, հիմայ ձեռքով
անթիւ վէրքերը կը շշափես, պա-
տռած սիրտը կը տեսնես ու վի-
րաւորուած գլուխը ձեռքիդ վրայ
դրեր ես: Ասկից ալ աւելի ինչ կսկիծ
ու տանջանք կրնար ըլլալ քեղի,
Մայր սուրբ, որ շարունակ մարտիրո-
սութիւն քաշես ու կենդանի մնաս:
Ո՞վ Մայր վշտագին, մեծապէս կը
ցաւիմ որ իմ մեղքերս պատճառ
եղան քու որդւսդ մահուան ու քե-
զի ասանկ խիստ ցաւեր հասցուցին:
Ո՞վ Տիրամայր, սրտիս արտասուաց

շնորհը տուր, որ քու ոտքիդ տակ
լամ ողբամ ու արցունքներովս միսի-
թար ըլլամ ցաւած սրտիդ, որ մեռ-
ուած ատենս գուն ալ զիս միսիթա-
րես. ամէն:

Հայր մեր որ յերկինս:
Ողջ զն քեզ Մարիամ:

Եօթներորդ ցաւ:

Ո՞վ ցաւադին Մայր, ո՞վ կրնայ
պատմել մայրենի սրտիդ ան ետքի
քաշած ցաւը, երբ մեռեալ Որդիդ
գրկէդ առին՝ որ սուրբ գերեզմանը
գնեն. թէպէտ խիստ պատուաւոր
եղաւ թաղումը, բայց անկից բաժ-
նութիդ բոլորովին դաւնութիւն էր
սրտիդ: Ամէն դիաց ցաւերով լե-
ցար. բոլոր ցաւերէդ անմիխթար
ցաւ եղաւ ան տրտմագին տեսիլը,
երբ որ ետքի անգամ նայեցար սի-
րական Որդւսդ, եւ աչքիդ առջեւէն
ալ յափշտակելով՝ գերեզմանին

դուռը գոցեցին: Ո՞չ ցաւագնեալ
Մայր, ուր է անդին գանձգ, ուր է
սրտիդ միմիթարութիւնը, ուր է սի-
րելի Որդիդ. ինչպէս բաժնեցիր
սիրտիդ քեզմէ. տրտմութեամբ գե-
րեզմանին մօտ նստեր կու լսու. ով
կընայ զքեզ միմիթարել, որ երկնի
եւ երկրի ցնծութիւնը զքեզ անանկ
սգոյ մէջ ընկղմեր է: Ո՞վ Մայր սուրբ,
հիմա եօթը խոցդ առջեղ գնելով՝
ոտքդ ինկած կը խնդրեմ, Յիսուսի
չարչարանաց ու քու ցաւոցդ համար
ողորմիս մեղաւոր հոգւոյս, բոլոր
ըրածներուս թողութիւն տաս: Յի-
սուսին մահը սրտիդ մէջ գութ ձգէ
վրաս, ցաւերդ զիս գժոխքէն փրկեն
ու բարեխօս ըլլան ինծի, որ աս աշ-
խարհքս միշտ ցաւերդ յիշելով՝ եր-
կինքը քեզի հետ ուրախանամ:

Հայր մեր որ յերկինս:
Ողջն քեզ Մարիամ:

ԱՊՈՔ

Յ Ի Ս Ա Կ Ս Ի Հ Ե Կ

Վ Է Բ Ք Ե Բ Ա Կ Ի Ն

Զախ սորին վիրացը:

Կամարհութեամբ գետինն ինկած
կը համբուրեմ ձախ սորիդ վէրբը,
ով ողորմած Փրկիչ իմ. Կաղաչեմ
քեզի որ միջնորդութեամբ սուրբ
վէրբիդ ամէն մեղացս թողութիւն
տաս, որ մինչեւ հիմա հինգ զգայա-
րանքովս քեզի դէմ մեղանչեցի: Ո՞վ
բարի Յիսուս, աս պատուական վի-
րացդ համար պահէ զիս ամէն փոր-
ձանքներէն չար թշնամոյն, որ ի
քեզ միայն կենդանի ըլլամ:

Ի պատիւ աս սուրբ վէրբիդ, ով
Յիսուս, կը նուիրեմ քեզի ամէն
քաշած վշտերս ու նեղութիւններս
աշխարհիս մէջ: Խառնէ, Տէր իմ,
աս անարժան ընծաս դառն խա-

չիդ ու չարչարարացդ հետ. շնորհը
տուր ինծի, որ ամէն գդբախտու-
թիւններու սիրով տանիմ եւ զիս
սուրբ կամացդ յանձնեմ միշտ:

Հայր մեր որ յերկինս:
Ողջո՞ն քեզ Մարիամ:

Աջ ոտքին վիրացը:

Ո՞վ ամենաքաղցր Յիսուս, քու
աջ ոտքիդ սրբազն վէրքին համար
ան ամէն մեղացս ներումն շնորհէ,
որ իմ գարշելի մտածութիւններովս
զքեզ վշտացուցի: Գուն, Տէր իմ,
ցաւագին փշեղէն պսակիդ արդեամբը
մորիս երկնային սուրբ մտածու-
թիւններ տուր ու Հոգւոյն սրբոյ
շնորհքով զիս լեցուր. սուրբ ազգե-
ցութիւններդ վրայէս անպակաս ըրէ,
որ ասկէց ետքը միայն քեզի հաճոյ
ըլլալու ջանամ:

Ի պատիւ աս սուրբ վէրքիդ, ո՞վ
Փրկիչ իմ Յիսուս Քրիստոս, կ'ա-

ռաջադրեմ իբրեւ քու ձեռքէդ
ընդունիլ ամէն բան, թէ յաջողու-
թիւն եւ թէ ձախորդութիւն, թէ
բարեկամ եւ թէ թշնամի: Գու
Տէր, քու հայրական նախախնամու-
թեամբդ զիս հոգա ու մի թողուր՝
որ երբեք քեզմէ բաժնուիմ:

Հայր մեր որ յերկինս:
Ողջո՞ն քեզ Մարիամ:

Դախ նեռքին վիրացը:

Ո՞ջ լեր, ո՞վ վիրաւորեալ ձեռք
Յիսուսի, մեծ փափաքով ու սիրով
կը համբուրեմ ու զքեզ կօրհնեմ:
Միջնորդութեամբ աս սուրբ վէրքիդ
կ'աղաչեմ, որ ալ չփշես մեղքերս՝
որ չար կիբքերովս՝ անժուժկա-
լութեամբս ու բարկութեամբս հո-
գիս աղտեղեցի: Ո՞վ սիրելի Յիսուս, -
քու ամենազօր ձեռքդ դիր վրաս ու
զիս պահպանէ, որ կարող ըլլամ
թշնամիններուս ձեռքէն աղատիլ:

Ի պատիւ աս սրբազնն վէրքիդ,
ով ողորմած Յիսուս, սրտանց մեղայ
կը գոշեմ ու կը զզամ ամէն չար
գործքերուս վրայ: Դուն բարերար
Տէր, անդին արեամբդ լուա ու
մաքրէ հոգւցս աղտեղութիւնը, որ
գատառատանին օրը ողորմութեանդ
արժանի ըլլամ:

Հայր մեր որ յերկինս:
Ողջն քեզ Մարիամ:

Աջ ձեռքին վիրացը:

ՈՎ ամենաբարի Յիսուս, սուրբ
ձեռքիդ վէրքն ըլլաց ինձի հայելի,
որուն մէջ տեսնեմ իմ մեղացս
մեծութիւնն ու բաղմութիւնը, ան-
միմար լամ ու ցաւիմ: Ան ողոր-
մած Տէր, խառնէ աս թափած ար-
ցունքներուս հետ կաթիլ մը վիրաւ-
որած ձեռքիդ արիւնէն. ընդունէ
աս նուէրս արդարութեանդ ունեցած
անթիւ անհամար պարտքերուս տեղ:

Զանազան մեղքերով վիրաւորուած
հոգիս դուն կենդանարար վէրքերովդ
բժշկէ ու մաքրէ. եւ զօրութիւն
տուր հոգւոյս, որ միայն քու սուրբ
կամքդ կատարէ:

Ի պատիւ սրբազնն վէրքիդ, գը-
թած Յիսուս, հաստատէ սրտիս մէջ
սուրբ երկիւղդ ու աստուածային
ներկայութիւնդ, որ միշտ աղէկ ա-
պրիմ ու առաքինութեանց ետեւէ
ըլլամ: Ծնորհք ալ տուր՝ որ ամէն
գործքս ի փառս քո ընեմ:

Հայր մեր որ յերկինս:
Ողջն քեզ Մարիամ:

Յիսուսի կողին:

ՈՎ վիրաւորուած կող Յիսուսի,
երբոր կը դառնամ քեզի կը նայիմ,
սիրելի Փրկչս կաթոգին սիրտը կը
տեսնեմ, որ բոլորովին աստուածային
գլութեամբ ու սիրով լեցուած՝
իմ կորսուած հոգիս կուզէ:

Ո՛վ քաղցր սիրտ Յիսուսի, ամենէն
աւելի ցաւ եղած են քեզի մեղքերս
ու անտանելի տրտմութեան մէջ
ձգեր են: Թշնամիներէդ անդամ մը
միայն վիրաւորեցար. բայց իզմէ բիւր
անդամ խոցուեցար: Որչափ ալ ան-
արժան ըլլամ, Տէր, քու շնորհացդ,
միշտ ցաւադին սիրտդ գթութիւն
կ'աղաղակէ. Հինգ սուրբ վէրքերդ
միջնորդ կ'ըլլան ինծի համար, քաշած
ցաւերդ ու թափած արիւնդ արդա-
րութեանդ առջին կը հանեն: Գութ
շարժեն զքեզ վրաս քու սուրբ վէր-
քերդ. առ զիս վիրաւոր սրտիդ մէջ
ու պահէ ամէն թշնամիներէն. թող
մի տար ամենեւին, որ քեզմէ բաժ-
նուիմ:

Հայր մեր որ յերկինս:
Ողջո՞ն քեզ Մարիամ:

Աղօթք առ խաչելեալն Քրիստոս:

Տէր իմ Յիսուս Քրիստոս Արդի
Աստուծոյ կենդանւոյ, գուն ձեռուը-
ներդ տարածեցիր Խաչին վրայ, եւ
ինծի համար գառն չարչարանքներ
քաշեցիր. կ'աղաւեմ կը պաղամիմ
քեզի հիմայ, օգնութիւն ըսէ ինծի:
Քեզի կը դիմեմ, Տէր, իբրեւ աղքատ
մը մեծատունիոր, ողբրմելիս ողոր-
մածիդ, հիւանդս բժշկիդ, անօթիս
կենաց հացիդ, ծարաւիս առ աղ-
բիւրդ կենդանութեան, որ ամե-
նւեին չես ցամաքիր, իբրեւ արարած
իր արարչին, վերջապէս իբրեւ խեղճ
մեղաւոր իր գթած ու բարերար
Փրկչին: Ո՛վ քաղցր Յիսուս, ես
ինքիրմէս կը խռատովանիմ ըրած ամեն
չարութիւններս: Անօրէնութեամբ
յղացայ եւ ի մեղս ծնաւ զիս մայր
իմ: Գուն զիս լուացիր ու սրբեցիր.
ես գարձեալ մեղանչելով՝ նորէն

աղտոտեցի արեամբդ լուացուած հոգիս. եւ իբրեւ ապերախտ ու անշնորհակալու՝ քեզմէ այնչափ բարիքներ ընդունելէն ետքը՝ ելայ զքեզնորէն մեղքս անարգեցի ու վատացուցի:

Ա.ՅԼ դու գթած Տէր, ողջոմէ անարժան որդուսդ, որ անչափ ցաւերով ու չարչարանքովդ ծնար ի կեանս: Մի նայիր մեղքերուս, որովքու բարութիւնդ ոտքի տակ առի. այլ յիշէ մեծ սէրդ, որով զիս ստեղծեցիր: Ընդունելի ըլլայ քեզի աս աղաչանքս, Տէր իմ Յիսուս. գթավրաս ողորմութեամբդ ու մի դարձըներ երեսդ ցաւագնեալ հօգիէս. որովհետեւ ինձի համար չգարձուցիր սուրբ երեսդ զարնողներէն ու թըքնողներէն:

Գիտեմ, Տէր, որ մեղաւոր եմ եւ մեղքս բիւր անգամ արժանի եղայ դժոխոց. ես իզմէ չեմ բաւական

յանցանքներուս հատուցում ընելու. իմ հատուցումն քու սուրբ արիւնդէ ու քաղցր մարդասիրութիւնդ, որ բոլոր աշխարհքիս մեղքը քու անմեղուսիդ վրայ կը բառնաս: Դու Տէր իմ, չես ուզեր մեղաւորիս մահը, չես ուրախանար անոր կորսուելուն. ինչու որ անոր համար մեռար, որպէս զի մեռածները կենդանացընես: Ովք բարի Յիսուս, ով կրնայ անցյս ըլլալ ու տարակուսիլ քու ողորմութեանդ վրայ, որ մեր ապերախտներուս համար մեռար, որպէս զի Աստուծոյ հետ գարձեալ հաշտեցընես: Թէ որ առանց իմ աղաչելուս վրաս ի դութշարժեցար, որչափ աւելի հիմայ՝ որ մեծ կարօտով կը ինդրեմ ողորմութիւնդ:

Գիտեմ, Տէր իմ Յիսուս, որ խիստ ողորմած ես. ան դառն ցաւերուն մէջ խաչէն կախուած՝ թշնամեացդ համար աղօթեցիր, դրախտին

դուռն աւաղակին բացիր. միայն ե՞ս
պիտի զուրկ մնամ քու ողորմու-
թենեդ: Ո՞չ Տէր, խաչիդ ոտքն ին-
կած՝ լալով կ'աղաչեմ, ողօրմէ ինծի
ու սուրբ չարչանքներովդ հոգիս
միսիթարէ, եւ ընդունէ ան երջանիկ
աւազակին պէս երկնից արքայու-
թիւնը:

Երդ տեսոն ներսիսի:

“Երոգող տիեզերաց՝ որ զգեցու-
ցեր մեղ լշս փառաց. արկար զբեւ
ի զինուորաց՝ քզամիդ կարմիր նա-
խատանաց. մերկեա յինէն զբուրձ
մեղաց, զտրտմագոյն արեամբ ներ-
կած. եւ զգեցո զուրախալին, զպատ-
մուճանն իմ զառաջին:

Երկնաւոր թագաւորիդ՝ ի ծունր
իջեալ խաղ առնեին. ծածկեալ
զգլուխդ կոփէին եւ եղեգամբք
հարկանէին. եւ զիմ անկեալ մինչ
ի գետին՝ ի հնաղանդել կամաց չարին,

մի թողուցուս խաղալ սովին, այլ
կանգնեսցես զիս վերստին:

Յամեալ բոլորդ քո մարմին՝ յետ
վճռոյ դատաւորին, սաստիկ էառ
զչարուած գանին՝ վասն գանից նա-
խաստեղծին. զիս որ յոտից մինչեւ
ցգլուխ՝ ցաւօք նեղիմ անհնարին,
առողջացո դարձեալ կրկին՝ որպէս
շնորհօք աւազանին:

Սրբափայլ պՃնեալ զարդուն՝ զոր
զգեցուցեր Ահարովին. փոխան պը-
սակ ի փշոց եղին՝ մշակք սյգւոյն
խրայելին. զիուշ մեղաց հանցես
յինէն՝ զոր յիս եհար իմ թշնամին.
եւ ողջացո զիսայթուած վերին, զի
սպիր մեղացն ջնջեսցին:

Ետուն ըմկել քեղ զլեղին եւ
զբացախն ի ծարաւին. արբեր կամաւ
զի քաղցրասացին՝ ճաշակք պտղոյ
դառնագունին. զդառնութիւն թու-
նաւորին՝ զոր ի մասունս հոգւոյս ար-
կին. հերքեա ի բաց հանգերձ

սովին, եւ քաղցրասցի սէր քո ի
սմին:

Ստեղնեալ ծառոյ մահաբերին՝
այն որ բուսաւ ի մէջ դրախտին,
փոխան բարձեր զիսյո խաչին, ի
գողգոթա հաներ տեղին. զիմ առ ի
մեղս անկեալ զոգի եւ ծանրագոյն
բարձօղ բեռին, բարձ ի յուսիդ
ըստ ոչխարին, հան ի յերկինս յուշ-
տեալ տեղին:

Ի յուբաթու ժամ երրորդին՝
բեւեռեցար Տէր ի խաչին, լուծեր
զյանցանս նախաստեղծին եւ կա-
պեցեր զթշնամին. զիս ամրացո ընդ
հովանեաւ կենդանարար քո նշանին,
եւ ի ծագելն յարեւելից՝ լուսաւ-
որեա լուսով նորին:

Երանեալ աւազակին՝ բացեր ըզ-
դուռն աղին դրախտին, ըստ հաւատոյ
սրտի նորին՝ կատարեցեր զինդրելին.
տուր եւ ինձ Տէր ընդ նմին՝ լաել
զնոյն պատասխանին. այսօր ընդ իս

իցես յաղին՝ ի հայրենիս քո ա-
ռաջին:

Քարբառելով գէլի էլին՝ հիմունք
երկրի տատանէին, եւ վարագոյր հին
օրինին՝ վերուսա ի վայր պատառէին.
արդ ընդ վիմացն որ շարժէին՝ շարժեա
զանշարժ սիրտ ի բարին. ընդ
պատառիլ վարագուրին՝ զիմ պատա-
ռեա զգիր պարտին:

Արեգական լոյս քող արկեալ՝
խաւարանայր միջօրէին, եւ գերեզ-
մանք բանային, մարմինք սրբոցն
յառնէին. ընդ խաւարիլ լուսաւո-
րացն՝ մաքրեա յինէն զգործ խաւա-
րին. ընդ մեռելոցն որք յառնէին՝ կան-
գնեա զմեղօք մեռեալ հոգիս:

Նոր սիրոյ պատուիրանին՝ գործով
լցող եղեր բանին, աղօթելով առ
Հայր յերկին՝ թողուլ զմեղս որ ի
խաչին. ինձ որ հոգւովս հաւատա-
ցեալ՝ երկրպագեմ քեզ Միածին,

թող զուծումն հրամանին, մի յիշեցին մեղքն առաջին:

Սարսեցին սանդարամետք՝ ի յաւանդելն առ Հայր զՀոգիո, որ ի դժոխս իջեր ներքին՝ ի բանտ մահուեւ խաւարին. կապեալ զիշխանն մահածին՝ հաներ զՀոգիսն որ ի բանտին. եւ զիս հանցես Տէր ընդ նոսին՝ բանտէ մեղաց աղջամդին:

Աղբերացն անապական՝ որ յետ մահուն անմահարար. բղխեալ ի քէն վտակ կրկին՝ ի նորոգումն կուղածնին. բաց զբերան իմ՝ յարբուցումն քո արեան կենարարին. լուադարձեալ յաւազանին թէ ոչ չնորհօք՝ այլ արտասուօք:

Յանմահիդ մեռանելց՝ զմեռեալ Հոգիս կենդանացո, թաղմամբ ի նոր գերեզսանի՛ զթաղեալս ի մեղս վերածեա. ի գրի ներբնումն իշանելով՝ ի գրս մեղաց վերաբերեա. ի

ստուեր մահու բնակելով՝ լուսաւորեա եւ զիս հոգւով:

Սիրտ իմառ քեզ աղաղակէ՝ բանդ որ ընդ Հօր ի սկզբանէ, որ կամաւոր վասն մարդկան՝ կրեցեր մարմով զայս ամենայն. ինձ լսելի արա զձայն՝ յարբայութեանդ քո կոչման, ընդժողովոց անդ անդրանկացն՝ օրհնել զքեզ միշտ յաւիտեան:

Աղօթք առ Յիսոսս:

Տէր Յիսուս Քրիստոս, որ ինձի համար խաչին վրայ մեռար, քու գմած ձեռքդ կը յանձնեմ հիմակ ու մահուանս ժամն իմ խեղճ հոգիս: Զեմ գիտեր, Տէր, երբ պիտի զիս քեզի կանչես, երբ պիտի աղատես. հոգիս աս մահկանացու կեանքէն, միայն յստ ունիմ որ չնորհաց մեջ գտնուիմ:

Կը գողամ, Տէր, երբոր անհամար մեղքերս միտքս կու դան եւ քու

արդար դատաստանդ կը մտածեմ.
բայց քու ողորմութիւնդ անչափ է,
անոր համար սուրբ վէրքերդ, անդին
արիւնդ, պատուական խաչդ ու մահդ
միշտ հոգւոյս միսիթար ու օգնական
ըլլան: Ո՛վ գթած Յիսուս, երբոր
հոգիս մահուան դուռը կը հասնի
ու ամենէն անօգնական կը ֆնայ. երբ
որ թշուառ մարմնէս կը բաժնուի,
կաղազէմ քեզի, Յիսուս, գուն ընդ-
ունէ հոգիս ու թող մի տար՝ յաւի-
տեանս կորսուիմ, որ քու արեամբդ
փրկեցիր:

Սաղմոս:

Ի քեզ, Տէր, յուսացայ. մի ամաչե-
ցից յաւիտեան:
Դու ես պաշտպան իմ, Տէր. եւ ի
ձեռս քո յանձն առնեմ զՀոգի իմ:
Անձն իմ նովաւ կեայ. եւ զաւակ
իմ ծառայեսցէ նմա:
Քեզ սաղմոս ապացից, Աստուած ա-

պաւէն իմ, Աստուած ողորմու-
թեան իմոյ:

Եարական:

Յսս իմ ի մանկութենէ իմմէ.
մի թողուր զիս Տէր Աստուած իմ:
Յսս իմ ի ժամանակի ծերութեան
իմոյ. մի թողուր զիս Տէր Աստուած
իմ: Յսս իմ ի միւսանգամ գալըս-
տեանն քո. մի անտես առներ զիս:

Աղօթք յարի մահ իննդրելոս սուրբ
Աստուածածնէն:

Ո՛վ քաղցրագութ Մայր Յիսուսի
կցս Մարիամ, օգնական ու պաշտ-
պան անօգնական մեղաւորաց, լի
գթութեամբ եւ ողորմութեամբ. ա-
նոյշ աչքովդ նայէ ողորմելոյս վրայ.
Հասիր ինծի օգնութեան՝ քանի որ
մահս չէ եկեր մօտեցեր, որ չըլայ
թէ յանկարծակի ու առանց պա-
տրաստութեան ելեմ աշխարհքէս:

Վաղաշեմ քեզի, Մայր ողբրմութեան,
Յիսուսին քաշած չարչարանքներուն
ու մահուան սիրոյն համար, պահէ
ու խնամէ զիս, որ հիմակուընէ հե-
ռանամ մեղքէ, փախչելով սատա-
նայէն ու իր ամէն չար գործքէն.
Ճշմարիտ զղմամբ, կատարեալ խոս-
տովանութեամբ ու արժանաւոր ա-
պաշարութեամբ հաշտուիմ Յի-
սուսի հետ: Ողբրմէ ինձի, երանուհի
Մայր Աստուծոյ, ան սոսկալի ատենը
մեռնելուս օրը, երբ շունչը բռնուի
ու լեզուս կապուելով չկարենամ
աղաչել քեզի, աչուըներս մթննան
ու ականջներս խուլնան, ան ատեն
մի մոռնար զիս, Մայր անարատ. այլ
միտքդ բեր հիմակուան աղաչանքս որ
կընեմ մայրական գլութեանդ: Հա-
սիր ինձի օգնութեան. որպէս զի ա-
զատիմ սատանային փորձանքներէն.
Եւ անցյ մահուամբ քու ձեռքդ աւ-
անդելով իմ հոգիս, արժանի ըլլամ

արքայութեան ու մասնակցութեան
սիրելի ծառաներուդ, որ քեզի հետ
կը վայելեն զԼատուած յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Ազօթք սրտի՛ թիսոսի:

Տէր Յիսուս Քրիստոս, ով կրնայ
պատմել քու սրտիդ քաղցրութիւնն
ու մեծագոյն սէրը մեր վրայ, որ ի-
բրեւ ողբրմութեան աղբեր բացիր
մեզի սիրոտ, որ ամէնքնիս ալ հոն
դիմենք ու շնորհքներով լեցուինք:
Ով քաղցր սիրտ Յիսուսի, որչափ
ուրախութիւն է քեզի, երբոր աշ-
խարհասէր սիրտ մը քեզի դարձած
կը տեսնես ու քու սրտիդ ապաւի-
նած:

Ով աստուածային սիրտ Յիսու-
սի, ծարաւի է հոգիս քեզի ու մեծ
փափառվ զքեզ կը փնտուէ: Ատէ,
բորբոքէ սիրտս սուրբ սիրովդ, որ
քեզմէ ուրիշը չսիրէ: Ով դժած

սիրտ Փրկչին իմոյ, թէպէտ շատ անգամ ես զքեղ թողուցի, դացի աշխարհիքիս ունացն բաներուն հետ սիրտս կապեցի. բայց հիմա մեծ ցաւէ ինձի. լալով կը պաղատիմ, ովքաղցր Յիսուս, ընդունէ զիս նորէն սրտիդ մէջ ու պահէ՛ որ ալ քեզմէ չիեռանամ: Տես, Տէր, վիրաւորած սիրտդ բացեր ինձի կը սպասես, եւ անցը ձայնով զիս քեզի կը կանչես, մեղօք բեռնաւորուած հոգիս սրտիդ մէջ հանգչեցընել կ'ուզես: Ո՛վ ողբրմած Յիսուս, ահա սիրտս բոլորովին քեզի կու տամ, առ ու սուրբ սրտիդ հետ մէկ ըրէ, որ միշտ ի քեզ կենդանի ըլամ. ամէն:

Պապրաստոնթիւն՝ մահուան:

Ո՛վ Տէր իմ Յիսուս, քանի որ զգացարանքներս ողջ են ու միտքս վրաս է, հիմակուընէ հոգիս քեզի կը յանձնեմ, եւ ան ատեն ընելու.

աղաչանքներս սուրբ խաչիդ ոտքն ինկած լալով քեզի կը մատուցանեմ: Կը խոստովանիմ, Տէր, որ մեղաւոր եմ, շատ անգամ քեղ վշտացուցած եմ. բայց մեծ յոյս ալ ունիմ՝ որ գուն ես իմ գթած Փրկիչս, որ իմ փրկութեանս համար խաչին վրայ մեռար:

Երբոր Տէր, անցած կեանքս կը մտածեմ, չեմ գիտեր թէ ինչ երեսով առջեղ պիտի երեւամ ու ինչ պատասխան պիտի տամ քեզի: Ո՛չ Տէր, գետինն ինկած կ'աղաչեմ, մի ինդրեր մեղաւորիս մահը, այլ քուողը մուռմութեամբդ ննջէ ամէն մեղքերս: Մանաւանդ օգնէ ինձի անանդիթար ժամը, երբոր մեռելի մը պէս ամէն դգայութիւններս պիտի դադրին, լեզուս գոցուած՝ կարող պիտի չըլամ քեզի աղաչել, աչուրներուս լցութ պակսելով՝ չկարենամ պիտ'որ սուրբ խաչիդ նայիլ: Մօտ

Եղիք ան ատեն, բարի Յիսուս, եւ
քու արեամբդ փրկուած հոգիս մի
տար սատանային ձեռքը: Երեւնան
առջեւդ արօմքներս, երկնցուր վրաս
բարերար ձեռքդ ու վեր հանէ աս
ողորմելի աշխարհքէս, որ կախուե-
լով խաչն՝ խոստացար զիս քեզի
ընդունիլ:

Դուն ողորմած Տէր, տուր ուրա-
խութիւն աչուըներուս, որ չնային
դարձեալ իմ մեղքերուս. աղատէ
զիս քու անուանդ փառացը համար:
Յուցուր ինծի քու բարութիւնդ, որ
միշտ բնակիմ քու տանդ մէջ եր-
կնից արքայութիւնը եւ հոն օրհնեմ
զքեղ յաւիտեանս. ամէն:

Այլ աղօմք տո Յիսոս:

Ողորմած Փրկիչ իմ Յիսուս Քրիս-
տոս, որ քու պատուական արեամբդ
զիս երկնից արքայութեան որդի
գրեցիր, թող մի տար զիս, որ աշ-

խարհքիս ունայնութիւնները մտիկ
ընելով՝ քեզմէ բաժնուիմ: Յիշէ,
Տէր իմ, ինծի համար քաշած ցաւերդ
ու ըրած հառաջանքներդ ան դառն
խաչին վրայ, եւ օգնէ ինծի ան ետ-
քի նեղութեանս ժամանակը. սուրբ
չարչարակներդ երկնաւոր Հօրդ
առջին գնելով՝ մեղքերուս թողու-
թիւն ընդունէ:

Ո՛՛ Տէր իմ, կաղաչեմ քեզի
լալագին, աս Յիսուս անոյշ անունը
բերնիս ետքի խօսքն ըլլայ. քու սըր-
բազան մարմինդ խեղճ հոգւցս կե-
րակուր ըլլայ. քու ըրած հառա-
ջանքներդ իմ ետքի շունչս ըլլան.
քու անոյշ նայուածքդ ետքի տեսու-
թիւնս ըլլայ. վերաւորուած ձեռուը-
ներդ ինծի օգնական ըլլան եւ զիս
յաւիտենական դատապարտութենէ
ազատեն: Ո՛վ բարի Յիսուս, դուն
առաջնորդէ ինծի երկնից արքայու-
թիւնը, կենաց ճամբան ցուցուր ին-

ծի: Ահա քեզի կու դամ, որ յաւին
տեսնա քեզի հետ ըլլամ:

Խաչեցեալ Տէր իմ, ահա իմ
կեանքս ու մահս քեզի կը յանձնեմ.
Ընկալ զիս եւ օգնութիւնդ վրայէս
պակաս մ'ըներ: Կ'աղաչեմ, քաղը
Յիսուս Փրկիչ իմ, մեռած ատենս
մսիթարական ձայնդ լսելու արժանի
ըսէ. Այսօր ընդ էս էցես է ուրախիքն:

Եադմու:

Լուիցէ քեզ Տէր յաւուր անձկու-
թեան, օգնական եղիցի քեզ ա-
նունն Աստուծոյ Յակովը:

Առաքեսցէ Տէր զօգնութիւն ի սրբ-
բութենէ իւրմէ. եւ ի Սիոնէ ըն-
կալցի դքեզ:

Յիշեսցէ Տէր զամենայն պատարագս
քո, եւ զուխտս քո ընդունելի
արացէ:

Տացէ քեզ Տէր ըստ սրտի քում.
Եւ զամենայն ինպրուածս քո կա-
տարեսցէ:

Յուսացաւ ի Տէր, եւ փրկեսցէ զնա.
զի կամի զնա:

Աստուած, զկեանս իմ պատմեցից
քեզ, եղից զարսասուս իմ ա-
ռաջի քո. որպէս խոստացար դու-
ինձ:

Դարձցին թշնամիք իմ յետս իւ-
րեանց. յաւուր յորում կարդա-
ցից առ քեզ:

Աղօթք հիւանդանու համար:

ՈՎ գթած եւ բարեգութ Տէրիմ,
որ սիրելի որդիներդ աս աշխարհքիս
մէջ փորձելու համար անօնց զանազան
խաչեր կը խրկես. որպէս զի մեր
սիրտն աս խաբերայ աշխարհքիս հետ
չկապուի: Ես ալ հիմակ որ այսպիսի
ծանր հիւանդութեան մէջ կը նեղիմ,
իմ կամքս քու ամենասուրբ կամացդ
հետ կը միաբանեմ, եւ սրտանց կը
ինդրեմ քեզմէ, որ աս խաչին հետ
խրկես միանդամայն համբերութեան

չնորհք ալ, որ քաշած նեղութիւնս
անհամբերութեամբ անպտուղ ըլ-
լայ: Գիտեմ որ աս աշխարհքիս մէջ
նեղութիւն ունենալը նշան մըն է
քեզի սիրելի ըլլալու, փրկարար մի-
ջոց մըն է աս աշխարհքիս մէջ մեր
մեղքերը քաւելու. զօրոնք անդիի
աշխարհք երկայն ատեն ծանր ծանր
տանջանքով հազիւ պիտի կարող
ըլլայինք քաւել: Անոր համար ես
ալ կ'աղղակեմ դաւիթ մարգարէին
հետ. Պատրաստ է սիրտ իմ, Աս-
տուած իմ, պատրաստ է սիրտ իմ:
Բոլոր յոյսս ու մինիթարութիւնս ան
է, որ քու ամենասուրբ կամքդ իմ
վրաս կատարուի:

Թէպէտ Տէր իմ, հոգիս յօժար
է ամենաբարի կամքդ փառաւորելու.
բայց տկար մարմինս կը համարձակի
առջեւդ քու Միածնիդ աղօթքը. քե-
զի կրկնելու, որ գեթսեմնի պար-
տէզն արեան քրտինք թափելով

ըրաւ. Հայր երկնաւոր, կ'ուզես նէ՝
անցնի իզմէ աս բաժակը: Կ'ուզես նէ՝
ողորմէ չդիմանալու ցաւերուս, գա-
գրեցուր սաստիկ կսկիծը. ինչու որ
շատ դիւրին բան մըն է քեզի իմ
հիւանդութիւնս առողջացընել: Բայց
ըլլայ թէ իմ կամքս ընես, հապա
ինչ որ է քու կամքդ՝ ան ըլլայ, որ
ինծի ալ միանդամայն ստուդիւ
օգտակար է: Գուն աղէկ գիտես որն
է ինծի ու յաւիտենական փրկու-
թեանս օգտակարը. իմ մոտածածս եւ
ուզածս շատ հեղ թէ հոգւոյս եւ
թէ մարմնոյս վեասակար է: Անոր
համար, արարիչ իմ բազմագութ,
ես կը հնազանդիմ բոլորովին քու
կամացդ ու կ'աղղաչեմ, որ աւելի
զիս աշխարհքիս մէջ պատժես զա-
նազան հիւանդութեամբ եւ ուրիշ
խաչերով, քան թէ հոս տեղս ինայ-
ելով՝ անդիի աշխարհք արդարու-
թեամբ զիս դատես:

Սաղմոս:

Ողորմեա ինձ, Տէր, զի հիւանդ եմ
ես. բժշկեա զանձն իմ, զի խռո-
վեցան սոկեբը իմ:

Թոյլ արա ինձ զի հանդեայց. մինչ
չեւ երթեալ իցեմ, ուստի ոչ
գտանիցիմ:

Գուես համբերութիւն իմ Տէր, Տէր
յոյս իմ ի մանկութենէ իմմ:

Չարական:

Ես ասացի Տէր ողորմեա հոգւց
իմց բազմամեզի. որ բնակեալդ ես ի
յերկինս եւ յանմարմնոց փառաբա-
նիս. յիս մարդասիրեա բազմադութ
Փրկիչ եւ փարատեցո զցաւս անձին
իմց:

Խօսք ի դիմաց հիւանդին ի խորոց
սրտէ լնդ թիսուի:

Ո՛վ անցը Փրկիչս, որ Զիթենեաց
լեռան վրայ հոգեվարքի քրտինք

քրտնեցար, ինծի ալ ողորմէ. եւ
ինչպէս որ քեզի երկինքէն հրեշտակ
իջեցուցիր զքեղ զօրացընելու հա-
մար, նոյնպէս նաեւ ինծի ալ վերէն
երկինքէն զօրութիւն ու միմիթարու-
թիւն իրկէ, որ աս նեղութեան կա-
րող ըլլամ՝ դիմանալ եւ զիս ամե-
նասուրը կամացդ յանձնել:

Ո՛վ Փրկիչ իմ Յիսուս, գիտեմ,
որ աս արտաքին մարմնական նեղու-
թիւնները նեղութատ հոգիս մաքրե-
լու համար կը խրկես. պատրաստ
եմ յօժար սրտով սիրոցդ համար աս
նեղութիւնը տանելու: Միսյն ինծի
դիմանալու ոյժ տուր, որ աս հիւան-
դութեանս ի փառս քո համբերեմ
ու արքայութեանդ արժանի ըլլամ:

Կը գոհանամ՝ քեզի, մարդասէր
Յիսուս, որ ինծի յանկարծական մահ
չերկեցիր. հապա անանկ հիւան-
դութիւն մը տուիր, որ պատրաս-
տուելու ատեն ունեցայ: Ընորհակալ

կըլլամ մեծապէս ու կը նուիրեմ
քեզի բոլոր քաշածներս։ Ա'աղա-
չեմ՝ որ ջնջես իմ ամեն չար գործ-
քերս, որոնք աստուածային աշացդ-
հաճյ չեն, եւ հոգիս քու անգին
արդեամբդ զարդարես։

Կը գոհանամ քեզմէ, ով Փրկիչ
իմ, որ զիս արժանի ըրիր հիւանդու-
թեան ցաւեր քաշելով՝ քեզի նմա-
նելու։ Դուն անմեղ գառն էիր, եւ
պէտք եղաւ՝ որ առաջ չարչարուիս ու
այնպէս արքայութիւն մանես. իսկ ես՝
որ մեղաւոր եմ եւ զԱստուած շատ
հեղ բարկացուցեր եմ, ինչպէս ա-
ռանց նեզութիւն մը քաշելով՝ եր-
կից արքայութիւն կրնամ մանել։

Տէր իմ, քու բարութիւնդ յաւ-
խեանս կօրհնեմ. ինչու որ պղտի-
կութենէս սկսեալ այնչափ բարիք
ընդունած եմ քու բարերար ձեռ-
քէդ. Հիմակ աս հիւանդութեան
ցաւերուս համար ինչպէս կրնամ

տրտունջ ունենալ։ Քու ձեռքէդ
կելք հիւանդութիւնն ու առողջու-
թիւնը. դուն տուիր ու դուն առիր,
քու կամքդ օրհնեալ ըլլայ։

Ոյժ տուր ինծի, Տէր իմ, աս
դժուարին ու դառն ատենս. զօրա-
ցուր հաւատքս, յոյսս ու սէրս. ին-
չու որ որչափ ցաւերս կը սաստկա-
նան, այնչափ ալ ոյժս կը պակասի։
Ո'վ արարիչ իմ, քու ստեղծուածդ
երեսէ մի ձգեր, ինչու որ դուն ես
մինակ իմ զօրութիւնս ու միսիթա-
րութիւնս։

Բաց ինծի, Տէր իմ, դառն չար-
չարանացդ ու մահուանդ գանձը, որ
անով հոգիս միսիթարութիւն գտնէ.
արժանի ըրէ զիս ապաշխարութեան
շնորհքին, որ հոգւոյս արատները
մաքրուելով, արժանապէս ընդունիմ
վերջին թոշակը, քու ամենասուրբ
մարմինդ ու արիւնդ։ Սուրբ ներկայ-
ութիւնդ հոգւոյս ամեն թշնամիները

փախցընէ, բոլորովին վրայէս փարա-
տէ անոնց փորձութիւնները՝ որ սառ-
տիկ զիս կը չարչարեն:

Ո՞վ քաղցր Յիսուս, զօրացուր իմ
անկատար սէրս, որպէս զի թէ առողջ-
ջութեան ու թէ հիւանդութեան
ատեն միշտ զքեզ ամէն բանէն առ-
ելի սիրեմ. ինչու որ դուն ես մինակ
սիրոյ արժանի. դուն զիս սիրելուդ
մարդ եղար ու խաչն վրայ մեռար:
Լսէ հիմակուան իմ սրտիս հառա-
չանքը եւ զիս աս եարի դառն ա-
տենս թող մի՛ տար:

Ո՞վ հինդ վերը Յիսուսի մահա-
ցելց, թափեցէք ձեր փրկարար ա-
րիւնը հոգւցոս ու հինդ զգայարա-
նացս վրայ, որ անով կատարելապէս
մաքրուիմ ու զօրանամ, եւ անոր
ուժովիս աս եարի պատերազմիս ա-
տենը թշնամիներուս յաղթելով՝
յաղթութեան պսակն Աստուծոց
ձեռքէն առնում. ամէն:

Աղօթք հոգեկարքներու համար:

Տէր Յիսուս, տես, որ կենացս ի-
րիկունը մօտ է, մեր քովը կեցիր, ով
լցոյս տիեզերաց, որ կենդանի ճառա-
գայթ ես Հօրն յաւիտենականի.
Վշտացածներուն միսիմարութիւն,
մահուան մօտիկ եղողներուն զօրու-
թիւն ու մեղաւորներուն Փրկիչ:

Ծագէ մաքիս մէջ շնորհացլցուը,
Հոգւցն սրբոյ հրովը սիրտս վա-
ռէ: Կը հրաժարիմ ամէն չար խոր-
հուրդներէն, ամէն մեղքերէն ու
ամէն բանէն, որ քու հաճութեանդ
դէմ է:

Թող մի՛ տար, Փրկիչ իմ, լցոյս իմ
եւ զօրութիւն իմ, որ սատանացա-
կան փորձութիւններն ու մութ եւ
յուսահատական խորհուրդներն իմ
մաքիս մէջ տեղ ընեն ու զիս շփո-
թութեան մէջ ձգեն աս վերջին ու
գժուարին ատենս. Հոգիս որ պա-

տուական արեանդ գինն է՝ յաւի-
տենական կորստեան վտանգի մէջ
իշնայ:

Ո՞վ մահկանացու մարմին, գի-
տեմ որ հող պիտի դառնաս, ուսկից
որ ստեղծուեցար. գիտեմ որ Փըր-
կիչս կենդանի է ու ետքի յարու-
թեան օրը զիս դարձեալ պիտի յա-
րուցանէ: Ան ատեն աս մարմինս իմ
սիրելի Աստուածս ու արարիչս պի-
տի տեսնէ:

Աստուած իմ, քուկդ է իմ հո-
գիս, քեղի կենդանի է յաւիտեան.
քու մահաբեր վէրբերդ իմ հոգիս
զօրացընէ, քու ամենազօր կարողու-
թիւնդ անոր հովանի՛ ըլլայ. որպէս
զի աս ետքի դժուարին պատերազմիս
ատենը չար թշնամւցն խաբէութե-
նէն ապահով ըլլայ ու անոր բոլոր
ճիգը պարապ հանէ քու ամենայաղթ
ու ամենազօր սուրբ խաչիդ օգնա-
կանութեամբը:

Ո՞վ խաչեցեալ Փրկիչ իմ, քու
անպատմելի ցաւերուդ համար՝ որ
զգացիր, երբոր սուրբ հոգիդ անմեղ
մարմնէդ բաժնուեցաւ, աղատէ զիս
աս ժամուս ամէն պատիժներէն ու
տանջանքներէն, որոնց մեղացս հա-
մար արժանի եմ:

Ո՞վ քաղցր Փրկիչ իմ, ան սիրոյն
համար, որ պատճառ եղաւ քեղի
բոլոր չարչարանացդ ատեն այնչափ
սաստիկ կոկիծներ կրելու, արձակէ
զիս մարմնոյս կապէն. ընդունէ հո-
գիս ու երկնային ուրախութիւնը
մացուր: Բաց յաւիտենական կենաց
դոները, որպէս զի սուրբերուն հետ
միշտ արժանի ըլլամ ուրախանալ:

Ես կը բաղձամ հոգիս աւանդել,
ինչու որ ատ է ամենասուրբ կամքդ:
Կը բաղձամ աշխարհքէս ելլել, որ-
պէս զի կարող ըլլամ ալ գքեղ
մեղօք վշտացընել ու միշտ հարկաւ
զքեղ սիրեմ: Երբ պիտի ըլլայ, որ

զքեղ իմ արարիչս երեսանց տես-
նելու եւ սիրելու արժանի ըլլամ:

Արդ արձակեա զծառայ քո ի
խաղաղութիւն. եւ մի մտաներ ի
գատաստան ընդ ծառայի քում: Յի-
սուս Փրկիչ աշխարհի, ողորմէ ինձի
եւ զիս ալ հոն տար, ուր դուն յա-
ռաջուց գացիր մեղի տեղ պատրաս-
տելու, խոստանալով որ գարձեալ
կու գաս զմեղ տանելու համար:

Ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ:
Թէպէտ անարժան եմ աստուածային
գէմքդ տեսնելու. բայց յօս ունիմ
որ անսահման ողորմութիւնդ ինձի
կատարեալ թողութիւն կու տայ:
Ողորմէ ինձի, ո՛վ Յիսուս, զօրու-
թիւն տուր ինձի, որ կարող ըլլամ
մինչեւ ետքի շնչյս տուրեւառը
քու սուրբ ու քաղցր անունդ յիշել.
ամէն:

Մաղմու:

Մերձեցաւ անձն իմ ի հող. Տէր,
կեցո զիս ըստ բանի քում:
Արի, Տէր Աստուած իմ. բարձր Եղի-
ցի ձեռն քո. եւ մի մոռանար
զտնանկս:

Տեսանես գու զնա. ի սրտմտութիւնս
հայիս. մատնել զնոսա ի ձեռս
քո. ի քեղ թողեալ է աղքատն,
եւ որբայն գու ես օգնական:

Յիշեա, Տէր, զգթութիւնս քո եւ
զողորմութիւնս քո, որ ենն յաւ-
իսենից:

Զմեզս մանկութեան եւ զանգիառ-
թեան իմց մի յիշեր. այլ յիշեա
զիս, Տէր, ըստ ողորմութեան
քում, վասն քաղցրութեան քո.
զի քաղցր եւ ուղեղ ես Տէր:

Ահա չափով եղիր զաւուրս իմ.
եւ կար զօրութեան իմց որպէս
ոչինչ է առաջի իմ. սակայն

ամենեւին ընդունայն է ամենայն
մարդ մաեղի:

Պանդուխտ եմ ես առաջի քո. նժդեհ
եւ անցաւոր որպէս ամենայն հարք
իմ:

Թոյլ արա ինձ, զի հանգեայց, մինչ
չեւ երթեալ իցեմ, ուստի ոչ
եւս գտանիցիմ:

Նեղութիւնք սրտի իմց բազում եղեն
յցժ. եւ ի վշտաց իմց հան զիս:
Խոկ արդ՝ ով է համբերութիւն իմ,
թէ ոչ դու Տէր. կամ կար զօ-
րութեան իմց՝ թէ ոչ ի քէն:
Կայեաց առ իս եւ ոլորմեա ինձ, զի
միամօր եւ աղքատ եմ ես:

Դարձ անձն իմ ի հանգիստ քո, զի
Տէր օգնեաց քեզ:

Դու ես պաշտպան իմ, Տէր. եւ ի
ձեռս քո յանձն առնեմ զհողի
իմ:

Ջարական:

Ճամանակ դարձի իմց եհաս ի
յերկիր. արդ Տէր ընկալ զծառայս
քո. եւ Հոգի քո բարի առաջնոր-
դեսց ինձ ի յերկիր ուղիղ: Խոս-
տովանող հոգիս. որ ելից զունայնու-
թեան ընթացս աշխարհի. արդ Տէր
ընկալ զծառայս քո. եւ Հոգի քո բարի
առաջնորդեսց ինձ ի յերկիր ուղիղ:
Ե վերջնումն աւուր՝ յորժամ առնես
զայցելութիւն քցոց սիրողաց. յայն-
ժամ ինայեա ի ծառայս քո. եւ
Հոգի քո բարի առաջնորդեսց ինձ
ի յերկիր ուղիղ:

Աղ աղօթք:

ՈՎ Յիսուս Քրիստոս, որ մեր
փրկութեան համար խաչին վրայ
գամուեցար եւ ան ետքի հոգեվա-
րութեան ատենդ ցաւագին սրտիւ
երկնաւոր Հօրդ աղաղակեցիր. ահա

մենք ալ գետին ինկած լալով քեզի
կը կանչենք, ով գթած Յիսուս,
ողորմէ աս հոգւս, որ քեզի գալ
կը փափագի: Մի յիշեր, Տէր, մարդ-
կային տկարութեամբ ըրած մեղքե-
րը, այլ յիշէ քու անհուն գթու-
թիւնդ, ամենասուրբ կյս Աստուա-
ծածնի ու սրբոց բարեխօսութիւնը
ասոր համար: Կայէ, Տէր, իր թա-
փած արտասուաց, տես իր սրտին
զղջումը. իրկէ երկինքէն սուրբ
հրեշտակները, որ զինքը զօրացը-
նեն ու հոգին առնուն արբայու-
թիւն տանին: Ո՛վ Աստուած ողոր-
մութեան, մի գատեր ասոր հոգին
քու արդարութեամբդ. այլ գթու-
թեամբդ քաւէ ու շնորհաց արժանի
ըրէ. ամէն:

Աղօթք բանարանի հոգիներուն:

Ո՛վ Աստուած ողորմութեան և
Տէր կենդանեաց եւ մեռելոց, կ'ա-

ղաչեմ քեզի պաղատելով, քու ա-
րարչական սիրովդ ողորմէ մեր ննջե-
ցելոց: Յիշէ, Տէր, որ գուն անբաւ
գթութեամբդ ստեղծեցիր եւ միա-
ծին Որդւցդ գառն չարչարանքնե-
րով ու մահուամբը փրկեցիր ու
արբայութեանդ ժառանդ ըօիր. բաց
հիմակ անոնց ողորմութեանդ դուռը,
աղատէ ան սոսկալի տանջանքնե-
րէն, որ իրենց մեղացը համար ար-
ժանաւորեցան: Լսէ, ողորմած Տէր,
անոնց ողորմուկ ձայնը, որ գիշեր
ցորեկ անմիտմար քեզի կ'աղալա-
կեն, առ Յիսուսին արիւնէն կաթիլ
մը ու խառնէ անոնց թափած ար-
ցունքներուն հետ, որ աստուածային
արդարութեանդ բաւական հատո-
ցում ըլլայ:

Ո՛վ Փրկիչ իմ Յիսուս, քու
սրտիդ մեծագոյն տրտմութեանը
համար՝ որ գեթսեմանի պարտեզին
մէջ քաշեցիր, աղատէ քաւարանի
28*

մէջ եղած հոգիները: Ո՛վ Փրկիչ
իմ Յիսուս, խիստ ձաղանացդ, փշե-
ղէն պսակիդ ու ցաւագին նախա-
տանացդ համար, ազատէ մեր ծնո-
ղաց, եղբարց ու բարեկամաց հոգի-
ները: Ո՛վ Փրկիչ իմ Յիսուս, քու
սրբազն վէրբերուդ ու թափած
անգին արեանդ համար ազատէ քառ-
արանէն ամէն ննջեցեալները. մա-
նաւանդ անյիշատակ հոգիները, որ
մեծապէս օգնութեան կարօտ են:
Գթած Յիսուս, դուն ամենուն ալ
յաւիտենական հանգիստ պարգեւէ,
եւ բարեխօսութեամբ գթած Մօրդ
քու սուրբ տեսութեանդ արժանի
ըսէ, որ զքեզ սրբոց հետ միշտ
փառաւորեն. ամէն:

Յարական:

Եհեղ խորհուրդ քահանային
բազկատարած կայր ի բեմին առաջի
սուրբ սեղանոյն. հուր շիջանի, խաւ-

ար մերժի, տրամեալ հոգիքն ուրա-
խանան. զի թողութիւն մեղաց լինի.
ողորմած Տէր, ողորմեա հոգւոցն մեր
ննջեցելոց:

Աղօթք նեղութեան ատեն:

Ո՛վ Հայր գթութեան եւ Աս-
տուած ողորմութեան, նայէ խեղճու-
թեանս ու լսէ սրախ հեծութիւն-
ները. աշուշներս քեզի կը վերցը-
նեմ, ինչու որ քեզմէ ի զատ մէկէ
մը միմիթարութիւն չունիմ: Կեղու-
թիւնները չորս դիս առեր են, դու-
ես, Տէր իմ, միակ յայս. քաշած
նեղութիւններս քեզի յայտնի են,
մինակ քու ձեռքդ կրնայ աս վէր-
քը բժշկել: Դուն աղէկ գիտես,
Տէր, իմ սիրտս ու կը տեսնես
տկարութիւնս. անոր համար ես ալ
ամենասիրելի Որդւոցդ հետ կ'աղա-
չեմ քեզի. Հայր, անց շբաժեկ զայս

յինէն. բայց «Հ որպէս Ես էտմ, այլ որպէս դու»:

Բայց թէ որ, Տէր իմ, ուզես վրաս նեղութիւն խաւրել. ինչ կարող եմ քեզի դէմ գանգատ ընել. որովհետեւ մեղանչելուս համար դժոխքի արժանի էի: Ո՞րչափ որ վիշտ տաս ինծի, Տէր, աս աշխարհ-քիս մէջ, ամենն ալ քիչ են, մասնաւանդ շնորհք են. ինչու որ անով ըրածներուս ներում կը շնորհես ու պատիմները կը քաւես: Օրհնեալ ըլլաս, ովք բարեգութ Աստուած իմ, որ աս նեղութիւնն ինծի Խրկեցիր. շնորհակալ կ'ըլլամ ու երկիր պագանեմ քու մարդասիրութեանդ եւ աստուածային խնամոցդ. աս անմիտար սիրտս քու ձեռքդ կը յանձնեմ: Ո՞վ ողորմած Տէր, ոյժ տուր ինծի, որ սիրով համբերեմ: Յիսուսի անպատմելի չարչարանքներն օրինակ ըլլան ինծի.

աս քաշած պղտի նեղութիւնս ալ անոր չարչարանքներուն հետ քեզի կը նուիրեմ, որ քեզի հաճոյ ու ընդունելի ըլլան. ամէն:

Սաղմոն:

Աստուած Աստուած իմ, նայեաց առ իս. ընդէր թողեր զիս. հեռի եղէ ի փրկութենէ իմնէ վասն բանից յանցանաց իմոց:

Ի քեզ անկայ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ. դու ես Աստուած իմ:

Մի ի բացեայ առնիր յինէն. զի նեղութիւնք մերձեալ են, եւ ոչ ոք է որ օգնէ ինձ:

Մինչեւ յերբ, Տէր, մոռանաս զիս ի սպառ. մինչեւ յերբ դարձուցանես զերեսս քո յինէն:

Զարթիր եւնայեաց, Տէր, յիրաւունս իմ, Աստուած իմ եւ Տէր իմ, ի դատաստանս իմ. եւ իրաւ արա

ինձ ըստ արդարութեան քում,
Տէր Ասաուած իմ:

Մի ուրախ Եղիցին յիս թշնամիք իմ,
և մի ասացեն ի սիրտս իւ-
րեանց, թէ վաշ վաշ անձանց
մերոց, զի ընկլուզաք զնա:

Ընդէր Տէր, կացեր ի հեռաստանէ,
անտես արարեր ի գեղ նեղու-
թեան ժամանակի:

Նեղութիւնք սրախ իմց բազում և-
զեն յցժ. եւ ի վշտաց իմնց հան
զիս:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ ա-
ղաղակեցի զօր հանապաղ, ուրախ
արա զանձն ծառայի քո, զի առ
քեզ, Տէր, համբարձի զանձն իմ:
Զի գու, Տէր, քաղցր եւ ուղիղ ես.
բազումողորմ առ ամենեսեան,
որք կարդան առ քեզ:

ՅԱԿԵԼՈՒԾԱ

Ա Ղ Օ Թ Ի Ց

ՄԱՂԹԱՆՔ

ԱԹ ՍՈՒՐԵ ԿՈՅՍՆ

Ողջ լեր թագուհի՝ մայր ողոր-
մութեան, կեանք, քաղցրութիւն եւ
յոյս մեր, ողջ լեր. առ քեզ գոչեմք
աքսորեալ որդիքս Եւայի, առ քեզ
հառաչեմք հեծելով եւ ողբալով
յայսմ արտասուաց վայրի: Արդ՝ ով
բարեխօս մեր, գարձո առ մեղ զաշս
ողորմութեան քոյ եւ զՅիսուս զօրհ-
նեալ պտուղն որովայնի քո՝ յետ այսր
աքսորանաց ցոյց մեղ, ով դժած, ով
բարեգութ, ով քաղցը կոյս Մարի-
ամ: Աղաչեա վասն մեր, սուրբ Աս-
տուածածին. զի արժանի լիցուք
խոստմանցն Քրիստոսի. Ամէն:

Ողջն թագուհի երկնաւորաց,
մայր թագաւորին հրեշտակաց, ով
Մարիամ ծաղիկ կուսանաց, որպէս
զվարդ եւ զշուշան սփուեա զաղա-
չանս մեր առաջի Որդւց քոյ վասն
փրկութեան հաւատացելոց: Ամէն:

Օրհնեսցէ զմեղ սրբուհի կյան
Մարիամ հանդերձ գթած զաւակաւն
իւրով. Ամէն:

Տէր ողբրմեաց.
Քրիստոս ողբրմեաց.
Տէր ողբրմեաց.
Քրիստոս լուրմեղ. Քրիստոս անսամեղ.
Հայր Երկնաւոր Աստուած, ողբր-
մեաց մեղ.
Արդի փրկիչ աշխարհի Աստուած,
ողբրմեաց մեղ.
Հոգիկ սուրբ Աստուած, ողբրմեաց
մեղ.
Սուրբ Երրորդութիւն մի Աստուած,
ողբրմեաց մեղ.
Սրբուհի Մարիամ, աղօթեա վասն
մեր.
Սուրբ Աստուածածին աղօ.
Սուրբ կյս կուսանաց աղօ.
Մայր Քրիստոսի աղօ.
Մայր աստուածային շնորհաց աղօ.
Մայր մաքուր աղօ.

Մայր սուրբ աղօ.
Մայր անարատ աղօ.
Մայր անբիծ աղօ.
Մայր սիրելի աղօ.
Մայր սքանչելի աղօ.
Մայր արարչին աղօ.
Մայր փրկչին աղօ.
Կյս իմաստուն աղօ.
Կյս յարդյ աղօ.
Կյս քարողելի աղօ.
Կյս հզօր աղօ.
Կյս գթած աղօ.
Կյս հաւատարիմ աղօ.
Հայելի արդարութեան աղօ.
Աթոռ իմաստութեան աղօ.
Պատճառ մերոյ խնդութեան աղօ.
Անօթ հոգեւորական աղօ.
Անօթ պատուելի աղօ.
Անօթ ընտիր աստուածպաշտու-
թեան աղօ.
Վարդ խորհրդական աղօ.
Աշտարակ դաւթեան աղօ.

Աշտարակ փղոսկրեայ	աղօ.
Տուն ոսկեղէն	աղօ.
Տապանակ ուխտի	աղօ.
Դուռն երկնից	աղօ.
Աստղ առաւտեան	աղօ.
Առողջութիւն հիւանդաց	աղօ.
Ապաստան մեղաւորաց	աղօ.
Միիթարիչ վշտացելոց	աղօ.
Օգնական քրիստոնէից	աղօ.
Թագուհի հրեշտակաց	աղօ.
Թագուհի նահապետաց	աղօ.
Թագուհի մարդարէից	աղօ.
Թագուհի առաքելոց	աղօ.
Թագուհի մարտիրոսաց	աղօ.
Թագուհի խոստովանողաց	աղօ.
Թագուհի կուսանաց	աղօ.
Թագուհի ամենայն սրբոց	աղօ.
Թագուհի առանց արատոց մե-	
լաց յլացեալ	աղօ.
Պահպանիչ որդեգրաց	աղօ.
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմելս աշխարհի, խնայեա ի մեղ Տէր:	

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմելս
աշխարհի, անսա մեղ Տէր:

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմելս
աշխարհի, ողորմեաց մեղ:

Յիսուս լուր մեղ. Քրիստոս անսա
մեղ:

Աջն+:

Աստուած անձառելի ողորմու-
թեան, որ ոչ միայն մարդ, այլ եւ
որդի մարդոյ լինել հաճեցար. եւ
ծնանելով ի կուսէ զմայր ի յերկրի
ստացար, որ զԱստուած ունէիր հայր
ի յերկինս. տուր մեղ աղաշեմք՝
զյիշատակ նորա յօժարութեամբ
կատարել, զմայրութիւննորա գերա-
գոյն յարգանօք պատուել, գերա-
զանցագոյն վսեմութեան նորա զմեղ
խնարհութեամբ հպատակել, որ
զբեղ Հոգւով սրբով յղացաւ,
զբեղ կուսութեամբ ծնաւ եւ զբեղ
յերկրի ինքեան հնազանդ կալաւ՝
զՏէրդ մեր Յիսուս Քրիստոս: Որ

կենդանի եւ եւ թագաւորես ընդ չօր
եւ ընդ սրբոյ Հոգւոյնի յաւիտեանս:

Ընդ Հովանեաւ պաշտպանութեան
քո ապաւինիմք, սուրբ Աստուածա-
ծին. զաղաչանս մեր մի անտես առներ
ի կարիս մեր. այլ միշտ փրկեա զմեղ
յամենայն վտանգից, փառաւորեալ
եւ օրհնեալ միշտ Կոյս:

Անկանիմք առաջի քո Աստուա-
ծածին եւ աղաչեմք զանարատ զկոյսդ:
Բարեխօսեա փասն անձանց մերոց եւ
աղաչեա զմիածին Որդիդ: Փրկել
զմեղ ի փորձութենէ եւ յամենայն
վտանգից մերոց:

Հրեշտակ Տեառն աւետեաց սրբոյ
կուսին Մարիամու, որ յղացաւ ի
Հոգւոյն սրբոյ: Ողջոն քեզ Մարիամ:
Ահաւասիկ կամ աղախին Տեառն,
եղիցի ինձ ըստ բանի քում: Ողջոյն:

Եւ բանն մարմին եղեւ եւ բնա-
կեաց ի մեզ: Ողջոյն քեզ:
Զնորհս քո՞ աղաչեմք, Տէր, հեղ
ի միտս մեր, զի որ աւետեօք հրեշ-
տակին ծանեաք զմարդեղութիւն
Քրիստոսի Որդւոյ քս, չարչարանօք
նորին եւ խաչիւ ժամանեսցուք ի
փառս. Տերամք մերով Յիսուսիւ
Քրիստոսիւ. ամէն:

Խորինուրդք վարդարամի:
Երէ՞-շաբանէ, երեւաբանէ և շաբան:
Յառաջին ուրախական տնօրէ-
նութեան Քրիստոսի խորհեսցուք, թէ
որպէս Գաբրիէլ հրեշտակապետն
աւետեաց սրբոյ Կուսին Մարիամու, որ
յղացաւ զՏէլն մեր ի Հոգւոյն սրբոյ:

Հայր մեր. Ողջոյն, Փառք Հօր:
Յերկրորդ տնօրէնութեանն խոր-
հեսցուք, թէ որպէս սուրբ Կոյսն
գնաց միութապէս ի քաղաքն Յու-
դայ. եւ եմուտ ի տունն Զաքարիայ
եւ ետ ողջոյն Եղիսաբեթի:

Հայր մեր. Ողջն. Փառք Հօր:
 Յերրորդ տնօրէնութեանն խոր-
 հեսցուք, զի իբրեւ լցան աւուրք
 ծնանելց Տիրամօրն, ծնաւ անձա-
 ռաբար զՏէրն մեր Յիսուս Քրիստոս
 ի Քեթշեհէմ Հրէաստանի, ի քաղաք
 Դաւթի, եւ պատեաց զնա ի խան-
 ձարուրս եւ եդ զնա ի մսուր:

Հայր մեր. Ողջն. Փառք Հօր:
 Ի չորրորդ տնօրէնութեանն խոր-
 հեսցուք, զի իբրեւ լցան աւուրք
 սրբութեան կուսին Մարիամու, ըստ
 օրինացն Մովսիսի ածին զՅիսուս
 յԵրուսաղէմ ի տաճարն՝ յանդիման
 առնել Տեառն:

Հայր մեր. Ողջն. Փառք Հօր:
 Ի հինգերորդ տնօրէնութեանն
 խորհեսցուք, զի իբրեւ Տէրն մեր
 Յիսուս Քրիստոս եղեւ երկոտասան
 ամաց, մնաց յԵրուսաղէմ. եւ իրն-
 դրէին զնա ծնողքն նորա, եւ յԵտ
 երից աւուրց դտին զնա ի տաճարին,

զի նստէր ընդ վարդապետս, լուէր ի
 նոցանէ եւ հարցանէր զնոսա:

Հայր մեր. Ողջն. Փառք Հօր:

Չորեւշբանի եւ ուրբանի:
 Յառաջին տրտմական տնօրէնու-
 թեան Քրիստոսի խորհեսցուք, թէ
 որպէս եկեալ նորա ի Գեթսեմանի
 եւ մոտեալ ի պարտէղն, կայր յաղօթս
 եւ ասէր. Հայր, եթէ կամփս՝ անցո
 զբաժակս զայս յինէն:

Հայր մեր. Ողջն. Փառք Հօր:

Յերկրորդ տնօրէնութեանն խոր-
 հեսցուք, թէ որպէս Պիղատոս ա-
 ռեալ զՅիսուս՝ դան եհար զնա եւ
 ետ ի ձեռս, զի ի խաչ ելանիցէ:

Հայր մեր. Ողջն. Փառք Հօր:

Յերրորդ տնօրէնութեանն խոր-
 հեսցուք, թէ որպէս զինուորք դա-
 տաւ օրին առեալ զՅիսուս յապարանս,
 բոլորեալ պսակ ի փշոց՝ եղին ի
 դուխ նորա:

Հայր մեր. Ողջն. Փառք Հօր:

Ի չորրորդ տնօրէնութեանն խոր-
հեսցուք, թէ որպէս Քրիստոս Տէլն
մեր բարձեալ էր ինքնին զիսաչափայտն
եւ ելանէր ի գողգոթա:

Հայր մեր. Ողջյն. Փառք Հօր:

Ի հինգերորդ տնօրէնութեանն
խորհեսցուք, թէ որպէս զինուողքն
հանին ի խաչ դՅիսուս, որ կարդաց
ի ձայն մեծ եւ ասէ. Հայր, ի ձեռս
քո աւանդեմ զհոգի իմ. զայս իրքեւ
ասաց՝ Եհան զոդի:

Հայր մեր. Ողջյն. Փառք Հօր:

Կէ-բահի Եւ ճինչ լաբանի:

Յառաջին փառաւոր տնօրէնու-
թեան Քրիստոսի խորհեսցուք, թէ
որպէս յետ մահուան իւրց յաւուր
երրորդի յարեաւ ի մեռելոց ընդ
լուսանալ միաշաբաթին:

Հայր մեր. Ողջյն. Փառք Հօր:

Յերկրորդ տնօրէնութեանն խոր-
հեսցուք, թէ որպէս յետ յարու-
թեան իւրց Քրիստոս Տէլն մեր

յաւուրս քառասուն երեւեալ ա-
ռաքելոցն՝ համբարձաւ յերկինս եւ
նստաւ ընդ աջմէ Հօր:

Հայր մեր. Ողջյն. Փառք Հօր:

Յերրորդ խորհուրդն զմուաւ ած-
ցուք, թէ որպէս ի կատարել
աւուրցն Պինտեկոստէից առաքեաց
Տէլն մեր զիսոստացեալ Հոգին սուրբ
ի վերայ առաքելոցն, եւ լցան ամե-
նեքեան Հոգւով սրբով:

Հայր մեր. Ողջյն. Փառք Հօր:

Ի չորրորդն խորհեսցուք, թէ որ-
պէս յետ երկոստասան ամաց յարու-
թեան Տէլան մերոյ սուրբ Կոյս Աս-
տուածամայրն Վերափոխեցաւ յեր-
կինս:

Հայր մեր. Ողջյն. Փառք Հօր:

Ի հինգերորդն խորհեսցուք, թէ
որպէս անձառելի փառօք միածին
Որդին պսակեաց զսուրբ Կոյս Աս-
տուածամայրն իւր:

Հայր մեր. Ողջյն. Փառք Հօր:

ՄԱՂԹԱԿՆԻՔ

Առ սուրբ կոյս Աստոռածածին:

Մայր սուրբ սքանչելի լուսոյն, որ
զԱստոռածն ամենայն յաւիտեանց
յորովայնի քում կրեցեր, եւ ցըն-
ծութիւն աշխարհի ծնար զբանն Աս-
տոռած, աղաչեմք: Մայր սուրբ բա-
րեխօսեա:

Աղաչեա վասն մեր զառ ի քէն
զմարմնացեալն Աստոռած, որ խո-
նարհեցաւ ի հայրական ծոցոյ, էառ
մարմին ըստ մարդկային բնութեանս՝
առնել խաղաղութիւն յերկինս եւ
յերկրի. աղաչեմք:

Աղաչեա. Կերել մեղ՝ անտես առ-
նել զյանցանս մեր, եւ տալ օգնա-
կանութիւն ընդդիմակաց լինել հա-
կառակամարտիցն ի պատերազմի.
աղաչեմք:

Աղաչեա. Զի լուսոցեն պատե-
րազմունք, դադարեսցին յարձակ-

մաւնք թշնամեաց, անկեսցի սէր եւ
արդարութիւն ի յերկրի. աղաչեմք:

Աղաչեա. Աճեցուցանել յերկրի
մերում զքաղզը բխումն աղբերաց,
զառատ պտղաբերութիւն բուսոց եւ
անկոց՝ առ ի զուարձալի լինել ամե-
նայն հարկաւոր պիտոյից մերոց. աղաչ:

Աղաչեա. Զի միաբանեսցէ զե-
կեղեցի իւր սուրբ՝ շինեալ ի վերայ
հիման առաքելոց եւ մարդարեից,
պահել անարատ մինչեւ յօր երեւ-
ելց գալստեան իւրոյ. աղաչեմք:

Աղաչեա վասն մեր Սրբուհի զմիա-
ծին քո զԱրդին: Եւ վասն հոգւոցն
հանգուցելոց, ընդունել յարքայու-
թիւն երկնից եւ տալ մասն եւ բա-
ժին ընդ սուրբս ամենայն. աղաչեմք:
Յիշեա Տէր եւ ողըրմեա:

Եւ եւս առաւել զյորդորումն
սիրոյ եւ զգործս բարեաց պարգեւել
մեղ ինդրեմք: Տուր մեղ, Տէր Աս-
տոռած մեր:

Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն
Աստուծոյ ամենակալին յանձն արաս-
ցուք: Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ, Տէր Աստուած
մեր, ըստ մեծի ողորմութեան քում.
ասացուք ամենեքեան միաբանու-
թեամբ: Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Մայր սուրբ բարեխօսեա առ Տէր
վասն մեր:

Պատրաստութիւն ժննդեան ջետու:

Ա. Օրհնեալ է ժամն այն, ով Կյոս
Մարիամ, յորում եղեր Մայր Աստու-
ծոյ:

Բ. Օրհնեալ է ժամն այն, ով Կյոս
Մարիամ, յորում ծնար զմրդին Աս-
տուծոյ:

Գ. Օրհնեալ է առաջին համբոյքն
այն, ով Կյոս Մարիամ, զոր ետուր Աս-
տուածային շրթանց Որդւցն Աստու-
ծոյ:

Դ. Օրհնեալ է առաջին շիթն

կալմին, ով Կյոս Մարիամ, զոր դիեցաւ
ի ստեանց քոց Որդին Աստուծոյ:

Աղջիւ:

Ով Հզօր Թագուհի հրեշտակաց,
փառաւորեալ Մայր Աստուծոյ, քաշ-
ցրագութ եւ ողորմած Տիրուհի իմ,
ես անարժան ծառայ քո խոնարհու-
թեամբ անկեալ առ ամենասուրբ
ոտս քո, աղաչեմ զքեզ զի հաճես-
ցիս ընդունել յինէն յողորմելի մե-
զաւորէս զինդ խորհուրդս զայսոսիկ
ուրախականս ամենասուրբ վարդա-
րանի քոյ, եւ զհաղար ողջնս հան-
գերձ օրհնութեամբք զմատուցեալս
յինէն անարժանապէս քոյին մեծու-
թեանդ: Եւ արդ՝ աղաչեմ զքեզ,
ովքաղմագութ Տիրուհի իմ, ընկալ
վասն իմ մայրենի իշխանութեամբդ
ի նորածին Որդւց քումէ, զերկուս
օրհնութիւնս միայն ի հատուցումն
հաղարացն: Նախ զի ի կենդանու-
թեան իմում տացէ ինձ շնորհս

Ճշմարտապէս զղջանալց, եւ երկրորդ՝
զի ի մահուան իմում հասուցանիցէ
զիս ի փրկութիւն. Ամէն:

ԼԻԹԱՆԻԱ

Անարատ թղութեան Ա. Կոսիէն:
Տէր ողորմեաց.
Քրիստոս ողորմեաց.
Տէր ողորմեաց.
Յիսուս լուր մեզ.
Քրիստոս անսա մեզ.
Հայր երկնաւոր Աստուած, ողորմեաց
մեզ.
Որդի փրկիչ աշխարհի Աս-
տուած ողորմ.
Հոգի Սուրբ Աստուած, ողորմ.
Սուրբ Երրորդութիւն մի Աս-
տուած, ողորմ.
Անարատ Կոյս ի մէջ համօրէն կու-
սանաց աղօթեա վասն մեր.
Անարատ Կոյս ի յղութեան աղ.
Անարատ Գոր Աստուած աղ.

Անարատ Մայր Որդւոյն Աստուած աղ.
Անարատ Հարսն Հոգւոյն սրբոյ աղ.
Անարատ Տաճար Ամենասուրբ Եր-
րորդութեան աղ.
Անարատ պատկեր իմաստութեան
Աստուած աղ.
Անարատ արշալցս Արեգականն
Արդարութեան աղ.
Անարատ Եւ կենդանի տապանակ
ուխտի Եւ տեղի հանգստեան
Յիսուսի Քրիստոսի աղ.
Անարատ բողըոջ արմատոյն Դաւ-
թի աղ.
Անարատ Ճանապարհ որ տանիս
առ Քրիստոս աղ.
Անարատ Կոյս որ յաղթեցեր մե-
ջաց աղ.
Անարատ Կոյս որ խորտակեցեր
զգլուխ վիշապին աղ.
Անարատ Դշխոյ երկնի Եւ երկրի աղ.
Անարատ Դուռն երկնային Երու-
սաղեմի աղ.

Անարատ գանձապետ շնորհացն
Աստուծոյ աղ.
Անարատ աստղ ծովու աղ.
Անարատ աշտարակ պատերազ-
մող եկեղեցւոյ աղ.
Անարատ վարդ ի մէջ փշոց աղ.
Անարատ ձիթենի ի խորհրդ-
դաւոր դաշտին Աստուծոյ աղ.
Անարատ օրինակ ամենայն կատա-
րելութեանց աղ.
Անարատ պատճառ երջանկու-
թեան մերոյ աղ.
Անարատ Միւն հաւատոց մերոց աղ.
Անարատ աղբիւր աստուածային
սիրոյ աղ.
Անարատ եւ անվըէպնշան փրո-
կութեան աղ.
Անարատ կանոն կատարեալ հնա-
զանդութեան աղ.
Անարատ խարիսխ ազատութեան
մերոյ աղ.
Անարատ լոյս հրեշտակաց աղ.

Անարատ պսակ նահապետաց աղ.
Անարատ փառք մարգարէից աղ.
Անարատ ուսուցիչ առաքելոց աղ.
Անարատ զօրութիւն մարտիրոսաց աղ.
Անարատ ապաւէն խոստովանողաց աղ.
Անարատ մաքրութիւն կուսանաց աղ.
Անարատ ինդութիւն յուսացելոց
ի քեզ աղ.
Անարատ փաստաբան մեղաւորաց աղ.
Անարատ ափոյեան յահարկութիւն
հերետիկոսաց աղ.
Անարատ տուն մաքրութեան եւ
զգաստութեան աղ.
Անարատ թագուհի յղացեալ ա-
ռանց արատոյ մեղաց աղ.
Անարատ մայր եւ ինամնկալ փո-
քրիկ հասարակութեան մերոյ աղ.
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս
աշխարհի, ինայեա ի մեղ Տէր
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս
աշխարհի, անսա մեղ Տէր
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս
աշխարհի, ողորմեաց մեղ:

Ով կցս ամենեւին սուրբ եւ ամենեւին անարատ, բարեխօս լեր վասն մեր, զի արժանի լիցուք խոստմանցն Յիսուսի Քրիստոսի Որդւց քյ:

Առջն+:

Աստուած ամենակալ եւ յաւիտենական, որ շնորհեցեր եկեղեցւոյ քում տօնել զիփառ անարատ յղութեան Մօր Միածնի Որդւց քո. աղաւեմք զքեզ, զի որք միանդամ զնյն մեծարեալ պատուիցեն յերկրի, եւ յաւիտենական երջանկութեան արժանասցին յերկինս. ամէն:

Մայր կցս, որ սուրբ գտար միշտ յորմէ եւ իցէ, եթէ ի կամաւորական եւ եթէ ի սկզբնական արատց. քեզ յանձն առնեմ եւ աւանդեմ զմաքրութիւն սրտի իմց:

Առ առջն+ը կէր գուշակ ու մատուց առ առջն+ը առ Արքայան քահանայապետը հարիւր օրուան նէր լունիւն նորհու է, է
26 Կոյ. 1854:

Աղօթք ապաշխարոհթեամ:

Տէր ամենակալ, Աստուած Աբրահամու, Խաչակայ, Յակոբայ եւ զաւակի նոցա արդարոց. ամենակալ Տէր, Թող զմեղս իմ:

Որ արարեր զերկինս եւ զերկիր եւ զամենայն զարդ նոցա. ամենա:

Որ կապեցեր զծով լանիւ հրամանի քո, փակեցեր զիորս, կնքեցեր ահաւոր եւ փառաւորեալ անուամբ քով սրբով. ամենա:

Որ ամենայն ինչ սարսի եւ դողայ յերեսաց ահի զօրութեան քո. ամեն:

Անբաւ է մեծվայելչութիւն փառաց սրբութեան քո, եւ սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոցի վերայ մեղաւորաց. անչափ եւ անկնին են ողորմութիւնք աւետեաց քոց. ամեն:

Դու Տէր բարձրեալ, գթած, երկայնամիտ, բազումողորմ, եւ զղանասի վերայ չարեաց մարդկան. ամենա:

Դու Աստուած, ոչ եղիր ապ-

աշխարութիւն վասն արդարոցն Ա-
բրահամու, Խոսհակայ եւ Յակոբայ,
որք ոչ մեղան քեզ. ամենա:

Այլ եղիր ապաշխարութիւն վասն
իմ մեղաւորիս. զի մեղայ աւելի քան
զաւազ ծովու եւ բազմացան անօրէ-
նութիւնը իմ. ամենա:

Եեմ արժանի հայել եւ տեսանել
զբարձրութիւնս երկնից ի բազմու-
թենէ անօրէնութեան իմց. ամենա:

Կորացեալ եմ ես ի բռնութենէ
կապանաց երկաթից, եւ ոչ դոց ինձ
հանգիստ. ամենա:

Բարկացուցի զսրտմտութիւն եւ
զըար առաջի քո արարի, կանգնեցի
պատկեր եւ բազմացուցի զցասումն.
ամենա:

Եւ արդ, Տէր, խոնարհեցուցանեմ
զծունը սրտի իմց, եւ հայցեմ ի
քաղցրութենէ քումէ. ամենա:

Մեղայ, Տէր, մեղայ, եւ զանօրէ-
նութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամեն:

Աղաչեմ եւ խնդրեմ ի քէն, Թող
ինձ, Տէր, թող ինձ. եւ մի կորուսաներ
զիս ըստ անօրէնութեան իմց. ամեն:

Մի յաւիտեան բարկանար ինձ,
Տէր. եւ մի յիշեր զըարիսն իմ, եւ
մի պարտաւորեր զիս ընդ իշեալս ի
ներքոյ երկրի չարեզք. ամենա:

Զի գու, Աստուած, Աստուած ապ-
աշխարողաց ես, եւ յիս ցցց զըարե-
րարութիւնդ քո, զի անարժան եմ. ա:

Կեցուցես զիս ըստ բազում
ողորմութեան քում. եւ ես օրհի-
նեցից զքեզ զամենայն աւուրս կենաց
իմց. ամենա:

Զքեզ, Տէր, օրհնեն ամենայն
զուարթունք երկնից. եւ քո են
փառք յաւիտեանս. ամեն:

Փառք Հօր: Այժմ եւ միշտ:
Աղաչեմ եւ խնդրեմ ի քէն, Տէր,
թող ինձ զմեղս իմ:

Բազումողըրմ Տէր, ողորմեաց ինձ:
Աստուած, քաւեա զիս զմեղաւորս:

Արարիչ իմ եւ յըս Աստուած,
դժա յիս ի մեղուցեալ ծառայս, եւ
ողորմեա ինձ բաղմամեղիս:

Ամենօրհնեալ սրբուհի եւ միշտ
կըս Աստուածածին Մարիամ, բարե-
խօսեա առ Տէր վասն իմ մեղաւորիս:

Ամենայն սուրբք Աստուծոյ բա-
րեխօսեցէք առ Հայր յերկինս վասն
մեր մեղաւորացս:

Քրիստոս Որդի Աստուծոյ ան-
ոխակալ, ընկալ զաղաչանս մեր, զի
ի քեզ են ապաւինեալ անձինք մեր:

Յաղթող զօրութեամբ սուրբ եւ
կենդանարար եւ պատուական խաչի
քս, Տէր, պահպանեա զմեղ:

Առաքեա, Տէր, զհրեշտակ խա-
ղաղութեան քո, որ եկեալ պահեսցէ
զմեղ անխոռվս ի տուե եւ ի գիշերի:

Եւ մարդասիրութեամբ քով յի-
շեա զմեղ, Տէր, յիշեա զմեղ, յոր-
ժամ զաս արքայութեամբ քով, եւ
ողորմեաց մեղ:

Քարոզ:

Եկեալքս ի խոստովանութիւն
ապաշխարութեան հաւատովք զյօս
միածնի Որդւցն Աստուծոյ դիցուք
ի սիրտս մեր, իննդրելով ի նմանէ
դքաւութիւն եւ զմողութիւն յան-
ցանաց մերոց: Վասն զի նա ինքն է
նախախնամողն Աստուած յաւիտե-
նական, որ եկն կամաւ չօր ի փրկել
զարարածս, եւ ասաց զինքն լինել
քաւիչ մեղաւորաց, յըս ապաշխա-
րողաց, շնորհելով հանդիստ աշխա-
տելոց, ընդունելով զծանրաբեռ-
նեալքս եւ զտաժանեալքս մեղօք յա-
պաշխարութիւն քաւութեան: Արդ՝
եկայք ամենեքեան խոնարհեալ ան-
ձամբ, բեկեալ սրախեք անկցուք եւ
լացցուք առաջի Տեառն արարչին
մերս, զի անցուացէ ի մենչ զցասումն
պատուհասի յանցանաց մերոց բա-
րերարութեամբն իւրով: Ամենակալ
Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա:

Առջե՞ն:

Տէր Աստուած փրկութեան մերսյ,
որ ողբրմածդ եւ եւ գթած, երկայ-
նամիտ, բազումողորմ եւ զղանաս
ի վերայ չարեաց մարդկան, որ ոչ
կամիս զմահ մեղաւորին, այլ զդառ-
նալ նորա ի չար ճանապարհէն եւ
զկեալն: Դու **Տէր**, առաւտ ողբրմու-
թեամբդ քով միիթարեազծառայքս
քո եւ սուր սոցա տեղի ապաշխարու-
թեան. հաշտեա մարդասիրութեամբ
քո, եւարազսոսա անդամն եկեղեցւոյ
քում սրբոյ: Որպէս զի առողջա-
շալք հոգւով խոստովանութեամբ
եւ ապաշխարութեամբ մոցեն յեկե-
ղեցի քո սուրբ: Եւ ընդ ժողովրդեան
քում քեզ հանցեն զօրհնութիւն
եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւցդ
սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Աղօթք ծեառն ներսիսի չայոց կա-
թողիկոսի:

Հաւատով խոստովանիմ եւ եր-
կիր պագանեմ քեզ, Հայր եւ Որդի
եւ սուրբ Հոգի, անեղ եւ անմահ
բնութիւն, արարիչ հրեշտակաց եւ
մարդկան եւ ամենայն եղելոց. ողոր-
մեա քո արարածոցս:

Հաւատով խոստովանիմ եւ եր-
կիր պագանեմ քեզ, անբաժանելի
լոյս, միասնական սուրբ Երրորդու-
թիւն եւ մի Աստուածութիւն, ա-
ռարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի,
հալածեա ի հոգւոյ իմմէ զիսաւար
մեղաց եւ անդիտութեան, եւ լուսաւ-
որեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ
աղօթել քեզ ի հաճոյս եւ ընդունել
ի քէն զինդրուածս իմ. եւ ողորմեա
նաձ բազմամեղիս:

Հայր երկնաւոր՝ Աստուած Ճշմա-
րիտ, որ առաքեցեր զՈրդիդ քոսիրելի

ի խնդիր մալըրեալ ոչխարին, մեղայ
յերկինս եւ առաջի քո. ընկալ զիս
որպէս զանառակ որդին եւ զգեցո ինձ
զպատմուժանն զառաջին զօր մեր-
կացայ մեղօք. եւ ողորմեա քո արա-
րածոց եւ ինձ բազմամեղիս:

Որդի Աստուծոյ՝ Աստուած Ճշմա-
րիտ, որ խոնարհեցար ի հայրական
ծոցոյ եւ առեր մարմին ի սրբոյ
կուսէն Մարիամայ, վասն մերյ փըր-
կութեան, խաչեցար եւ թաղեցար
եւ յարեար ի մեռելոց եւ համբար-
ձար առ Հայր. մեղայ յերկինս եւ
առաջի քո. յիշեա զիս որպէս զառ-
աղակն յորժամ գաս արքայութեամբ
քով. եւ ողորմեա:

Հոգի Աստուծոյ՝ Աստուած Ճշմա-
րիտ, որ իջեր ի Յորդանան եւ ի
վերնատունն եւ լուսաւորեցեր զիս
միլրտութեամբ սուրբ աւաղանին.
մեղայ յերկինս եւ առաջի քո. մա-
քրեա զիս վերստին աստուածային

հրով քով՝ որպէս հրեղէն լեզուք
զառաքեալսն. եւ ողորմեա:

Անեղ բնութիւն, մեղայ քեղ մտօք
իմովք, հոգւով եւ մարմնով իմով.
մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վասն
անուանդ քում սրբոյ. եւ ողորմեա:

Տեսող ամենայնի, մեղայ քեղ
խորհրդով բանիւ եւ գործով. Ծնջեա
զձեռագիր յանցանաց իմոց եւ գրեա
զանուն իմ ի գպրութեան կենաց.
եւ ողորմեա:

Քննող գաղտնեաց, մեղայ քեղ՝
կամաւ եւ ակամայ, գիտութեամբ
եւ անգիտութեամբ, թողութիւն
շնորհեա մեղաւորիս, զի ի ծննդենէ
աւազանին մինչեւ ցայսօր՝ մեղուցեալ
եմ առաջի աստուածութեանդ քո
զգայարանք իմովք եւ ամենայն ան-
դամօք մարմնոյս. եւ ողորմեա:

Ամենախնամ Տէր, գիր պահապան
աշաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ
եւս հայել յարատ, եւ ականչաց

իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս
չարութեան, եւ բերանց իմոյ՝ ոչ
խօսել զստութիւն, եւ սրտի իմոյ՝
ոչ խորհել զշարութիւն, եւ ձեռաց
իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն,
եւ ոտից իմոց՝ ոչ գնալ ի Ճանապարհս
անօրէնութեան. այլ ուղղեա զշար-
ժումն սոցա լինել ըստ պատուիրա-
նաց քոց յամենայնի. եւ ողորմեա:

Հուր կենդանի Քրիստոս, զհուր
սիրոյ քոյ, զոր արկեր յերկիր, բոր-
բռքեա յանձն իմ, զի այրեսցէ զախտ
հոգւոյ իմոյ, եւ սրբեսցէ զիսիրջ
մասց իմոց, եւ մաքրեսցէ զմեղս
մարմնոյ իմոյ, եւ վառեսցէ զըստ գի-
տութեան քո ի սրտի իմում. եւ ողըր:

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր
ինձ զիմաստութիւն զբարիս խորհել
եւ խօսել եւ գործել առաջի քոյ
յամենայն ժամ. ի չար խորհրդոց
եւ ի բանից եւ ի գործոց փրկեա զիս.
եւ ողորմեա:

Կամեցօղ բարեաց՝ Տէր կամարար,
մի թողըւր զիս ի կամ անձին իմոյ
գնալ. այլ առաջնորդեա ինձ լինել
միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց.
եւ ողորմեա:

Աբբայ Երկնաւոր, տուր ինձ զար-
քայութիւն քո, զըր խոստացար սի-
րելեաց քոց. եւ զօրացո զսիրտ իմ
ատել զմեղս եւ սիրել զքեղ միայն
եւ առնել զկամն քո. եւ ողորմ:

Խնամօղ արարածոց, պահեանշա-
նաւ խաչի քոյ զհոգի եւ զմարմին
իմ ի պատրանաց մեղաց, ի փորձու-
թեանց գիւաց եւ ի մարդոց անի-
րաւաց եւ յամենայն վտանգից
հոգւոյ եւ մարմնոյ. եւ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ,
ի տուէ եւ ի գիշերի, ի նստել ի
տան եւ ի գնալ ի Ճանապարհ, ի
ննջել եւ ի յառնել. զի մի՛ երբեք
սասանեցաց. եւ ողորմեա:

Աստուած իմ, որ բանաս զձեռն
քո եւ լնուս զամենայն արարածս
ողորմութեամբ քով, քեզ յանձն
առնեմ զանձն իմ. դու հոգա եւ
պատրաստեա զպէտս հոգւս եւ
մարմնց իմց յայսմ հետէ մինչեւ
յաւիտեան. եւ ողորմեա:

Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս
ի չար սովորութեանց իմոց ի բարի
սովորութիւն. եւ բեւեռեա ի հոգի
իմ զսոսկալի օր մահուն եւ զերկիւղ
գեհենոյն եւ զսէր արքայութեանն,
զի զղացայց ի մեղաց եւ դործեցից
զարդարութիւն. եւ ողորմեա.

Աղբիւր անմահութեան, աղբե-
րացո ի սրտէ իմմէ զարտասուս
ապաշխարութեան, որպէս պոռնը-
կին. զի լուացից զմեղս անձին իմց՝
յառաջ քան զելանելն իմ յաշ-
խարհէս. եւ ողորմեա:

Պարգեւիչ ողորմութեան, պար-
գեւեա ինձ ուղղափառ հաւատով

եւ բարի գործով եւ սուրբ մար-
մնոյ եւ արեան քոյ հաղորդութեամբ
դալ առ քեզ. եւ ողորմեա:

Բարերար Տէր, հըեշտակի բարւոյ
յանձնարասցես զիս, քաղցրութեամբ
աւանդել զհոգի իմ եւ անխոռով
անցուցանել ընդ չարութիւն այսոցն,
որ են ի ներքոյ երկնից. եւ ողորմեա:

Լցոյ ճշմարիտ Քրիստոս, արժա-
նաւորեա զշոգի իմ ուրախութեամբ
տեսանել զլցոյ փառաց քոց ի կոչման
աւուրն եւ հանգչել լուսով բա-
րեաց յօթեվանս արդարոց՝ մինչեւ
յօր մեծի գալստեան քոյ. եւ ողորմ:

Դատաւոր արդար, յորժամ գաս
փառօք Հօր դատել զկենդանիս եւ
զմեռեալս. մի՛ մտաներ ի դատաստան
ընդ ծառայիս քո, այլ փրկեա զիս ի
յաւիտենական հրոյն, եւ լսելի արա
բնձ զերանաւէտ կոչումն արդարոց
յերկնից արքայութիւնդ. եւ ողորմ:

Ամէնողորմ Տէր, ողորմեա ամե-

նայն հաւատացելոց ի քեզ, իմոց եւ
օտարաց, ծանօթից եւ անծանօթից,
կենդանեաց եւ մեռելոց. շնորհեա-
եւ թշնամեաց իմոց եւ ատելեաց
զթողութիւն որ առ իս յանցանաց.
եւ դարձո զնոսա ի չարեացն, զոր
ունին վասն իմ, զի ողբրմութեան
քում արժանի եղիցին. եւ ողորմեա:

Փառաւորեալ Տէր, ընկալ զա-
զաշանս ծառայիս քոյ, եւ կատարեա
ի բարի զինդրուածս իմ, բարեխօ-
սութեամբ սրբուհոյ Աստուածա-
ծնին եւ Յովհաննու մլրտչին եւ
սրբոյն Ստեփանոսի Նախավկային,
եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւ-
որչին, եւ սրբոց առաքելոցն եւ
մարդարեից եւ վարդապետաց եւ
մարտիրոսաց եւ սրբոց Հայրապե-
տաց եւ Ճգնաւորաց եւ կուսանաց
եւ ամենայն սրբոց քոց Երկնաւորաց.
եւ Երկրաւորաց. եւ քեզ փառք եւ
Երկրպատութիւնանբաժանելիսուրբ

Երրորդութեանդ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն:

Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացոյ
առ սուրբ Աստուածածինն:

Եւ արդ ի վերայ այսքանեաց յու-
սահատութեանց եւ ահարկու սրբ-
տաբեկութեանց, պակուցանողական
սաստկութեանց, աստուածային բար-
կութեանց, տագնապեալ հոգւով
թախծութեան իսպառ, աղաչեմ
զքեզ սուրբ Աստուածածին. Հրեշ-
տակ ի մարդկանէ, մարմնատեսիլ
քերովբէ, Երկնաւոր արքայուհի,
անխառն իրբեւ զօդ, մաքուր որպէս
լցո, անշաղախ ըստ նմանութեան
պատկերի արուսեկին բարձրութեան,
գերազանց քան զընակութիւն ան-
կոփսելին սրբութեանց, Երանաւոր
խռատմանն տեղի, Եղեմ շնչական,
ծառ կենացն անմահից բոցեղեն
սրովն պարունակեալ, ի բարձրեալն

Հօրէ զօրացեալ եւ հովանացեալ,
հանգստեամբ Հոգւղն Հանդերձեալ
եւ մաքրագործեալ, բնակութեամբ
Որդւցն յարդարեալ եւ տաղաւա-
րեալ. միածինն Հօր եւ քեզ ան-
դրանիկ, որդի քո ծննդեամբ եւ
տէր արարչութեամբ. ընդ անաղտ
մաքրութեանդ եւ անբիծ բարի, ընդ
անարատ սրբութեանդ եւ խնամակալ
բարեխօս: Ընկալ զմաղթանս այսր
աղերսանաց քում դաւանողիս, եւ
մատո ընծնյեա ընդ նմին խառնեալ
զըանն իմ նախնի մեծիդ ներբողի
ի քսդ պաղատանս. Հիւսեա միացո
զմեղուցելցո դառն Հեծութիւն ընդ
քումդ երջանիկ եւ խնկաւորեալ
Հայցուածոց, տունկդ կենաց պտղոյն
օրհնութեան, զի ի քէն միշտ օգնեալ
եւ բարեգործեալ, եւ ի մաքրական
քո ծնելութիւնդ ապաւինեալ եւ
լուսաւորեալ, կեցից Քրիստոսի Որ-
դւց քս եւ Տեառն:

Օժանդակեա թեւոցդ աղօթիւք,
խոստովանեալ Մայրդ կենդանեաց,
եւ յելիցն իմ յերկրէս Հովտէ՝ ա-
ռանց լկանաց հետեւելի կեանս օ-
թեւանացդ պատրաստութեան. զի
թեթեւացի կատարած իմ ինձ ծան-
րացելցս անօրէութեամբ: Արացես
տօն ինձ բերկրութեան զօրն իմ տա-
դնապի, ողջացուցիչ երկանցն Եւայի.
բարեխօսեա խնդրեա աղաչեա, զի
ըստ անձառելի մաքրութեանդ եւ ա-
հա զբանիդ հաւատամ զընդունելու-
թիւն: Արտասուզ օգնեա վտանդե-
ցելցս, գովեալդ ի կանայս. ծունր
խոնարհեցո առ իմ հաշտութիւն,
ծնողդ Աստուծոյ. ընդ իմում թշու-
ափս Հոգա, խորան Բարձրելցն.
ձեռն տուր անկելցս, տաճար եր-
կնային. փառաւորեա զնորդիդ քո ի
քեզ՝ աստուածօրէն ինձ հրաշագոր-
ծել քաւութիւն եւ ողորմութիւն,
աղախին Աստուծոյ եւ Մայր: Բար-

ձրասցի պատիւ քո ինեւ, եւ ցուց-
ցի փրկութիւն իմ քեւ:

Եթէ զիս գտցես, Տիրամայր. թէ
ինձ ողորմեսցիս, սրբուհի. թէ զկո-
րուսեալս շահեսցիս, անարատ. թէ
զշարթուցեալս յանձանձեսցես, եր-
ջանիկ. թէ զամաչեցեալս յառաջ
մատուսցես, բարեշնորհ. թէ յու-
սահատելցո ինձ միջնորդեսցես, միշտ
սուրբ կյոս. թէ զմերժեալս ընտա-
նեցուսցես, մեծարեալդ յԱստուծոյ.
թէ յիս ցուցցես զգթաճութիւն,
լուծիչդ անիծից. թէ զժիեալս հաս-
տատեսցես, հանդիստ. թէ ի խոռ-
վութեանցո յուզմանց փոխեսցես
զիս, խաղաղարար. թէ վրիպելցո
ինձ հնարաւորեսցես, գովեալ. թէ
վասն իմ մոցես ի հանդէս, մահու
նահանջիչ. թէ զդառնութիւնս իմ
անուշեսցես, քաղցրութիւն. թէ
զբաժանման իմ խորոց քակտեսցես,
հաշտութիւն. թէ զանմաքրութիւնս

իմ բարձցես, եղծման ընդուռնիչ.
թէ զմատնեալս մահու փրկեսցես,
կենդանի լցո. թէ զլալեացս ձայն
հատցես, բերկրութիւն. թէ զխորտա-
կեալս կազդուրեսցես, դեղ կենաց.
թէ ի կործանեալս յիս ակնարկեսցես,
հոգելից. թէ ողորմութեամբ ինձ
պատահեսցես, կտակնուիրեալ: Օրհ-
նեալ միայն ի շրթունս ամբիծս լե-
զուաց երջանկաց. ահա կաթիլ մի
կաթին քումդ կուսութեան յանձն
իմ անձրեւեալ՝ կենաց ինձ զօրէ:
Մայրդ բարձրելց Տեառն Յիսուսի
արարչին երկնի եւ բնաւին երկրի,
զոր անձառապէս ծնար բովանդակ
մարմնովն եւ համայն աստուածու-
թեամբն, որ փառաւորեալ է ընդ
հօր եւ Հոգւցն սրբոյ էութեամբ եւ
անքնութեամբ մերօյին բնութեամբս
միացելով, յամենայն եւ յամենայ-
նում, մի յԵրրորդութենէն. նմա
փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն:

Արքոյն ներսիսի Համբրոնացւոյ ա-
ղերս մնադժանաց խօսք ընթիւնուի:

ԵՅԼ դու նայեա, ամենակարող
Տէր իմ Յիսուս, յամոռոյ փառացդ
եւ շնորհաց, տալով անարժան քոյ
ծառայիս զանխոռվ միտս՝ ի յոյս
հանդերձեալ քո յուսոյդ: Տես, Տէր,
թէ որքան վտանգիմք՝ յաղցաւոր
կենացս կրից ի ղանաղան հողմոց
բրաբեր շնչանց երեքալեանն խոռո-
վութեամբ, թշուառացեալ մտացս
երեւեալ: Զունիմ, Տէր, պառող
գործոց քեզ նուէր հաշտութեամբ.
քանզի զոր ունել կարծէի՝ մաշեալ
պակասեաց՝ ի քում ահաւորու-
թեանդ եկեալ գիտութիւն: Եւ ես
մերկ եւ թափուր, կիսամեռ եւ ոգե-
կործան միայն զմարդասիրութեան
ոտիցդ կախիմ, բուռն հարեալ
զդմանէ, եւ ոչ երբէք զթողուն
ախորժեմ: Հան զիսի չարս շաւղաց,
զորս բերանով իմով աղարտեմ: Եւ

ուստ ինձ զճանապարհս քո ուղիղս,
որում կամօք սրտիս վկայեմ: Անկայ
ի մահիմս մեղաց, եւ ես ինձէն զգար-
շութիւն մեղացս բողոքեմ: Տուր
զբժշկութիւն ախտացեալ հոգւոյս,
որ առողջացուցանել զայլս խաբեմ:
Զուխտս հօծեալս բանի յեկեղեցիդ-
անդրանկաց առաջի ամենայն երկիւ-
ղածաց քոց նուիրեմ: Կերիցեն
անանկը եւ յագեսցին ի սմանէ,
եւ օրհնեսցեն զքեզ, որ զՏէրդ
ինդրեն: Զաղօտացեալ քո լոյս բա-
րեկամացն քոց ցուցանեմ: յիշեսցեն
սովաւ, եւ դարձցին առ Տէրդ՝ որք
ի ծագաց երկրէ քումդ գիտութեան
փափագին: Քեզ փառք, պարծանք
եւ գրաւ աշխարհի՝ ի յերկինս փա-
ռաւորեալ, յաւիտեանս յաւիտենից:

ԱՌ աղօթք նորին ներսիսի:

ԵՅԼ շուրջ պատեալ ի տարա-
կուսանացս յամենայն կողմանց սրտիւ

շաղախեալքս եւ ունկնդրութեան
կարօտեալքս՝ նայիմք առ քեզ փորձ
տկար բնութեանս քահանայապետ
Յիսուս: Ո՛վ որ վասն մեր մեղս եղեր,
զի մեք լիցուք վասն քո արդարու-
թիւն: Ո՛վ որ վասն մեր երկրաւոր
եղեր, զի մեք լիցուք վասն քո երկնաւ-
որք: Ո՛վ որ վասն մեր հաց եղեր, զի մեք
ի ճաշակելն զքեզ սրբեացուք: Տուր
զպարարեալ վշտօք մարմին քո՝ ա-
մենայն սրտի սրբարար կերակուր:
Մատուակեա զարեան քոյ վտակ
անմեղ կայլակեալ՝ որդւոց մարդկան
անմեղութեան զմայլումն: Զգեա
զփրկական քո զևաչդ զողելոցս ի
ծով աշխարհիս առ քեզ լերածիչ:
Կարօտացաք շնորհի՝ սփուեա: Նըաք
ի գործոց՝ քաւեա: Խարխափեմք
զխաւար՝ ճառագայթեա: Կործանե-
ցաք ի հաւատոց՝ հաստատեա: Դու
ես յոյս, դու ես լոյս, դու ես կեանք,
դու ես քաւութիւն, դու ինքն եւ

անմահութիւն: Քեզ սպասեն յե-
ցեալքս ի շնորհս քո: Ի քէն կարօ-
տին առնուլ փրկութիւն խառնեալքս
ի մարմինդ քո: Զքեզ ունին քաւիչ
քահանայ՝ գնեալ արեամբ հօտս քո:
Հայեաց յամեննեսեան: Ափուեա զտա-
րակուսանս մեր քոյին վաստակովքդ:
Հանդարանցո զխուլութիւնս մեր՝
քոյին խաղաղութեամբդ: Հանդո
զաշխատանս մեր ի քո օմեվանսդ,
ուր դու գնացեր, ո՞վ Տէր, եւ խոս-
տացար: Արժանացո զքոյս՝ փառաւ-
որել զքեզ այդր ընդ Հօր եւ ընդ
սուրբ Հոգւսդ յաւիտեանս. ամէն:
Ազօթք նորին Հայրապետի առ խաչե-
լեալն թիսու:

Առ քեզ ակնարկեմ, աղբիւր ջըս
կենդանւոյ, եւ աղաղակեմ թէ ընդ-
էր է ինձ սրբութեան ծարաւել,
երբ դու ես իմ սրբութիւն. կամ
ընդէր փափագիմ մաքրութեան,
մինչ դու ես իմ մաքրութիւն: Այսու

Հետեւ ուսեալ, եթէ դու ես իմաս-
տութիւն՝ մեզ յԱստուծոյ տուեալ
արդարութիւն եւ սրբութիւն, առ
քեզ ծարաւիմ, քեզ փափագիմ,
քեզ տոփամ. տուր իմ ծարաւեալ
ոգւստ զքեզ զովացումն՝ աղբիւր
ջրոյ կենդանւոյ խաղացելց ի կեանսդ
յաւիտենից: Ծարաւիմ ըմպել ի
կրկն վտակաց կողեդ, որով եւ
սրբեալ սիրով քո զմայլիմ: Քաղց-
նում ուտել զմարմինդ, որով կեն-
դանացաւ անմահ ես լինիմ: Փա-
փագիմ ողջագուրել զանցուած ձեւ-
ոացդ, որով հասեալ առ քեզ պատ-
կիմ: Տոփամ ակնարկել զդէմսդ,
որոյ ապտակաւն ի վիրաց իմոց բժժշ-
կիմ: Վաղվաղակի լուր ինձ, Տէր, զի
նուաղեաց յինէն հոգի իմ: Կուաղե-
ցաւ հոգի իմ ի քո անձառդ սիրոյ:
Տոչորեցայ յառ քեզ տոփանացդ՝
ով վասն իմ խաչեալ: Թալկացայ,
յորժամ առ քեզ ակնարկեմ, ով

վասն իմ ապտակեալ: Եւ աղաղակեմ,
ցցց ինձ զդէմն քո, լսեցո ինձ զբար-
բառ քո. զի ձայն քո քաղցր է եւ
դէմք քո գեղեցիկ: Ե՛րբ եկից՝ ե-
րեւեցաց քեզ: Արդ՝ լուր ինձ եւ
արբեցո զիս վաղվաղակի քո գիտու-
թեամբդ եւ սիրով, զի եւ յինէն,
որ հաւատամ ի քեզ, բղևսցեն
աղբիւրք ջրոց կենդանութեան:

Աղօթք առ ծէրն մեր:

Տէր Աստուծած բարձրեալ ամե-
նակալ, լցոս անքնին, մեծութիւն ա-
հեզ, գթութիւն անսահմանելի,
մարդասիրութիւն օրհնաբանելի,
Յիսուս Աստուծոյ կենդանւոյ միա-
ծին որդի: Որ սքանչելարուեստ հրա-
շեք անպարագիրդ էակ վասն մեր
եղեր մարդ ի կուսէն: Որ արեամբդ
քո զմեզ ստացար եւ մարմնովդ կե-
րակրես: Որ կարգեալ զայս խորհուրդ
անձառելի՝ ուիս կենաց անփոխա-

գրելի սահմանեցեր: Որ յանուն զենա-
ման՝ միշտ յիշատակաւ քո չարչարա-
նաց առ Հայր քո բարերար աղօթել
զմեղ համարձակեցեր. Եւ զայս տուրս
շնորհաց քան վամենայն գործոց քոց
զսքանշելիսն մեծացուցեր. լուր մեղ
բազմադութ մարդասէր. տուր զպա-
րարեալ վշտօք մարմինդ քո ամենայն
սրտի սրբարար կերակուր. զի դքեղ
ունին քաւիչ քահանայ գնեալ ա-
րեամբ հօտս քո. հայեա յամենեսեան.
հանդո զաշխատանս մեր ի քո օթե-
վանսդ, ուր գնացեր, Տէր, եւ խոս-
տացար: Արժանացո զքս փառաւո-
րել զքեղ այդը ընդ Հօր եւ ընդ
սուրբ Հոգւոյդ ի յաւիտեանս. Ամէն:

Այլ աղօթք:

Աստուած, որ մեղ ի ներքս հրա-
շալի խորհրդս զյիշատակ չարչարա-
նաց քոց թողեր, տուր մեղ աղաշեմբ,
զսուրբ խորհուրդս մարմնոյ եւ արեան

քո այնպէս յարգել, զի զպտուղ
փրկադործութեան քո հանապաղ
զգացուք ի մեջ. որ կենդանի ես եւ
թագաւորես ընդ Հօր եւ սուրբ
Հոգւոյդ ի յաւիտեանս. Ամէն:

Եկրգործութիւնն հաւատոյ:

Ես հաստատուն կը հաւտամ,
վասն զի Աստուած որ է անսխալ ճըշ-
մարտութիւն ասանկ յայտնեց սուրբ
կաթուղիկէ Եկեղեցւոյն եւ անով
մեղի ալ կը սորվեցընէ, թէ Աստուած
մէկ է ու երեք հաւասար՝ բայց զա-
նազանեալ անձն ունի, որ կը կոչուին
Հայր, Որդի ու Հոգին սուրբ: Եւ թէ
Որդին Աստուած մարդ եղաւ, Հոգւոյն
սրբոյ զօրութեամբը մարմին ու հոգի
առաւ ամենամաքուր կօս Մարիամու
արգանդին մէջ. եւ թէ մեղի համար
խաչին վրայ մեռաւ, յարեաւ ու եր-
կինքը վերացաւ, ուսկից որ պիտի
գայ աշխարհքիս վերջը, թէ մեռեալ-

ներն ու թէ կենդանիները դատելու
համար. որ արդարներուն յաւիտե-
նական արքայութիւն տայ ու մեղաւ-
որներուն դժոխք: Անոր համար կը
հաւտամ ամէն բանին, զորն որ նոյն
սուրբ եկեղեցին կը հաւտայ ու կը
սորվեցընէ:

Ներգործութիւն յուսոյ:

Ո՛Վ Աստուած իմ, որովհետեւ
ամենակարող ես, անչափ բարի ու
ողըրմած, կը յուսամ որ Տեառն մերոյ
եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի չար-
չարանաց արդեամբը կ'ս յաւիտե-
նական կենաց արժանի կ'ընես, ինչ-
պէս որ խոստացար դուն ամենուն
որոնք բարեպաշտութեամբ քրիստո-
նէաբար կ'ապրին. որ ես ալ քու օգ-
նականութեամբդ կ'առաջադրեմ
նոյնը կատարելու:

Ներգործութիւն սիրոյ:

Ո՛Վ Աստուած իմ, որովհետեւ
գերագոյն ու բոլորովին բարի ես,

կը սիրեմ զքեղ բոլոր սրտանց ա-
մէն բանէ վեր, եւ պատրաստ եմ ա-
մէն բան կորսընցընել, քան թէ զքեղ
վշտացընել. եւ քու սիրոյդ համար
կ'ուղեմ սիրել նաեւ ընկերս իմ
անձինս պէս:

Ներգործութիւն զղջման:

Ո՛Վ Աստուած իմ, որովհետեւ
ծայրագոյն բարի ես, անոր համար
ամէն բանէ վեր զքեղ կը սիրեմ,
կը զղամ ու կը ցաւիմ Ճշմարտապէս
զքեղ վշտացընելուս. հաստատուն
կը յառաջադրեմ քու սուրբ շնոր-
հօքդ ասկէց ետքը ալ չմեղանչել,
եւ մասնաւորաբար մեղաց պատճառ-
ներէն փախչիլ:

ՑԱՆԿ ԱՂՈԹԻՑ

Աղօթք առաւօտեան	11
Աղօթք երեկոյեան:	23
Շաբթու ամէն օրուան համար աղօթք:	30
Շաբաթական աղօթք ի պատիւ կուսին:	56
Աղօթք սրբոյ պատարագին: . .	77
Պատրաստութիւն խոստովանու- թեան:	115
Եօթն սաղմոսք ապաշխարու- թեան:	139
Աղօթք խոստովանութենէ ետքը	174
Պատրաստութիւն առ սուրբ Հա- ղորդութիւնն:	181
Աղօթք շնորհակալութեան հա- ղորդութենէն ետքը:	194
Աղօթք տէրունական տօնից:	
Ի տօնի ծննդեան Քրիստոսի:	223
Նոր տարի:	226
Ի տօնի անուան Յիսուսի:	229
Ի տօնի յայտնութեան:	231

Ի տօնի մկրտութեան:	234
Ի տօնի տեառն ընդառաջի:	237
Առաջին կիւրակէ մեծ պահոց:	240
Երկրորդ կիւրակէ:	246
Երրորդ կիւրակէ:	252
Չորրորդ կիւրակէ:	258
Հինգերորդ կիւրակէ:	264
Վեցերորդ կիւրակէ:	269
Ծաղկազարդ:	274
Աւագ Երկուշաբթի:	276
Աւագ Երեքշաբթի:	281
Աւագ չորեքշաբթի:	288
Աւագ հինգշաբթի:	293
Աւագ ուրբաթ:	299
Աւագ շաբաթ:	305
Ի տօնի զատկին: Ա. օր:	310
Երկրորդ օր:	312
Երրորդ օր:	317
Ի տօնի աւետման:	319
Ի տօնի համբարձման:	323
Ի տօնի հոգեգալստեան: Ա. օր:	325
Երկրորդ օր:	328
Ի տօնի այցելութեան:	331
Ի տօնի վարդալառին: Ա. օր:	333
Երկրորդ օր:	335
Ի տօնի վերափոխման: Ա. օր:	337
Երկրորդ օր:	340

Ի տօնի ծննդեան Կուսին:	343
Ի պատիւ անուան Մարիամու:	346
Ի տօնի խաչին: Ա. օր:	348
Երկրորդ օր:	350
Ի տօնի ընծայման:	352
Ի տօնի անարատ յղութեան:	354
Աղօթք Աստուածածնի Եօթք Խնդութեան:	356
Աղօթք առ ամենայն սուրբս:	363
Առ Ս. Յովակիփ:	365
Առ Ս. Յովհաննէս մկրտիչ:	367
Առ Ս. Պետրոս եւ Պօղոս:	369
Առ Ս. Ստեփանոս:	370
Առ Ս. Գրիգոր Լուսաւորիչ:	372
Առ Ս. Յակով Մծբնայ Հայ- րապետ:	374
Առ Ս. Անտոն ճգնաւոր:	376
Առ Ս. Անտոն պատուացի:	377
Առ Ս. Աննա:	379
Առ Ս. Հռիփոսիմէ եւ Գայիանէ:	380
Առ պաշտպան սուրբն:	381
Աղօթք Եօթն ցաւոց Կուսին:	383
Աղօթք Յիսուսի հինգ վեցերուն:	395
Աղօթք առ խաչելեալն Քրիստոս:	401
Աղօթք առ Յիսուս:	409
Աղօթք բարի մահ ինդրելու սուրբ Աստուածածնէն:	411

Աղօթք սրտին Յիսուսի:	413
Պատրաստութիւն մահուան:	414
Աղօթք հիւանդներու համար:	419
Աղօթք հոգեվարդներու համար:	427
Աղօթք քաւարանի հոգիներուն:	434
Աղօթք նեղութեան ատենը:	437
Ողջ լեր թագուհի:	443
Լիթանիա Ս. Կուսին:	444
Հրեշտակ Տեառն:	448
Խորհուրդք վարդարանի:	449
Մայր Սուրբ:	454
Պատրաստութիւն ծննդեան	
Տեառն:	456
Լիթանիա անարատ յղութեան:	458
Տէր ամենադկալ:	463
Հաւատով խոստովանիմ:	469
Աղօթք Ս. Գրիգորի Նարեկացւոյ	
առ Ս. Աստուածածինն:	477
Արբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ	
զանազան աղօթք:	482
Աղօթք առ Տէրն մեր:	487
Ներդործութիւն հաւատոյ, յու-	
սոյ, սիրոյ եւ զղման:	489





2520

«Ազգային գրադարան



NL0029509

2445